




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքը արտոնագրված է «Մտերագրթական համայնքեր
ոչ առևտրային իրավասուրբուս 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստորևներու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format


Adapt — remix, transform, and build upon the material

1834
1835
1836


Դ-յումա Ա.

Երեք իրացնակիրք

Հա Ա-9-



Զ յունիս
1871



Ա. ՏԻՒՄԱ.

ԵՐԵՎ ՀՐԱՑԱՆԱԿԻՐՔ

ԹԱՐԳՄԱՆԵՑ

Մ. ՄԱՄՈՒՏԵԱՆ

ՀԱՏՈՐ Գ.

ՏԵՐ ԵՒ ՀՐԱՑԱՆԱԿԻՇ

ՏԻԳՐԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՏԵՏԵԱՆ

ԶՄԻՒԹՆԻՑ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԵՏԵԱՆ

1872

871-549

ԵՐԵՎ

ՀՐԱՑԱՆԱԿԻՐՔ

Ա.

ԱՆԺՈՒՆԻ ԳԻՒՆԻՆ

Թագաւորին հիւանդութեան վրայ յուսահասական լորեր զաւ
էն ետե՝ բանակին մէջ իր նորաբոժութեան ձայնն սկսեր էր
տարածուիլ, և օրովհետեւ անձամբ պաշարման վայրը դալու մեծ
փոյթ ունէր, կ'ըսէին թէ ձի հեծնել կարենալուն՝ ճամբայ պիտի
ելնէ :

Նոյն պահուն՝ Տեղակալ-Ապարագեան որ գիտէր թէ օրէ օր
իր հրամանատարութիւնն ուրիշի պիտի յանձնէ, այսինքն կամ
Անկուլէմի դքսին, կամ Պատօնիքէրի կամ Շօնուկէրին որ նոյնին
համար իրաբու հետ կ'մրցէին, մեծ զործ չէր անոնէր, իր օրերը
հետազոտութիւններ ընելով կ'անցընէր և անկլիացիները Առէ
կղզին և Բրէտ ամրոցէն վունտելու համար ընդ յառաջ չէր խիզ
զախէր, մինչդեռ միւս կողմէն դաղղիացիք նոշէլը կ'պաշարէին:

Տ'Արդանեան, ինչպէս որ արդէն ըսինք, առելի հանդարտե-
լով ինչպէս որ միշտ կ'պատահի վասնդն անցնելէն ետե՝ հոգ
մը միայն ունէր, այսինքն իր բարեկամներէն լուր մը չէր առնոր:

Բայց՝ առաւօտ մը , նոյեմբեր ամսեան սկիզբը՝ ամէն ինչ լուսացաւ . սա նամակէն որ Ակլուաի թուականը կ'կըեւ .

«Պարոն ա՛Արդանեան ,

«Ո. ո. Ամոս , Բորժոս և Արամիս , տանս մէջ արևոր հայութ մ'ընելէն և շատ մը զուարձանալէն ետեւ՝ այնքան մեծ աղամուկ հանցյին , որ դգեկին վերակացուն՝ դաժանարարոյ մարդ մը , քանի մ'օրուան համար արդիեց . բայց ես անձնց առած հրամանը կ'կատարեմ , իմ Անժոխի զինիէս տաս շիշ դրկէլով քեզէ , որմէ շատ ախորժեցան , կ'փափաքին որ իրենց սիրական զինիով իրենց կենաց խմես :

«Եմ և մեամ , պարոն , մեծ յարդանօք

«Քու խնաբէ և հնազանդ ծառագ

Կ Օ Տ Օ

«Ո. Հրացանի իշխանութեան ունեսական պատճենները :

— Քաջ է — զուեց ա՛Արդանեան — ինձ կ'մտածեն իրենց զուարձութեանց մէջ , ինչպէս որ ես կ'մտածեմ անոնց իմ հայ զերուս մէջ . ի հարկէ անոնց կենաց պիտի խմեմ սրտովն , բայց մինակս չպիտի խմեմ :

Եւ ա՛Արդանեան երկու պահակներու քովը դնաց , որոց հետ սուելի բարեկամութիւն կապեր էր քան այլոց հետ , որպէս զի Ակլուայէն եկած անուշիլ Անժոխի զինին միասին ընկելու հրաւիրէ :

Պահակներէն մին նոյն իրկունն իսկ հրաւիրեր էր , իսկ միւսն հետեւալ օրուան համար , հետեւազէս խնջոյքն երկրորդ օրուան համար որոշակ եցաւ :

Տ'Արդանեան՝ իր բնակարանը դատնալուն՝ Պահակաց մատանը զրկեց տասն երկու շիշ զինին , ապսպրելով որ զգուշութեամբ պահէն զանոնք . յետոյ՝ հացկերոյթին օրը՝ որովհետեւ ճաշի կէս օրին պիտի նստէին՝ ա՛Արդանեան ժամն իննէն Բլանշէն զրկեց որպէս զի ամէն բան պատրաստէ :

Բլանշէ՝ սեղանազետի պատույն հառնելուն համար որանձաւով՝

իելքով ամէն ինչ պատրաստելու հոգ տարաւ, և այս առթիւն իր տիրոջ կոշնականներուն մէկուն սպասաւորն իրեն օգնական տուաւ, և այս օգնականին անունն էր Գուրբո, նոյնպէս այն սուս զիւորն որ ա'Արդանեանը սպաննել ուղեր էր, և որ և ոչ մէկ զնդի մը մէջ պաշտօն ունենալուն՝ ա'Արդանեանի սպասաւորութեան մտեր էր, կամ լաւ ես ըսեմ, Բլանշէի, ա'Արդանեան իր կեանկն ազատելէն վեր :

Խնջոյքի ժամը հասաւ, երկու կաշնականներն եկան, սեղան նստան և կերակութները սեղանին վրայ շարեցին, Բլանշէ զենջակը թեին վրայ դրած կերակութը կ'մնծարէր, Ֆուրբո շեշերուն խցանը կ'հանէր, և Պրիզմն, այս էր նորարոյժ պատանիին առնունը, բլանշի մէջ կ'պարապէր զինին, որ կ'երեւէր թէ Տամբրան ցնցուելով առուեր էր։ Այս զինիին առաջին շիշը քիչ մը պղտոր էր վարի զին, Պրիզմն բաժակի մը մէջ լցուց այս դիրաը, և ա'Արդանեան հրաման տուաւ որ զայն խմէ, վասն զի այն թրշտառականը տակաւին իր պրմը չէր դտած :

Հիւրերն ապուրը խմէլէն ետեւ առաջին բաժակն իրենց րերանը պիտի տանէին երբ յանկարծ թնդանութը հնչեց Լուի ամրոցէն և Նեօֆ ամրոցէն։ պահանջներն անմիջապէս իրենց սուրերն առին, կարծելով որ անակնկալ յարձակում մ'ըրած են պաշարեալները, կամ անկլիացիները, ա'Արդանեան միւռներուն շափարագաշարժ, անոնց պէս ըրաւ, և երեքնին ալ շտապու դուրս ելան, որպէս զի բանակին մէջ իրենց տեղը ըռնեն :

Քայլց այն ինչ սեղանաստնէն դուրս ելան որ այս Ժխորին պատճառն իմացան, կեցցէ թագաւորը, կեցցէ կարտինալը, աղաղակներն առնէն կողմէ թնդացին և փողերը չորս զին կ'հընչէին :

Արդարեւ թաղաւորը, ինչպէս որ ըսեր էին, անհամբեր՝ երկու կայանէ հայձեալ անցեր, և նոյն պահուն բոլոր իր արքունեաց հետ և տաս հազար նոր զօրքով կ'հասնէր, իր հրացանակիրներուն մէկ մասն առջնէն, միւռն ետեւէն կ'երթային։ Տ'Արդանեան իր ընկերներուն հետ շրջապատ կեցած լինելով, նշանական շարժումն

իր բարեկամները բարեց , որ աչօք անոր կ'հետեւէին , և զի . առ
դրէ զին որ ամենէն առաջ զանի ճանչեց :

Ընդունելութեան արարաղութիւնն աւարտելէն ետեւ՝ չորս բա-
րեկամները քիչ ատենէն իրարու փարեցան :

— Տէր վկայ — զոշեց ա՛Արդանեան — կարելի չէ պատեհա-
զոյն ժամ՝ մը հասնիլ , և միսերը պաղելու ատեն ոնեցած չեն ,
այնպէս չէ , պարոններ . — յարեց նա երկու պահակներուն կող-
մը դառնալով , զորս իր բարեկամներուն ներկայացոց :

— Համ , համ , կ'երեկի թէ հացկերոյթի վրայ էիք — ըստ Բորթոս:

— Յօւսամ՝ որ — ըստ Արամիս — ճաշի կին հրաւիրած չէք:

— Միթէ խմելու զինիս ունիս զինետանգ մէջ — հարցոց Աթոս:

— Բայց , մոտցար , սիրելի բարեկամ՝ որ ձեր զինիէն ունիմ

— պատասխանեց ա՛Արդանեան :

— Մեր զինին — ըստ Աթոս զարմացած :

— Այս , ձեր դրկած զինին :

— Մենք քեզի զինի զրկեցի՞նք :

— Բայց զիտես , Անժուի բլուրներու անուշիկ զինիէն :

— Այս , զիտեմ որ զինին ակնարկել կ'ողես :

— Քու նախաղաս համարած զինիդ :

— Անտարակոյս , երբ ոչ շանբայն ունիմ և ոչ շանպէրդէն :

— Լաւ , առ ՚ի չզոյէ շանբայնի և շանպէրդէնի , ասով զոհ
պիտի լինիք :

— Աւրեմ Անժուի զինիէն բերել տուինք — ըստ Բորթոս —
ուրչափ զինեաէր ենք :

— Բայց ոչ , այն զինին է զոր ձեր կողմէն ինձի զրկեցին :

— Մեր կողմէն — ըստ երեք հրացանակիրները :

— Միթէ զո՞ւ , Արամիս — ըստ Աթոս — զինի զրկեցիք :

— Ո՞չ . և զո՞ւ , Բորթոս :

— Ո՞չ . և զո՞ւ , Աթոս :

— Ո՞չ :

— Եթէ զո՞ք չէք — ըստ ա՛Արդանեան — ձեր ուսնողոկազեան է :

— Մեր պահողոկազեանը :

— Անշնուշտ՝ ձեր պանդոկապետը, Կօտօն, Հրացանակիրներու պահողոկապետը։

— Իրաւ որ, թոյլ ուսկից կ'ուզէ զայ, փոյթ չէ — ըստ Բորբոս — ճաշակենք զայն, և եթէ լսու է, խմբնք։

— Ամենեին — ըստ Աթոս — անծանօթ աղբիւրէ մ'եկած զինի շխմենք։

— Իրաւոնք ունիս, Աթոս — ըստ ա՛Արդանեան։ — Միթէ իրօք ձեզմէ և ոչ մէկը Կօտօն պանդոկապետին չապսպրեց ինձ զինի ղրկելու։

— Ոչ. և սակայն բնչպէս մեր կողմէն կրնայ ղրկել։

— Աշտամիկ նամակը — ըստ ա՛Արդանեան, և զայն իր ընկերներուն ներկայացուց։

— Այս իր ձեռագիրը չէ — ըստ Աթոս — ես զայն կ'ձանչեմ. ես ինքս, մեկնելէն առաջ, մեր կերուխումին հաշիները մաքրեցի։

— Սուտ նամակ — ըստ Բորբոս — մնիք բնաւ չարգիլուեցանք։

— Տ'Արդանեան — ըստ Կրամիս յանդիմանական կերպով մը — բնչպէս կրցար հաւտալ որ մնիք արմուկ հանեցինք

Տ'Արդանեանի դոյնը նետեց, և ջլային սարսուռ մը բոլոր մարմինը ցնցեց։

— Դու ահ ու դոդ կ'ազդես ինձ — ըստ Աթոս, որ անոր հետ դուդելով կ'խօսէր ծանր պարագաներու մէջ — բնչ պատահեցաւ։

— Վազենք, վազենք, բարեկամներս — դոչեց ա՛Արդանեան — սոսկալի կասկած մ'առաւ միտքս, միթէ դարձեալ նոյն կընկան կողմէն է այս վրէմինսդրութիւնը։

Ըստ կարգի Աթոսին դոյնը նետեց։

Տ'Արդանեան գէալ ՚ի սեղանատունը վազեց, երեք հրացանակիրներն ու երկու պահակներն անոր ետևէն զացին։

Սեղանատունը մոտնելուն ա՛Արդանեանի աչքին զարնող առաջին առարկան եղաւ Պրիզմօն որ գետին փոռուեր ահոելի կերապով կ'թաւալէր ջղաձիգ շարժումներով։

Բլանշէ և Գուրրօ՝ մեռելի պէտ զունատ՝ անոր օդնելու կ'չա-
նային, բայց յայտնի էր որ ընդունայն կ'օգնէին. Հողեվարին
գէմքն օրհասական տադնաօք կարկամբ էր :

— Ա՛հ, զոշեց նա տ'Արդանեանը տեսնելով — ա՛հ, սոսկա-
լի բան, ինձ ներելու կերպարան դասելով զիս կ'թունաւորե՞ս :

— Ե՞ս — զոշեց ա'Արդանեան — ե՞ս, ողորմելի մարդ, բայց
ինչ կ'ըսես զու :

— Ես կ'ըսեմ որ գու տուիր ինձ այս զինին, կ'ըսեմ որ գու
հրանիրեցիր զիս որ անկից խմեմ, կ'ըսեմ թէ գու ուղեցիր վրէժդ
առնուլ, կ'ըսեմ թէ ահռելի՛ բան է այս :

— Մի՛ կարծեր այդպէս, Պիրիզմօն — ըստ տ'Արդանեան —
մի այդպէս կարծեր, կ'երգնում, կ'հաւասարեմ . . . :

— Ա՛հ, բայց Աստուած կայ վերը, Աստուած քեզ պիտի
պատմէ : Աստուած իմ, թող օր մ'իմ քաշածս նա ևս քաշէ :

— Աւետարանի վրայ կ'երգնում — զոշեց տ'Արդանեան հոգե-
վարին վրայ վազելով — կ'երգնում որ չգիտէի թէ այս զինին
թռնաւոր էր, և ես ալ քեզի պէս պիտի խմէի :

— Չեմ հաւատը ըստածիր — պատասխանեց զինորը, և ասեա-
ջանքը կրկնասարատկելով հողին փչեց :

— Սոսկալի՛, սոսկալի բան — կ'մրմռար Աթոս մինչդեռ Բոր-
թոս շիշերը կ'խորստակէր, և Արամիս, թէ և քիչ մ'ուշ, հրա-
մաններ կ'տար որ երթան խոստովանահայր մը կոչեն :

— Ո բարեկամներս — ըստ տ'Արդանեան — այս անգամ՝ դար-
ձեալ ո՛չ միայն իմ, այլ և այս պարոններուն կեսմիքն ազատե-
ցիք : Պարոններ — յարեց նա պահամիներուն դառնալով — իրն-
դրեմ, լութիւն պահէք բոլոր այս արկածին վրայ. կարելի է
մեծ մարդեր այս ձեր տեսած զործին մէջ մատ ունին, և այս
ամէն բանին աղէտը կընայ ձեր զլիկին վրայ իջնել:

— Ա՛հ, պարոն — կ'մրմմջէր Բլանշէ մեռած քան ողջ — ա՛հ,
պարոն, ինչպէս աժան պրծայ այս վասնոգէն :

— Ինչպէն, չարաճնի — զոշեց տ'Արդանեան — միթէ զի-
նիէն խմելու միտք ունէիր :

— Թաղաւորին կենացը , պարոն , փոքրիկ բաժակ մը պիտի
անէի , եթէ Փառրո չսեր ինձ որ զիս կ'կանչեն :

— Աւաղ — ըստ Փառրո , որոն ակրաները վախէն իրարու
կ'զարնէին — հեռացնել էր միտքս զանի որ մինակս խմեմ :

— Պարոններ — ըստ ա'Արդանեան՝ պահակներուն դառնա-
լով — կրնաք հասկնալ որ անցած գարձածէն ետքը՝ այսպիսի
ինջոյք մը շատ տիտոր պիտի լինի . ուստի ինձի ներողամիտ ե-
ղիք , և կ'աղաւեմ մեր այս հացիերոյթն ուրիշ օրուան ձղեցէք :

Երկու պահակները քաղաքավարութեամբ ներողամիտ եղան
ա'Արդանեանի , և գիտելով որ չորս բարեկամներ մինակ մնալ
կ'փափաքէին , քաշուեցան դացին :

Երբ ա'Արդանեան և երեք հրացանակիրներն առանց վկայի
մացին , այնպիսի դէմքով իրարու նայեցան որով իւրաքանչիւրն
ըսել կ'ուղէր թէ իրենց կացութեան ծանրութիւնը կ'զային :

— Ամենէն առաջ — ըստ Աթոս — սա սենեկէն դուրս ել-
նենք , մեռելը դէշ ընկեր մ'է , բուռն մահուամբ մեռած :

— Բլանշէ — ըստ ա'Արդանեան — քեզի կ'յանձնեմ այս խեղչ
մարդուն գիտելը : Գերեզմանի մը մէջ թաղել տուր . իրաւ է որ
յանցանք մը գործեր էր , բայց ապաշաւեր էր :

Եւ չորս բարեկամներ սենեկէն դուրս ելան , թողլով որ Բլան-
շէ և Գուրորո թաղման համար պարտ ու պատշաճն ընեն որիշ-
մնի :

Պանդոկապետն ուրիշ սենեակ մը տուաւ անոնց և խաշած հաւ-
կիթ ու ջուր մեծարեց , և նոյն նիք Աթոս զնաց մօտաւոր աղ-
բիւրէն ջուրը բերաւ : Քանի մը խօսելով ա'Արդանեան եղելու
թիւնը Բորթոսին ու Արամիսին բացատրեց :

— Լաւ . ուրեմն — ըստ ա'Արդանեան Աթոսին — կ'տեսնես ,
սիրելի բարեկամ , որ ցմահ պատերազմ պիտի մընք :

Աթոս զլուխը ցնցեց :

— Այս , այս , — ըստ նա — քաջ կ'գիտեմ . բայց միթէ կար-
ձես թէ նոյն կինն է :

— Ստոյգ եմ :

- Սակայն կ'խոսստովլանիմ որ տակաւին տարտկոյս ունիմ։
- Հապա ուսին վրայի խարանը։
- Անկըլուհի մ'է որ թերեւս Քրանսայի մէջ ոճիր մը զործածէ, և այս ոճիրին պատճառաւ զանի աղարսուած են։
- Աթոս, քու կինդ է այն, կ'ըսեմ քեզի — կ'կրկնէր տ'Արդանեան — միթէ չես յիշեր թէ երկու նկարագիրներն ալ բնշպէս իրարու կ'նմանին։
- Սակայն կարծէի թէ միուր մնուած էր, վասն զի ՚ի վազուց կորուսեր էի։
- Այս անդամ տ'Արդանեան իր դլուխը ցնցեց։
- Բայց վերջապէս ի՞նչ ընել պէտք է — ըստ սրատանին։
- Արդարեւ կարելի չէ անհոգ մնալ երբ մարդ իր զլխին վըսայ յարատեւ կախուած առը մը կ'տեսնէ — ըստ Աթոս — և թէ պէտք է այս վիճակէն ազատիլ։
- Բայց ի՞նչպէս։
- Մտիկ ըրէ։ ջանա զանի տեսնելու և անոր հետ բացատրութիւն մ'ունենալու. ըսէ անոր. խաղաղութիւն կամ պատերազմ։ իմ ազատորդիի խօսքս կ'տամ, ըսէ, որ քեզի գէմ բան մը չըսեմ. դու ևս քու կողմէդ հանդիսապէս երդում կ'ընես իմ մասիս չէզոք գիրը մը բռնելու. թէ ոչ պիտի երթամ օրինապէտը պիտի գտնեմ, թագաւորը պիտի տեսնեմ, դահիճը պիտի զտնեմ, քեզի գէմ բոլոր արքունիքը պիտի զրդում, պիտի ըսեմ որ խարան ունիս, քեզ գատաստանի պիտի կոչեմ, և եթէ անպարտ ելնես, լաւ, քեզ պիտի սպանեմ, վիայ իմ ազատորդիի խօսքս, մութ փողոցի մ'անկիւնը, ինչպէս որ կատաղի շուն մը կ'սպաննեն։
- Այդ միջոցը զէշ չեմ գտներ — ըստ տ'Արդանեան — բայց ի՞նչպէս տեսնել պէտք է այն կինը։
- Ժամանակը, սիրելի բարեկամ, ժամանակն առիթ կ'ըրէ. առիթը մարդուս վզկապն է. մարդ որչափ բռնուած լինի, այնշափ կ'շահէ երբ սպասել դիտէ։
- Այն, բայց ի՞նչպէս սպասել երբ մեր չորս կողմը մարդասպաններ և թուաւորողներ կ'գտնուին։

— Ա.ա՛հ — ըստ Աթոս — Աստուած մինչ ցարդ պահեց մեզ,
Աստուած դեռ ևս պիտի պահպանէ մեզ :

— Այս, մեզ, արգարե մենք մարդ ենք, և ինչ որ է, մեր
պաշտօնն է վատանգներու դիմաղրաւ կենալ. բայց նէ — յարեց
նա կիսաձայն :

— Ո՞վ, նէ — հարցուց Աթոս :

— Կոնսատան :

— Տիկին Պօնասիէօ, ահ, ճիշտ է — ըստ Աթոս — խեղչ
բարեկամ, մառցայ որ սիրահար ես :

— Լաւ ուրեմն. բայց — ըստ Արամիս — միթէ չտեսա՞ր թըշ-
ուառ մեռելին վրայ դտած նամակէդ որ սիրուհիք վանքի մը մէջ
է. վանքի մէջ մարդ շատ հանդիսաւ կ'ապրի, և երբ մի անդամ
թոշէլի պաշտօռումը վերջանայ, ես իմ մասիս կ'խոստանամ քե-
զի . . . :

— Քաջ է — ըստ Աթոս — քաջ է, այս, սիրելիդ իմ Ա-
րամիս, զիսենք որ ուխտ ըրած ես կրօնական լինելու :

— Ես առ ժամանակեայ կերպով հրացանակիր մ'եմ — ըստ
խոնարհութեամբ Արամիս :

— Կ'երեի թէ շատ ատենէ վեր սիրուհիէն լուր առած չէ
— ըստ մեղմիկ Աթոս — բայց ուշադրութիւն մի ընէք, արդէն
դիտենք այդ բանը :

— Լաւ ուրեմն — ըստ Բորթոս — կարծեմ թէ պարզ միջոց
մը կրնայ գանուիլ :

— Ի՞նչ հարցուց ա՞նրդանեան :

— 2ես ըսեր թէ վանքի մը մէջ է — հարցուց Բորթոս :

— Այս :

— Լաւ ուրեմն, պաշտօռումը վերջանալուն՝ դանի վանքէն կը
յափշտակենք :

— Բայց դարձեալ, միթէ պէտք չէ զիսնալ թէ ո՞ր վանքն է :

— Ճշմարիտ է — ըստ Բորթոս :

— Բայց, միաքս բան մը կ'զայ — ըստ Աթոս — միթէ չէս
հռապատեր, սիրելի ա՞նրդանեան, որ նոյն ինք թաղուհին ընտ-
րեր է այն վանքը սիրուհիդ համար :

— Այս՝ զէթ այգողէս կարծեմ։
 — Լու ուրեմն, բայց Բորթոս կրնայ քեզի օդնել այս պարագայիս մէջ։
 — Եւ ի՞նչպէս, ինոզրեմ։
 — Յայտնի է որ մարդիկու հիմք, դքսու հիմք, իշխանու հիմք մի ջոցու. անտարակոյս խօսքն ամէն տեղ կ'անցնի։
 — Լոռութիւն — ըստ Բորթոս մասն անոր շրմերու վրայ դնել — կարծեմ։ թէ կարտինալեան է և անշու շա բան մը չդիտէ այս մասին։

— Այն ատեն — ըստ Արամիս — ես, ես վրաս կ'առնում տեղեկութիւն ստանալու այն կնկան վրայ։

— Դու, Արամիս — զուցին երեք բարեկամները — դու, և ի՞նչ կը պատ։

— Թագուհոյն ողորմաբաշխին ձեռօք, որուն չետ սերտի կապուած եմ. . . — ըստ Արամիս կարմրելով։

Եւ այս ապահովութեան վրայ՝ չորս բարեկամները՝ որ իրենց պարզ ճաւցն առարտեր էին, իրարմէ բամնուեցան նոյն իրկուն վերտանին առեսութիւն ընկլու խոստմամբ. ա՛Յազանեան Մինիմ դարձաւ, և երեք հրացանակիրները թագաւորին զօրսկայանը դարձան, որ իրենց բնակարանը պատրաստել պիտի տային։

Բ

ԳՈՒՐԿԻՆԵԼ — ՌԱՌԻԺԻ ՕԹԵՎԵԱՆԵՐ.

Առկայն այն ինչ համելով թագաւորը, որ մեծ փոյթ ուներ թշնամին զիմացն ելնելու և որ կարտինալէն առելի մեծ իրաւամբ, Պլքինկիչէմի զէմ ունեցած առելութիւնն անմասն չէր, իր բոլոր պատրաստութիւններն ընել ուղեց, նախ Ռէ կղզիէն անկլիացիները վանելու, յետոյ Արշէլի պաշարումը սաստկացը-

նելու . բայց ակամայ ուշացաւ Անկուլէմի դքսին դէմ՝ Պատօնրիւ էրի և Շօնպէրիի մէջ ծագած երկպառակութիւններէն :

Պատօնրիւ և Շօնպէրիկ Ֆրանսայի մարաջախտ էին , և թագաւորին հրամանին ներքե բանակին հրամայելու իրենց իրաւունքը կ'արահանջէին . բայց կարտինալը՝ վախճալով որ Պատօնրիւ էր՝ 'ի սրտէ բողոքական՝ տկար կերպով չկոռի անկլիացւոց և Որոշչլցւոց դէմ , որ իր կրօնակիցներն էին , Անկուլէմի դուքսն առաջ կ'քչէր , և թագաւորն ալ իր թելաղրութեամբ պարապեափ անուաներ էր զանի : Ասոր արդիւնքը սա եղաւ որ առ ահի թէ Պատօնրիւ և Շօնպէրի բանակէն խցս չտան , ամէն մէկոն զատ զատ հրամանատարութիւն մը սաեղծեցին . Պատօնրիւ իր զօրակայանը քաղքին հիւսիսային կողմը դրաւ . Լէօն մինչ ՚ի Տօնրիւ , Անկուլէմի դուքսն արևելեան կողմը՝ Տօնրիւ քէն մինչև Բէրինյի , և Շօնպէրի հարաւային կողմը , Բէրինյիէն մինչև Անկուլէն :

Արքային եղասրը բնակարանն էր ՚ի Տօնրիւ :

Թագաւորին բնակարանն էր երբեմն յԵղրէ , երբեմն ՚ի Ա.ա ժամրի :

Աերջապէս կարտինալին բնակարանն էր աւագարլըին վրայ Լ.ա Բիէրի կամուրջը , անզատնէշ պարզ տուն մը :

Այս կերպով արքային եղասրը Պատօնրիւ իր վրայ կ'հսկէր , թագաւորն Անկուլէմի դքսին վրայ , և կարտինալը՝ Շօնպէրիկի վրայ :

Այն ինչ այս կարտաղրութիւնը լմացաւ , որ անկլիացիները Աէ կղզիւն վանելու ետևէ եղան :

Պարագայից բերմոնքը , յաջողեր էր . անկլիացիք՝ որ ամէն բանէ առաջ լաւ ուտեսափ կարօտ են որ լաւ զինուորներ լինին , լոկ աղած միս և անշահ պաքսիմատ ուտելով շատ հիւանդներ ունէին իրենց բանակին մէջ . ասկէ զատ՝ ծովը՝ որ տարուան այն ժամանակը շատ դէշ էր ովկիանու բոլոր եղերքի վրայ՝ ամէն օր նառ մը կ'խորասակէր . և ծովափը՝ Եկիմօնի հրուանդանէն մինչև խրամը՝ բոլորովին բեռնաւակիներու (pinasse) , մակոյկներու . և ակասներու բեկորներով կ'ծածկուէր ամէն անզամնն որ ջրերու .

տեղասութիւնն պատահէք ։ Հետեապէս՝ եթէ թաղառըին մարդկիները բանափէն գուրս չելնեին անգամ, յայտնի է թէ օրին մէկը ոլքինկչէմ՝ որ կամակորութենէ միայն ուէ կղզին կ'ընակէք, պիտի պարտառորէք պաշարումը բառնալու :

Բայց որովհետեւ Պ, Դուարակ իմաց տուառ թէ նոր յարձակում մ'ընելու համար մեծ պատրաստութիւններ կ'տեսնեն թըշնամիին բանակը, թաղառորը մտածեց թէ պէտք էք վախճան մը տալ դործին, և պէտք եղած հրամանները արձակեց վճռական հարուած մը տալու համար :

Մէք միաքը պաշարման օրադրութիւնն ընել չլինելով, այլ ընդ հակառակին միայն մեր պատմած պատմութեան վերաբերող դէպքերը մէջ բերել, բաւական պիտի համարինք քանի մը խօսքով ըսել որ այն ձեռնարկութիւնը յաջողեցաւ ՚ի մեծ զարմացումն թաղառորին և ՚ի սպարծանա կարտինալին : Անկլիացիք քայլ առ քայլ վանուելով, ամէն կոխուերուն մէջ նկոն մնալով, Լուս կղզիին անցքին մէջ սոսկալի ջարդ մ'ուտելով, ստիպուեցան նաւերը մանել, պատերազմի դաշտին վրայ երկու հազար հողի թողլով, որոց մէջ կ'զանուէին հինգ հազարապէտ, երեք տեղակալ հազարապէտ, երկու հարիւք յիսուն հարիւքապէտ, քսան ազատանի մարդիկ, չորս կտոր թնգանօթ և վաթսուն դրօշ, որ Բարիգ ասարուեցան Գլու Աէն-Սիմօնի ձեռօք և մեծ շքեղութեամբ Նօդր-Տամի կամարներէն կախուեցան :

Բանակը՝ Զէւզ Աստիճան երգեցին, և բոլոր ֆրանսայի մէջ նոյն դոհութեան երգերը տարածուեցան :

Ուրեմն կարտինալն ազատ էք պաշարումը շաբանակել, առ անց զէթ նոյն ժամուն, անկլիացոց կողմէն երկիրդ մ'ունենալու :

Բայց ինչպէս որ հիմակ ըստինք՝ անդորրութիւնը վայրինական է թէ ոլքինկչէմ դքսին մէկ պատղամառորը՝ Մօնղէ կիւ անուն, ըռնուեր էք, և արդէն հաստատ ապացոյցներ ունէին որ նիզակակցութիւն մը կ'նիւթուէք Կայսրութեան, Սալանիոյ, Անկլիայ և Լօրէնի մէջ :

Այս նիզակակցութիւնը ֆրանսայի դէմ կ'կազմուէք :

Անկէ զատ՝ Պլքինկհէմի բնակարանը՝ զոր իր կարծածէն առ էլի շտապան թողլու սախառւեր էր, թղթեր գտեր էին որ այս նիզակակցութիւնը կ'հաստատէին, և որ՝ ինչպէս կարտինալը կը հաւաստէ իր յիշագիրներու մէջ, տիկին Շէվրէօղէն և հետևապէս թագուհույն պատիւը կ'վտանգէր :

Քոլոր պատախանատութիւնը կարտինալի վրայ կ'ծանրանար, վասն զի քանի որ կարտինալն ինքնիշխան պաշտօնեայ էր, հարկ էր որ պատախանատութիւնը ևս մնար. ուստի իր մնձ հանճարին բոլոր հնարքը զիշեր ցերեկ է զործ կ'դնէր և Եւրոպայի մնձ պետառութիւններու մէջ ելած ամենէն թեթև շշուկը մտիկ ընելու փոյթ կ'տանէր :

Կարտինալը կ'ձանչէր Պլքինկհէմի զործունէութիւնը՝ մանաւանդ ատենլութիւնը, եթէ Ֆրանսայի դէմ սպառնալի նիզակակցութիւնը յաղթանակէր, իր բոլոր ազդեցութիւնը պիտի կորուսէր. սպանիական քաղաքականութիւնն ու աւտորիական քաղաքականութիւնը Լուվրի գահընին մէջ իրենց յատուկ ներկայացրիչներն ունէին, ուր զեռ ևս կուտակիցներ կ'զտնէին. ինք, նիշշիկէօ, զաղղիացի պաշտօնեայն, ազգային զերազանց պաշտօնեայն, կորսուած էր: Թագաւորը՝ տղու մը պէս անոր հնազանգելու միջոցին, կ'ատէր նաև ինչպէս կ'ատէ արայ մ'իր վարպետը, Պարոնին և թագուհիին մասնաւոր վրէ մխնդրութեան զանի կ'թողլուր անպաշտպան. հետեւապէս կարտինալը կորսուած էր, և թերեւս Ֆրանսա անոր հետ կորսուէր: Ուստի այս բաներուն առնուլ պէտք էր:

Այս պատճառաւ սուրհանդակիներ՝ որ ժամէ ժամ՝ կ'առելնային, զիշեր ցերեկ կ'մտնէին կ'ելնէին Լա Բիէր կամըջին տան մէջ, ուր կարտինալն իր բնակութիւնը հաստատեր էր:

Արօնաւորներ էին և այնչափ գէշ հազեր էին իրենց զգեստն որ գիւրին էր ճանչել որ մանաւանդ զինուորեալ Եկեղեցւոյն կը վերաբերէին. նոյնպէս կիներ որ իրենց սպասաւորի հաղուստով կ'նեղուէին և որոց լայնարձակ լաթերը բոլորովին չէին կարող պօղել իրենց կլոր ձևերը. ի վերջէ կային նաև ուցած ձեռնե-

ըսպ, այլ բարակ սրունզներով զեղացիներ որ մըսն մը հեռուէն աղնուական մարդ կ'հօտէին :

Դարձեալ նուազ ախորժելի պայելուներ կ'զային, վասն զի երկու երեք անգամ ձայն ելու թէ քիչ մնաց որ կարտինալը պիտի սպաննէին :

Իրաւ է որ նորին բարձրութեան թշնամիները կ'ըսէին թէ նոյն ինքն անձարակ մարդասպաններ զաղանի իրեն դէմ կ'զինէր, որպէս զի, 'ի հարկին, վրէժ լուծելու առիթ ունենայ. բայց պէտք չէ հաւտալ ոչ պաշտօնէից ըսածին և ոչ իրենց թշնամիներուն ըսածին :

Սակայն այս բանս արգելք մը չէր կարտինալին (որուն ամենէն անհաշտ չարախօսներն իր անձնական քաջասրաւութիւնն երբէք կասկածի ներքեւ չէին ձգեր), ստէպ զիշերոցին արշաւանդներ ընել, երբեմն Անկուլէմի դքսին կարեռ հրամաններ հաղորդելու, երբեմն թագաւորին հետ խորհրդակցելու, երբեմն քանի մը պատղամառութերու հետ բանակցելու, զօր չէր ուզեր թողուլ իր բնակարանը մտնելու :

Միւս կողմէն հրացանակիրները՝ որ պաշարման գործին մէջ մեծ բան մը շանէին ընելու, խիստ հսկողութեան ներքեւ չէին և ուրախ զուարթ կեանք մը կ'անցրնէին : Այս այնքան զիւրին էր մեր երեք ընկերներուն համար մամաւանդ, որչափ որ ու. ար Դրէվիլի բարեկամներ լինելով՝ առանց դժուարութեան արտօնութիւն կ'ստանային ուշանալու և բանակին փակումն ետքը մասնառ հրամանադիրներով դուրս մնալ :

Արդ՝ իրկուն մ'երր ա՛Արգաննան՝ որ խրամի պահպանութեան կ'հսկէր, Աթոս, Բորբոս և Արամիս, իրենց մարտական երիվարներու վրայ հեծած, պատերազմի վերաբերներով ծածկուած, և իւրաքանչիւրն իր մէկ ձեռքն ասորմանակին կոթին վրայ զրած երեքն ի միասին զինետունէ մը կ'զայնային, զինետուն մը զոր Աթոս զտեր էր երկու օր առաջ Լա Ժարիի ճամբուն վրայ և զայն Գոլօնպիէ-Ռուժէ կ'անուանէին, հետեւելով այն շատիզն որ բանակը կ'տանէր, միշտ մեծ զդոշութիւն ընելով, ինչպէս որ ը-

սինք , որպէս զի որողայթի մը չընկնին , երբ պատահար զեղէն մէկ քառորդ մըսն հեռուելն կարծեցին լսել այրուձի զնդի զափ-ըն որ զէ այ իրենց կ'զար : Խսկոյն երեքնին ալ կանկ առին : իրարու փական և ճամբառն մէջ տեղ սպասեցին . վայրկենէ մը ետքը , և որովհետեւ նոյն պահուն լուսինն ամպէ մը դուրս կ'ել նէր , տեսան որ Ճամբառ մը ծայրէն երկու ձիառոր կ'երեխն , որ զանանք տեսնելով ըստ կարգի կանկ առին և կարծես թէ կ'խոր-չէին թէ արդեօք պէտք էր շարունակել իրենց Ճամբառն թէ ոչ ետ զառնալ : Այս վարանումը կասկած մը տուաւ երեք բարե-կամներուն , և Աթոն՝ քանի մը քայլ ընդ առաջ քալելով , իր ամուր ձայնով պառաց :

— Ո՛վ է այն :

— Դուք ով էք — պատասխանեց այն ձիառներէն մին :

— Այդ պատասխան չէ — ըստ Աթոս : — Ո՛վ էք դուք , պատասխան տուէք , թէ ոչ կրակ պիտի ընենք :

— Պարսներ , լաւ մոտածեցէք ձեր ընելիք բանին վրայ — բաւ այն ատեն քաջաշնչին ձայն մ'որ կարծես թէ հրամայե-լու սովոր էք :

— Բարձրագոյն սպայ մ'է որ զիշերային շրջանը կ'ընէ — ը-սաւ Աթոս — Բնչ կ'ուղէք ըսել , պարոններ :

— Դու ով ես — ըստ նոյն ձայնը հրամայական կերպով — հիմակ դուք պատասխան տուէք , թէ ոչ ձեր անհնազանդութեամբ վերջը փորձանքի կրնաք հասնիլ :

— Թագաւորին հրացանակիրներն ենք — ըստ Աթոս , հետ-դիետէ համոզուելով որ իրենց այս հարցումն ընողն իրաւոնք ուներ :

— Ո՞ր զնդէն :

— Դրէ վելի զնդէն :

— Առաջ անցէք հրամանիս , և եկէք համար տալու ինձ թէ այս ժամուս Բնչ կ'ընէք այս տեղ :

Երեք ընկերակիցներ ընդ առաջ անցան , փոքր ինչ ականջնին կախած , վասն զի երեքնին ալ այժմ համոզուած էին որ իրենցմէ

ջջրաւորագոյնին հետ է իրենց զործը, միշտ Ալմափն թողլով իրենց կողմէ սպառափան տալու հոգը :

Երկու ձիաւորմերէն մինչ այն որ երկրորդ անդամնն խօսեր էր, իր ընկերէն տաս քայլ առաջ կեցեր էր, Ամսս Բորժուսին և Արամիսին նշան ըրաւ որ իրենք ալ ետին մասն և ինքը մինակ առաջ անցաւ :

— Կերեցէք ինձ, սպայր իմ — ըստ Ամսս — բայց չդիտէինք թէ որո՞ւ հետ է մեր զործը, և կրնաք նկատել որ լու սպահանութիւն կ'ընելիք :

— Ի՞նչ է անունդ — ըստ սպայն, որ մասամբ մ'իր զէմքը կ'զոցէր վերարկուովը :

— Բայց դոք ես, սպարոն — ըստ Ալմաս՝ որ սկսեր էր ընդունիլ այս հաւատաքննութեան դէմ — նախ սպացցց մը տուէք որ զիս հարց ու փորձ ընելու իրաւոնք ունիք :

— Անունդ — վրայ բերաւ երկրորդ անդամ՝ ձիտորն իր վերարկուն թողլով այնալէս որ զէմքը բաց մնայ :

— Պարօն կարտինանալը — դոչեց հրացանակիրն ապշած :

— Անունդ — վրայ բերաւ Նորին բարձրութիւնն երբորդ անդամ :

— Ալմաս — ըստ հրացանակիրը :

Կարտինանալը նշան մ'ըրաւ ձիաւանին՝ որ մօտեցաւ :

— Այս երեք հրացանակիրները մեզի պիտի հետեւին — ըստ նա ցած ձայնով — չեմ ուզեր զիտնան որ բանակատեղին դորս եկեր եմ, և անսնց մեզի հետեւելովը պիտի սպահով լինինք որ այս բանս ուրիշի չպիտի ըստն :

— Մենք ազատարդի ենք, ամբո իմ — ըստ Ալմաս — մինակ մեր խօսքն ուղեցէք և ուրիշ բանի վրայ անհոգ եղիք, փառք Աստուծոյ, զաղանիք մը սպահել զիտենք :

Կարտինանալն իր սուր աչելն այս ազատախօս խօսակցին վրայ մեխեց :

— Կուրբ ականջ ունիս, Պարօն Ալմաս — ըստ կարտինանալը — բայց այժմ սա ըսելիքս մտիկ ըբէ՛, անվատահութենէ չէ ոք

կ'ինդրեմ ձեզնէ բնձ հետևելու , այլ իմ ապահովութեանս համար անոտարակոյս քու երկու ընկերներդ ու . ու . Բորթոսն ու Աշտամիսն են :

— Այս , բարձրագատիւ տէր — ըստ Աթոս , մինչգեռ ետե մնացած երկու միւս հրացանակիրները զլեւարկ ՚ի ձեռին կ'մօտենային :

— Զեզ կ'ձանչեմ , պարուներ — ըստ կարտինալը — ձեզ կ'ձանչեմ . զիսեմ որ բոլորովին իմ բարեկամներս չեք , և այս բանիս վրայ կ'ցաւիմ , բայց զիսեմ որ քաջ և հաւատարիմ ուղասորդիներ էք և մարդ կարող է ձեզի վստահիլ : Պարոն Աթոս , շնորհ ըրէ ուրեմն ինձի ընկերանալու քու երկու բարեկամներուդ հետ մէկ տեղ , և այն առեն՝ եթէ հանդիսպինք՝ նորին վեհափառութեան նախանձը շարժելու շափ պահապան ընկերակիցներ պիտի ունենամ :

Երեք հրացանակիրները մինչեւ իրենց ձիերուն վզին վրայ ծռեցան :

— Լայ , պատոյս վրայ կ'երդնում — ըստ Աթոս — Զեր բարձրութիւնն իրաւունք ունի մեզ իրեն հետ ստանելու . ճամբուն վրայ աշուելի գէմքերու հանդիսպեցանք և անոնցմէ չորսին հետ կոին մ'անգամ ունեցանք Գոլոնպիէ - Ռուժի մէջ :

— Կոին մը , և ինչ պատճառաւ , պարուներ — ըստ կարտինալը — ես կուռարարները չեմ սիրեր , արգէն զիսէք :

— Ճիշտ ասոր համար է որ պատիւ ունիմ կանխառ իմայ տալու . Զեր բարձրութեան անցած դարձածը . վասն զի թերես ուրիշէ իմանաք , և սխալ տեղեկութեան վրայ մեղ յանցաւոր դատէք :

— Ես այդ կուռին արդիւնքն ինչ եղաւ — հարցուց կարտինալն ունքերը պուտելով :

— Բայց իմ Արամիս բարեկամն որ առա է , սրի պլոտիկ հարտած մ'ընդունեց թեին , և այս բանս արգելք մը չպիտի լինի ; ինչպէս որ Զեր բարձրութիւնը կրնայ զիսել , վաղը յարձակումն ընել , եթէ Զեր բարձրութիւնը պարսպին վրայ ելնել հրամայէ :

— Բայց դոք այնպէս զիւրութեամբ սրի հարուածներ ընդուանող մարդիկ չեք — ըստ կարաբինալը — որի աղաս համարձակ ըսէք, պարունակը, անշուշտ դոք ևս քանի մը հարուած տուիր, խոստովանեցէք, զիաւէք որ իրառունք ունիմ՝ ձեզի ներում՝ շնորհել:

— Ե՞ս, տէր իմ — ըստ Ամոս — և ոչ իսկ սուրս առնի, այլ միայն իմ հակառակորդիս մէջքէն բռնեցի և պատուհանէն վար նետեցի, կ'երեւ թէ վար ընկնելու ատենք — շարունակեց Ամոս փոքր ինչ վարանելով — աղզրը խորտակեցի:

— Հա՛, հա՛ — ըստ կարտինալը — հասկա դո՞ւ, ուր Բարթոս:

— Ե՞ս, տէր իմ, զիանալով որ մենամարտութիւնն արգիլեալէ, բազմարան մ'առի և անով աւազակներէն մէկոն այնպիսի հարուած մը տուի որ կարծեմ թէ ուսը խորտակեցի:

— Լա՛ — ըստ կարտինալը — իսկ դո՞ւ, ուր Արամիս:

— Ե՞ս, տէր իմ, ըստ որում անուշ եմ 'ի բնէ, և ասկէ զաս, ինչ որ թերեւս տակաւին չզիսէք, կրօնական կարդ մըտնելու վրայ եմ, կ'ողէի զատել իմ ընկերներս, երբ այն ապիրաաններէն մին ձափութես սրի հարուած մը տուաւ նենդօրէն, այն ատեն համբերութիւնս հասաս, ես ալ իմ սուրս քաշեցի, և որովհետեւ վերսափին յարձակելու կ'պատրաստուէր, կարծեմ թէ վրաս նետուելու պահուն ոտքս մարմնոյն միւս կողմը թափանցիքը էր. քաջ դիմեմ որ վար ընկառ, և այնպէս երեցաւ ինձ որ միւս երկու ընկերներուն հետ առին տարին:

— Սասանայ — ըստ կարտինալը — ինչպէս, պարուններ, զինետան մը մէջ վէճի առթիւ երեք մարզու զլուխն էք կերերէ կ'նայիմ՝ որ շատ ճարպիկ էք այսպիսի զործերու մէջ. և կոիւն ինչ սպանճառաւ ձեր մէջ ծաղեր էր.

— Այս առզիրատները զինով էին — ըստ Ամոս — և զիտնալով որ իրեւոնը կին մ'եկեր էր զինետոնը, կ'ողէին բոնի ներս մանել:

— Բոնի դուռը բանալ — ըստ կարտինալը — և ինչ ընելու էին:

— Անտարակոյս կինը բռնաբարելու համար — ըստ Ամոս —

պատիւ ունեցայ յայտնել Զեր բարձրութեան որ այն թշուառականները դինով էին :

— Եւ միթե այն կինը զեռուհասակ և սիրուն էր — հարցոց կարտինալը գոյզն ինչ անհանդստութեամբ :

— Այն կինը չտեսանք , ամէր իմ — ըստ Աթոս :

— Չաեսար , ահ , շատ լաւ — վրայ բերաւ կարտինալն աշխատիւ — աղէկ ըրիք կնական մը պատախը պաշտպանելով , և որովհեաւ ես ալ Գուշնապիէ - Ռուժ օմեանը պիտի երթամ , պիտի հասկնամ թէ ճշմարտութիւնն ըսկիք ինձ թէ ոչ :

— Տէր իմ — ըստ հարաբառութեամբ Աթոս — մնք պատորդի ենք , և մեր զլուխն աղասելու համար իսկ սուտ շենք խօսիք :

— Ուստի ես ալ բնաւ չեմ կասկածիր ձեր ըսածին վրայ , ու Աթոս , և ոչ դոյզն կասկած ունիմ , բայց — յարեց նա խօսակցութիւնը փոխելու համար — ուրիմն այն կինը մինակ էր :

— Այն կինը ձիաւորի մը հետ սենեակը փակտեր էր — ըստ Աթոս — բայց որովհեաւ դրսի ձայնին անաւարքեր մնալով ձիաւորը շերեցաւ , հաւանական կ'երեկի որ վատ մ'է :

— Մի գատեք յանդկնաբար , կ'ըսէ Աւետարանը — պատասխանեց կարտինալը :

Աթոս ծռեցաւ :

— Հիմակ խնդիրը պարզուեցաւ , որարոններ — շարունակեց կարտինալը — իմ ուզածս իմացայ , ետեւս եկէք :

Երեք հրացանակիրները կարտինալին ետեւը մնացին , որ վերստաին իր վերաբերութիւն փամթուեցաւ և ձին ծանր քալեցուց իր շորս ընկերներէն ութ տաս քայլ ընդ առաջ դնալով :

Քիչ ատենէն լրին և մենակաց օթևանը հատան , օթևանապետ դիաւէր անշուշտ թէ ինչ անուանի այցելուի մը կ'սովասէր , և հետեապէս տմէն զլիսացաւ յաճախորդները ճամբեր էր :

Դուռը համնելէն տաս քայլ առաջ կարտինալը նշան ըրաւ իր ախտուալանին և երեք հրացանակիրներուն որ կայ առնուն . բոլորովին թամբեալ ձի մը փայտէ փեղիին կապուած էր . կարտինալն երեք անդամ յատուկ կերպով մը զարկաւ :

Վերաբերուով՝ ծածկուած մարդ մը շտամ մը զորս ելաւ և կարտինալին հետ քանի մը խօսք փոխանակեց . յետոյ ձի հեծառ և Սիւրմէրի ճամբով մեկնեցաւ , և այս ճամբան միանդամայն բարիզինն էր :

— Յառաջ անցէք , պարոններ — ըստ կարտինալը :

— Ճշմարտովինն ըսիք ինձ , աղասորդիներս — ըստ նու երեք հրացանակիրներուն ուղղելով խօսքը — և եթէ ըստ արժանուցն վարուիք , այս երեկոյեան հանդիպումը ձեզի կրնայ շտամտաւէտ դառնալ . բայց առ այժմ իմ ետեւ ս եկէք :

Կարտինալը վար իջառ , նոյնն ըրին և երեք հրացանակիրները , կարտինալն իր ձիուն սանձն ախտեորանին ձեռքը նետեց , երեք հրացանակիրներն իրենցը պատուհանին փեղկերուն կապեցին :

Օթևանապետը դրան սեմին վրայ կ'ապատէր . իրեն համար կարտինալը սպայ մ'էր որ կնկան մ'այցելութեան կ'զար :

— Միթէ դեմնայարկը սենեակ մ'ունիս , որպէս զի այս պարոններն աղուոր կրակի մը մօտ ինձի սպասեն — ըստ կարտինալը :

Օթևանապետը մնձ սրահի մը դուռը բացաւ , ուր նոր դրերէին սակառին մնձ և պատուական վառարան մը զէշ կրակարանի մը տեղ :

— Ահա այս ունիմ — ըստ նա :

— Լաւ է — ըստ կարտինալը . — այն տեղ մտէք , պարոններ , և հաճեցէք ինձի սպասելու , կէս ժամն պիտի դառնամ :

Եւ մինչդեռ երեք հրացանակիրները զետնայարկին սենեակը ի մտնեին , կարտինալը , առանց ուրիշ տեղեկովիններ հարցընելու , սանդղէն վեր ելաւ այնպիսի մարդու մը պէս որ իր ճամբան ուրիշին հարցնելու պէտք շունի :

Գ

ԿՐԱԿԵՐԱՆԻ ՌԽԵՆԱՆԵՐՈՒ ՕԳՏԵԿԱՐՈՒԹԻՒՆԸ.

Յայտնի էր թէ՝ առանց զիտնալու և մինակ իրենց ասպետական և բաղդախնդիրը բնաւորութենէ յորդորեալ, մեր երեք բարեկամները քիչ մ'առաջ ծառայութիւն մը մաստցեր էին մարդու մը զոր կարտինալն իր մասնաւոր սրաշտաբանութեամբը կը պատուէր :

Այժմ, ովէ է այս մարդը : Երեք հրացանակիրները նախ այս հարցումն առանձին ըրին, յետոյ աեւնելով որ իրենց խմացականութեան տուած և ոչ մէկ պատասխանը գոհացոցիչ չէր, Բորթոս պանդոկապետը կոչեց և տապեղուլունք խնդրեց :

Բորթոս և Արամիս սեղանի մ'առ ջեւ նստան խաղալու : Աթոս ժուռ եկաւ մամուալով :

Մամալով և պարտելով Աթոս կ'անցնէր կ'զառնար կէսէն խորսակած կրակարանի մը ծխանին առ ջեւն որուն միւս ծայրը վերի սենեակը կ'հասնէր, և ամէն անդամուն որ կ'անցնէր կը դառնար՝ խօսքերու մրմունջ մը կ'լսէր որ ՚ի վերջէ իր ուշադրութիւնը դրանեց : Աթոս մօտեցաւ և քանի մը բառ լսեց և անշուշտ իրեն այնքան մեծ կարեռութեան արժանի երեցան որ իր երկու ընկերներուն նշան ըրաւ լրւու կենալու, ինքն ալ ականջը տնկած ծխանին ներքին բերնին բարձրութեամբը կենալով :

— Մաիկ ըրէ, Միլէտի — կ'ըսէր կարտինալը — զործը կառեւր է, աս տեղ նստէք և խօսինք :

— Միլէտի՝ — մրմուաց Աթոս :

— Զեր բարձրութեան մաիկ կ'ընեմ խխատ մեծ ուշադրութեամբ — պատասխանեց կնկան մը ձայնն որ հրացանակիրին սարսնու մը աղդեց :

— Անկլիացի նաւակով փոքրիկ նառ մը՝ որուն նստագետն հաւասարիմ է ինձ, Ծարանդի գետաբերանը քեզի կ'սպասէ, Բուէնդի բերդին մօտ, վաղն առառ առաջասար պիտի սպարզէ ու մեկնի :

— Ուրեմն պէտք է որ այս զիշեր երթամբ:

— Անմիջապէս, այսինքն երբ իմ հրահանգս ընդունիս երակո մարդիկ զոր գուրս ելնելուդ պիտի դանես՝ քեզի պիտի ուղևորին իրբե պահապան . պիտի թողուս որ ես առաջ մեկնիմ, յետոյ, իզնէ կէս ժամ ետքը, դու ալ պիտի ելնես :

— Եյս, աէր իմ: Ճիմակ ձեր ինձի յանձնելիք զործին դառնանք, և որովհետեւ կ'փափաքիմ Ձեր բարձրութեան վստահութեանն արժանանալ, չնորհ ըրէք յատակ և ճշգրիտ սճավ խրնագիրը բացատրէլ ինձ որպէս զի վրապակ մը չընեմ:

Պահ մը խորին լուսթիւն տիրեց երկու խօսակիցներու մէջ. յայանի էր որ կարտինալը կանխառ կ'կշռէր զործածելիք ոճը, և թէ Միլէափի իր բոլոր մասուցական կարողութիւնները կ'ամփափէր որպէս զի անոր ըսելիք բաները լաւ հասկնայ և լոելէն ետեւ իր յիշողութեան մէջ դրոշմէ:

Աթոս այս պահէս օգուտ քաղելով իր երկու ընկերներուն ըստ որ ներուն դուռը գոցեն և նշմայր ըստ որ դան իրեն հետ մտիկ ընեն :

Երկու հրացանակիբրներն որ իրենց հանդստոթիւնը կ'ոիրէին՝ աթոռներ առին միասին զատ զատ իրենց և հատ մ'ես Նթոսին համար :

Այս ատեն երեքնին ալ նստան՝ զլուխներն իրարու մօտ և առ կանչն ՚ի սպահ :

— Լոնտօն պիտի երթաս — շարունակեց կարտինալը : — Ան զամ մ'որ Լոնտօն հանիս, պիտի երթաս Պրքինկչէմը զանելու:

— Կ'խնդրեմ Ձեր բարձրութենէ դիտել — ըստ Միլէափի — որ անդամանէ ասողիկներու զործէն վեր, որուն համար դուքսն իմ վրայ կասկած առած է, վստահութիւնը բարձած է վրայէս:

— Անոր համար այս անդամ — ըստ կարտինալը — անոր վրայ

տահանքինը զրաւելու խնդիր չկայ բնաւ, այլ աղատօրէն և անկեղծօրէն անոր պիտի ներկայիս իրեն բանակցուհին :

— Աղատօրէն և անկեղծօրէն — կրկնեց Միլէտի երկմառութեան անասելի շեշտով մը :

— Այս, աղատօրէն և անկեղծօրէն — վրայ բերաւ կարտինալը նոյն ձայնով — բոլոր այս բանակցութիւնը յայտ յանդիմանընել պէտք է :

— Եթ բարձրութեան հրահանգաց տառ առ տառ պիտի հետեւիմ, և կ'սպասեմ որ զանոնք տաք ինձի :

— Իմ կողմէս պիտի երթաս ոլքինկէմը պիտի դանիս, և անոր պիտի ըսես թէ իր ըրած բոլոր պատրաստութիւնները զիտեմ, բայց բնաւ հոգ չեմ ըներ, վասն զի՞ եթէ առաջին յանդուդն քայլ մ'առնու, թաղուհին 'ի կորուս կ'մատնեմ:

— Միթէ պիտի հաւատաց, Բարձրապատիւ տէր, որ անոր ձեր ըրած սպառնալիքը կատարելու վիճակին մէջ էք :

— Այս, վասն զի՞ փաստեր ունիմ:

— Պէտք է որ այս փաստերն իր նկատողութեան ենթարկեմ:

— Անշնչառ, և պիտի ըսես որ կ'հրաբերի իր և թագուհին տեսակցութեան՝ սպարապետին տիկնոջ տունը, այն իրկունն որ այս տիկինը դիմակառոր հանդէս մը առառ. պիտի ըսես անոր, որպէս զի՞ լիովին հաւատայ, թէ Սեծ-Մօկոլի հաղուստով զոր նիզի առավեաը պիտի կրէր, եկեր էր նա, և թէ այն հազուստն անորմէ դներ էր հազար հինգ հարիւր ոսկի տալով:

— Ըստ աղէլ, տէր իմ:

— Խալացի կախարդի մը կերպարանով դիշեր մը Պալատը մտնելուն և ենելուն բոլոր պարագաները զիտեմ. պիտի ըսես անոր, որպէս զի իմ առած աեղեկութեանցս ստոգութեան վրայ կատած մը չունենայ, թէ իր վերարկուին մէջ սև արտառքներով, մեռելի դլուխով և շեղաղիք ոսկրներով նկարուած սպիտակ շրջապղեստ մ'ունէր, վասն զի՞ եթէ բռնուէր ինքվինքը Տամ-Պլանչի (սպիտակ տիկին) ուրուսկանին աեղը պիտի անցընէր, որ:

ինչպէս ամէն մարդ զիտէ , Առվը կ'զայ ամէն անդամուն որ մեծ զէպք մը պատահէի :

— Այս է բոլոր ըսելիքդ , ալ իմ :

— Ըսէ նաև անոր որ Ամիէնի դործին բոլոր մանր պարագաները զիտեմ , թէ անով մասցի կերպով հիւսուած վէպ մը պիտի յօրինեմ , պարագիլին յատակադիծն և նոյն զիշերային տեսարանին զլսաւոր զերասաններուն պատկերն ալ նկարելով :

— Այդ բանն անոր պիտի ըսեմ :

— Ըսէ նաև թէ Մօնդէկիւն ձեռքս է , թէ Մօնդէկիւն Պատղիյն է , թէ արդարե իր վրայէն նամակ մը չդտան , բայց տանջանքի ենթարկուելով պիտի ստիպուի զիտցածն և մինչեւ անդամ . . . չդիտցածն ըսելու :

— Աքանչելի է :

— Վերջապէս աւելցուը նաև թէ զուքոը՝ Անէ կղզիէն հեռանալու շատարէն՝ իր բնակարանին մէջ մոցեր է ափկին Շէվը թէօզի մէկ զիրն որ թագուհոյն պատոյն շատ արատառ որ է , սա նկատմամբ որ ոչ միայն կ'չաստատէ թէ թագուհին թազառին թշնամիները կրնայ սփրել , այլ նաև Ֆրանսայի թշնամնաց հետ կը դաւակցի : Այս ամէն ըսածներս միտքդ պահեցիր , այնպէս չէ :

— Ձեր բարձրութիւնը հիմակ պիտի դատէ . Սպարագեաի սիկնոջ պարահանգէսը , Առվիրի զիշերը , Ամիէնի երեկոյթը , Մօնդէկիւի ձերբակալութիւնը , Շէվը օզ ափկինոջ զիրը :

— Ճիշտ այլպէս — ըստ կարտինալը — Ճիշտ այլպէս . դուշտու ընտիր յիշուութիւն մ'ունիս , Աթլէտի :

— Բայց — վրայ բերան այն որուն կարտինալն այն դդուելի դովեսան ուզուեր էր — եթէ այս բոլոր փաստերուն հակառակ դոքսը չզիջանի և Ֆրանսայի դէմ սպառնայ , այն ատեն բնչընելու է :

— Դուքսը խենդի պէս սիրահար է , կամ լաւ ևս , ապուշի պէս — վրայ բերան Աթլիթէս խորին զառնութեամբ մը — հին բաղդամալիր սասպետներու պէս՝ այս պատերազմին ձեռնարկեց իր զեղանի սիրուհոյն մէկ ակնարկին արժանի լինելու . համար : Եթէ

իմանայ որ այս պատերազմը կրնայ իր մոտածմանց առարկայ տիկինով՝ ինչպէս որ կ'ըսէ, պատիւն և թիւնես աղաստոթիւնը վտանգի մէջ դնել, վստահ եմ՝ որ զործի չմկսած լաւ մը կ'խորհի:

— Եւ սակայն — ըստ Միլէտի այնպիսի յամառ ու թեամբ որմէ կ'երեւէր փափաք մ'որտակի հասկնալու թէ իր ստանձնած պաշտօնը մինչև ուր կրնայ քշել — տակայն եթէ յամառի:

— Եթէ յամառի — ըստ կարտինալու . . . — բայց հաւանական չէ:

— Կարելի է — ըստ Միլէտի:

— Եթէ յամառի . . . — Կորին բարձրութիւնը կանկ մ'առառ և առա շարունակից . — Եթէ յամառի, լաւ ուրեմն, յոյսս պիտի դնեմ այն դէպքերուն մէկուն մէջ որ պետութեանց կերպարանը կ'փոխեն:

— Եթէ Զեր բարձրութիւնը բարեհանձնը այս գէպքերէն մէկ քանին պատմութենէ քաղելով յիշել — ըստ Միլէտի — թերեւս ես ալ ձեր վստահութեան մասնակից դանուիմ ասկաղայն մէջ:

— Լաւ, օրինակի համար յիշել միանգամ — ըստ Ռիշիկօ — թէ երբ 1610ին, Հանրի Պր. շքայիշատակ թագաւորը, գուքսը շարժող պատճառին նման զրդիուէ մը շարժեալ՝ կ'պատրաստուէր Գլանտրան և Խտալիան միանգամայն արշանել որպէս զի երկուամեք հարուածէ Աւատրիան. լաւ, միթէ այն ժամանակ դէպք մը աեղի չունեցաւ որ զւատրիան աղաստեց: Ինչո՞ւ համար Քրանտայի թագաւորը կայսեր ունեցած յաջող բազուք չպիտի ունենայ:

— Զեր բարձրութիւնը կ'ուղէ խօսիլ Գէրոնրի փողոցին մէջ արտօն դանակի հարուածին վրայ:

— Ճիշտ է — ըստ կարտինալու:

— Զեր բարձրութիւնը չվախնար արդեօք որ Ռամայաքի տաննանքը չահարեկէ այն անձերն որ պահ մ'անոր օրինակին հետեւու միտում մը կ'ունենան:

— Ամէն ատեն և ամէն երկիրներու մէջ, մանաւանդ երբ այն երկիրները կրօնիւ բաժնուած են, մոլեռանդներ կան որ ուրիշ բան չեն փափաքիր այլ միայն մարտիրոս լինիլ: Ահա Ճիշտ այս պառ

Հուս կ'յիշեմ որ մաքրակրօնները (puritain) Պըքինկհէմ դքսին դէմ կատղած են և իրենց քարոզիչները զանի իրքեւ Հակաքրիստոս կ'ներկեայն :

— Ասւ ուրեմն — ըստ Միլէտի :

— Ասւ ուրեմն — շարունակեց կարտինալն անտարբեր գէմ քով մը — այս պահուս, օրինակի համար, կարեռն է զեղանի, նորահաս, ճարապիկ կին մը զանել, որ նոյն իսկ դքսէն վրէժ լուծելու միտում տնենայ : Այսպիսի կին մը դիւրմն է զանել դոքսը սիրախնդիր մարդ մ'է, և եթէ յափտենական հաստատամատթեան խոսառումներով մէր ցանեց շատ տեղ, հարկան իր յափտենական անհաւատարմութիւններով ևս բաւական ատելութիւն ցանած պիտի լինի :

— Անտարակոյս — ըստ Միլէտի պազութեամբ — այդպիսի կին մը դժուարին չէ զանելո :

— Ասւ, այնպիսի կին մ'որ Ժաք Քլէմանի կամ Ռավայագի գաշոյնը մոլեռանդի մը ձեռքը տալու յաջողի, Փրանտան պիտի ազատէ :

— Այս, բայց ասով մարդասպանութեան մը դաւակից պիտի լինի :

— Միթէ երբէք Ռավայագի կամ Ժաք Քլէմանի դաւակիցներն երեան եկան :

— Ոչ, վասն զի, թերեւս այնքան բարձրադիր մարդիկ էին որ իրենց զանուած տեղն երթալ զամանք զանելու իշխող մարդ չելսու, տէ՞ր իմ, Արդարութեան Պաշտօնատունն ամէն մարդու համար չեն այրեր :

— Արեմն կարծես թէ Արդարութեան Պաշտօնատան հրդեհին պատճառը զիսպաւծը չէ այլ ուրիշ բան մը — Հարցոց Արիշը լիէ այնպիսի ձայնով մ'որպէս թէ ըրածն անկարեսը հարցում մ'է :

— Ես, տէր իմ — պատասխանեց Միլէտի — չեմ ըսեր թէ կ'կարծեմ, լոկ իրողութիւն մը կ'յիշեմ և այլ ոչ ինչ, միայն կ'ըսեմ որ եթէ օրիսրդ Մօնղանաիէ իսոյ Մարի Մէտիսի թաշ

զուհի անուանելի իր առած զգուշութիւններէս նուազ զգուշութիւնները կ'ընելի, քանի որ սլարդապէս տիկին Քլարիկ կ'կոչուիմ:

— Ճշմարիտ է — ըստ Ռիշլիէս — ուրեմն ի՞նչ կ'ուղէիր:

— Հրամանադիր մը կ'ուղէի որ կանխառ վաւերէ բնչ որ ընեւ լու յարմար դատեմ Թրանսայի մեծադոյն օգտին համար:

— Բայց նախ հարկ է իմ ըստ կինս դանել որ դքսէն վրէժ լուծելու պէտք ունենայ:

— Կինը զանուած է — ըստ Միլէտի:

— Ապա պէտք է զանել այն թշուսու մոլեռանդն որ Աստուծոյ արդարութեան զործի պիտի դառնայ:

— Այն աղ պիտի զանուի:

— Լաւ ուրեմն — ըստ դոքոր — այն ատեն պատեհ առիջ պիտի լինի այժմ խնդրած հրամանադիրու տալու:

— Չեր բարձրութիւնն իրաւոնք ունի — ըստ Միլէտի — և ես միայն իրաւոնք չունիմ տեսնելու այն պաշտօնին մէջ՝ որով զիս կ'պատուէք, իրականէն տարբեր բան մը, այսինքն Չեր բարձրութեան կողմէ յայտնել Նորին շնորհափայլութեան ոլքինկահէմի դքսին թէ՝ Սպարապետի կնոջ տուած հանդիսին ժամանակ՝ Բազուղին մօսենալու համար տուած զանազան ծպտումները զիստեք, թէ սպազոյիներ ունիք հաստատելու այն տեսսակցութիւնը զոր թագուհին Լուվրի մէջ շնորհեց իտալացի աստղադիտի մ'որ ուրիշ մէկը չէր բայց եթէ ոլքինկահէմի դոքոր, թէ Ամիենի արկածին վրայ փոքրիկ վէու մը, խիստ նրբամիտ կերպով շինելու հրաման տուած էք, պարտէ զին յատակազծով, ուր այն արկածը պատահէր էր, նոյնակէս նոյնին մէջ երկցող գերասաններու նկարացիրները, թէ Մօնղէկիւն Պատղիլ կ'զանուի, և թէ տաճաջանքը կրնայ ստիպէլ զանի յայտնելու յիշած նոյն իսկ մոտցած բաները, թէ վերջապէս Նորին շնորհափայլութեան բնակարանին մէջ զանուած տիկին Ըէ վրէօղի մէկ նամակը ձեռք ձգած էք, որ ոչ միայն դրողին՝ ոյլ և անոր՝ որու կողմէ որ դրուած է՝ պատիւը մեծ վտանգի մէջ կ'զնէ: Յետոյ՝ այս ամէն բանէ ետքը, եթէ ոլքինկահէմ յամարի, որովհետեւ իմ պաշտօնս այժմ՝

Հայտնած բաներուս տահմանին մէջ պիտի մնայ , հետևողէս սիստի աղաշեմ միայն զԱռաւած որ հրաշք մ'ընելով Փրանսան աղատէ : Այս է խնդիրը , պիտի ս չէ , տէր իմ , և որիշ բան չունիմ ընելու :

— Այս , ոյդ է — վրայ բերաւ կարսինալու չոր ու ցամաք կերպով :

— Արդ՝ հիմակ որ — ըստ Միլէտի՝ իրր թէ չգիտեց կարստինալին ձայնին փոփոխութիւնն իր մասին — հիմակ որ ձեր հրահանգներն ընդունեցայ ձեր թշնամիներու նկատմամբ , պիտի ներէք արդեօք ինձ որ ես ալ երկու խօսք ըսեր՝ իմիններուս վրայ :

— Եւ միթէ դու ալ թշնամիներ ունիս — հարցոց Ռիշլիէօ :

— Այս , աէ ը իմ . թշնամիներ որոց գէմ պարտառոր էք ձեր պաշտպանութիւնն ինձ շնորհել , վասն զի Զեր բարձրութեան ծառայելու առթիւս զանոնք շահեցայ :

— Եւ որո՞նք են — հարցոց դուքսը :

— Նախ Պօնասիէօ անուն փոքրիկ բանսարկու կին մը կայ :

— Մանդի բանտին մէջ է :

— Այսինքն անգ էր — վրայ բերաւ Միլէտի — բայց թագուհին հրաման մ'ընդունեց թաղաւորէն , և անով Պօնասիէօ տիկիւնը վանք մը փոխադրեց :

— Վա՞նք մը — ըստ դուքսը :

— Այս , վանք մը :

— Եւ ո՞ր վանքը :

— Զիտեմ , զաղանիքը լսու պահած են :

— Ես , ես կ'իմանամ :

— Եւ Զեր բարձրութիւնն այնուհետեւ պիտի իմաց տայ բնձի անշուշտ թէ ո՞ր վանքին մէջ կ'զանուի այն կինը :

— Անպատճութիւն մը չեմ տեսներ առոր մէջ — ըստ կարստինալը :

— Լաւ , հիմակ քան փոքրիկ տիկին Պօնասիէօ շատ ուելի վախճանալու թշնամի մ'ոնիմ :

— Եւ ո՞լ է :

— Անոր սիրահարը :

— Անունն ի՞նչ է :

— Ո՛չ, Զեր բարձրութիւնը քաջ կ'ձանչէ զանի — զուեց Միլէտի բարկոթենէն բորբոքած — նա մեր երկոքին շար ոգին է, այն մարդն է որ ձեր պահակներու հետ պատահած մէկ կըռուին մէջ՝ թագաւորին հրացանակիրներն յաղթական կանգնեց իբ զինակցութեամբը, այն է որ Աշորդի, ձեր բանքերին երեք սրի հարուած տուաւ և աազիկներու զործն անյաջող հանեց, այն է վերջապէս, որ՝ զիսնալով թէ տիկին Պօնասիէօն ձեռքէն յարփշտակեցի, իմ մահն երդմներ է :

— Հայ, Հայ — ըստ կարտինալը — զիսեմ որու վրայ է խօսքդ :

— Խոսքս այն ապիրատ տ'Արդանեանի վրայ է :

— Ցանդուդն զինւոր մ'է — ըստ կարտինալը :

— Ճշդիւ յանդուդն զինւոր մը լինելուն համար է որ պմնաէն աւելի աշարկու է :

— Պէտք պիտի լինի — ըստ դոքոը — ապացոյց մը զանելթէ Պըքինկհէմի հետ յարաբերութիւն ունի:

— Ապացոյց մը — զուեց Միլէտի — ես տաս հատ կընամ զանել :

— Լաւ որեմն, այն ատեն զործը կ'զիւրանայ, տուր ինձ այն ապացոյցն և իսկոյն Պասդիլ կ'զըկեմ զանի :

— Լաւ տէր իմ, հազար վերջը :

— Երբ մարդ անդամ մը Պասդիլ մտնէ, այնուհետեւ ապա չիայ — ըստ կարտինալը խուլ ձայնով մը : — Ո՛չ, Տէր վրայ — շարայարեց նա — եթէ ինձ ես զիւրին լինի ողբծիլ իմ թըշնամիւս այնապէս ինչպէս որ զիւրին է ինձ քեզ քուկիններէդ տաղատել, և եթէ այս տեսակ անձերու դէմ միայն անպատճռութիւն պահանջէիր . . . :

— Տէր իմ — վրայ բերաւ Միլէտի — փոխն ընդ փոխ, կեանքի տեղ կեանք, մարդու տեղ մարդ, տուր ինձ այն անձն և քեզի կ'առամ միւսը :

— Զդիակեմ թէ ինչ ըսել կ'ուզես — վրայ բերառ կարտին նալը — և ոչ իսկ կ'ուզեմ իմանալ թէ ինչ է , բայց քեզի հաջելի լինելու փափաք ունիմ , և այնպիսի անարդ արարածի մը մասին խնդրածդ տալու անսպասն հութիւն մը չեմ գտներ , նա մանաւանդ՝ ինչպէս որ կ'ըսես , այն փոքրիկ ա՛նբանեանն անսպակ մ'է , մենամարտիկ մ'է , մասնիշ մ'է :

— Վաստազզի , տէ՞ր իմ՝ վաստազզի մ'է :

— Աւքեմն թուղթ , զրիչ և մելան տաւը ինձ — ըստ կարտինալը :

— Ահաւասիկ , տէ՞ր իմ:

Պահ մը լուսթիւն տիրեց որմէ կ'իմացուէր թէ կարտինալը կ'մումար թէ ինչ ոճով պէտք էր զրել տալ , կամ նոյն իսկ դրել սումասիը : Աթոս՝ որ այս խօսակցութենէ բառ մը չէր կորուսած , իր երկու ընկերներուն ձեռքէն բռնեց և սենեկին միւս ծայրը տարառ :

— Լա՛ ուրեմն — ըստ Բորթոս — ինչ կ'ուզես , և ինչո՞ւ չամար չես թողար որ խօսակցութեան վերջով մատիկ ընենք :

— Լուսթիւն — ըստ Աթոս ցած ձայնիւ խօսելով — մեզի պէտք եղածը լսեցինք . սակայն դարձեալ ձեզ չեմ արդիւր մնացածը մտիկ ընելու , իսկ ես պէտք է որ դուքս ելնեմ :

— Գէտք է որ գնեւա ելնես — ըստ Բորթոս — բայց եթէ կարտինալը քեզ ուզէ , ինչ սրատասսան սիստի տանք :

— Մի սպանէք որ զիս ուզէ , դոք իդնէ առաջ պիտի ըսէք թէ դուրս ելայ իբրև զէտ , վասն զի պանդոկապետին քանիի մը խօսքերէն մտածեցի որ Ճամբան ասրահով չեմ . ասկէ զատ՝ ես ալ քանի մը խօսք պիտի ըսեմ կարտինալին ախոռապանին . մնացածն ինձ թողէք , և հոգ մի ընէք :

— Խոհեմ եղիր , Աթոս — ըստ Արամիս :

— Անփոյթ եղիր — պատասխանեց Աթոս — զիտես արդէն որ սպաղարիւն եմ :

Բորթոս ու Արամիս զացին իբենց տեղը բռնեցին կբակարաս նին մօս :

Կոսկ Աթոսին գալով՝ համարձակ դուրս ելաւ, դնաց վեղիերուն ձողին՝ միւս բարեկամներուն ձիերուն հետ կազուած երիշարն առաւ, քանի մը խօսքով համոզեց ախոռապանը թէ անհրաժեշտ է մեկնելէն տուաջ՝ իբրև յառաջապահ դուրս ելնել, իր հրացանակին խանձը կեղծութեամբ քննեց, տուրն ակուաներովը բռնեց և իբրև անվեհեր մարտիկ՝ բանակատեղին տանով ճամբան զարկաւ:

Դ

ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ՏԵՍՐԸՆ

Խնչպէս որ Աթոս դուշակեր էր՝ կարտինալը վար իջնելու չուշացաւ, բացաւ սենեկին դուռը, ուր հրացանակիրնելն էին մաերև և Բորթոսը գտաւ որ Արամիսին հետ կատաղօրէն տապեղուլունք կ'իսաղար: Արագ ակնարկով մը սրահին բոլոր անկիւնները դիմեց, և տեսաւ որ իր մարդերէն մին բացակայ էր:

— Ի՞նչ եզաւ, Պ. Աթոսը — հարցուց նա:

— Տէր իմ — պատասխանեց Բորթոս — մեր պանդոկապետէն իմանալով որ Ճամբան ապահով չէ, դուրս ելաւ լրտեսելու համար:

— Եսկ դու ի՞նչ ըրիր, Պ. Բորթոս:

— Արամիսը դթեցի և երկուք ու կէս ոսկին առի:

— Հիմակ կրնաք ինձի հետ դալ:

— Զեր բարձրութեան հրամանին պատրաստ ենք:

— Ուրեմն հեծէք մեր ձիերը, որովհետեւ ժամանակն ուշ է:

Ախոռապանը դուռն էր, և կարտինալին ձին սանձէն բռներ էր: Անկից քիչ մը հեռու, երկու մարդէ և երեք ձիեւ կազմեալ խումբ մը ստուերի մէջ կ'երեւէր, այս երկու մարդիկ պաշտօն ուսնէին Միլէտին և Բուէնադ բերդը տանիլ և զանի նաւ մացնելու հոգ տանիլ:

Ախոռապանը՝ կարտինալին կըկնեց ի՞նչ որ արդէն երկու հրա-

շանակիրներն Աթոսին նկատմամբ ըստը էին : Կարտինալը համանութեան շարժում մ'ըրաւ , և Տամբայ ելաւ , և մեկնելուն ինչ զգութեաններ որ ըրեր էր վերադարձին նոյն զգութեաններն ըրաւ :

Թողոնք զանի որ բանակատեղին վերադառնույ , երկու հրացանակիրներու և ախուապանին ոգահուանութեան ներքեւ , և Աթոսին դառնանք :

Հարիւր քայլի շափ տեղ Աթոս մի և նոյն ընթացքով յառաջ քալեր էր , բայց երբ մի անդամ աչքէ հեռացաւ , իր ձին աջ կողմը քշեր էր , շրջան մ'էր ըրեր , և վերադարձեր էր քսան քայլի շափ հեռու անտառակին մէջ՝ որովէս զի փոքրիկ խմբին անցքը ծածուկ դիաւէ . իր ընկերներուն եղքաւոր դլիսարկներն և կարտինալին վերարկուին ոսկեթել ծովերը հանչելով , սպասեց որ ձիաւորները Ճամբառն զլիսէն շրջան ընեն . և երբ աչքէ հեռացոց , արագընթաց դարձաւ ոգանդոկը , զօր իրեն բացին առանց զժուարութեան :

Պանդոկապեաը զանի ճանչեց :

— Իմ հարիւրապետու — ըստու Աթոս — մոռցաւ վերի զտոիկնի կնկան կարեւոր բան մ'ապապրել , և զիս կ'զըկէ մոռցածը յայսնելու համար :

— Աեր ելլիր — ըստու պանդոկապեաը — կինը դեռ իր խոցն է :

Աթոս այս հրամանէն օգտաւ քաղցեց , մեթեազոյն քայլովը սանդղըն վեր ելաւ , քառակուսին վրայ հասաւ , և կիսրաց դըռնէն զիսեց որ Միլէտին իր զլիսարկը կ'կապէ :

Սենեակը մտաւ և իր ետեւէն դուռը դոցեց :

Պարզունակը քաշելով հանած աղմկէն , Միլէտի զլուխը դարձուց :

Աթոս կանդուն կ'կենար դրան առջև իր վերարկուին մէջ փաթառուած և զլիսարկն աշերուն վրայ իջած :

Այս արձանի ողէս համբ ու անշարժ զէմքը աեսնելուն , Միլէտի վախցաւ :

— Դու ով ես , և ի՞նչ կ'ինդրես — դոչեց նա :

— Այս՝ նոյն ինքն է — մրմաց Աթոս։
Եւ իր մերարկան վար ձգելով և զլիարկը բարձրացնելով
դեպ ՚ի Միլէտին առաջ անցաւ։

— Միլէտ զիս կ'ձանչեն, արկին — ըստ նու։
Միլէտի քայլ մ'առաջ զնաց, և յետոյ իբրև օձի մը տեսքէն
նու քաշուեցաւ։

— Այս — ըստ Աթոս — լուն է, կ'ասյիմ որ զիս կ'ձանչես։
— Լա Ֆէր կոմնն է — մրմաց Միլէտի գեղնելով և ետ ետ
քաշուելով մինչև որ սրանն արգելք եղաւ. և զինքը կեցոց։

— Այս, Միլէտի — սրասասիսնեց Աթոս — նոյն ինքն ան-
ձամբ Լա Ֆէր կոմնն է, որ յատկապէս քեզ տեսնելու որպա-
խութիւնը վայելու համար կ'զայ։ Աւքեմն նստինք, և ինչպէս
կ'ըսէ Պ. կարտիճալը, խօսակրինք։

Միլէտի՝ անբացատրելի ասրսափով համակեալ՝ առանց բառ
մ'արտասանելու նստաւ։

— Աւքեմն դու տաղան մ'ես երկրիս վրայ երեցող — ըստ Ա-
թոս։ — Քո իշխանութիւնդ մեծ է, զիսեմ, զիսես նաև որ
Աստուծոյ օգնութեամբը ամենէն աշուելի մարդիկ սադաններու
ստէպ յազմեցին։ Արդէն իմ ձամբուս վրայ զանուեցար. կար-
ծեր էի թէ քեզ տապալեր եմ, արկին, բայց, կամ կ'սիսալի ի
և կամ գժոխիքը քեզ վերակենդանութիւն տուան։

Միլէտի, այս խօսքին, որ իբրև զարհութելի յիշատակինը յի-
շել կ'տար, խուլ հեծեծանքով զլուխը ծռեց։

— Այս, գժոխիքէն ելած ես — շարունակեց Աթոս — գժոխիքը
քեզ հարասացոց, գժոխիքը քեզի ուրիշ անուն մը տուան, գժոխ-
իք զրեթէ քեզի ուրիշ կերպարան մը տուեր է, բայց չըրբեց
հոգւոյդ աղտեղութիւնները, և ոչ մարմնոյդ անպատճ. նշանը։

Միլէտի ոտք ելաւ որպէս թէ զսպանակէ մը կ'շարժէր, և իր
աչերը փայլակներ արձակեցին։ Աթոս նստած մնաց։

— Գու զիս մեռած կ'կարծէիր, այնպէս չէ, ինչպէս ես ալ
քեզ մեռած կ'կարծէի։ Եւ այս Աթոս ահունը Լա Ֆէր կոմնը
պահէր էր, ինչպէս որ Միլէտի Քլարկի անունը, միթէ ոյսպէս

չէ իր կոչուեր երբ քու պատարժան Աննա տը Պլրէցիլ անոնչը ծածկեր էր : Արդարեւ առջորինակ է մեր կայութիւնը — շարու նակեց Աթոս խնդալով — զու և ես մինչև ցարդ ապրեցանք, վասն զի կարծէինք թէ մեռած ենք, և թէ յիշատակ մ'առելի կ'նեղէ դմարդ, թէև լսփող բան մ'է երբեմն յիշատակը :

— Բայց վերջապէս — ըստ Միլէտի խուլ ձայնով մը — ովք կ'յորդորէ ինձի զալ, և իշնէ ինչ կ'ուզես :

— Կ'ուզեմ՝ քեզի ըսել թէ, քու աշացդ անտեսանելի երեցած առենս, ես քեզ աչքէ չհեռացոցիք :

— Միթէ զիսեն բոլոր ըրածներս :

— Կարող եմ օրն օրին բոլոր զործերդ պատմել, կարտինալի ծառայութեան մտած օրէդ մինչև այս իրկունս :

Թերահաւատութեան ժպիտ մը սահեցաւ Միլէտիին զոհաւ շրմերուն վրայ :

— Ո՛չ, որչափ կ'ուղէս մանչէ — զուեց լորտ Վ. Անդր — բայց խածնելու փորձ մի փորձեր, վասն զի, ահա կանխառ կ'իմացնեմ քեզի, վաստով պիտի ելնես . այս տեղ չկան փոխանորդներ որ ժառանգական դործերը կանխառ կարդագրեն, չկոյ վատարանդի

ասպետ որ ելնել ինձի հետ կռուի քերի պահած դեղանի կնիանս համար, այլ ունիմ պատրաստ դատաւորներ որ անամօթ կին մը պատժել գիտեն, քանի որ այն կինը թէև երկամուսին, իմ անդրանիկ եղբօրս, լորո Ավենդրի անկողինը սպրդելու յաջողեր է, և քաջ զիտցիր, որ այն դատաւորները՝ քեղի դաշտի մը պիտի զրկեն որ կարող է երկու ուսերդ ալ իրարու նման բնել:

Միլէտիին աչերն այնպիսի կայծակներ կ'արձակէին որ լորս Ավենդր թէև մարդ և անզէն կնկան մ'առջե սպառազէն՝ մինչև հոգւոյն խորն երկիրի սառնազին մատն զգաց, սակայն դարձեալ խօսքը շարունակեց հետզետէ զայրանալով.

— Այս, կ'իմանամ թէ քանի ախորժելի պիտի երևէր քեզ, իմ եղբօրս ժառանգութիւնը ստանալին ետև՝ իմն ևս ժառանգել. սակայն, այժմէն զիտցիր, կրնաս զիս սպաննել կամ սպաննել տալ, ես արդէն ամէն զգուշութիւններ ձեռք առած եմ. ունեցածէս և ոչ իսկ տասնոց մը քեզի չպիտի հասնի: Միլէտ արշէն բառական հարուստ չե՞ս, դու որ զբեթէ միլիօնի տէր ես, և միլէտ չէիր կարող այդ աղէտարեր ճամբռող մէջ կանկ առնուլ, եթէ մի միայն չարիք ընելու անըստ. և յետին վայելքի համար չընէիր: Ե՛ս, ահա քեզի կ'ըսեմ, եթէ եղբօրս յիշատակն ինձ նուիրական չլիներ, պետութեան մէկ զնդանին մէջ փոելու պիտի զրկէի քեզ կամ նառաստիներու հետաքրքրութիւնն ՚ի Թիւպրըն զոհ ընելու. պիտի լուեմ, բայց դու այդ զերութեանդ հանդարտորէն հանդուրժէ, տասն հինգ կամ քսան օրէն բանակին հետ Շոօշէլ պիտի զնամ, սակայն իմ մելինելուս առջի օրը նաւ մը պիտի զայ քեզ առնլու, անոր չուն պիտի տեսնեմ, այն նաւը մը հարաւային զաղթականութեանց պիտի տանի քեզ, և անհոգ եզիր, քեզի այնպիսի ընկեր մը պիտի տամ որ զլուխդ հրացանի պիտի բռնէ եթէ թեթև փորձ մ'անզամ ընես Անկլիա կամ ցամաք ելնելու :

Միլէտի այնպիսի ուշադրութեամբ մտիկ կ'ըներ որ իր բոցամառ աչերը կ'բանար:

— Այս ժամաւ — շարտանկեց լորտ Ալինդը — այս դղեկիս մէջ կ'ընալիս . անօր պատերը հաստ են , դռներն ամուր , վանդակները հաստատուն . ասկէ զատ՝ պատր հանդ առ ՚ի լեփ կ'նայի ծովու վրայ . իմ նաւազս՝ որ հոգւով մարմարվ ինձ անձնուէր են , այս սենեկիս բոլորտիքը պահպանութիւն կ'ընեն , և դասիթը ասանող բոլոր անցքերը կ'հակեն . յեայ , եթէ զամիթը հասնիս , նորէն առ ջետ պիտի ելնեն երեք հաս վանդակ : Հրամանը խիստ է , խոյս առաջու համար քայլ մը , շարժում մը , նրան մ'որ ընես , խիզըն հրացանի կ'բռնուիս . եթէ քեզ սպաննեն , անկլիացի զատառներ չնորհապարտ պիտի լինին ինձ որ զիրենք դորձէ մ'ազատեցի : Ա՛հ , նորէն կերպարանդ իր հանդարտութիւնը կ'ստանայ , գէ մքդ իր առ ջի աներկեանութիւնը կ'առնու : Տասն հինգ օր , քսան օր , կ'ըսես անշոշտ , բա , ես հնարագէտ միտք ունիմ , անշոշտ դոհ մը կ'զանեմ : Մինչև տասն հինգ օր , կ'ըսես խրավի , ասկից կ'պրծիմ : Համ , հսկ , փորձէ նայիմ :

Միլէափ տեսնելով որ լորտ Ալինդը իր միտքը զուշակեց , միսերուն մէջ բղունդը մղեց որպէս զի զսպէ որ և է շարժում որ իր կերպարանին անձկութենէ տարրեր իմաստ մը կընար տալ :

Նորտ Ալինդը շարտանկեց .

— Իմ բացակայութեանս տաեն այս տեղ հրամայող սպայն արգէն տեսար , ուրեմն զանի կ'ձանչես . զիտէ , ինչպէս կ'աեւնես , պատերազմի ժամանակ մեծառորին հրամանը կստարել , վասն զի , կ'ձանչեմ քեզ , բորդսմութէն զալու ատենդ փորձ փորձած ես անօր բերնէն բան մ'առնելու : Կ'նչ կարծիք ունիս անօր վրայ , միթէ քարէ արձան մ'անորմէ աւելի համբ ու անդրդտելի կրնաց լինիլ : Արդէն շատ մարդերու վրայ քու հրապարանց ներգործութիւնը փորձած ես , և զժրադդորէն միշտ յաջողեցար բայց փորձէ նաև անօր վրայ , Տէր վկայ , եթէ տնօր դլուին ալ դարձնես , քեզ նոյն ինք ստպանը պիտի համարիմ :

Նորտ Ալինդը դէպէ ՚ի զուոր զնաց և յանկարծ բացու .

— Կանչեցէք ու . Գէլտօնն — ըստ նա : — Փոքր ինչ ես
սպասել և քեզ անոր սիմակ յանձնեմ :

Այս երկու անձերու մէջ տարօրէն լոռ թիւն մը տիրեց նո-
րէն , և նոյն սրահուն ծանր և կանմասոր քայլափախի մը դոփիսնոր
լսուեցաւ որ կ'մօտենար . քիչ առենէն նորագաւթին ստուերին
մէջ՝ մարդկային կերպարանի մը սրամկերը ձևացաւ , և նորասի
տեղակալն , որուն հետ արդէն ծանօթութիւն ըրինք , սեմին վը-
րայ կայ առաւ սեպահին հրամանին սպասելով :

— Ներս մտիր , սիրելի Շօհն — ըստ լորտ Ալինդը — ներս
մտիր և դուռը դոցէ :

Դորասի սպայն ներս մտաւ :

— Հիմակ — ըստ սեպահիը — սա կինը նայէ , դեռատի , դե-
ղանի և ամէն տեսակ հրապարելի յատկաւթիւններ ոնի , լաւ ,
հրեշ մ'է որ քսան հինգ տարուան հասակին մէջ այնչափ ոճիր-
ներ զործած է որչափ հնար է քեզի կարդալ տարի մ'ամբողջ
մեր զատաստանական դիւնաներու մէջ . իր ձայնը սիրտ կ'ըրաւէ ,
իր զեղեցկութիւնը զօհներու համար խայծ մ'է , իր մարմինն իսկ
խոստացածը կ'վճարէ , և այս մասին պէտք է իրաւոնք տալ ա-
նար . աւստի պիտի աշխատի քեզ հրապարել , թերեւս քեզ սպան-
նելու ևս փորձ փորձէ : Ես քեզ թշուառ վիճակէ մը քաշեցի ա-
ռի , Գէլտօն , քեզ տեղակալ անուանեցի , անդամ մը կեանդրդ
աղասեցի , դիտես ինչ առթիւ , ես ոչ միայն քեզ սպաշտան մը
այլ և բարեկամ մ'եմ , ոչ միայն բարեբար մ'այլ և հայր մը ,
այս կինն Անկլիա եկած է կինաց դէմ գաւաճանելու , այս օճն
իմ ձեռքին մէջն է , լաւ , քեզ կ'կոչեմ և կ'ըսնեմ . Գէլտօն բա-
րեկամ , որդեակ իմ Շօհն , սրահպանէ զիս , և մանաւանդ պահ-
պանէ ինքզինքդ այս կնկանէ , քու փրկութեանդ վրայ երդում ըրէ
արժանի եղած պատուհանին համար զանի պահել : Շօհն Գէլտօն ,
ես խօսքիդ կ'վստահիմ , և քու հաւատարմութեանդ կ'հաւատամ :

— Միլըրա — ըստ նորասի սպայն , իր յատակ ակնարկը
սրտին մէջ զտած ատելութեամբ զինելով — միլըրա , կ'երպնում
որ ամէն ինչ բաղձանացդ համեմատ սիմի կատարուի :

Միլէտի այս ակնարկն ընդունեց իրեն հլու զոհ մը , կարելի չէր աեսնել աւելի համբերատար և անոշ երեսյթ մը քան այն որ նոյն պահուն իր զեղանի դէմքին վրայ կ'տիրէր : Հազիւ ուրիմն լորս Ալինդր անդամ՝ ճանչեց այն վազրուհին որ պահ մ'առուջ իրեն գէմ զինելու կ'պատրաստէր :

— Եյս սենեկէն գուրս չպիտի ելնէ , կ'լսե՞ս , ճօհն — շարունակեց սեպուհը — որ և է մէկու հետ չպիտի զրակցի , մինակ քեզի պիտի խօսի , եթէ սակայն համփս զանի պատուել խօսքով :

— Բաւական է , միլորտ , երդում ըրի :

— Եւ այժմ , տիկին , ջանա Աստուծոյ հետ հաշտուիլ , վասն զի արդէն մարդկան կողմէն դատուած ես :

Միլէտի զլուխը վար ծռեց որպէս թէ կ'զգար թէ այս վճիռը զինք կ'ձգմէ : Լորս Ալինդր գուրս ելաւ ֆէլտօնին նշմայր մ'ընելով , և սպայն ալ անոր ետեւէն երթաւով դուռը դոցեց :

Պահ մ'ետքը նրբազանին մէջ զինուրի մը ծանր քայլը կը չսուեր որ պահնորդ էր , տապարը դօտիկէն անցած և հրացանն ի՛ ձեռին :

Միլէտի քանի մը վայրկեան նոյն վիճակին մէջ մնաց , վասն զի մտածեց որ թերեւս զինքը պարզունակէն կ'դիտեն . յեաց ուշիկ զլուխը վերուց , որ անհունս սպառնալի և դիմագրաւ երեսյթ մ'առեր էր , վազեց դրան մօտ մտիկ ըրտ , պատուհանէն նայեցաւ և լայն թեաթուի մը մէջ թաղուելու դառնալով :

Մամուաց նա :

Ժ

ԱՊՐԻՑ

Սակայն կարտինալն Անկլիայէն լուր կ'սպասէր , բայց լուր մի՛ հասած չտնելը , եթէ ոչ ցաւալի և սպառնալի :

Արշափ որ Ռոշէլ լաւ պաշարուած էր, որչափ որ յաջազութիւնը ստոյդ էր, չնորհիւ արդէն եղած զգուշութիւններուի, և մանաւանդ այն թմրին որ այլ ևս չէր թողուր պաշարեալ քաղցին մէջ նառակ մը մանելու, սակայն պաշարումը կրնար դեռ ևս ընդ երկար տևել, և այս ալ թաղաւորին զինուց մնձ նախատինք և կարաինալին համար մնձ նեղութիւն մ'էր, որ՝ թէն այնուհետեւ ժամանակին Աւարիոյ տան Աննայի հետ զժուել առալու պէտք շտանէր, այլ ու. Պատօնրիէր ու Անկուլէմի դոքսը, որ զժաներ էին, իրարու հետ հաշուեցնել:

Իսկ թագաւորին եղրայրը՝ որ պաշարումը սկսեր էր, կարտինալին կ'թողուր զայն ստարտելու հոգը:

Քաղաքապետին անհաւասար էրկայնմասութեան չնայելով Ռոշէլ քաղաքը տեսակ մը խոռովութիւն հաներ էր անձնատուր լինելու. քաղաքապետը կախել տռեր էր խոռովարաները: Այս դատապարտութիւնն ամենէն հետո զլուխները հանդարաեցուց, որոնք անօթութենէ մնունելու աչք առին: Այս մահն իրենց ծանր ու նուազ ստոյդ կ'թուէր քան խեղդամահը:

Միւս կողմէն պաշարողներն ատեն ատեն կ'բռնէին այն բանը բերները զոր Ռոշէլցիք կ'զրկէին առ Պլքինկհէմ կամ լրտեսներ՝ զոր Պլքինկհէմ կ'զրկէր առ Ռոշէլցիս: Այս երկու պարագայից մէջ դատասատանը շտառով կ'կտրէին: Ու կախաղան: Թագաւորը կ'հրաւիրուէր որ կախեալը տեսնէ: Թագաւորը դանդաղկոտ կերպով կը դար, լաւ տեղ մը կ'նստէր որպէս զի զործողութեան ամէն պարագաները տեսնէ: ասով քիչ մը կ'սփոփէր և համբերութեամբ պաշարման դլուխ կ'ծուէր, բայց դարձեալ շտատ կ'տաղտկանար, անդադար Բարիդ դատնալու խօսք կ'ընէր, այնպէս որ եթէ բանքերներ և լրտեսներ պակսէին, Նորին բարձրութիւնը, բոլոր իրերեակայութեամբը շատ պիտի շփոթէր:

Սակայն ժամանակը կ'անցնէր, Ռոշէլցիք անձնատուր չէին լիներ, զերջին բռնուած լրտեսը նամակ մը կ'կրէր: Այս նամակը Պլքինկհէմի կ'ըսէր, — Խրաւ որ քաղաքը յետին նեղութեան մէջ

է. բայց՝ փօխանակ յարելու . Եթէ տասն հինգ օրէն ձեր օդ-
նութիւնը մնջի չառնի , պիտի անձնատուր լինինք : Պարզապես
կ'ըսէք . Եթէ օգնական զօրք չհասնի տասն հինգ օրէն , ամնար-
նիս սովորմահ մեռած պիտի լինինք երբ որ համնի :

Աւրեմն Ռոշէլլցիք մինակի Պրքինկհիչէմի վրայ յոյս ունեին . Պր-
քինկհիչէմ իրենց Անօփան էր : Յայտնի էր որ Եթէ օրին մէկն իր-
մանային ճշգապէս որ Պրքինկհիչէմի վրայ վստահիլ պէտք չէ ,
իրենց յոյսին հետ արիտ թիւնին ալ պիտի դաղըքէր :

Ուստի կարտինալն անհամբեր կ'սպասէք Անկլիային այն լրին
որ պիտի յայտնէք թէ Պրքինկհիչէմը չպիտի զար :

Քաղաքը բուռն զօրութեամբ զբաւելու խնդիրը՝ որ ստէոլ թա-
դաւորին խորհրդին մէջ վիճարանութեան ենթարկուեր էր , միշտ
մերժուեր էր . Նախ Ռոշէլ անառիկ կ'երեւէր , երկրորդ՝ կարտի-
նալը՝ ինչ որ ըսէք , զարձեալ զիտէք որ այս կոտին մէջ՝ որ
գաղղիացի գաղղիացոյ գէմ պիտի մաքառէք , ահաւոր արիւնա-
հեղութիւնը վաթունամեսյ յետադէմ շարժում մ'էք քաղաքա-
կանութեան համար , և կարտինալն այն ասենն էր ինչ որ այսօր
կ'անուանեն յառաջադիմութեան մարդ : Արդարեւ , լու Ռոշէլին կո-
տորածն և երեք չորս հազար բողոքականի ջարդն որ անտարա-
կցոյ կուտելով պիտի սպանուեին 1628ին , Սէն-Պարթէլէմի
1572ի կուտրածին պիտի նմանէք , և ասկէ զատ՝ մանուանդ՝ այս
ծայրայեղ միջոցը , որուն զէմ բնաւ չէք թագաւորն իրեւ բա-
րի կաթողիկ , միշտ պաշարութ զօրապետներուն սա առարկութեան
առջեւ կ'փարասէք . այսինքն թէ Ռոշէլ անառիկ է և մինակ տո-
վով կարելի է առնուլ :

Կարտինալը չէք կարող իր մաքեն փարասէլ երկիրդ մ'որուն
զրդիու իր սուսկալի զործակալուհին էր , վասն զի նա ևս հաս-
կցեր էր նոյն կնկան տարօրինակ հանգամանքը , երբեմն օձ , եր-
բեմն առիւծ : Արդեօք զինքը մասներ էր , արգեօք մեռեր էր :
Սակայն քաջ զիտէք որ Միլէտի թէ բարեկամուհի և թէ թըշ-
նամուհի լինէք , զարձեալ անշարժ չէք կրնար մնալ առանց մեծ
արդելքի . բայց առսից կ'ծագէին այս արգելքը , ահա այս բանն
չէք կրնար բմբոնել :

Այլ տակայն՝ իրաւամբ Միլեափի վրայ կ'յուռար . նոյն կնկան անցելըյն մէջ այնպիսի ահուելի բաներ դուշակեր էր զոր միայն իր կարմիր վերաբկուով կրնար ծածկել , և կ'զգար թէ , որ և պատճառաւ , այն կինն իր կողմն էր , քանի որ յինքն միայն կարող էր զմնել իրեն սպանացող վտանդին դէմ նեցուկ մը : Աւատի որոշեց առանձին մարտ մզել և իրեն օտար յաջողութիւն մը սպասել ինչպէս կ'սպասէ մարդ բարեղուշակ բաղդի մը : Աս թօշէլը առվալլուկ ընելու սահմանեալ նշանառոր թումբը շնել տալու շարունակեց , առ այժմ նայուածքն այն դժբաղդ քաղքին վրայ դարձոց , որ այնքան խորոնկ և զիւցաղնական առաքինութիւն կ'որացէր , և յուշ ածելով Լոի ժ-նի խօսքը , թողարոր մ'որ իր քաղաքաղէտ նախորդն էր , ինչպէս որ ինքն ալ Առագիրէրի նախորդն էր , յիշեց Դրիստանի սա առածը . և Քամանել իշխելու համար :

Եօրբ Հանրի Դ Բարիոլ կ'սպաշարէր , պարսպին վրայէն հաց և ուտելիք նետել կ'տար քաղքին մէջ . կարտինալը փոքրիկ տամսակներ նետել տուաւ որով կ'յայտնէր թօշէլցւոց թէ քանի անիրաւ , ինքնասէր և անդութ էր իրենց զլխաւորներուն ընթացքը այս զլխաւորներն առաւա ցորեն ունէին և չէին բաժներ . իրքե սուած կ'զաւանէին , վասն զի անոնք ալ իրենց առած ներն ունէին , թէ փոյթ չէր եթէ կանայք , տղայք և ծերունիներ մեռնին , բաւական էր որ քաղքին պարիսպները պաշտպանելու որոշուած մարդիկ ուժեղ և քաջառողջ մային : Մինչեւ այն ատեն՝ թէ այս առածն ընդհանրապէս ընդունուած չէր , սակայն անձնուիրութենէ սեպէտ , կամ անոր գէմ զնելու անկարողութենէ , աեսականէն զործնական դարձեր էր . բայց տօմսակներն անոր վնաս ըերին : Տօմսակներն անոնց միաքը կ'ըերէին թէ այն աղաքը , այն կիները , այն ծերունիներն որ սովամահ կ'սպաննէին՝ իրենց որդիքը , իրենց ամուսիններն և իրենց հայրերն էին , թէ աւելի արդարացի էր որ ամէն մարդ ընդհանուր թշուառութեան մասնակից լինի որպէս զի մի և նոյն կացութիւնը միաձայն որոշումներ ընել առլու յորդորէ :

Այս տոմսակները՝ զբողին ակնկալած ամեն արդիւնքն ունեցան, վասն զի շատ բնակիչներ յորդորուեցան թագառորական բանակին հետ մասնաւոր բանակցութիւններու մտնել:

Բայց այն միջնորդին որ կարտինալն իր հնարքին որոտ զը կ'աեւնէ ը և զայն ՚ի զործ զնելուն վրայ կ'հրճուէր, Արօշէլի բնակիչնը, որ կարող է զեր էր, Աստուած զիստէ ինչպէս, անցնիլ արաքայական զօրաց մէջէն, այնքան մօտ էր Պատօնիկէրի, Շօնպէր կի և Անկուլէմի զքային հսկողութեանը, որոց վրայ նաև կարտինալը կ'հսկէր, Արօշէլի բնիկ մ'ըսինք, քաղաքը մտաւ Քօրդում թիւն զալով և յայտնեց թէ փառաւոր նաւատորմ մ'է տեսներ ութ օրէն առաջ ճամբայ ելնելու կազմ ու պատրաստ։ Ասկէ զատ Պըքինկչէմ քաղաքապետին կ'յայտնէր թէ վերջապէս Փրանտայի դէմ կազմուած նիզակակցութիւնը զործի պիտի սկսէր և թէ անկլիական, կայտերական և սովանիտիկան բանակները միահամուռ պիտի արշաւէին տէրութեան վրայ։ Այս նամակը հրապարակու ամեն տեղ կարդացին, փողոցներուն անկիրններն առնուց օրինակները փակցուցին, և նոյն իսկ անոնք որ բանակցելու սկսեր էին, իբրև բանակցութիւնն ընդմիջեցին, սպասելու որոշումով այն օդնութեան որ այնպէս փառաւորապէս խոսացուած էր։

Այս անակնելալ պարագան վերտուին զբուեցին Արիշլիէօի առողջին մտատանջութիւնները, և ակամայ ստիպուեցաւ իր աշքը նորէն ծովուն միւս կողմը դարձաելու։

Ասոյն միջնորդին արքայական բանակն իր Աշմարիս զօրապետին մտատանջ հոգերէն զերծ՝ ուրախալի կեանք մը կ'վարէր, զօրին առանց պաշարի չէր մնար, ստակ ալ պակաս չէր. բոլոր զօրաբաժինները յանդշութեան և զուարթութեան կողմէ իրարու հետ կ'մրցէին։ Լրտեսներ բոնել կախել, վտանգալի արշաւանքներ ընել թիւնն և ծովուն վրայ, յանդուդն ձեռնարկութիւններ երեսակայել և սառնութեամբ կատարել, ասոնք են այն դուարձութիւններն որ բանակին աշքին այն երկայն օրերը կ'կարձեցնէին, ոչ միայն Արօշէլցոց համար, որ սովէն և անձկութենէ կ'մա-

շէին, այլ նաև կարտինալին համար՝ որ այնքան խստիւ կ'որոշ շարեր զանոնք :

Երբեմն՝ երբ կարտինալը՝ որ միշտ իրեւ յետին զօրոտկան կը ձիավարեր, իր խոհուն ակնարկը կ'ածէր այն շինութիւններուն վրայ, որ շատ ուշ կ'յառաջանացին իր բաղձանաց հակառակ, և զոր իր հրամանաւ. Ֆրանսացի չորս կաղմէ եկար հարտարապետներ կ'կանգնէին, երբեմն, կ'ըսենք, եթէ Դրէ վիլի զնդէն հրացանաւ կրի մը հանդիսէր, անոր կ'մօտենար և տարօրէն կերպով մը անոր երեսը կ'նայէր, և երբ կ'զիտէր որ մեր չորս ընկերներէն մին չէ, իր խորին ակնարկն ու լայնարձակ խորհրդածութիւնն որիշ տեղ կ'ածէր :

Օր մ'երբ դառն ձանձրոյթով մը կ'մաշէր, քաղքին հետ եւ զած բանակցութիւններէն յօյօը կտրեր էր և Անկլիայէն լուր մը չէր առեր, կարտինալը գուրս ելեր էր մի միայն գուրս ելնելու նպատակաւ, իրեն հետ առնլով Գահիւսակ և Լա Հուտինիէր և ծովեզերբը կ'պարատէր իր անհուն խորհուրդներն անհուն ովկիսնուն հետ խառնելով, իր ձին ծանր ծանր քալեցնելով ըլլի մը վրայ հասաւ և ցանկապատի մ'ետեղ տեսաւ եօթ հոգի որ տաղի վրայ պառկեր էին պարապ շիշերով շը ջապատռած և որոց վրայ արեւուն մէկ վաղանցիկ նշոյլը՝ որ այնչափ հազուազիւտ է նոյն եղանակին մէջ, կ'ծաւալէր։ Այս մարդերէն չորսը մեր հրացանակիրներն էին որ կ'պատրաստուէին իրենցմէ մէկուն ընդունած նամակին ընթերցումը մտիկ ընելու։ Այս նամակն այնքան կարեւոր էր որ ըմբռուկի մը վրայ ձգել տուեր էր թէ խաղի թղթեր և թէ տապեղուլունք :

Միւս երեք մարդիկ Գոլիուրի գինիի հակառակ մը բանալու կ'զարդին, և այն պարոններուն սպասաւորներն էին։

Կարտինալը՝ ինչպէս որ ըսինք, շատ սրսնեղութեան մէջ էր, և երբ մաքի այս արամագրութեան մէջ գտնուէր՝ չկար բան մը որ այնքան իր տհաճութիւնը զրգուէր որչափ ուրիշներուն դուար-թութիւնը։ Նշան ըրաւ Հուտինիէրի և Գահիւսակի կայ առնլու, ձիէն վար իջաւ և այն կասկածելի խնդացողներու մօտեցաւ։

յուսալով որ առաջին օդնութեամբն որ իր զոփինը կ'մեղմէր և ցանկին շնորհիւն որ իր ընթացքը կ'ծածկէր, կարսդ պիտի լինէր այն իրեն շատ կարևոր երեցած խօսակցութենէ քանի մը բառ լսել. առաջ քայլ մօտենալէն ետքը միայն Կառքօնին թրթրակ լեզուն լսեց, և որովհետեւ դիմաէր կանխառ որ այն մարդիկ հրացանակիրներ են, անկառած մեաց միաս երեք անձինք ալ անբաժանելի անուանեալներն են, այսինքն Աթոս, Իորիոս և Սրամիս:

Դիրին է երեակայցել եթէ այս դիտով խօսակցութիւնը մտիկ ընելու համար կարտինալին փափաքը սաստիացա. իր աշերը տարօրինակ երեցի՛ մ'առին և գէս ՚ի ցանկապատը դիմեց վասդրի արէս քայլ առնլով. բայց դեռ ևս անորոշ և առանց ճըշդրտիս իմաստի վանկիր էր լսեր, երբ հնչական և առը ձայն մ'իրեն սարսուռ տուռ և հրացանակիրներուն ու շաղբութիւնը դրաւեց:

— Ապոյ — դոչեց Արիմօ :

— Կարծեմ թէ կ'խօսիս դու, անզդամ — ըստու Աթոս մէկ արամին վրայ ելնելով և իր շոշառողուն ակնարկով Արիմօն դիւթեց:

Հետեւապէս Արիմօ նորէն ձայն չհանեց, և բառական սեպեց իր ցոցիչ մատն ողջել ցանկապատին կոզմն և այս շարժումով կարտինալն ու իր հետեւորդները նշանակել :

Տորս հրացանակիրները միասին ցատկեցին և կանգուն կենաւ լով յարդառօք բարեւ տուին :

Կարտինալը զայրացած կ'երեէր :

— Կ'երեի թէ մեր որսորն հրացանակիրները պահնորդներ ունին — ըստու Դա : — Արդեօք անկլիացին ցամաքէն կ'զայ, և կամ արդեօք հրացանակիրներն ինքզինքնին բարձրագոյն սպաներ կը կարծեն :

— Տէ՛ր իմ — պատասխանեց Աթոս, վասն զի ընտհանուր տարս սափի ժամանակ՝ ինք միայն իրեն սովորական և իշխանի վայել հանդարսութիւնն ու պաղարինութիւնը պահէր էր — տէ՛ր իմ, երբ հրացանակիրները ծառայութիւնէ աղաս զանուին, կամ երբ զործելնին լընայ, զինի կ'խմեն և տապեղութունք կ'խաղան, և իրենք խիստ բարձր սպաներ են իրենց սպասարկներու առ ջեւ :

Սպասաւորներ — մըմնաց կարտինալը — սպասաւորներ որ հրաման ունին ձայն տալ իրենց տէրերուն երբ մէկն անցնի, բնաւ սպասաւորներ չեն այլ արահնորդներ :

— Սակայն Ձեր բարձրութիւնը քաջ կ'զիաէ որ եթէ այս ըղ գուշութիւնը չընէլինք, չպիսի կարենայինք դժբաղդաբար ձեր անցնիլը տեսնել և մեր յարդանաց հետ շնորհակալիքը յայտնել որ մեզ իրարու հետ միացնելու շնորհ ըրքք : Տ'Արդանեան — շարունակեց Աթոս — դու որ քիչ մ'առաջ այս առիթը կ'փնտրուէիր Կորին բարձրութեան երախտազիտութիւնու բացատրելու, ահաւասիկ այն առիթը, հիմակ անկից օդուտ քաղլէ :

Այս խօսքերն արաւասանեց Աթոս ախնպիսի անդրդուելի հանդարտութեամբ որ՝ վատանդալի ժամերու մէջ՝ յատուկ էր իրեն, և այն ծայրալիք քաղաքավարութեամբ՝ որ ժամանակ ժամանակ զինք ՚ի ծնէ ժապաւորներէն առելի վեհափառ կ'ործէին :

Տ'Արդանեան մօտեցաւ և քանի մը շնորհակալութեան խօսքեր թօնովեց որ խսկոյն դադրեցան կարտինալի մթազին ակնարկին ներքեւ :

— Պահրոններ, ի՞նչ փոյթ է — շարունակեց կարտինալը՝ առանց բնաւ իր առջի ու շաղրաւթիւնն Աթոսի յարուցած նոր խընադրոյն զարձնելու — ի՞նչ փոյթ է, պարոններ, ես չեմ ախորդիր որ պարզ զինուորներ, ըստ օրում արտօնութիւն վայելելով զնդի մը մէջ կ'ծառայեն, այսպէս մեծ իշխաններու ձեւը առնուն, և զինուորական կրթութիւնը մի և նոյնն է թէ իրենց և թէ ամենն համար :

Աթոս թողտց որ կարտինալն իր խօսքն ամբողջ առարտէ, և իրրւ հաւանութեան նշան ծռելով, ինքն ալ ըստ կարգի ըստւ .

— Զինուորական բարեկարգութիւնը, տէր իմ, յուսամ որ բնաւ մը կաղմէ մոռցուած չէ : Այժմ անդործ ենք, և կարծեցինք թէ, անդործ լինելով, աղաստ ենք մեր ժամանակն ըստ հաճոյս անցընել : Եթէ Ձեր բարձրութիւնը հրաման մ'ունի մեզ տալու, բարեկարգ ողիտի համարինք ինքզինքնիս և հնազանդելու պատրաստ : Ա'տե սնէք, Բարձրապատիւ տէր — շարունակեց Աթոս

ունքը պրստելով. վասն զի այս տեսակ մը հարցաքննութիւնը սկսեր է ը իր համբերութիւնը հասցնել — որ ամենաթիվելե վտանգի ձայնին կազմ՝ գտնուելու համար մեր զէնքովը դուրս ելեր ենք:

Եւ իր մասավ կարտինալի ցցոց չորս հրացաններն իրարուանցած թմբուկին մօտ, որուն վրայ էին խաղի թղթերն ու տապեղունքը:

— Հաւատացէք, Բարձրապատիւ տէր — յարեց տ'Արդանեան — որ ձեզ զիմառորելու պիսի փութայինք եթէ կարենայինք ենթաղբել որ քանի մը հոգւով միայն զէու ՚ի մեզ կ'զայիք:

Կարտինալը պեխերն ու քիչ մ'ալ շրթները կ'խածնէր:

— Գիտէք արդեօք ինչի կ'նմանիք, միշտ միտախն, ինչոք որ էր ահաւակի, միշտ զինեալ, ինչպէս որ էք և ձեր սպասաւորներու ուահակութեան ներքեւ — ըստ կարտինալը — չորս զաւադիրներու կ'նմանիք:

— Ո՛չ, այս մասին, տէր իմ, իրառունք ունիք — ըստ Աթոս — և կ'զաւակցինք, ինչպէս որ անցած առաջ 2եր բարձրութիւնը կրցաւ դիսել, կ'զաւակցինք միայն թօչէցուց զէմ:

— Է՛չ, պարզն քաղաքագէտներ — վրայ բերաւ կարտինալն ըստ կարդի ինքն ալ ունքը պրստելով — թերևս ձեր ըզեղին մէջ շատ մ'անձանօթ բաներու զարտնիքը կ'զանուէր, եթէ հնարին լինէր անոր մէջ կարդալ ինչպէս կ'կարդայիք այն նամակին մէջ զոր սպահեցիք երբ իմ զալս տեսավ:

Աթոսի զէմքը կարմրեցաւ, քայլ մ'առաւ զէու ՚ի կարտինալը:

— Կ'երեի թէ իրօք մեր վրայ կասկած ունիք, տէր իմ, և այժմ ճշմարիտ հարց ու փորձի մ'ենթարկուած ենք. եթէ սյդպէս է, թուղ 2եր բարձրութիւնն իր միաքը բացատրէ, որպէս զի մանք ևս մեր ընելիքը դիտնակիք:

— Եթէ իրօք հարց ու փորձ մը լինէր այս, լինչ լիսա — վրայ բերաւ կարտինալը — արդէն քանի քանի անձներ նոյնին ենթարկած և սպասարկուածներ ստացած եմ:

— Ես ալ անոր համար, տէր իմ, ըսի թէ կարող էք մեզ հարցաքննել, և սպատրաստ ենք սպատախան տալու:

— Ե՞նչ նամակ էր, ու. Արամիս, այն դոր կարգալու վրայ էիր և պահեցիր :

— Անկան նամակ մը, տէր իմ:

— Ո՛չ, կ'իմանամ — ըստ կարտինալը — պէտք է ոյդպիսի նամակներ գաղտնի պահել. բայց խոստովանահօր մը կրնաք ցոյց տալ, և զիտէք որ եկեղեցական եմ:

— Տէր իմ — ըստ Աթոս այնքան առելի ահարկու հանդարտ թեամբ որչափ որ իր զլուխը վատաղի մէջ կ'ոներ այս պատասխանը տալով — նամակը կնկան մը կողմէ է, բայց ոչ Սարբիոն ար Լօրու սատրագրեալ է և ոչ տիկին Եկիյօն :

Կարտինալը մեռելի զցն առաւ, վայրագ վայլակ մ'աշերէն եւլու. զլուխը գարձուց որպէս թէ Գահիւասիի և Լա Հուտինիէրի հրաման մը տալ կ'ուղեր: Աթոս այս շարժումը տեսաւ, քայլ մ'առաւ զէպ ՚ի հրայանները, որոց վրայ երեք բարեկամներն իրենց աշքը սեեներ էին իրրե մարդիկ որ դիւրաւ ձերբակալ լինելու չպիտի զիջանին: Կարտինալն իրեններուն հետ երբարդն էր, միհչզեռ հրացանակիւները սպասուորներով եօթ հոդի էին. մտածեց որ պայքարն անհաւասար պիտի լինի, նաև մանաւանդ Աթոս և իր ընկերներն իրապէս կ'զաւակցէին. ուստի՝ յանկարծ միտքը փոխելով ինչպէս որ ՚ի հարկին ընելու սովոր էր, բոլոր իր բարկութիւնն ՚ի մակիտ գարձու:

— Աղէ, աղէ — ըստ — դոք քաջարի երիտասարդներ էք, արևոն ներքե վէս, հաւատարիմ մութին մէջ, զէն չկայ որ մարդ ինքն իր վրայ հսկէ, երբ այնպէս լսու կ'հսկէ ուրիշներու վրայ. պարունակը, ես բնաւ շմուցայ այն զիշերը, այն զիշերն երբ ձեր առաջնորդութեամբ Գօլժնողիւ-Ռուժ զացի, եթէ գարձեալ իմ բռնելիք ճամբռու վրայ վատաղ մը լիներ, պիտի առ զաշէի որ ինձ ուղեկից զանուիք, բայց որովհետեւ չկայ, ձեր անեղը նստէք, ձեր շվերը պարպեցէք, նցնապէս ձեր խաղն ու նամակը լմեցոցէք: Մնաք բարե, պարոններ:

Եւ հեծնելով իր ձին՝ զօր Գահիւասի բերեր էր, ձեռքով անցնց բարե տուաւ և հեռացաւ զնաց:

Չարս երիտասարդները՝ կանգուն և անշարժ՝ աչքով՝ կարտիւնալին հետեւցան առանց բառ մ'արտասանելու մինչև որ աներեւյթ եղաւ:

Յետոյ իրարտ երես նայեցան:

Ամենքն ալ ահաբեկ կերպարան մ'ունէին, վասն զի՞ կարտիւնալին բարեկամական ողջունին չնայելով՝ կ'հասկնային որ նա զայրոյթ ի սիրա կ'հեռանար:

Այսու միայն հզօր և քամահու ժպիտով մը կ'ժամէր,

Երբ կարտիւնալին աշքէ և ձայն շլոելու շափ հեռացաւ,

— Այս կրիմօն շատ ուշ դիտեց — զուշց Բորթոս, որ իր արտնեղութիւնը մէկուն վրայ թափելու մնձ փափաք ունէր:

Կրիմօ ինքզինքն արդարացնելու համար պիտի խօսէր, երբ Այսու մատը վերաց և կրիմօ լոեց:

— Միթէ նամակը պիտի յանձնէիր, Արամիս — ըստ ա'Արդանեան:

— Ես — ըստ Արամիս իր ամենէն հեշտալուր ձայնով — ես արդէն որոշումն ըրեր էի . եթէ պնդէր որ նամակն իրեն տամ, մէկ ձեռքով նամակը պիտի տայի, և միւս կողմէ սուրս անոր փորը պիտի խօսէի:

— Ես ալ սյուդէս կարծէի — ըստ Այսու — և ահա այդ պատճառաւ անոր և քու մշղդ մասոյ: Իրափի, այս մարդը շատ անխոհեմ է որ այնպէս կ'խօսի ուրիշ մարդերու հետ, կարծես թէ մինակ իիներու և աղեղներու հետ եղած է դորձը:

— Սիրելիդ իմ Այսու — ըստ ա'Արդանեան — ես վրադ կ'ըլուսոյլիմ, բայց եթէ բունը նայինք, մնիք անիրաւ ենք:

— Ինչպէս, անիրաւ ենք — ըստ Այսու: — Ռերեմն այս մեր ծծած օքն որո՞ւ է, այս ովկիանոսը՝ ուր մեր ակնարկը կ'առարածի, որո՞ւ է, որո՞ւ այս աւազն որո՞ւ վրայ պառկեր էինք, որո՞ւ է, այս սիրահայդ զիին որո՞ւ է: Միթէ կարտիւնալինն են: Պատիւս վկայ, այս մարդը կ'երեակայէ թէ աշխարհ իրն է, դոք անոր առջիւ կ'կամազէիք ուսչած և շլմորած, կարծես թէ պատղիլ ձեր առջեւ կանգուն կ'կենար և հսկայական Մէտուս ձեզ

քար կ'կարէք : Կայինք , ըստք , միթէ սիրահար լինելը գուակ-ցիլ է : Դու , ա՛նրդանեան , սէք կապէք ես կնկան մը զօր կար-ախալը բանտարկել տուաւ , կ'ուզես որ կարսինալին ձեռքին զա-նի խլես . անոր հետ խաղ մ'է ըրածդ , քու խաղդ այս նամակն է , ինչո՞ւ համար կ'ուզես հակառակորդիդ ցոյց տալ զանի . այդ-կարելի բան չէ : Թուզ զոշակէ , փոյթ չէ , մենք ալ իր խաղը ի՛զու շակենք . այնուես չէ :

— Ճշմարիտը — ըստ ա՛նրդանեան — բոլոր խօսքերդ իմաս-տուլից են , Ամես :

— Արեմն , քիչ մ'առաջ անցած դարձածին վրայ ձայն չհա-նենք , և թուզ Արամիս ազգակցուհոյն նամակը՝ կարտինալի դա-լովք՝ ձգած տեղէն կարդա :

Արամիս զրագանէն նամակը հանեց , երեք բարեկամներ անոր մօտեցան , և երեք տպաստուրներն ալ վերստին հաղաղակին բո-ւրտիքը խմբեցան :

— Մինակ մէկ կամ երկու տող կարդացիր — ըստ ա՛նրդա-նեան — ինզրեմ նորէն սկիզբէն կարդա զայն :

— Յօժմարակամ — ըստ Արամիս :

« Ամբելիդ իմ հօրեղորորդի , կարծեմ թէ Ստընէյ երթալու-ս պիտի որոշեմ , քանի որ քյորս այն տեղի կարմելիան-կուսա-ս նաց վանքը մատուց մեր փաքրիկ սպասուհին . այս խեղճ աղջիկը և հոմբեր սրտով լողունեց այս վիճակը , քաջ զիտէ թէ առանց և հոգւոյ փրկութիւնը վտանգի մէջ զնելու չէ կարող ապրիլ և այլուր : Սակայն , եթէ մեր ընտանեաց դործերն ըստ մեր փա-ս փարի կարդադրուին , կարծեմ թէ մեղք դործելն աշք պիտի և առնու . և իր փնտուած բարեկամներուն մօտ սիստի զայ , նա մա-ս նաւանդ անոր համար որ զիտէ թէ իր վրայ կ'մօսան : Բայց և դարձեալ շատ զժուադդ չէ : իր մակ փախաց և պիտաքը և զիր մ'առնուք : Քաջ զիտեմ որ այս տեսակ ընթեշնանը դըմ-է ու արտա կ'անցնին վանդակներէն : Դայց վերջապէս , քանի որ , և սիրելիդ իմ հօրնզրարիս , քնզի փորձով ցոյց տուք , շատ և մնջարակ չեմ և այդ պաշտօնը վրաս պիտի առնում : Քոյրս իր

« շնորհակալութիւնը կ'յայտնէ որ յառէտ կ'յիշես զի՞նքը : Պատշ
և մը շատ մեծ մասաւան ջութեան մէջ ընկառ , բայց այժմ՝ փոքր
և ինչ հանդարտ է , իբ դործակալը վար դրկելով՝ որպէս զի ան-
ու ակնկալ բան մը չպատահի :

« Մ'նաս բարձ , սիրելիկ իմ՝ հօրեղորորդի , որչափ կարելի է
և ստէ ազ մեղի լուրեր հաղորդէ , այսինքն , ամէն անդամուն որ ա-
և պահովութեամբ դիր դրելու առիթ տնենաս : Կ'զրկեց քեզ :

« ՄՌԾՎ ՄՒՏԾՈՒ :

— ԱՇ , Արամիս , որչափ շնորհապարա եմ՝ քեզի — զուեց
տ'Արդանեան : — Սիրելի Քննաւանս , վերջապէս քու վրադ լուր
առի . կ'ասլրի նա , վանքի մը մէջ ապաւէն դտած է , Սարնէյ
է : ԱՇ կ'զանուի Ասընէյ , ԱՅս :

— Ալսասի սահմաննէն քանի մը մզոն հեռու , Լօրէնի մէջ .
Երբ միանդամ պաշարումը վերնայ , կարող ենք այն կողմերը պը-
տոյա մ'ընելու :

— Յուսամ որ երկար չպիտի տեև — ըստ Բորթոս — վասն
զի այս աւտու լրտես մը կախեցին , և այս լրտեսը յայտնեց որ
Ռոշէլցիկ իրենց մուճակներու կաշին ուտելու ստիպուած են : Են-
թագրելով որ կաշին ուտելէն ետեւ ներբառնն ալ ուտեն , չեմ
կընար հասկնալ թէ ուրիշ ի՞նչ ուտելիք պիտի մնայ , եթէ ոչ
զիրար պիտի ուտեն :

— Խեղջ անմիտներ — ըստ ԱՅսու բաժակ մը Պօրտօի պատ-
ռական զինի պարպելով , որ՝ թէ և այս օրուան համբառը չսնի ,
զարձեալ նշանառոր էր — խեղջ անմիտներ , որպէս թէ կաթո-
լիկ կրօնն ամենէն օդատկարն ու ախործելի կրօնը չէ : Փոյթ չէ
— յարեց նա , լեզուն քիմքին զարնելով — քաջ մարդիկ են :
Բայց , Արամիս , ի՞նչ կ'ընես , թշուառական , միթէ այդ նախակը
դրսանդ կ'պահես :

— Այս — ըստ մ'Արդանեան — ԱՅսու իրաւոնք ունի , այէտք
է զայն այրել , այո , այրել , ովլ զիտէ , կարելի է կարսինալը
դադանիք մ'ունի մոխիրն իսկ կարգալու :

— Անշտ չտ պիտի ունենայ — ըստ ԱՅսու :

— Բայց ի՞նչ պիտի ընելո այդ նամակը — հարցուց բորթոս :

— Ասու եկուր, Կրիմօ — ըստ Աթոս :

Կրիմօ ոտք ելաւ և հնազանդեցաւ :

— Առանց հրամանի խօսելուդ քեղի պատժելու համար, բարեկամ՝, աս թղթի կառը պիտի ուտես . յետոյ, մեզի ըրած ծառոյութեանդ իբրեւ վարձ՝ աս զինին պիտի խմես . նախ սա զիրն առ և բոլոր ուժովդ ծամել :

Կրիմօ մպաեցաւ, և աչերն Աթոսի լիուլի լցած բաժակին վը-
րայ սկեռռած, թուղթը հմլեց և կլեց :

— Կեցցէ, վարսետ Կրիմօ — ըստ Աթոս — հիմակ սա բա-
ժակին առ . լաւ, շեմ ուղեր որ շնորհակալ եմ ըսես :

Կրիմօ Պօրտօփ զինին լռիկ մնջիկ կլեց, բայց իր աչերը զոր
զէ պ 'ի երկին յառեր էր, կ'խօսէին, այս անուշ զբաղումը շա-
րունակելու առեն, լեզու մ'որ թէն համբ, դարձեալ նշանակա-
կան էր :

— Խոկ հիմակ — ըստ Աթոս — կարծեմ թէ դրեթէ հանգիստ
կրնանք լինիլ, միայն թէ կարտինալը Կրիմօին փորը բանալ տա-
լու հնարագէտ զարսափարը շունենայ :

«Այն պահուն կարտինալն իր տիտոր պատյառը կ'շարտնակէր՝
իր պետքերուն տակէն մրմննելով,

— Խրափ, պէտք է որ այս չորս մարդիկը ձեռքս անցընեմ :

ՓԱ.

ԳԵՐԱՎԵՐԻՆ ԱՐԱՐԻ ՕՐ

Դատնանք Միլէտին՝ զար պահ մը մոցանք Ֆրանսայի ծով-
եղին ակնարկ մը նետելու համար :

Մեր ձգած յուսակտոր վիճակին մէջ պիտի զտնենք զանի :
մթին խորհրդածութիւններու վիհ մը փորելով, մթին դժոխք

մ'որուն դժան վրայ զբեթէ յոյոը ձգեց , վասն զի առաջին անդամը կ'կատկածի նա , առաջին անդամը կ'երկնչի նա :

Երկու առթիւ բազդն իրեն ձախօրդ զնաց , երկու առթիւ իր դաւն երեան ելու . և մասնուեցաւ , և այս երկու առթիթներու մէջ անշուշտ Աստուծոյ կողմէ իրեն զէմ մաքառելու համար դրկուած աղէտաբեր ոգուցն առ ջեւ նկուն ընկաւ . ա'Արդանեան , անոր այն շարութեան անզապելի զօրութեան յաղթեց :

Տ'Արդանեանն է սր գարձուց Պրքինկէ չէ մէն , զոր Միլէտին կ'ատէ , ինչպէս կ'ատէ առն սիրած բաները , այն փոթորին արով Թիշլիէօ անոր կ'սօգանար թաղուհւոյն առթիւ , ա'Արդանեան ինքզինք Վարդ կոմմին տեղ անցուց , որուն համար Միլէտի վաղբուհւոյ մը սէրն ունէր , ինչպէս տնին այս բնառորութեան տէր անզապելի կիներ , ա'Արդանեան դիտէ այն սոսկալի դաղանին որուն համար երգմներ էր Միլէտի թէ վեր հանողը պիտի սպաննէ , վերջապէս այն միջոցին որ բաց արաօնադիր մը ստանալով՝ իր թշնամին վրէժ լուծելու պիտի երթար , այն արտօնագիրը ձեռքին կ'իսլն , և ա'Արդանեանն է որ զանի իրքն կալանուհի պահած է , և անշուշտ պիտի արտաքսէ զանի Պօթանի-պէջի պէս աղասեղի վայր մը , Հնդկաց ովկիանու վատահամբաւ մէկ Թիսպըրնի մը մէջ :

Վասն զի այս ամենը ա'Արդանեանի երեսէն կ'կրէ նա անշուշտ , որու կողմէ այնչափ ամօթալի բաներ պիտի տեղար իր գլխին վրայ եթէ ոչ ա'Արդանեանի : Կա միայն լորս Ախնարի հաղորդած պիտի լինէր այն սոսկալի դաղանիփը , զոր Հակասառդրային դիտուածով հետզետէ երկան հաներ էր : Իր տացդըր կ'ձանչէր ա'Արդանեան և անշուշտ անօր դրած պիտի լինէր :

Ի՞նչ ատելութիւն կ'հաւաքէ Միլէտին : Կայն վայրն անշարժ կեցած և իր ամայի աննկին վրայ բոցավառ . և անթարթ աչերը սեեռամձ ինչպէս իր խոր մէնչինները՝ որ ատեն ատեն իր շնչառութեան հետ կուրծքէն գուրս կ'արձակին ձայնակից կ'լինին փրփրտեղ կոհակներու հետ՝ որ վեր կ'ելնեն , կ'զուան , կ'մը-ութնչեն՝ և իրրե յախտենական անզօր յուսահատութիւն , կ'զան

փշրելու այն ժայռերուն դէմ որու վրայ շինուած է զղեակը վես
և մթին : Կ՞ոչպէս մաքին մէջ փայլող փօմորիալի բարկութեան
փայլակներուն նշոյլովը՝ տիկին Պօնասիէ օի դէմ , Պրքինկհէմի
դէմ և մանաւանդ ա'Ծրդանեանի դէմ վրէմխանդրութեան փառա-
ւոր խորհուրդներ կ'երկնէ նա , խորհուրդներ՝ որ հեռառոր ապա-
գայի մը մէջ անհետ կ'լինին :

Այս , բայց վրէմ լուծելու համար պէտք է ազատ լինիլ , և
ազատ լինելու համար , երբ մարդ կալմատոր է , ոյէտք է ազատ
մը ծակել , երկաթէ ձողեր քակել , տախտակ մը ձեղքել , և ա-
ստանկ այնպիսի ձեռնարկութիւններ են որ ուժեղ և երկացնամիտ
մարդու մը կողմէ . ՚ի կամար կ'հանուին , բայց որոց առջև կնկան
մը տենդարեր դրդութիւնները կրնային անջօր զանուիլ : Եսկէ
զատ՝ ժամանակ , ամիսներ , տարբններ ունենալ պէտք է այս բա-
ներս ընկելու համար , և նա . . . տաս տասն երկու օր ունի , լորտ
Անդրինիր եղբայրական և սոսկալի բանասարանին ըստին նայելով :

Եւ տակայն եթէ մարդ լինէր , այս ամէնը պիտի փորձէր , և
թերեւ յաջողէր : Խնչու . համար որեմն երկին այսպէս սխալեր
է , այն առնացի հողին նիշար և փափոկ մօրմնոյ մը մէջ դնելով :

Ուստի գերութեան առաջին վայրինաններն ահոելի էին . կնա-
յին տիկարութեան պարտքը վճարեց բնութեան որ ուրեմն զսպել
շիրցած կատաղութեան սարսուներով , բայց փաքր առ փաքր իր
յիմարական բարկութեան զայրայթը զսպեց , նոյնպէս ջլաձիր զողն
որ իր մարմինը վրդովեց , անհետ եղաւ , և այժմ ինքն իր վրա
դաշտած կ'մնայ իրեւ վաստակաբեկ օձ մ'որ կ'հանդտանայ :

— Օ՞ն , օ՞ն , յիմարութիւն մէտք իմ զայրայթս — ըստու նա ,
հայլիին մէջ նայելով մասդիր , որ իր աշերուն մէջ կ'ըեկըեկէ
իր հրասապ ակնարկին որով կարծես թէ ինքնիրեն հարցումներ
կ'ուղղէ — բռնազատութիւն պէտք չէ , բռնադատութիւնը տկա-
րութեան նշան է : Եւ արդարեւ այս միջոցաւ երբէք յաջողած
չեմ . եթէ իմ ոյժս կիներու դէմ զործածէի , թերեւ զանսնկ իզնէ
ունելի տկար զանելու բաղդն ունենայի և հետևապէս յաղթա-
հարէի , բայց ես մարգոց դէմ կ'մնպատիմ և անոնց համար սոսկ

Այս մ'եմ: Աւրեմն իրրե կի՞ն մաքառինք, իմ զօրութիւնս ակարութեան մէջ է:

Այս ատեն՝ որպէս թէ այնքան նշանակական և շարժոն կերպարանին փոփոխութիւններն ինքնին քննելու համար, ամեն տեսակ երեսիներ տուաւ անոր, բարկութենէ սկսեալ՝ որ իր գէմքին դերը կ'կարկամէր, մինչև ամենէն անուշ, ամենէն սիրուէտ և ամենէն հրապութելի ժպիսը: Յետոյ՝ իր ճարպիկ ձեռներուն ներքեւ իր մաղերն յաջորդաբար առին այն ծփանցն որով կարծէր երեսին շնորհքն առելցնել: Ի վերջէ ինքզինքէն զոհ, մըրմաց:

— Աղէ, ամեն ինչ յուսահատական չէ: Ես միշտ գեղանի եմ: Երեկոյեան զրեթէ ժամն ոթն էր: Միլէտի անկողին մը աեւսաւ. մատածեց որ քանի մը ժամը քնանալով ոչ միայն իր զըսին ու զաղափարները կընան թարմանալ, այլ նաև իր երեսին զցյնը: Սակայն՝ պատկելէն առաջ՝ լսուազոյն խորհուրդ մ'եկառ միտքը: Լսեր էր թէ ընթրիք պիտի բերեն: Արդէն ժամէ մ'ի վեր այն սենեկին մէ չն էր, անստարակոյս իր ճաշը ներկայելու շպիսի ուշանային: Կալանուհին չուզեց ժամանակ կորուսել, և նոյն իրկունէն սկսելով ողեց փորձ մը փորձել չորս կողմը քննելու, որպէս զի իրեն սրահպանութեան յատկացած մարդերը ճանչէ:

Դրան վրայ լոյս մ'երեցաւ. . այս լոյսն իր բանստագահներուն վերաբարձը կ'յայնանէր: Միլէտի՝ որ ոտք ելեր էր իսկոյն թեւաթուին վրայ ընկառ, զլուխն ետեւ ձգած, իր զեղեցիկ մաղերն անկառ և արձակ, իր վեզո կէս բայց ճմլուած հիւսկէններու ներքեւ, իր սրտին վրայ ձեռք մը և միւսը կախուած:

Պարզունակները բացին, զուռն իր ծխնիներու վրայ կոնչեց, սենեկին մէջ զոփիններ հնչեցին և մօտեցան:

— Դրէք սա տեղ սեղանը — ըստ ձայն մ'որու Գիլտօնին լինելը կալանուհին հասկցաւ:

Այս հրամանը կատարուեցաւ:

— Զահեր պիտի բերէք, և զիշերապահները մամանակին պիտի փոխէք — ըստ Գիլտօն: — Եւ այս կրկնակի պատուէրը նո-

բառի տեղակալը նոյն անձերուն տալով՝ հաստատեց Միլէ տիրին աշքին որ իր պահապաններն էին նաև սպասուորները, այսինքն զինուորներ :

Ամելայն՝ Ֆէլտօնի հրամանները լոխն ժրութեամբ կատարեցան, որմէ զիւրին էր հետեցնել թէ զինուորական բարեկարդութիւնը միշտ ծաղկած վիճակի մէջ կ'երեւէր Ֆէլտօնի շնորհիւը :

Աերջապէս Ֆէլտօն որ տակախն Միլէ տիրն երեսը նայած չէր, զէպ անոր դարձաւ .

— Հա՛, հա՛ — ըստ — կ'ննջէ, լաւ է . երբ արթնայ, կերակորը պիտի ուտէ :

Եւ քանի մը քայլ առան զուրս ելնելու համար :

— Բայց, աեղակալդ իւր — ըստ զինուոր մը՝ որ իր զլխառորէն նուազ սաղյիկան կ'երեւէր, և որ կնկան մօտեցեր էր — այս կինը չքնանար :

— Ինչպէս, չքնանար — ըստ Ֆէլտօն — ուրեմն ի՞նչ կ'ընէ :

— Նուազած է . իր զէմքը շատ գունատ է, և պարագ աեղ ականջ կ'զնեմ, իր շնչառութիւնը չեմ լսեր :

— Կրաւունք ոնիս — ըստ Ֆէլտօն, և առանց քայլ մ'առնլու իր կեցած տեղին Միլէ տիրն նայելէն ետև, — զնաւ իմաց առոր լորտ Վինդրի թէ իր կալանուհին մարած է, վասն զի ընելիքս չդիտեմ, և այս պարագան չէ ինք նսխատեսած :

Զինուորը բուրս ելաւ իր սպային հրամանին հնազանդելու համար . Ֆէլտօն՝ զիտուածով զրան մօտ գտնուած աթոռին վրայ նստաւ . և սպասեց առանց խօսք մ'ըսելու, առանց շարժում մ'ընելու : Միլէ տիրն՝ կանանց իխտս ծանօթ արուեստը քաջ զիտէր, այն է իր երկար աբուանոնձքէն նայիլ՝ այնպէս որ կարծես թէ զանոնք չէր բանար, Ֆէլտօնը տեսաւ որ իր կոնակը դարձուցեր էր, զրեթէ տաս վայրկենի չափ շարունակ անոր նայեցաւ, և այս տաս վայրկենին մէջ, անդրդուելի պահնորդն և ոչ իսկ մի անդամ զլուխը գարձուց :

Այս ատեն Միլէ տիր մօտածեց որ լորտ Վինդր դալով իր բանապահին նոր ոյժ պիտի տար ներկայութեամբը . իր առաջին

փորձն՝ ի գերեւ ելեր էր, բայց հոգ չըրտու իրրեւ կին որ իր հնարադիսութեան վրայ վասահ է, հետևապէս զլուխը վերտոց, աշշերը բացաւ և մեղմիկ հառաւչեց :

Այս հառաչը լսելուն՝ Ֆէլտօնն հուսկ ուրեմն դարձաւ :

— Ա՛հ, աիկին, ահա արթնցար — ըստ նա — ուրեմն այս տեղ ալ զարծ չունիմք: Եթէ զու բանի մը կարու լինիս, հընչակը կինաս զարնել:

— Ա՛հ, Աստուած իմ, Աստուած իմ, որչափ աստուապանք քաշեցի — մրմնաց Միլէտի այնակիսի դաշնակուոր ձայնով մ'որ հին դիմթիչներու նման, կ'թովլէր կորուանլ ուզած անձերը :

Եւ իր թևաթուին վրայ ելնելով աւելի շնորհալի և լքեալ զիբր մ'առաւ քան պատկած ատենը :

Ֆէլտօնն ուրբ ելաւ :

— Այսպէս երեք անդամ՝ օրը սեղան պիտի զրուի, աիկինն — ըստ նա — առօտու ժամն իննին, կէս օրէն ետեւ ժամը մէկին և իրկունը ժամն ութին: Եթէ այս ժամերը քեզի անյարմար կ'թուին, կինաս ուրիշ կերպով որոշել, և այս մասին քու փափաքիդ համեմատ պիտի վարուին :

— Բայց միթէ այս մեծ և ցուրտ սենեկին մէջ միշտ առանձին պիտի մնամ — հարցոց Միլէտի :

— Արդէն իմաց տունիք շրջակաները դամնուող կնկան մ'որ վաղը զդեակս պիտի դանուի, և ամէն անդամուն որ կարու լինիս իր ներկայութեան՝ պիտի զայ :

— Ծնորչ ունիմք քեզ, սրարոն — պատսախանեց խոնարհարար կալանաւոր կինը :

Ֆէլտօնն թեթեւ ողջոյն մը առաւ և գէսլ ՚ի զուռը զիմեց: Այս միջացին որ սեմէն զուրս պիտի ելնէր, լորս Վինդը նրբագաւիթն երեցաւ, իր ետևէն ունենալով այն զինուորն որ Միլէտիին նուազման լուրը տարեր էր անոր: Չեռքն աղի սրաւակ մը բռնած:

— Կան ուրեմն, ինչ կայ, և ինչ նոր բան անցաւ այս տեղ — ըստ նա հեղնապի ձայնով մ'իր կալանաչին ուրբի վրայ և Ֆէլտօնն ալ զուրս ելնելու մօտ տեսնելով: — Միլէտ այս մե-

ուելն արդէն յարտթիւն տուա : Ճշմարիտը , Ֆէլտօն , տղաս : Հին նոյիր որ քեզ համբակի տեղ դրեր և կատակերդոթթեան մը տաւջին արարուածը կ'խաղայ , որուն հետեւթիւնները տեսնեւու զուարձութիւնը պիտի ունենանք անշուշտ :

— Ես ալ այդպէս մտածեցի — բայս Ֆէլտօն . — բայց վերջապէս , ըստ որում՝ կալանուհին կին է , հարկաւ ես ալ ու զեցի՝ իբրև բարեկիրմ մարդ՝ պէտք եղած յարդը մատուցանել կնկան մը , եթէ ոչ անոր՝ զէթ իբրև համար :

Միլէտի բոլոր մարմնովը սարսուա մ' զզաց : Ֆէլտօնի այս խօսքերն իբրև սառոցյ կ'անցնէին բոլոր երակներուն մէջէն :

— Այսպէս — վրայ բերաւ լորտ Վինդգր ծիծաղելով — քարսիրտ պատանի , միթէ այս վայելշապէս պարզուած մազերը , այս սպիտակ մորթն և այս նուաղուն ակնարկը դեռ ևս չհրապութիւն քեզ :

— Ոչ , միլորտ — պատասխանեց անդրդուելի պատանին — և հաւառն ինձ , զիս հրազդութելու համար բաւական չեն կիներու վարպետութիւններն ու նազանքը :

— Աւքեմն , իմ քաջ տեղակալս , թողոնք Միլէտին որ ուրիշ հնար մը փնտուե և երթանք ընթրիք ընելու ան՛ , հանդարտ եղիր , բեղմնառոր երևակացութիւն մ'ունի , և կատակերդոթթեան երկրորդ արարուածն առաջինին հետեւլու չպիտի ոշանաց :

Եւ այս խօսքն ըսելով՝ լորտ Վինդգր իր թեհն անցուց Ֆէլտօնի թեհն և ծիծաղելով առաւ տարաւ :

— Ա՛՛ , քեզի պէտք եղածը պիտի դանեմ — մըմուաց Միլէտի քթին տակէն — անհոգ եղիր , խեղջ վրիպետ կրօնաւոր , խեղջ հաւատագարձ զինուոր որ համազշեսուդ կրօնաւորի պարեղօտէդ ձեւերը ես :

— Զմանամ ըսելու — վրայ բերաւ լորտ Վինդգր դրան ուրամին վրայ կանկ առնլով — պէտք չէ որ , Միլէտի , այս ձախորդ զէսպէն ախորժակդ կտրէ : Սա վառեակէն և ձիներէն կեր , որ թուառուած չեն , պատոցյ վրայ կ'երդնում : Բաւական դոչ եմ իմ խոհարարէս , և որավհետև իշնէ ժառանգելու բան մէ

չունի, ես անոր վրայ լիակատար վաստահութիւն ունիմ։ Դու այլից օրինակիս հետեւ։ Մնաս բարե, սիրելի քոյր, երկրորդ անգամը մարելուն կ'առեմնուինք։

Միլէտիին համար ասելէ մեծ հարուած շեր լինէր. ձեռներն աթուին վրայ կարիւամց, իր ակռաները խոր կերպով կրնաց, իր աչերը հետեւեցան զրան շարժումներուն որ լորտ Ալինդրի և Գելանիի ետեւէն զոցուեցաւ, և երբ ինքզինքը մինակ զաւա, յուստհաստ թեան նոր տաղնազ մ'առան զինքը, աչքը անզանին վրայ նետեց, զանակի մը փայլը տեսաւ, սրացաւ զայն բռնեց, բայց իր սրատրանքը մեծ եղաւ, տայրը կլոր էր և կակտղարծաթէ։

Աղէկ չզոցուած զրան ետեւ քահ քահ մը թնդաց և զուռը նորէն բայցուեցաւ։

— Հա, հա — զոչեց Ալինդր — հա, հա, հա, կ'նային, իմ քաջ Գելտօնս, կ'նային քեզի ըսածու ելաւ. այս դանակը քեզի համար էր, տղաս, անշուշտ քեզ պիտի սպաններ, զիտնս արդ գեօք որ այս իր մէկ պակստ թիւններէն մին է, որ և է կերպավ իրեն նեղութիւն պատճառող մարդիկներէ աղասիի կ'ուզէ։ Եթէ քեզ մտիկ ընէի, զանակը սրածայր և սրզզաւտիկ պիտի լինէր, այն ատեն Գելտօն անդին զացած պիտի լինէր, անշուշտ քեզ պիտի խողիսղէր, և քեզնէ ետքն ոլ ուրիշները։ Կայէ մի անգամ, Ճօհն, թէ Բնչպէս զանակը լաւ բռնել զիտէ։

Եւ արդարե՛ Միլէտի բռներ էր տակաւին իր կարկամ ձեռքին մէջ զէնքը. բայց յետին խօսքերը, բայց այս ծայրազոյն նախատինկն իր ձեռները, իր ոյժն և մինչեւ անզամ կամքը ջւառեցին։

Դանակը դետին ընկաւ։

— Կրառոնք ունիս, միլորտ — ըստ Գելտօն խորին զզուանց շեշտով մ'որ Միլէտիին սրտին խորը թափանցեց — զու իրաւոնք ունիս, Ես միայն սիսալեր եմ։

Եւ երկոքնին ալ միասին զուրս ելան։

Բայց այս անզամ՝ Միլէտի առելի ուշապիր ականջ տուաւ, և անոնց դոփինը լուց որ հեռանալով նրբազան թիւն խորը զազ բեցաւ։

— Ես կորսուած եմ — մըմաց նա — ահաւասիկ այնպիսի մարդոց իշխանութեան ներքեւ եմ, որոց վրայ՝ իրբե պղնձէլ կամ չատաքարէ արձաններու վրայ, բնաւ աղղեցութիւն շունիմ, զիս դոց զիսեն և իմ բոլոր զինուց գէմ սպառազինեալ են :

Սակայն անկարելի է որ այս բանս իբրենց որոշած կերպովն առարտի :

Արդարեւ ինչպէս որ այս վերջին մտածութիւնը, յուսոյ այս բնազդական վերաբարձր կ'յայտնէր, Միլէտիին խորոնկ հօգւացն մէջ երկիւղն ու տիկար զգացումներն ընդ երկար չէին տիրեր : Ուստի սեղան նստաւ, շատ մը կերակուրներէ կերաւ, քիչ մը Սպանիոյ դինի խմեց և զգաց որ իր աներկեանութիւնը կ'վերադառնայ :

Պատկելէն առաջ մեկներ, վերլուծ ծեր, ամէն կողմէ նկատեր, մանրավնին քններ էր իր խօսակիցներուն խօսքերը, քայլերը, շարժումները, նշաններն և մինչեւ անոնց լուսթիւնը, և այս ճարտար, խօսասոյզ և ներհուն քննութենէն սա հետեւութիւնը հաներ էր թէ հուսկ ուրեմն Գիլտօն իր հալածողներէն ամենէն վիրառորելին էր :

Մանաւանդ բառ մը կալանուհին միաբը կ'զար :

— Եթէ խօսք մտիկ ընէի — ըսկը էր լորա Ալինդը Գիլտօնի : Արեմն Գիլտօն իրեն նպաստաւոր կերպով խօսեր էր, քանի որ լորա Ալինդը չէր ուզած Գիլտօնը մտիկ ընէլ :

— Տիար կամ ուժեղ — կ'կընէնէր Միլէտի — ուրեմն ոյս մարդ զը սրտին մէջ զմոյ նշոյլ մ'ունի, այս նշոյլը հրղեհ պիտի դարձնեմ որ զայն լափէ :

Խակ միուսին զալով, զիս կ'ձանչէ, իզնէ կ'երկնչի և զիսէ թէ ինչ բանի կարող եմ եթէ երբէք իր ձեռքէն պղծիմ, ուրեմն ահօղուա է անոր վրայ փորձ մը փորձել :

Բայց Գիլտօն ուրիշ բան է, պարզմիտ, մաքուր պատանի մ'է որ առաքինի կ'երեխ, զանի ՚ի կորուստ մատնելու հնարը կայ :

Եւ Միլէտի պառկեցու և քնացաւ մպիտ ՚ի շուրջը . ով որ անոր քոնը տեմնէր, ովանի կարծէր թէ նորասի օրիորդ մ'է որ

Յազկեայ պասակ մը կ'երազէ յառաջիկոյ տօնին Շատկաալ բոլորեւ շու համար :

ԺԲ

ԳԵՐՈՒԹԵԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՕՐ

Միլէտի կ'երազէ որ վերջապէս ա'Արդանեանն իր ձեռքն էր, թէ անոր տան ջանաց ականատես էր, և անոր քատմնելի արեան տեսքն էր որ գահնին տասլարին ներբեւ հասելով շրթերուն վրայ սիրուն ծաղիւր կ'յօրինէր :

Կ'ննջէր նա, ինչոր կ'ննջէ բանտառոր մ'որ առաջին յուսով կ'օրօրի :

Հետեւալ օրն երբ իր սենեալը մտան՝ դեռ ևս անկաղինն էր նա : Գէլտօն նրբագալթին մէջ կ'կենար, առջե օր խօսած կինն իր հետը կ'քերէր, այս կինը ներս մտաւ և Միլէտիին անկաղնոյն մօտենալով իր ծառայութիւնը մատոյց :

Միլէտի սովորաբար դռնատ էր, ուստի առաջին անգամ առնոր դժնիք ահսնող անձը կրնար խարս իր :

— Տենդ ունիմ — ըստ նա — վայրինան մ'անգամ աչք չդուցեցի այս երկայն դիշերը, ահսոելի ցաւ մը կ'քաշեմ, միթէ դուսելի մարդասէր պիտի լինիս քան ուրիշները : Սակայն՝ քեզնէ ուրիշ բան չեմ խնդրեր, բայց եթէ ներել ինձ անկողինս մմալ :

— Աբգեօք կ'ուղես որ բժիշկ մը կանչենք — ըստ կինը :

Գէլտօն այս տրամախօսութիւնը մտիկ կ'ընէր անձայն :

Միլէտի մասածեց թէ որչափ շատ մարդ իր չորս կողմն առնուն, այնչափ զթացող պիտի ունենայ, և այնչափ աւելի պիտի սասականար լորա Ալինդրի հսկողութիւնը, ասկէ զատ՝ կարելի է որ բժիշկը յայանէր թէ հիւանդութիւնը կեղծ է, և Միլէտի առջի փորձը կորուսելն եաւ՝ շէր ուղեր որ երկրորդն ալ կույտաւ :

— Բժիշկ մը կանչել — ըստ նու — ինչ օգուտ ունի . այս պարանիերն երեկ ըստին թէ իմ անհանգստութիւնս կատակերգութիւն մ'է , նոյնը պիտի ըստն և այսօր , վասն զի երեկ իրկունէ վեր քժիշիկ կանչելու ժամանակ կար :

— Աւրեմն — ըստ Փէլտօն անհամբեր — դու ինքնին ըստ , արկին , թէ ինչ կերպ կ'ուզես ինամուիլ :

— Է՛ս , միթէ ես զիտեմ , Տէր Աստուած . կ'զգամ որ հիւանդ եմ , ուրիշ բան չզիտեմ : Ի՞նչ որ ուզեն թուղ տան ինձ , փոյթո չէ բնաւ :

— Գնան լորտ Ախնդրը կանչել — ըստ Փէլտօն այս անվերջանալի տրաստնչներէ տաղողկացած :

— Ո՛չ , չէ — զոչեց Միլէտի — ոչ , պարոն , մի կանչեր զանի , կ'ազաշեմ , աղէկ եմ , բանէ մը պէտք չունիմ , մի կանչեր , ինքը բեմ :

Եյս բացադանչութիւնն այնպիսի հիւանալի ուժգնութեամբ եւ յանկուցիչ ճարտասամութեամբ արտասանեց՝ որ Փէլտօն հրապուրուելով անելին մէջ բանի մը քայլ առան :

— Եկան . — մոտածեց Միլէտի :

— Սակայն , տիկին — ըստ Փէլտօն — եթէ չբարեւ կ'տառապիս , թուղ որ բժիշկ մը կանչեն , իսկ եթէ մեղ կ'խարես . չաւ , վայ դլսիդ , բայց դռնէ , մենք այս մասին անպարտ պիտի մնանք :

Միլէտի բան մը չպատասխանեց , բայց իր դլու ին իր բարձին վրայ դնելով յորդ արտօնուք թափեց և հասկլտաց ուժգին :

Պահ մը Փէլտօն իր սովորական անկարեկցութեամբը նայեցաւ , յետոյ դիտելով որ այս Ճշնամամը պիտի երկարէր , դռըս ելաւ , կին անոր ետեւն գնաց : Իսկ լորտ Ախնդր չերեցաւ :

— Կարծեմ թէ փաքր ինչ մույլը կ'փարատի — մրմուաց Միլէտի վարագ ինդութեամբ մը , և իր վերմակներուն ներբեւ թաղուեցաւ որպէս զի իր ներքին խանդադին ցնծութիւնը զինքը լըր տեսողներուն աշքէն պահէ :

Երկու ժամ անցաւ :

— Այժմ, ժամ՝ որ հիմնդութիւնս զադրի — ըստ նա — և առ ելնենք և այսօրուանէ յաջողութիւն մը զանելու աշխատինք, տաս օր միայն ունիմ, և այս զիշեր արդէն օրին երկուքն անցան:

Առառ Միլէտիին սենեւակը մտնելով՝ իր նախաձաշիկը բերեր էին. արդ՝ մասած էր էր որ քիչ ասենէն պիտի զան սեղանը վերցնեն, և նոյն պահուն Ֆէլտօնը պիտի տեսնէր:

Միլէտի չէր սիսալեր. Ֆէլտօն երեցաւ, և առանց ոչ զնելու թէ արգեօք Միլէտին կերակոր կերեր էր թէ ոչ, նշան մը ըրաւ որպէս զի սեղանը դուրս հանեն, զոր սովորաբար պատրաստ կ'բերէ ին:

Ֆէլտօն ամենէն վերջը մնաց, ձեռքը զիրք մը բռներ էր:

Միլէտի՝ վառարանին մօտ զտնուած աթոռի մը վրայ պառկած՝ զեղանի, զունաւ և համբերատար, կարծես թէ սուրբ կոյս մ'էր որ մարտիրոս լինելու կ'սպաէր:

Ֆէլտօն անոր մօտեցաւ և ըստ.

— Լորտ Վինդը որ քեզի ոլէս կամուլիկ է, արկին, մոտածեց որ թերևս կրօնիդ ծէսէն և արարողաւթիւններէն զրկուելով՝ կ'սեղանաս. ուստի կ'հաւանի որ ամէն օր ուստի աղօմքդ կարդաս, և ահաւասիկ զիրք մ'որ ծխարանը կ'պարունակէ:

Ֆէլտօն նոյն զիրքն այնպիսի գէմքով մը Միլէտիին մօտ զըստնուած փոքրիկ սեղանին վրայ գրաւ, ուստի աղօմքդ խօսքն այնպիսի ձայնավ մ'արտասանեց, այնպիւի քամահու ժայխտ մը ցցուց որ Միլէտի զլուխը վերուց և աւելի ուշի ոշով նայեցաւ սպային:

Այս ատեն Միլէտի Ֆէլտօնի անշոք զլխապարդը, հագուստին ծայրայեղ պարզութիւնը, մարմարի ոլէս յղկուն՝ այլ ասոր պէս կարծը և անթափանց ճակատը զիանելով՝ հասկցաւ որ այն սպատենիւ մարբակրօններէն մին է որոց սահմանակեր էր Ժազ Թաղառորին և Ֆրանսայի թաղառորին պալատը՝ ուր՝ Ա. Պարմէլէմի յիշտառակին հակառակ՝ երբեմն սպատէն մը զտնելու կը դային:

Աւստի ինչողէս որ միայն հանճարեղ անձեր մեծ ճգնաժամի

առանք, և ոյնպիսի ժամանակ մ'որմէ կախում կ'ունենայ իբրևց բաղդը կամ կեանքը՝ Միլէտին ալ յանկարծահաս ներշնչութիւն ժողովական է:

Այս երկու խօսքը, ու ուստի այս գործութիւնը, և Ֆէլտօնի վրայ ձգած լոկ ակնարկ մը՝ իրօք իր տալիք պատասխանին կարնորութիւնը յայտներ էր:

Բայց իրեն յատուկ եզած արագահաս իմացականութեամբ, այն ձե պատասխանն իր շրմէնքուն վրայ պատրաստ դատ:

— Ե՛ս — ըստ ոյնպիսի քամահու ձայնով մ'որ առաջին ձայնին մէջ դիտած արհամարհական կնրադին կ'համաձայնէր — Ե՛ս, պարոն, Ե՛ս ուստի այս Վինդը՝ ազականակիր կաթուիկը՝ քաջ դիտէ որ իր կրօնը չեմ դառնեիր, և ինձի զարան մը լարել կ'ուղէ:

— Ուրեմն ինչ կրօն կ'զաւանիս, ամեկին — Հարցոց Ֆէլտօն զարմանօք զոր՝ իր ինքնատիրութեան հակառակ՝ չկրցաւ ծածկել:

— Յայտնեմ պիտի — զուեց Միլէտի շինովի ջերմեռանդութեամբ մը — այն օրն որ իմ հաւատիս համար բաւական տառապանք քաշած ու պուխմ:

Ֆէլտօնի ակնարկը՝ Միլէտին աչքին պարզեց այն ընդարձակ առարկէ զը զոր իր այս պատասխանովը միայն բացեր էր:

Սակայն նորատի սպայն համը և անշարժ մնաց, իր ակնարկը միայն խօսեր էր:

— Ես իմ թշնամիներուս ձեռքն եմ — շարայարեց նա այնպիսի խանգով մ'որուն մաքրակրօններն ընտել էին, ինչպէս որ զիտէր — լու ուրեմն, թուղ Աստուած զիս ազատէ, կամ թուղ Աստուծոյս համար մեռնիմ. ահա այս պատասխանս միայն ըրբ Վինդը հազրողելու կ'փափաքիմ:

— Իսկ այս զիւքին զալով — յարեց նա՝ մատին ծայրով ծիս սարանը ցոյց տալով՝ բայց առաջ դպելու՝ որպէս թէ անոր դպելով պիտի պղծուէր — կարող ես զայն առնուլ տանիլ և դու ինքնին դործածել, վասն զի ըրբ Վինդը կրկնակի դաւակից ես, թէ իր հաւածանաց և թէ իր հարետիկութեան մէջ:

ԳԵԼՄԾՆ բան մը չպատասխանեց, զիրքը մի և նոյն ահաճութեան զգացումով առաւ ինչպէս որ արդէն յայտներ էր, և խոհուն ետ դարձաւ :

Լորտ Ավելիդը երեկոյեան ժամը հինգին միջոցներն եկաւ . Միլէտի բոլոր օրն իր ընթացքին յատակագիծը զծելու ատեն ունեցեր էր . տստի ընդունեց նա լորտ Ավենդըն իրրե իին մ'որ արդէն իր առառելութիւնները ձեռք ձգեր էր :

— Կ'երեկի թէ — ըստ մետուհը նստելով Միլէտիին դիմացը զսնուող աթուին վրայ և իր ուները դանդաղօրէն վառարանին կողմը տարածելով — կ'երեկի թէ փաքրիկ որացութիւն մ'ըրինք :

— Ի՞նչ ըսել կ'ուզես, պարոն :

— Ըսել կ'ուզեմ թէ մեր վերջին տեսութենէ վեր՝ կրօն փոխեցինք . արդեօք դիպուածով երրորդ բողոքական ամուսին մ'առիր:

— Բացատրէ միաքդ, միլորտ — պատասխանեց կալանուհին մեծափառութեամբ — վասն զի ահա կ'ըսեմ քեզի որ խօսքերդ կը լսեմ այլ չեմ իմանար :

— Ուրեմն խօսքէդ սա կ'հետեւի որ դու բնաւ կրօն մը չլոնիս, այդ առելի ախորժելի է ինձ — վրայ բերաւ լորտ Ավենդը հեզնելով :

— Երաւ է որ այս բանս քու սկզբանցդ առելի կ'յարմարի — պատասխանեց Միլէտի սրադութեամբ :

— Ո՛չ, կ'խոռոշովանիմ որ այդ մասին բոլորովին անտարբեր եմ :

— Ո՛չ, թէ որ չխոռոշովանէիր անգամ այդ կրօնական անտարբերութիւնք, միլորտ, դարձեալ քու ցոփութիւններդ և ոչիշներդ կրնային վկայել :

— Հէ, դու ցոփութեան վրայ կ'խօսիս, տիկին Մէտալին, ամիկին Մազպէլժ : Կամ լսու չլսեցի, կամ, Տէր վկայ, շատ լըսիրչ ես :

— Այդպէս կ'խօսիս, վասն զի դիսես որ մեզ մտիկ կ'ընեն, պարօն — պատասխանեց պազութեամբ Միլէտի — և կ'ուզես որ իմ բանտապահներս ու դահճաներս ինձի դէմ դրզուես :

— Իմ բանատապահներս, իմ դահիճներս : Դրաւ որ, ամիկին : շատ բանահիւսական լեզու մը կ'գործածես, և երէկուան կատակերգութիւնն այս իրկուն ողբերգութեան կ'դառնայ : Ի՞նչ և է, ութ օրէն պիտի երթաս ուր որ պարտիս երթալ և իմ պաշտօնս աւարտած պիտի լինիմ :

— Աւատահամբաւ պաշտօն, ամբարիշտ պաշտօն — վրայ բերաւ Միլէտի իր դատաւորը զայրացնող նահատակի մը խանդով :

— Իմ պատոյս վրայ կ'երդնում — ըստ լրտ Ալինը դոք ենելով — կարծեմ թէ այս չարասէր կինը յիմար կ'դառնայ : Աղէ, աղէ, հանգարտէ, ամիկին մաքրակրօն, թէ ոչ քեզ զընդամը պիտի նետել տամ : Տէր վկայ, անտարակոյս իմ սպանիաւկան զինին զինիդ զարկած է, այնպէս չէ : Բայց անհոգ եղիր, այդ զինովութիւնը վտանգաւոր չէ և հետեանք մը չպիտի ունենայ :

Եւ լրտա Ալինդր հայհայելով գուրս ելաւ, և այս բանս նոյն ժամանակի ասպետական առվորոյթ մ'էր :

Եւ արդարեւ Ֆէլտոն դրան ետեւն էր, և այս խօսակցութենէն բառ մը չէր կորուած :

Միլէտի Ճիշտ գուշակեր էր :

« Ժամանակի մը իմ դտնուած վիճակս ինձ ոյնքան տարօրէն երեցաւ որ կարծեցի թէ կ'երազեմ : Ուսք ելայ երերուն , զյեստներս իմ քովս , աթոռի մը վրայ էին . չէի յիշեր բնաւ թէ լաւթերս հանած և պառկած լինիմ : Այն ատեն փոքր առ փոքր իրավանութիւնն ինձի երեցաւ ամօթահար արհաւրօք . իմ բնակած տունս չէի . որչափ որ արևուն լոյսէն կարող էի դատել

արդէն օրուան երկու երրորդ մասն անցեր էր . առջի իրկունը քնացեր էի . ուրեմն իմ գոհնա քսան և շորս ժամ տեսեր էր : Այս երկար գունիս մէջ ի՞նչ պատահեր էր :

« Կոյցածիս շափ շուտով հազուեցայ : Իմ բոլոր ծմնը և ընդարմ շարժումներս կ'ցացնէին որ քնաբեր զեղին ներդորձութիւնը բոլորովին չէր փարատած : Ասկէ զատ՝ այն խուցը կին մը ընդունելու նպատակաւ զարդարեց էին , և եթէ ամենէն կաստրուն նազելին որ և է իդձ մը յայտնէր՝ աննեկին շորս զին իր ակնարկն ածելով իր իդձը կատարուած պիտի տեսնէր :

« Անցու շո՝ այն շքեղ բանտին մէջ ես չէի առաջին արդելեալ կինը , բայց , կ'իմանաս , ֆէլտօն , որշափ որ բանսն աղուոր էր , այնշափ կ'զարհուրէի :

« Այս , բանտ մէջ , վասն զի ՚ի զուր ջանացի զուրս ելնել : Բոլոր պատերը զարկի որպէս զի ելք մը զտնեմ , ամէն կողմէ պատերը լեցան և հոծ ձայն մը տուին :

« Կարելի է քսան անդամ նոյն սենեկին շրջանն ըըի որ և է ելք մը փնտոելով . ելք չկար . վաստակաբեկ և լեղապատառ ընկայ թիկնաթուի մը վրայ :

« Նոյն պահուն՝ զիշերը շուտով վրայ կ'հասնէր , և մութին հետ իմ արհամիքս կ'առելնային . չդիտէի թէ նստած տեղը կենալ պէտք էր թէ ոչ . այնպէս կ'երենէր ինձ որ անյայտ վտանգաներով պաշարուած եմ , որոց մէջ ամէն մէկ քայլիս պիտի ընկնէի : Թէև առջի օրէ վեր բան մը չէի կերած , երկիւ զը կ'արգիլէր որ անօթութիւն զգամ :

« Դրսէն ձայն մ'որով կարենայի ժամանակս չափել , չէր հասներ մինչև ինձ . մինակ կ'երեւակայէի որ թերեւս երեկոյեան ժամն եօթ կամ ութին էր . վասն զի հոկտեմբեր ամսեան մէջ էինք : և բոլորովին զիշեր էր :

« Յանկարծ՝ դրան մը կռինչն որ իր ծխնիներուն վրայ կ'դառնայ , ինձ սարսուռ մը տաւառ . ձեղունին ապակեայ ծակէն հրային գունդ մ'երեցա՝ սենեկիս մէջ վառվուռն լոյս մ'արձակելով , և ահ ու դողով զիտեցի որ մարդ մը քանի մը քայլ հեռու կանգուն կ'կենար իմ առջևս :

« Նրկու . հոգիի համար սեղան մը՝ որուն վրայ պատրաստ ընթափ մը կար , հմայութեամբ մը սենեկիս մէջ տեղը կանդներ էր :

« Այս մարդը տարիէ վեր ետևէս ընկնող մարդն էր , որ երդումներ էր զիս անպատճելու , և որ իր բերնէն ելած առաջին խօսքերէն հասկցուց թէ առջի իրկուն այս անպատճելունը կատարեր էր :

— Վատազդին — մըմնաց Գէլտօն :

— Ո՛չ , այս , վատազդին — դոչեց Միլէտի՝ զիտէլով որ նորատի սպայն՝ որուն հոգին իր շրթերէն կախուեր էր , որչափ մտադիր էր իր պատճութեան — ո՛չ , այս , վատազդի մ'է . կարծեար էր թէ ամէն բան լմնած է իմ քունիս մէջ զիս յաղթահարելովը . ինձի կ'զար՝ յուսալով որ իմ անպատճեանս պիտի զիջանիմ , քանի որ զիս արդէն անպատճեր էր , կ'զար իմ սիրոյս փոխարէն ինձ իր բոլոր հարստութիւնն ընծայելու :

« Կնկան մը սիրտն որչափ վէս արհամարհանք և անսարդական խօսքեր որ կ'պարունակէ՝ այս մարդուն վրայ թափեցի . սցսպիսի յանդիմնութիւններու վարժ էր արդէն , վասն զի հանդարս , ծիծաղկու և թեսերը կրծքին վրայ խաչաձև բռնած զիս մոտիկ ըրաւ . ապա՝ երբ կարծեց թէ ամէն բան ըսի , զէպ ինձ մօտեցաւ . ես ալ զէպ ի սեղանը ցատկեցի , զանակ մ'առի , և կըրծքիս վրայ կոթնցուցի :

« — Եթէ քայլ մ'ես առնուս — ըսի անոր — ոչ միայն անպատճութեանս այլ և մահուանս համար մեղապարտ պիտի զմնուիս :

« Կ'երեի թէ իմ ակնարկիս , ձայնիս , բոլոր անձիս վրայ տեսնաւած շարժումն , կայնուածքս , շեշտս այնպէս ձշմարիտ էին որ թշնամիս՝ որչափ անդզամ՝ հոգի որ ունենար , համեղուեցաւ և կայառաւ :

« — Քու մահդ — ըստու նա — ո՛չ , ոչ , դու այնչափ չքնար սիրուհի մ'ես որ շեմ հաձիր բնաւ այսպէս կորուսել քեզ . անդամ մը միայն քեզ վայելելու երջանկութիւնն ունենալէն եսեւ : Մնաս բարեւ , իմ ամենագեղանի տիրուհիս . վերստին այցի զալու համար՝ պիտի սպասեմ որ լաւագոյն տրամադրութեան մէջ դանուիս իմ մասիս :

« Այս ըսելավ՝ մի անգամ՝ սուլեց, բոցավառ դունդն որ իմ սենեակս կ'լուսաւորէր, վեր ելաւլով աներեւոյթ եղաւ. ինքզիս նորէն մթութեան մէջ զտայ: Պահ մ'ետք՝ դրան մը բացուելու և զոցուելու ձայնը նորէն լսուեցաւ, լուսավառ դունդը նորէն վար իջաւ և ես մինակ մնացի:

« Սոսկալի եղաւ այս վայրիեանս, եթէ դժբաղդութեանս վրայ թերևս կասկած մ'ունէի, այս կասկածը յուսահասական իրականութեամբ փարատեր էր. ոչ միայն ինձ ատելի այլ քամահելի մարդու մ'իշխանութեան ներքեւ էի. մարդ մ'որ ամէն բանի կարող էր, և իր կարողութեան մէկ աղէտալի ապացոյցն արգէն ինձ տուեր էր:

— Բայց ով էր այն մարդը — հարցուց ֆէլտօն:

— « Գիշերն աթոռի մը վրայ անցուցի թեթև շշուկէ մը գողդողալով, վասն զի, զբեթէ կէս զիշերին, կանթեղը մարեր էր և նորէն խաւարը պատեր էր զիս. սակայն նոյն զիշերն անցաւ և բռնութեան նոր փորձ մը չեղաւ. արևն երեցաւ, սեղանն անհետ եղեր էր, մինակ դանակը տակախն ձեռքս էր:

« Այս դանակն իմ բոլոր յօյսս էր:

« Յոզնութենէ հաղ ու մաշ եղեր էի, քնչատութիւնն աչքերս կ'այրէր, վայրիեան մ'իակ քնանալու չեշխեր էի, լոյօր փոքր ինչ հանգարանեցոց զիս, զացի անկողինս ընկայ առանց փրկարար դանակս թողլու և զայն բարձիս ներքեւ պահեցի:

« Երբ արթնացյ, զիտեցի որ նոր մեղան մը գրեր են:

« Այս անդամ՝ իմ սարսափս, իմ անձկութիւններս մոռնաւ լով լափլիզող անօմութիւնն մ'զգացի. քառասուն ոթ ժամէ վեր բերանս փշորնք չէի դրեր, քիչ մը հաց ու պատղ կերայ, յետց արգէն խմած ջրիս խառնուած քնարեր զեղը յիշելով ոեղանի վրայի ջրին չգպայ և զացի բաժտիս պատին մէջ փակուած աղբիւրէն լեցուցի:

« Սակայն՝ թէև այս զգուշութիւնն ըրի, դարձեալ ոպահ մը սոսկալի տաղնասի մէջ մնացի. բայց այս անգամ իմ երկիւզս անհիմն էր, նոյն օրն անցուցի առանց զգալու ինչ որ արգէն վախցեր էի որ պիտի զգամ:

և նոյնպէս բլշակը կիսովին պարսկելու հոգ տարեր էի որպէս զի իմ կասկածս չհասկնան :

« Գիշերը հասաւ մութին հետ, սակայն՝ թէ և մթոթիւնը խոր՝ աշերս սկսեր էին վարժիլ անոր . խաւարին մէջ տեսայ որ սեղանու շետնին տակը կ'անցնէր . քառորդէ մ'ետք երեցաւ իմ ընթրիքս բերելով . պահ մ'ետք՝ մի և նոյն կանթեղին շնորհիւր, անեակս վերստին լուսաւորեցաւ :

« Որոշեր էի ուտել միայն այնպիսի բաներ որոց քնարեր գեղ խառնել անհնարին էր . երկու հաւերիթ և քիչ մը պատող իմ կերակուրս եղան, յետոյ դացի բաժակ մը ջուր առի իմ պաշտպան աղբիւրէս և խմեցի :

« Առաջին ումզէն այնպէս երեցաւ ինձ որ առաւօտեան ճաշակը չո նէր . շուտ ընդդ փոյթ կասկած մ'առաւ միտքս, կանկ առի, բայց արդւն կէս բաժակ պարսկեր էի :

« Մհացած ջորը սոսկումով թափեցի՝ և ճակտէս ահ ու սարսափի քիրտ հոսելով՝ սպասեցի :

« Յնտարակոյս՝ անտեսանելի վեայ մը սեսեր էր այն աղբիւրէն ջուր առնուլս, և իմ վստահութենէս իսկ օգտառ քաղեր էր որոյէս զի աւելի ապահով կերպով՝ ի կատար հանէ իմ կորսանեանս խորհուրդն որ այնքան առնութեամբ որոշուեր և անդթօրէն կը զործադրուէր :

« Կէս ժամ այն ինչ անցեր էին և նոյն նշանները վրաս երեցան, մինակ, այս անզամ լոկ կէս բաժակ ջուր խմելու՝ տեղի երկար մաքսուեցայ, և փոխանակ լիովին քուն լինելու տեսակ մը թմրութեան մէջ ընկայ՝ որով կարուլ էի իմ չորս զիս անցած բանները զգալ, թէ և բնաւ ոյժ չո նէի ինքզինքս պաշտպանելու կամ խոյս տալու :

« Քարշ ընդ քարշ դէպ՝ ի անկողինս դացի որպէս զի անոր մէջ միայն ապաւէնս զտնեմ, այս է դանակս, բայց միայն մնարին հասայ, ծնկի վրայ ընկայ, ձեռներս մահճին մէկ ուսքին փաթթելով, ահա այն առեն հասկցայ որ կորսուած էի » :

« Այն պահուն ֆէլտօն ահռելի կերպով գոյնը նետեց, և բոլոր մարմինը ջլաձիդ սարսուռ մը համակեց,

— և Բայց ամենէն սոսկալի կէտը սա էր — շաբայարեց Միլէ-
տի այլայլուն ձայնով մը , որպէս թէ նոյն ահռելի ժամոն անձ-
կութիւնը կ'զգար — որ , այս անգամ՝ ինձ սպառնացող վտան-
գին զիտակցո թիւնն ունէի . վասն զի իմ հոգիս , եթէ ներելի
է ըսել , իմ՝ քանած մարմնոյս մէջ կ'հակէր , վասն զի կ'տեսնէի ,
կ'լուի . իրաւ է որ այս ամենն իբրև երազ կ'տեսնէի , բայց և
այնպէս աւելի զարհու բելի է ը :

« Տեսայ կանթեղն որ վեր կ'եւնէր և փոքր առ փոքր զիս մ՛թու-
թեան մէջ կ'թողուր . յետոյ արդէն քաջայայտ զբան ձայնն առի ,
թէ այս գուռը մինակ երկու անգամ՝ բացուեցաւ :

« Բնազդումով զզացի որ ինձ կ'մօտենար մէկը . կ'ըսեն թէ
Ամերիկայի անապատին մէջ կորուսեալ սղորմնլին այսպէս կ'զզայ
օձին մօտենալը :

« Կ'ուզէի Ճիդ մ'ընել , աղաղակ մը հանելու փորձ ըրի . կամ-
քիս անհաւատացի զօրութեամբն իսկ ոտք եւայ . բայց իսկոյն վար
ընկայ . . . և իմ հալածողիս թևերուն մէջ ընկայ ։

— Բայց ըսէ ինձ թէ ով էր այն մարդը — զոչեց սպայն :

Միլէտի մէկ նայտածքով զիտեց թէ իր պատամութեան մէն մի
մանր պարագային վրայ ծանրանալով ինչ վիշտ կ'ներշնչէր Ֆէլ-
տօնի . բայց չէր ուզեր փորբազդոյն տան ջանք մ'իսկ անորմէ խը-
նայել . որչափ ուժդին անոր սիրաը խորտակէր , նոյնքան ապա-
հով էր որ նա իր վրէմը պիտի լուծէր : Աւստի Միլէտի շարու-
նակեց՝ անոր բացադանընթիւնը չլսելու զարնելով , կամ թէ մը-
տածելով որ պատասխան տալու ժամը տակաւին հասած չէր :

— Ա. Այս անզամ՝ անկենդան , անզայ զիակի մը հետ չէր վատ-
ազդին զործը : Արգէն ըսի , թէ և իմ՝ կարուղութիւններս լիովին
զործածելու վիճակին մէջ չէի , ասկայն վտանգիս զիտակցո թիւնն
ունէի . ուստի բոլոր զօրութեամբ կառեցայ և անշուշտ՝ որչափ
որ տկարացած էր , ընդ երկար զիմացայ , վասն զի չսեցի վատ-
ազդին որ կ'զոչէր .

« Ա. Այս թշուառ մաքրակրօնու հիները . քաջ զիտէի որ իրենց
զահիձները կ'ձանձրացնէին , բայց կ'կարծէի թէ իրենց սիրա-
հարներու դէմ նուազ ուժեղ են :

« Աւանդու այս յուսահաստական դիմագրութիւնո չէր կրնար լնով երկար տևել, կ'զգայի իմ ուժիս սպառիլը, և այս անդամ՝ իմ քունէս օգուտ չքաղեց վատը, այլ իմ նուաղումէս » :

Ֆէլտօն մտիկ կ'ընէր ուրիշ ձայն չհանելով՝ բայց եթէ տեսակ մը խուլ մռնչիւն մը . միայն քրտինքն իր մարմարէ ճականէն կ'հոսէր, և իր զգեստին ներքեւ պահած ձեռքն իր կուրծքը կը պատռէր :

« Երբ սթափեցայ, իմ առաջին շարժումն եղաւ բարձիս ներքեւ փնտուել այն դանակն որու չէի հասեր, եթէ իմ պաշտպահութեանսն չժառացեց, դոնէ քաւութեանս կրնար օգնել :

« Բայց այն դանակին առնելով, Ֆէլտօն, սոսկալի զարափար մը եկաւ միաբաւ : Երդում ըրի քեզի ամէն բան ըսելու, և պիտի ըստեմ ամէն բան, քեզ Ճշմարտութիւն խոստացայ, և պիտի յայտնեմ զայն, եթէ զիտնամ իսկ որ այս ընելով պիտի կորնչիմ :

— Այն մարդէն վրէժ լուծելու զարափարն եկաւ միտքդ, այնպէս չէ — Ֆէլտօն :

— Լաւ, այդպէս է — ըստ Միլէտի — այս միտքս քրիստոնէի մը վայել խորհուրդ մը չէր, զիտեմ. անտարակոյս մեր հոգւոյն յախտենական թշնամին, մեր չորս զին մռնչող առիծն էր որ իմ մոտքիս կ'թելադրէր զայն : Վերջապէս, ինչպէս հասցընեմ քեզի, Ֆէլտօն — շարայարեց Միլէտի այնպիսի կնկան մը ձայնով որ ինքզինքը մղապարտ կ'զատէ — այն զարափարը միտքս զրաւեց և այլ ևս զիս չթողոց : Ահա այս մարդասպահական խորհրդին պատիժն է որ այսօր կ'կրեմ » :

— Շարունակէ, շարունակէ — ըստ Ֆէլտօն — կ'փափաքիմ տեսնել քեզ վրէժմնդրութեան նպատակիդ հասած :

— Ո՛հ, որոշեցի որ ըստ կարի շուտով 'ի գործ զնեմ. աներկմիտ էի որ թշնամիս հետեւեալ զիշերը նորէն պիտի զար : Յերեկը վախնալու բան մը չունէի :

« Ուստի՝ երբ նախաճաշին ժամը հասաւ, առանց վարանելու կերպ խնեցի . որոշեր էի կեղծել թէ կ'ընթրեմ, բայց բան մը շտուել . ուստի առաւտեան մռնչով երեկոյեան ծովապահութիւնս մեղմելու պարտաւոր էի :

« Մինակ բաժակ մը ջուր նախաճաշկի ժամանակ առի պահեցի, վասն զի քառսոն ութ ժամ անմոնդ և անջուր կեցած ատենա ժարաւը առելի շատ տառապեր էր զիս :

« Օքն անցաւ և որիշ ներգործութիւն չունեցաւ իմ վրայ՝ բայց միայն զիս իմ որոշմանս մէջ հաստատել. մինակ նայեցայ որ դէմքս իմ սրտիս խորհուրդը չմատնէ, վասն զի աներկլմիտ էի որ զիս կ'լրտեսէին. շատ անգամ շրթերուս վրայ ժպիտ մը զդացի: Ֆէլտօն, չեմ ժտիր ըսելու թէ ինչ բան մնածելով կը ժպտէի, այն ատեն իզնէ պիտի սոսկայիր . . . » :

« Շարունակէ, շարունակէ — ըստ Գէլտոն — կ'նայիս որ մը տիկ կ'ընեմ և վերջո տեսնելու կ'փափաքիմ:

— Գիշերը հասաւ, սովորական գէպքերը կրկնուեցան. մութին իմ ընթրիքս մեծարեցին, յետոյ կանթեղը վառեցին և ես ալ սեղան նստայ :

« Մինակ քիչ մը պառզ կերայ. այնպէս ձևացուցի որ բլշակէն դաւաթս ջուր կ'լեցնեմ, բայց միայն բաժակիս մէջ պահածս խմեցի. այս փոխանակութիւնը սակայն բաւական ձարպիկութեամբ կատարելով իմ լրտեսներս, եթէ ունէի, կասկած մը չառին :

« Ընթրիքէն ետք՝ առջի իրիկուան թմրութեան նշանները ցոյց տուի, բայց այս անգամ՝ որպէս թէ յագնութենէս քալելու ոյժ չտնէի կամ թէ վասանգին կ'ընտելանայի, գէպ ՚ի անկողինս ընդ քարշ դացի, շրջադրեսոս վար ձղեցի և պառկեցայ :

« Այս անգամ բարձիս տակ դտեր էի դանակս, և քնանալ կեղծելով, ձեռօքս ջլաձիդ կ'սեղմէի անոր դաստապանը :

« Երկու ժամ անցաւ առանց նոր բան մը պատահելու. այս անգամ, ո՛ Սոսուած իմ, որու մտքէն կանցնէր, թէ կ'սկսէի վախնալ որ թերեւս չերեիր թշնամիս :

« Աերջապէս կանթեղը աեսայ որ մեղմիկ վեր ելաւ և ձեղունին խորեցն աներեսյթ եղաւ. սենեակս խաւարը պատեց, բայց ձիգ մըրքի դիտելու խաւարին մթութեան մէջ:

« Գրեթէ տաս վայրիկան անցան: Մինակ սրտիս բախումը կը լսէի :

ա Ա'աղերսէի առ Աստուած որ դար :

« Վերջապէս արդէն խիստ ծանօթ դրան բացուիլն ու զոց տիլը լսեցի . թէ և զորդը թանձր էր՝ ոտքի դոփիւն մը լսեցի որ զետինը կ'ձարձատէր , թէ և մութ էր , ստուեր մը տեսայ որ անկողնիս կ'մօտենար » :

— Ծուտ , շուտ պատմէ — ըստ Գելտօն — միթէ չես տեսաներ որ մէն մի խօսք հալած կապարի պէս զիս կ'այրէ :

— Ե Այն ատեն — շարունակեց Միլէտի — այն ատեն բոլոր ոյժս ժողվեցի , յիշեցի որ վրէմի կամ լաւ ևս արդարութեան ժամը հնչեր էր . ինքզինքս նոր Յուդիթ մը համարեցի . բոլոր մարմինս ամփոփեցի , գանակը ձեռքս և երբ զանի իմ քովմ տեսայ , որ իր որսը փնտուելու համար թեր կ'երկարէր , այն ատեն յուահատութեան և վշտի յետին ճիկ մը հանելով անոր կուրծքին դարկի :

« Թշշուառականն , ամէն բան նախատեսեր էր . իր կրծքին վը-բայ վէրա զբահ մը կար , ուստի դանակը սահեցաւ :

« — Հա՞ , հա՞ — դուեց նա թես բռնելով և իմ ապարդին զէնքս ձեռքէս խլելով — դու կենացս դէմ կ'զաւաճանեն , զեղանի մաքրակրօնուհիս , բայց այդ ոչ միայն ատելու թեան այլ և այերախտութեան արդինք է : Աղէ , աղէ , հանդարտէ , իմ աղւոր աղջիկս : Կարծեր էի թէ սիրտդ քիչ մը կակդեր է : Ես կիները բռնի պահող բռնակալներէն չեմ . դու չես սիրեր զիս : արդէն իմ սովորական մեծամատ թեամբս կասկած ունէի այդ մասին . հիմակ համոզուեցայ : Վաղն աղատ պիտի թաղում քեզ :

« Փափաք մը միայն տնէի , կ'ողէի որ զիս սպաննէր :

« — Զայց եղիքը — ըսի անոր — վասն զի իմ աղատութիւնս քու անպատութիւնդ է :

« — Բացաարէ միտքդ , իմ աղւոր հարցուկս :

« — Այս : այն ինչ ասկից պիտի դուրս ելնեմ և ամէն բան պիտի յայտնեմ . ինձի գէմ զործածած բռնութիւնդ պիտի պատմէմ , պիտի պատմմ իմ զերութիւնս : Երեան պիտի հանեմ այս վատահամբառութեան պալատը . շատ բարձր է քու դիրքդ , մի-

ըսրտ : բայց դողմ , քեզնէ բարձր է թագաւորը : Թագաւորէն վեր Աստուած կայ :

« Արշափ որ Թշնամիս ինքոինքին տէրը կ'երևէր , դարձեալ բարկութեան շարժում մը ցցոց : Զէի կարող իր կերպարանին բացատրութիւնը դիտել , բայց զզացեր էի իր թեին դողն որու վրայ իմ ձեռքս դրուած էր :

« — Աւրեմն ասկից դուրս չպիտի ելնես — ըսաւ ինձ :

« — Շատ լսա , լսա — դոչեցի — այն ատեն իմ տանջանցո վայրը միանցամայն դերեզմանս պիտի լինի : Լաւ , այս տեղ պիտի մեռնիմ , և պիտի տեսնես դու եթէ ամբաստան ուրուական մ'առելի ահուելի չէ քան սպառնացող կենդանի մարդ մը :

« — Քովզ զէնք մը չպիտի թողուն :

« — Կայ զէնք մը՝ զոր զործածելու քաջութիւնն ունեցողին տուած է յոսահատութիւնը : Անօթութենէ ինքզինքս պիտի սպաննեմ :

« — Կայինք — ըսաւ Թշուառականը — միթէ խաղաղութիւնը լաւագոյն չէ քան այսպիսի պատերազմ մը : Քեզ խոկոյն աղաւութիւնդ կ'չնորհեմ . քու առաքինութիւնդ կ'հռչակեմ . քեզ Անկայ Լուրջեստան կ'անուանեմ :

« — Ես ալ կ'ըսեմ թէ դու Սեբստոս մ'ես , ես քեզ մարդկան առջեւ պիտի ամբաստանեմ ինչպէս որ Աստուծոյ առջեւ ամբաստանած եմ , և եթէ հարկ լինի իմ ամբաստանութիւնս արիւնովս ինքեմ , պիտի կնքեմ :

« — Համ , հա — ըսաւ Թշնամիս հեգնական ձայնով մը — այն ատեն ինդիրը կ'փոխուի : Երասի , ամէն քան մէկ զի , այս տեղ քեզի շատ յարմար է : Քեզի քան մը չպիտի պակսի , և եթէ ինքնակամ սովութեանիս , յանցանքը քուկդ պիտի լինի :

« Այս ըսելով ձգեց զնաց , դրան բացուիլն ու զոյուիլը լսեցի : և ես լիովին ընկլամած մնացի , Տշմարիսն ըսելով , ոչ այն չափ ցաւերուս որչափ ամօթապարտութեանս մէջ որ անկարող եղայ վրէմս լուծել :

« Թշնամիս խօսքը պահեց : Միւս օրն ու զիշերն անցան և զինքը

շահեայ : Բայց ես ևս խօսքս պահեցի : և հայ ու ջուր բերանմ չդրի . ինչպէս որ անոր ըստը էի , սովալուկ մեռնելու որոշումն հաստատ էր :

«Օրն ու դիշերն աղօթքով անցոցի , վասն զի կ'յաւայի որ Աստուած իմ ինքնասպանութեանս պիտի ներէ :

«Երկրորդ գիշեր դուռը բացուեցաւ . զետինը պառկեր էի , ոյժս արգէն սպառելու ոկտեր էր :

«Չայնը լսելուս՝ մէկ ձեռքի վրայ եւայ :

«— Լան որեմն — ըստ ինձ ձայն մ'որ ականջիս սոսկալի կերպով մը հնչելուն շատ դիւրան ձանչեցի — լաւ որեմն , միթէ փոքր ինչ կակղեցա՞ր , և միթէ աղաստոթեանդ փոխարէն սկարզապէս խօսք պիտի տան լուռթիւն պահելու : Տես , ես բարի իշխան մ'եմ — յարեց նա — և թէն մաքրակրօնները չեմ սիրեր , անոնց իրաւունքը կ'ձանչեմ , նոյնպէս մաքրակրօն կիներուն , երբ սիրուն են : Օ՞ն , արի խաչին վրայ որդտիկ երգում մ'ըրէ , ուրիշ բան չեմ խնդրեր քեզնէ :

«— Խաչին վրայ — զոշեցի վեր ելնելով , վասն զի այն աւտելի ձայնը լսելուս՝ բոլոր ոյժս վրաս եկեր էր — խաչին վրայ , կ'երդնում թէ որ և է խօստում , սպառնալիք , տանջանք , իմ բերանս չպիտի դոցեն . խաչին վրայ , կ'երդնում որ ամէն ուսրէք քեզ պիտի ամբաստան կանդնիմ իբրև մարդասպանի մը , իբրև սպատոյ աւաղակի մը , իբրև վաստաղղիի մը . խաչին վրայ , կ'երդնում եթէ երբէք այս բանտէն ելնելու յաջողիմ , բոլոր մարդկային աղգէն քեզի գէմ վրէժ պահանջել :

«— Զգոյշ եղիքը — ըստ ձայնն այնպիսի սպառնական շեշտով մը զոր գեռ ևս չէի լսած — ծայրադպյն հնար մ'ունիմ զոր պիտի զործածեմ միայն երբ ամէն հնար 'ի գերեւ ելնեն , որպէս զի բերանդ պրկեմ կամ արդիլեմ որ ըստծներուդ բնաւ չը հաւտան :

« Բոլոր ոյժս ժողվեցի և քահ քահ մը ձզելով պատասխան տուի :

« Տեսաւ որ մեր մէջ բացուած սպառերազմը յանիտենակարն , մահացու էր :

« — Ատիկ ըրեւան լուսաւահան ահա քեզ այս գիշերն և վաղուան օրը կ'առաջ որ մտածես . խօսք տուր որ պիտի լռես , և այն առածեն հարստութիւն , յարգանք և պատիւ քեզ պիտի շրջապատեն . սպառնացի՞ր որ պիտի խօսիս , և քեզ վատանունութեան կ'դատապարտեմ :

« — Դուն , գոչեցի , դուն :

« — Յափառենական , անջնջելի վատանունութեան :

« — Դուն — կրկնեցի : — Ո՛չ , Հշմարիտը , Գէլտօն , կարծէի թէ յիմար է :

« Այս , Ես — վրայ բերաւ նա :

« — Ա՛չ , թող տուր ինձ — ըսի անոր — և դուրս ելլոր , եթէ չես ուզեր որ քու աչքիոր առ ջե զլուխս պատին զարնելով խորտակեմ :

« — Ըստ լու — պատասխանեց նա — այնպէս կ'ուզես , ուր թէմն վաղն իրկուն :

« — Վաղն իրկուն — պատասխան տուի — և դետին ընկայ կատղութենէս օթոցը խածնելով . . . » .

Գէլտօն կարասիի մը վրայ կ'յենուր , և Միլէտի գիւական ուրախութեամբ կ'գիտէր որ պատմութեանը մինչև վերջը մնտիկ ընելու համար թերես ոյժը պիտի պակսի :

ԺԶ

ԴԱՍՏԱԿԵԼՆ ԱՐԲԵՐՊԻԹԵԱՆ ՀՆԱՐ ՄԸԸ

Միլէտի պահ մը լուսթիւն պահելէն ետեւ որպէս զի զինքը մտիկ ընող պատմանին դիտէ , իր պատմութիւնը շարունակեց .

— Գրեթէ երեք օր կար որ ո՛չ կերակուր կերեր և ո՛չ ջուր խմեր էի . ոժնղակ ցաւերով կ'առաջեկի . ատեն ատեն ամզեր անցնելով զլիուն հակասու կ'սեղմէէին , աչերս կ'վարագուրէին , զառանցանք էր :

և Գիշեր հասաւ, այնքան ակար էի որ ամէն վայրկեան կ'մարքէի, և ամէն անգամուն որ մարքէի Աստուծոյ Հնորհակալ կ'լինեէիս մասն զի կարծէի թէ մահս մօտ էր:

« Եյս մէկ նուազման ժամառ՝ դրան բացուիլը կ'լսեմ». սարսափէս ուշաբրեցայ:

« Թշնամիս ներս մօտա՛ ետեէն դիմակաւոր մարդ մ'ունէր. ինչն ալ զիմակ դրեր էր. բայց անոր քայլը ճանչեցի, անոր ճայնը ճանչեցի, ճանչեցի այն աշեղ կերպարանը զոր դժոխքն անոր անձին տուեր էր մարդկացին ազգի գմբաղզութեան համար:

« — Լաւ ուրեմն — ըստ ինձ — իմ խնդրած երդումն ինձ ընելու որոշեցի՞»:

« — Արդէն զիտես, մաքրակրօնները մէկ խօռք ունին. իմ արդէն լսեցիր, այսինքն երկրիս վրայ մարդկան ատեանին առջեւ քեզ 'ի զատ պիտի կոչեմ, իսկ երկինքը՝ Աստուծոյ ատենին առջեւ:

« — Եյսպէս ուրեմն տռաջուան պէտ կ'յամառիս:

« — Կ'երգնում այն Խստուծոյ առջեւ որ ձայնս կ'լսէ, բոլոր աշխարհի քու յանցանքդ պիտի հրատարակեմ մինչեւ որ վրեժինդիր մը դանեմ:

« — Դու պոռնիկ մ'ես — ըստ որոտալիք ձայնով մը — և պոռնիկներու տրուած պատուհանը պիտի կրես: Քու օդնութեան կանչած մարդկան աշքին աղարտուած լինելով աշխատէ նոյն մարդկան առջեւ հաստատելու թէ ոչ մեղապարա ոչ խնդի ես:

« Յետոյ իրեն ընկերացող մարդուն ողղելով խօսքը,

« — Դահիճ — ըստ — պարտքդ կատարէ»:

— Ա՛հ, անունն, անունն ինչ է — զոչեց գէլուսն — ըսէ, անունն ըսէ ինձ:

— Եյս առնեն իմ աղաղակներս, իմ դիմադրութիւնս առ ոչ ինչ զբելով, մասն զի սկսեր էի հասկնալ որ մահուանէ աւելի վատ բան մը սպատի տան ինձ, դահիճը զիս բռնեց, զետինը տապալեց, իր բռովը զիս վիրատորեց, և ես հեծկլուանօք հեղը ձամդակ, զրեթէ շնչարառ, օդնութեամ կ'կոչէի զԱստուծ:

որ ձայնս չէր լսեր, և յանկարծ հեծութեան և ամօթապարտութեան զարհութելի ճիկ մը հանեցի. Հռատապէ հուը մը, հրաշեկ երկաթ մը, դահճին երկաթն իմ ուսիս վրայ զբոշուեր էր :

Ֆէլտօն մանշիւն մ'արձակեց :

— Ահա — ըստ այն ատեն Միլէտի թագուհւոյ մը վեհափառութեամբ ոտք ելնելով — ահա, Փէլտօն, տես ինչպէս նոր մարտիրոստ թիւն մը հնարեցին անարատ այլ անդամի մը վայրակ կրից որս ընկած նորատի օրիորդիս համար : Մարդկան սիրալ ձանչիլու սորմէ, և այսուհետեւ իրենց անիրաւ վրէ ժխնդրութեան զործին հեշտին մի դառնար :

Միլէտի արագ շարժումով մը շրջադրեատը բացաւ, իր կործաքը ծածկող նօսր կոտոր սրատուեց, և, շինովի բարկութենէ ու կերծ ամօթիսածութենէ կարմրցած՝ պատանոյն ցցոց անջնջելի գրոշմն որ այնալիսի, աղուոր ուս մը կ'աղարտէր :

— Բայց — դոչեց Ֆէլտօն — ուսիր վրայ առեսածն շուշան մ'է :

— Եւ ահա ճիշտ այդ կէտին մէջն է վատանունութիւնը — պատասխանեց Միլէտի : — Եթէ Շնկիլոյ պատժապարտի դրոշմ լինէր . . . հարկ էր հաստատել թէ որ ասեանը վճռէր էր այս պատուհանը, և աէրութեան բոլոր առեաններու հրապարակու կոչում ովիտի ընէի, բայց Գրանսայի պատժական ազար . . . ոչ, անով իրօք աղարտած էի :

Փէլտօն այլ ևս չկրցաւ դիմանալ :

Գունատ, անշարժ, այս ահռելի յայտարարութենէն ընկնած՝ այս կնկան զերբնային զեղեցիլութենէ շացած՝ որ իրեն կ'բացուեր այնալիսի անամօթութեամբ զոր վսկը կ'զանէր՝ Ֆէլտօն ի վերջէ անոր առ ջե ծունդ որաւ. Ինչպէս որ հին քրիստոնէաննըը կ'ընէին այն անարատ և սորը մարտիրոստ հիներուն առ ջե զոր կայսերաց հալածանքը կրկէսին մէջ խուժանին արիւնարբու պակշուստ թեան կ'արձակէին : Աղսմն անհետ եղաւ, մինակ զեղեցիլութիւը մասց :

— Թողութիւն, թողութիւն — զոշեց Ֆէլտօն — ոչ, թողութիւն :

Միլէտի անոր աշաց մէջ կարգաց, Սէր, Սէր :

— Ի՞նչ բանի համար թողութիւն կ'ինդրես — հարցոց Միլէտի :

— Թողութիւն կ'ինդրեմ քու հալածիչներուդ միանալուս :
Միլէտի իր ձեռքն անոր երկնցոց :

— Այսքան զեղանի , այսքան նորաբոյս — դոչեց Գէլտօն և
այն ձեռքը համբոյրներով ծածկեց :

Միլէտի անոր մքայ այնպիսի ակնարկ մը նետեց որ զերի մը
թաղաւոր կ'զարձնէ :

Գէլտօն մագրակըօն Էր . այս ինկան ձեռքը թողոց անոր ոտ-
քը համբուրելու համար :

Ըյժմ չէր սիրեր զանի , այլ կ'պաշտէր :

Երբ այս Տանաժամն անցու , երբ Միլէտի իրը թէ իր սրազար-
իւնութիւնը ստացաւ , թէ և բնաւ չէր կորուսած , երբ Գէլտօն
դիմեց որ անարատ համեստութեամբ կ'ծածկէ Միլէտի այն սի-
րոյ դանձեըը , զոր այնչափ լաւ կ'պահէր որպէս զի աւելի եռան-
դով փափաքի ,

— Ահ , հիմակ — ըստ նա — բան մը միայն ունիմ հար-
ցնելու , այս է քու ճշմարիտ դաշտիդ անունը . վասն զի ինձի
համար մէկ դաշիճ մը միայն կայ , միւսը դործիքն Էր , և այլ
ոչ ինչ :

— Ի՞նչ , եղբայր — դոչեց Միլէտի — պէտք է նաև այն մար-
դուն անունը տամ քեզի , և միթէ տակախին չզոշակեցիր :

— Ի՞նչ — մքայ թերաւ Գէլտօն — այն է . . . դարձեալ այն
. . . միշտ այն . . . ի՞նչ , ճշմարիտ յանցաւորը . . . :

— Ճշմարիտ յանցաւորն — ըստ Միլէտի — Անկլիոյ քանի
զիչն է , Ճշմարիտ հաւատացեց հարածիչը , անթիւ կիներու
պատոյն յափշտակիչը , այն որ իր վատթար սրախն մէկ անխոր-
հորդ փափաքը կատարելու համար անկլիոց ոյ արիւնը պիտի թա-
փէ , որ այսօր բողքականները կ'պաշտպանէն և վաղը պիտի մատ-
նէ . . . :

— Պլքինկէմ , ուրեմն Պլքինկէմն է — դոչեց Գէլտօն մո-
լեզին :

Միլէտի իր դէմքը ձեռներուն մէջ պահեց, որպէս թէ այս անտան միաբը բերած ամօթը չէր կարող առնիլ:

— Պըքինկէմ, այս հրեշտակային է ակին դահիճը լինի — դոչեց Գէլտօն: — Աստուած իմ, ինչպէս շանթահար շաստակեցիր զանի, ինչպէս զանի ազնուական, պատուալ, հզօր վիճակի մէջ թաղոցցիր մեր ամենուն կորստեան համար:

— Աստուած կ'թաղող երեսի վրայ այն որ ինքնինքը կ'մոռնայ ըստ Միլէտի:

— Աւքեմն իր զլուխը պիտի բերէ անիծեալներու յասուկ օգատուհասը — շարունակեց Գէլտօն հետղհետէ բորբոքելով — ուրեմն կ'ուզէ որ մարդկոյին վրէ ժիւնդրութիւնն երկնային արդարութիւնը կանխա՛:

— Մարդիկ անորմէ կ'երկնչին և զանի կ'ինայեն:

— Ա՛չ, ես չեմ երկնչիը անորմէ — ըստ Գէլտօն — և շոփատի խնայեած . . . :

Միլէտի զզաց որ իր հողին գժոխային ուրախութեան մէջ կը լողաց:

— Բայց ինչպէս լորա Ալինդը, իս՝ պաշտպանս, իմ հայրս — հարցոց Գէլտօն — այս բաններուն մէջ մաս ունի:

— Մտիկ ըրէ, Գէլտօն — վրայ բերաւ. Միլէտի — վասն զի վաս և անզուննիք մարդոց մօտ, կան թերեւս մեծ և վեհանձն հոգիներ: Նշանած մ'ունիք, այս մարդը կ'սիրէի և ինքն ալ զիս կ'սիրէր. քու սրտիդ պէս սիրս մը, քեզի պէս մարդ մ'էր, Գէլտօն: Անոր զիմնցի և ամեն բան պատմեցի. նա կ'ձանչէր զիս և վայրիեան մը կասկած չոնիցաւ: Երեւլի իշխան մ'էր, ամենայն մասամբ Պըքինկէմի հաւասար մարդ մ'էր: Բան մը շըստաւ, մինակ իր ուրը մէջքը կապեց, վերաբերուն վրան նեսեց և Պըքինկէմի պաշտոր զնաց:

— Այս, այս — ըստ Գէլտօն — կ'իմանամ, թէ և այս անսկ մարդերու դէմ չէ թէ սոր այլ դաշոյն դործածել պէտք է:

— Պըքինկէմ առ ջի օրէն ճամբայ ելեր էր, Սպանիա դաշեր էր իրեւ գեսական որպէս զի իշխանուհին Շարլ Ալն համար

կնութեան խնդրէ : մինչդեռ այն ատեն Աէլսի իշխան էր : Կըածնածս վերադարձաւ :

« — Մատիկ ըրէ — ըստա ինձ — այն մարդը մեկներ է , ուստի առ այժմ՝ իմ վրէ ժիննդրութենէս կ'աղատի . բայց մնաք միանանք , ինչպէս որ պարան է , յետոյ լորտ Աինդրի ձգէ իր և իր կնկան սպատիւը պաշտպաննելու դործը » :

— Լորտ Աինդր — զուեց Գէլտօն :

« — Այո — ըստա Միլէտի — լորտ Աինդր , և այժմ ամէն բան կրնաս իմանալ , այնսկէս չէ : Պըքինկչէմ տարիի չափ տարկայ մնաց : Իր զալէն տիթ որ առաջ լորտ Աինդր յանկարծ մեռաւ , զիս իր միակ ժառանգուհին թողլով : Հարուածն ուսկից կ'համնէր : Ըստուած որ ամէն բան դիմէ , այս բանս ալ զիտէ անչու շտ , ես ոչ զոք կ'ամբաստաննեմ . . . » :

— Ա՛յ , ինչ անդունդ , ինչ անդունդ — զուեց Գէլտօն :

« — Լորտ Աինդր առանց Եղօրը բան մ'ըսելու մոռեր էր : Սոսկալի զաղտնիքը թագուն պահէլու պարտաւոր էին , մինչեւ որ կայծակի պէս յանցաւորին դլխուն վրայ պայթի : Քու պաշտապանդ դմկամակելով տեսներ էր իր մնձ Եղօրն ամուսնութիւնն անհարուստ աղջկան մը չետ : Զդացի որ չէի կարող պաշտպանութիւնն սպասել ժառանգութեան յոյսերն ՚ի զերեւ տեմուդ մարդու մը կողմէ : Ֆրանսա զացի իմ բոլոր կեանքս այն տեղ ան ըշնելու մոօք . բայց իմ բոլոր հարսաւոթիւնս Անկլիա է . պատերազմի պատճառաւ հաղորդակցութիւնները դադրելուն նեղութեան մէջ ընկայ , ուստի ստիպուեցայ վերադառնալու . վեց օր կայ Քօրդամութելոյ » :

— Լաւ ուրեմն — ըստա Գէլտօն :

« — Լաւ ուրեմն , անշուշտ Պըքինկչէմ իմ վերադարձն իման , լորտ Աինդրի խօսքս բացաւ , որ արդէն ինձի հետ հաջա չէր , և ըստա անոր որ իր հարսը պառանիկ մ'է , աղարտած կին մ'է : Իմ ամուսնոյս անկեղծ և աղնիս ձայնը չկար որ զիս պաշտպաննէր : Լորտ Աինդր ինչ որ ըսին իրեն հաւաց այնշափ դիւրութեամբ որչափ որ հաւալու շահ ունէր : Ուսափ զիս ձերբա

կալ ընել տուար, ամստ բերաւ և քու պահպանութեանդ ներքեցիս: Պատմութեան մնացած մասը զիտես: Վաղը չէ միւս օր զիս կ'տարադրէ, իբրև մնջապարտ կ'աքսորէ, և վաղը չէ միւս օր անուանարկ մարդոց մէջ զիս պիտի նետէ: Ո՛չ, դարանն աղէկ լարտած է, անշուշտ, դաւայրութիւնը շատ ճարտար, և իմ՝ պատիւս ՚ի սպառ պիտի կորսուի: Աւրեմն կ'տեսնես թէ պէտք է որ մեռնիմ, Ֆէլտօն, Ֆէլտօն, տուր ինձ սա դանակը»:

Եւ այս ըսելով որպիս թէ իր բոլոր պատմած էր, Միլէտի երերուն և նուազուն՝ զնաց ընկաւ. Նորաատի սպային թեեցուն մէջ, մինչդեռ սպայն սիրով, բարկութեամբ և անցայտ հեշտութեամբ արրշիու՝ զանի եռանդագին զբինց, սրտին վրայ սեղմց՝ բոլորովին սարսուելով այն զեղանի բերնին շնչեն, բոլորովին շուարելով այն գողդոջուն սրաին ջօշափումէն:

— Ո՛չ, ո՛չ — ըստ — ո՛չ, դու անարատ և պատուեալ պիտի ապրիս, թշնամիներդ յաղթահարելու համար պիտի ապրիս:

Միլէտի ձեռքովը մնջիկ զանի հրեց ակնարկովը քաշելով, բայց Ֆէլտօն, ըստ կարդի զանի դրաւեց, աղերսելով իբրև աստուածային էակի մը:

— Ո՛չ, մահը, մահը — ըստ. Միլէտի իր ձայնն ու արտեանունքը քօղարելով — ո՛չ, մահը քանի թէ ամօթը. Ֆէլտօն, եղբայրս, բարեկամս, կ'պաղատիմ, մին մերժեր խնդիրս:

— Ո՛չ — զոչեց Ֆէլտօն — ո՛չ, պիտի ապրիս, և վրէժդ առած պիտի ապրիս:

— Ֆէլտօն, ես իմ բոլոր բարեկամներուս դժբաղդութիւն կը պատճառեմ: Ֆէլտօն, թոյլ տուր ինձ, Ֆէլտօն, թոյլ որ մեռնիմ:

Լաւ ուրեմն, միասին պիտի մեռնինք — զոչեց նա իր շըբթունքը կալանաւոր կնիւան շըբթերուն վրայ դրոշմելով:

Ըստ մը հարաւածներ զբան զարկին. այս անդամ Միլէտի իր բօք մէկ զի հրեց սպայն:

— Մայիկ ըրէ — ըստ — մեր խօսակցութիւնը լսեցին և կ'զանամէն ինչ կատալեալ է, կորսուեցանք:

— ԱՇ — ըստ Ֆէլտօն — պահակն է որ ձայն կ'տայ ինձ թէ դիշերապահ ջոկատն իր շրջանը կ'ընէ :

— Ուրեմն, վազէ դռուն անձամբ բաց :

Ֆէլտօն հնաղանդեցաւ . այս կինծ արդէն բոլոր իր մոտմտքը ; իր բոլոր հողին էր :

Ֆէլտօն՝ ի՞նքնի՞քը յի մնապեաի մ'առ չեւ դտաւ, որ հսկողութեան ջոկատի մը կ'հրամայէր :

— Նաև ուրեմն, ի՞նչ կայ — հարցուց նորատի տեղակալը :

— Ըստը էիր ինձ որ դռուը բանամ երբ օդնութեան ձայնը լսեմ — ըստ զինուորը — բայց մոցեր էիր ինձ բանալին թողլու . աղաղակի լսեցի առանց հասկնալու թէ ի՞նչ կ'ըսես, դռուը բանալ ուղեցի, ներսէն գոցեր էիր, այն ասեն յիսկապեալը կոչեցի :

— Եւ ահաւասիկ իմ — ըստ յիսնապեալը :

Ֆէլտօն մոլորած, զբեթէ խենդ, անձայն կ'մնաբ :

Միլէտի հասկցաւ որ այս փափոկ պարագային մէջ իր միջաւ մատ թիւնն անհրաժեշտ է, ուստի զէպ ՚ի սեղանը վաղեց և առ նոր վրայէն առաւ Ֆէլտօնի բերած դանակիլ :

— Եւ ի՞նչ իրաւամբ կ'արդիլես զիս մոռնելու — ըստ նա :

— Ասուած, իմ — դոչեց Ֆէլտօն տեսնելով որ դանակն իր ձեռքին մէջ կ'շողայ :

Կոյն պահուն՝ հեղնական քրքիջ մը հնչեց նրբագալ թիւն մէջ :

Նորու Վինդդը՝ աղմուկը լսելով՝ տնային պարեզօտը հազած, սուրը թիւնն առակ դրած՝ դրան սեմին վրայ կանգուն կ'կենաբ :

— Հա, հա — ըստ — ահաւասիկ ողքերի ին վերջին արարուածին հասանք . կ'նայիս, Ֆէլտօն, թատրերութիւնն՝ իմ արդէն նշանակած առէն կերպարաններն առաւ, բայց անհսպ եղիր, արին շպիախ թափի :

Միլէտի հասկցաւ որ ամէն բան պիտի կորուելը եթէ իր քառ թեան մէկ անմիջական և սոսկուլի ապացոյցը Ֆէլտօնի շտաբ :

— Կ'խալիս, Միլորա, արին պիտի թափի, և երանի թէ այս արեան պարաւառը թեան անոնք որ դայն թափելու պատճառ կ'լինին :

Փէլտօն չիկ մ՞արձակեց և դէպ ՚ի Միլէտիին վազեց . շատ
ուշ հասաւ , Միլէտի ինքը նիգին զարկեր էր :

Բայց բարեբաղջօրէն , պէտք է ինք ըսել ճարավիկութեամբ ,
դանակը հանդիպեր էր այն երկաթի թեւն որ այն ատեն՝ իրեւ
զրահ՝ կանանց կուրծքը կ'պաշտպանէր . շրջազգեստը պատռելով
սահեր էր և մայն ու կողերուն մէջ տեղ շեղակի մաեր էր :

Բայց պարձեալ վայրիկնի մը մէջ՝ Միլէտիին շրջազգեստն ար-
խնլուայ եղաւ :

Միլէտի թիկան վրայ ընկեր էր և նուազած կ'երեւէր :

Փէլտօն դանակը քաշեց հանեց :

— Նայէ , միլորա — ըսաւ ախուր գէմքով մը — ահաւասիկ
կին մ'որ իմ հսկողութեանս ներքն էր և ինքնինքը սպաննեց :

— Հանդարտէ , Փէլտօն — ըսաւ լորտ Ալինդը — մեռած չէ
նա , սաստաներն այնքան շուտով չեն մեռնիր , հանդարտէ և
զնա իմ սենեակս ինձի սպասէ :

— Բայց , միլորա . . . :

— Գնա , այս է հրամանս :

Իր զլիսաւորին այս սպատուէրին վրայ՝ Փէլտօն հնազանդեցաւ .
բայց դուրս ելնելու աահն՝ դանակն իր ծոցը դրաւ :

Խոկ լորտ Ալինդը , բառական համարեց սպասաւորով կինը
կանչել , և երբ եկաւ , ասրպրեց որ դեռ ևս մարած կալանու-
հւոյն հոգ տանի , և զանի առանձին թողուց :

Սակայն որչափ որ կասկածներ ունէր լորտ Ալինդը՝ դարձեալ
վէրքը թերեւս ծանը կարծելով , նոյն միջոցին իսկ ձիով մարդ մը
դրեց բժիշկը կոչել տալու :

ԺԵ

ԹԵՂԻՌԱՑ

Լինչպէս որ լորտ Ալինդը գուշակեր էր՝ Միլէտիին վէրքը վտան-
գաւոր չէր . ուստի երբ լորտին կոչած կնկան հետ առանձին պը-

նաց, աչերը բացաւ մինչդեռ նա անոր զգեստները կ'հանէր : Աս կայն հարկ էր ակարտթիւն և վիշտ կեղծել . գժուարին բան չէր Միլէտիի պէս կատակերգու կնկան մը համար, հետևապէս միամիտ կինը բոլորովն խարսեցաւ կալանուհին, որուն թախանանաց հակառակի, բոլոր զիշեր վրան հսկեց :

Բայց այս կնկան ներկայութիւնն արգելք մը չէր Միլէտիին խորհելու : Տարակայս չկար ալ որ ֆէլտօն համադուած էր, ֆէլտօն իրն էր . եթէ հրեշտակ մ'անդամ երեկո արատանիին և Միլէտին ամբաստանէր, անտարակոյս, իր մասց արամազրութեան մէջ՝ զանի սալանին մէկ նորիրակը պիտի համարէր :

Միլէտի այս մամաւալով կ'ժպտէր, վասն զի ֆէլտօնն էր իր միակ յայսը, իր փրկութեան միակ միջոցը :

Բայց լորա Ալինը թերեւս անոր վրայ կասկածներ ունենար, բայց նոյն ինք Ֆէլտօն թերեւս հսկողութեան ներքեւ դրուէր :

Առաօտեան ժամը չորսին՝ բժիշկը հառաւ . բայց Միլէտի ինքնինքը զարկած ժամանակին վեր վէրքն արդէն զոցուեր էր . առատի բժիշկն ո՛չ անոր ուղղութիւնն և ո՛չ խորութիւնը կարող եղաւ . չափելու, մինակ հիւանդին երակը զննելով բառ որ գէպքը վասնդառու չէր :

Առառու, Միլէտին՝ իր վրայ հսկող իինը ձամբեց՝ պատճառելով թէ զիշերը չէր քնացած և հանգստանալու պէտք ունէր :

Յոյս մ'ունէր . այս էր թէ ֆէլտօն նախաճաշիի ժամուն թերեւս դար, բայց ֆէլտօն չեկաւ :

Միթէ իր երկիւղներն իրացե՞ր էին . միթէ լորաք՝ ֆէլտօնի վրայ կասկածելուի՝ զանի այս փափուկ պարագային մէջ իր քում չեւայնէր : Օր մը միայն ունէր, լորա Ալինդը յայտներ էր թէ ամսոյն 23ին նու պիտի մանէ, և արդէն ամսուն 22ին առառօտն էր :

Սակայն՝ առակա ին համբերութեամբ սպասեց Միլէտի մինչեւ հաշի ժամը :

Թէ և Միլէտի առառու կերակուր չէր կերած, նաշը սովորաց կան ժամուն քերին . այն առն Միլէտի տեսաւ, ահարեկ որ զինաքը պահպանող զինուարներուն համազգեստը փոխեր էին :

Այս ատեն՝ համարձակեցաւ հարցնելու թէ Փէլտօն ինչ եւ զեր էր :

Պատասխան առնին որ Փէլտօն ժամե՛ մ՞ի վեր ձի հեծեր և մեկներ էր :

Այս ատեն հարց ու փորձ ըրտ թէ արդեօք ըրտ Ալինդր միշտ դղեակը կ'զանուի . զինուորն ոյս պատասխաննեց և ըստ թէ հրաման ունի անոր ձայն՝ տալու և թէ կալանուհին անոր խօսելու փափաքի :

Միլէտի պատասխաննեց որ նոյն պահուն շատ տկար էր , և թէ իր միակ փափաքն էր առանձին մեալ :

Զինուորը գուրս ելաւ , սեղանը պատրաստ թողլով :

Փէլտօնը հեռացացեր էին , ծովային զինուորները փոխեր էին , որեմն Փէլտօնի վրայ կասկածներ կային :

Այս բանս կալանուհին համար վերջին հարտածն էր :

Մինակ մեալով՝ ոտք ելաւ . այն անկողինը՝ ուր առ խոհեմութեան պառկեր էր , որպէս զի զինքը ծանր հիւանդ կարծեն , հրակէդ հնացի մը որէս զինքը կ'այրէր : Դրան վրայ ակնարկ մը նետեց . գունակին ծակին վրայ տախտակ մը դամել առեր էր լորտը , անտարակոյս կ'երկնչէր որ այն բացուածքն Միլէտի նորքն գիւտկան հնար մը շանէ պահակները հրապուրելու :

Միլէտի որախութենէն մասեցաւ . որեմն կարող էր իր փանորկալի կըից անձնատոր լինիլ , կասաղի խենդի մը խանդով , կամ երկամէ վանդակի մէջ փակուած վաղրի որէս անեկին մէջ կ'պոլուա՛ր : Արշարե՛ և թէ գանակն իր քավը մեար , պիտի խորհէր՝ չէ թէ ինքզինքն այլ այս անգամ լորտը սոյաննել :

Ժամը վեցին լորտ Ալինդր ներս մտաւ , յօտից ցղլուխ զինեալ էր : Այս մարդը՝ որ մինչ ցայն կէտ Միլէտիին բաւական ապուշ աղնտական մը կ'երեւէր , սքանչելի բանտառլահ մը դարձեր էր : Կարծես թէ ամէն բան կ'զոշակէր , ամէն բան կ'սախատեալ էր :

Ակնարկ մը միայն Միլէտիին վրայ նետելով անոր սրտին մէջ անցած դարձածն իմացաւ :

— Լաւ. — ըստ. — բայց այսօր ալ զիս չպիտի սպաննես՝ այլ ևս զէնք չտնիս, և ասկից զատ՝ ովտք եղած զդուշուններն ըրած եմ։ Սկսեր էիր իմ խեղճ Ֆ՛լտօնս զլիսէ հանել, արդէն քու դժոխային ազգեցութիւնդ կ'կրէր. բայց զանի ազատել կ'ու զեմ, ուրիշ անլամ չպիտի աեսնէ քեզ, այլ ևս մի յառար։ Լաթերդ ժողվէ, վաղը պիտի մնկնիս։ Աղետութիւնդ ամսուս 24ին որոշեր էի, բայց մատածեցի թէ որչափ երթի շուա այնքան ապահով կ'լինի։ Վաղը կէս օրին քու աբսորիդ հրամանը պիտի ստանամ, Պըքինկչէ մի ստորագրութեամբ։ Եթէ որ և է մէկուն խօսք մ'ըսես նաև մանելէն առաջ իմ յիսնապետս քեզ հրացանի պիտի բռնէ. եթէ նաև ին վրայ՝ առանց նաւապետին հրամանին՝ որ և է մէկուն խօսք մ'ըսես, նաւապետը քեզ ծովը պիտի նետէ, այսպէս որոշուած է արդէն։

Մնաս բարե, ահա այս ունէի քեզի ըսել այսօրուան համար։ Վաղը նորէն պիտի տեսնեմ՝ քեզ իմ հրամարական բարես սոալու։

Եւ այս ըսելով՝ լորա Վինգը դուրս ելաւ։

Միլէտի այս սպանալից յանլիմանութիւնը լսեր էր արհաւմարհութեան ժպիտ ՚ի շուրջն, բայց կատղութիւնն ՚ի սիրա։

Ընթրիքը բերին, Միլէտի զայց որ ուժի ովտք ունէր. շիտէր թէ ուրիշ ինչ բան կրնար պատահիլ այն դիշերն որ սպանալից կ'համապատասխանէ. վասն զի խօսոր ամփեր երկնից երեսը կ'սահմէն և հեռաւոր փայլակներ մրրիկ մը կ'յայտնէին։

Մըրիկը փրթառ երեկոյեան ժամը տասին։ Միլէտի մխիթարութիւն մը կ'զդար տեսնելով որ բնաթիւնն իր սրախն վրդովին կ'համապատասխանէ. օդին մէջ կայծակը կ'որոտար ինչպէս զայրոյթը մտքին մէջ. իրեն այնպէս կ'երեէր որ սաստկաշունչ հովն անցնելով իր ձակախն մաղերը կ'արձակէր. ինչպէս ծառերն որոց ձիւղերը կ'կորէր և տերեները կ'թափէր. մըրիկին որէս կ'ոռնար և իր ձայնը բնութեան մմծ ձայնին մէջ կ'կորսուէր, քնութիւնն որ իրեն որէս կարծես թէ կ'չեծէր և կ'յուսահատէր։

Յանկարծ Միլէտի լսեց որ ապակիի մը կ'զարնեն, և փայլակի

մը լուսով՝ մարդու մը կերպարանը տեսաւ որ վանդակին ետևէն կ'երեւէր :

Պատուհանը վաղեց և զայն բացաւ :

— Ֆէլտօն — զոշեց նա — աղատեցայ :

— Այո՛ — ըստ Ֆէլտօն — բայց լոռթթիւն, լոռթթիւն : Ինձ ժամանակ պէտք է երկաթէ ձ դեբք խարսելու : Մինակ նայէ որ քեզ գոնիկէն չտեսնեն :

— Ո՛չ, նոր ապացոյց մ'որ տէրը մեղի հետ է, Ֆէլտօն — վրայ բերաւ Միլէտի — զռնիկը տախտակով մը զոցեցին :

— Քաջ է . Աստած ած յիմարացոց ց զանձք — ըստ Ֆէլտօն :

— Բայց ի՞նչ ոյէ ափ է որ ընեմ — հարցոց Միլէտի :

— Ոչ ի՞նչ, ոչ ի՞նչ, մինակ պատուհանը զոցէ : Պատկէ, կամ լու և հացուած անկողնենդ մահի, երբ զործու առարսմ, ապակիներուն պիտի զարնեմ : Բայց պիտի կարենաս ինձ հետեւիլ :

— Ո՛չ, այո՛ :

— Հասրա վէրքի :

— Զիս կ'առառապէ, բայց քալելու արդելք մը չէ :

— Որեմն նշան տալուս պատրաստ զտնուէ :

Միլէտի պատուհանը դոցեց, կանթեղը մարեց, և դնաց, ինչ պէտ որ Ֆէլտօն ապադրեր էր, իր անկողնին մէջ պըլի : Մը ըրկին որոտման ժամանակ՝ ձողերուն վրայ խարսացին կը ճիւնը կը լուէր, և քանի փայլակը լոյս հանէր, ապակիներուն ետին գէլ տօնի սունէրը կ'նշմարէր :

Միլէտի ժամ մ'անցոց առանց շունչ սունլու . կ'հեար, ճակատէն քիրտ կ'հոսէր և սիրտը դարձութելի անձկոթեամբ մը կ'սեղմուէր ամէն անդամոն որ նշրադաթիւն մէջ շարժում մը կ'լուէր :

Կան ժամնը որ աարի մը կ'առեն :

Ժամի մը Ֆէլտօն նորէն զարկաւ :

Միլէտի անկողնէն դուրս ցամակեց և դնաց բանալու պատուհանը, որմէ երկու ձող պակսելով մաքք անցնելու չափ բայց տած մը կ'առեմնուէր :

— Միթէ պատրաստ ես — հարցուց Ֆէլտօն :

- Այժմ Արդեօք հետս բան մ'առնում:
- Ուկի առ, եթէ ունիս:
- Այս, բարեբազդօրէն ունեցածս քովս ձգեցին:
- Շատ աւելի աշէկ, վասն զի իմն սպառեցի նաւակ մը վարձու բռ նելու համար:
- Առ — ըստ Միլէտի Փէլտօնի ձեռքը տալով ոսկիով լի պարկ մը:
- Փէլտօն պարկն առառ և պատին սառութը նետեց:
- Հիմակ — ըստ նա — կ'ուզե՞ս գալ:
- Ահաւասի՞ եմ:
- Միլէտի աթոռի մը վրայ ելաւ և պատուհանէն անցուց իր մարմնոյն վերին մասը. աեսաւ որ նորատի սպայն պարանէ ելնարանվ մ'անդնդին վրայ կախուեր էր:
- Եռաջին անգամ սարսափ մ'զգալով յիշեց որ կին է:
- Դատարկութիւնը զի՞նքը կ'ահարեկէր:
- Երկիւղի դուշակեր էի — ըստ Փէլտօն:
- Բան մը չէ, բան մը չէ — ըստ Միլէտի — աչերս զոց պիտի վար իջնեմ:
- Միթէ իմ վրայ վաստահութիւն ունիս — ըստ Փէլտօն:
- Կ'հարցնե՞ս:
- Երկու ձեռներդ իրարու մօտ բեր, խաչաձև բռնէ. լաւ է:
- Փէլտօն՝ իր թաշկինակով Միլէտիին երկու դատակները կապեց, յետոյ թաշկինակին վերև լար մ'անցուց:
- Ի՞նչ կ'ընես — հարցոց Միլէտի զարմանօք:
- Թակերդ վզիս փաթթէ և բանէ մը մի վախնար:
- Բայց այսպէս հաւասարակշռութիւնդ ովիտի կարուես, և երկուքնի ալ պիտի խորտակինք:
- Անհոդ եղիք, ես նառորդ եմ:
- բողէ մ'իսէ կրտսելու ատեն չէր. Միլէտի իր երկու թեկութը Փէլտօնի վզին բոլորտիքը փաթթեց և ինքնինք թողլով պատուհանէն վար սահեցաւ:
- Փէլտօն աստիճաններէն մի առ մի մեղմիկ վար իջնելու սկսաւ:

Երկու մարմիններուն ծանրութիւնն առ ոչ ինչ դրելով՝ մը ըկեցն
շունչը զանոնք օղին մէջ կ'տաստանէր :

Ֆէլտօն յանկարծ կանկ առաւ :

— Ի՞նչ կայ — հարցաց Միլէտի :

— Լոռ թիւն — ըստ Ֆէլտօն — ոտքի ձայն կ'լսեմ :

— Մեր փախուստն երեան հանեցին :

Քանի մը վայրկեան լոռութիւնը տիրեց :

— Ոչ — ըստ Ֆէլտօն — բան մը չէ :

— Բայց վերջապէս ինչ կ'նշանակէ այս աղմաւկը :

— Գիշերապահ ջոկատն իր շրջանին ձամբէն պիտի անցնի :

— Ըստ ջանի ձամբան որն է :

— Շնչառ մէր ներքեմ :

— Ուրեմն մեղ պիտի տեսնե՞ն :

— Զպիակ տեսնեն, եթէ փայլակներ չելնեն :

— Հապա եթէ ելնարանին վարի կառորին զարնուի :

— Բարերազդօրէն վեց ոտք զետնէն վեր է :

— Աչաւսիկ կ'երեին, Աստուած իմ :

— Լոռ թիւն :

Երկուքնին աջ կախուած, անշարժ և անշունչ մեացին դեսունէն քանանքին ծիծաղելով և խօսակցելով :

Փախստականներուն համար ահռելի ժամ մ'եր այն :

Գիշերապահ ջոկատն անցաւ, հետացող ոտքի ձայներ կ'լըսուէնին, նայնու ձայնի մը մունջներ որ կ'սուաղէին :

— Այժմ — ըստ Ֆէլտօն — ազատեցանք :

Միլէտի հառաջ մը հանեց և մարեցաւ :

Ֆէլտօն էջը շարունակից : Ենիսարանին ստորոտն որ հատաւ, և երբ ոտնակիւ մը չղթաց ալ, ձեռներն անոր փաթթեց : Ի վերջու յետին ասա՝ Տանը հանելուն դաստակներուն ուժութեալիքն առ կախ թողոց և զետինն իջաւ : Յետոյ ծոելով ոսկելիր պարկին առաւ և ակրաներովը բռնեց :

Ապա Միլէտին թևերուն մէջ առաւ, և զիշերապահ ջոկա-

այն հետեած ճամբռուն ներհակի կողմը զարկաւ : Քիչէն շրջանի շառշէն ելաւ, ժայռերուն մէջէն անցաւ և ծովեղը հասնելով անդամ մը սովորեց :

Նոյնօրինակ նշան մ'իրեն պատասխանեց, և հինգ վայրկեան ետքը՝ նաւակի մը տեսաւ որուն մէջ չորս մարդիկ կային :

Նաւակին ըստ կարի մշակցաւ ծովեղին, տակայն բաւական խորունկ չէր ջուրն որ մինչև ծովափը դայ : Գէլտօն ջուրը մտամինչև մէջքը, իը թանձաւին բեռն ուրիշին վասահիլ չկամելով :

Բարեբազուօրէն վայրին սկսեր էր հանդարսիլ, և սակայն ծովը տակաւին ալէծու փ էր . փոքրիկ նաւակը կոհակներուն վըրայ կ'սաստանէ ը ընկույզի կեղենի ողէս :

— Ծիստակ միակայմ նառը քէմ շուտ ընդ փոյթ :

Զորս մարդիկ սկսան թիավարել, բայց ծովը շատ ալէկած էր և թիսկները չէին կարող անոր դիմաղրին :

Սակայն դարձեալ դղեկէն կ'հեռանային, և այս էր կարեռը Գիշերը շափազանց մասն էր, և արդէն անհնար էր ծովեղը նաւակէն որոշել, և առանել ես ոչ ոք կարող պիտի լինէր նաւակը ծովեղըն որոշել :

Աև կէտ մը կ'աստանէ ը ծովուն վրայ :

Այս էր միակայմ նառը :

Մինչդեռ նաւակը չորս թիավարներու բոլոր զօրութեամբը կը յառաջանար, Գէլտօն լարը կ'քակէր, յետոյ թաշկինակին որով Միլէտի ձեռները կազեր էր :

Յետօյ՝ երբ ձեռները քակէց՝ ծովէն չուր առաւ Գէլտօն և երեսին սբոկից :

Միլէտի հառաջ մը հանեց և աշերը բացաւ :

— Ո՞ր եմ — ըստ նա :

— Աղատած ես — պատասխանեց նորատի սպայն :

— Ո՛չ, աղատ, աղատ — զուհց նա : — Այս ահատափիկ երիին, ահատափիկ ծովը : Այս ծծած օլս աղատաթեան օդն է, Ա՛չ . . . շնորհակալ եմ, Գէլտօն, շնորհակալ եմ :

Պատանին Միլէտին սեղմաց իր սրամին վըրայ :

— Բայց ի՞նչ ոճիմ ձեռքերս — հարցոց Միլէտի —ինձ կ'եւ
ըեի թէ դաստակներս խորտակեր են :

Եւ արդարեւ Միլէտի մեները վերոց, դաստակները սկրղեր էին:

— Բայրէ — ըստ Ֆէլտօն այն առևոր ձեռները դիտելով և
դրոխը մեղմիկ օրելով :

— Ո՞չ, բան մը չէ, բան մը չէ — դոչեց Միլէտի — հիմակ
կ'յիշեմ:

Միլէտի իր աչօրը չորս կողմի որոնեց :

— Ահա ասա է — ըստ Ֆէլտօն ուսնովն սկի պարկը հրելով :

Միակոյց նաւուն կ'մասենային : Պահնորդ նաւորդը նաւակին
ձայն արձակեց, նուակը պատասխան տուաւ :

— Ի՞նչ նաւ է այս — հարցոց Միլէտի :

— Քեզի համար վարձու բռնածս է :

— Ո՞ր պիտի սանինի դիս :

— Ո՞ր որ կ'ուզես, Բաւական է որ զիս Բօրդամութ հանէք :

— Ի՞նչ սլիտի երթաս ընես Բօրդամութ — հարցոց Միլէտի :

— Լորտ Վինդրի հրամանը կատարել — ըստ Ֆէլտօն մթին
ժայիտով մը :

— Ի՞նչ հրաման — հարցոց Միլէտի :

— Միթէ չհասկցա՞ր — ըստ Ֆէլտօն :

— Ո՞չ, բացարէ միտքդ, կ'աղացեմ :

— Որովհետեւ իմ վրայ կանկած ո՞նէր, ուզեց որ ինքն ան-
ձամբ քու վրայ հսկէ, և փոխանակ ինքն երթալու՝ զիս կ'զրկէ
տարադրութեանդ հրամանացիրը Պըքինկչէ մի ստորագլել տալու
համար :

— Բայց եթէ քեզնէ կ'կասկածէր ի՞նչպէս այս հրամանազիրը
քեզի վստահեցաւ :

— Միթէ դիտէր թէ յանձնած հրամանազը ին նպատակն ինձ
յայտնի էր :

— Ճիշտ է : Որեմն հիմակ Բօրդամութ պիտի երթաս :

— Ժամավաճառ լինելու ամեն չէ, վաղն ամսոյս 23ն է, և
Պըքինկչէմ իր նաւատօրմղլին հետ վաղը պիտի մեկնի :

- Վաղը պիտի մեկնի՞ , և ուր :
- Ուօշէլ պիտի երթայ :
- Պէտք չէ որ երթայ — զուեց Միլէտի իր առջորական ուշամոռները մոռնալով :
- Անհոգ եղիք — պատասխանեց Ֆէլտօն — չ'պիտի մեկնի :
- Միլէտի խնդոմեան տարառու մ'զդաց . նոյն պահուն պատահոյն սրախն խորը կարգացեր էր . ոլքինկչեմի մահը դրուած էր անհոգ մէջ բացորաշ տառերով :
- Ֆէլտօն . . . — ըստ նա — զմւ Յուզա Մակաբէ ի պէտ մարդ մ'ես . Եթէ մառնիս , ես ալ հետդ պիտի մեռնիմ . այսափ միայն կարող եմ ըսկը քեզի :
- Նոռութիւն — ըստ Ֆէլտօն — ահա հասանք :
- Արգարե , միամբայմ նառուն կ'զոտէին :
- Սուած Ֆէլտօն ելնարանն ելաւ և Միլէտին տոյաւ ձեռքը , մինչդեռ նուաստիներն անոր կ'օգնէին , վասն զի ծովը տականն շատ ալէ կտծեալ էր :
- Պահ մ'ետքը նառուն կամքին վրայ էին :
- Կառապետ — ըստ Ֆէլտօն — ահառասիկ այն անձն որու վրայ արդէն խօսեցայ քեզի , և զոր պէտք է ողջ առողջ տառնիլ Փրանսա լողուլ :
- Սա պայմանառ որ հինգ հարիւր ուիի պիտի տաս — ըստ նառապետը :
- Երկու հարիւր յիսուն տուի քեզի :
- Շշմարիս է — ըստ նառապետը :
- Եւ ահառասիկ մնացած երկու հարիւր յիսունն ալ — վրայ թերաւ Միլէտի , ձեռքն ուկիի պարկին տանելով :
- Ոչ — ըստ նառապետը — ես խօսք մը միայն ունիմ , և զայն ոյս պատահնիին տուի : Միստ երկու հարիւր յիսունն օսկին Պուլօնյը հառնելէն ետև պիտի վճարուին ինձ :
- Եւ միթէ պիտի հասնինք :
- Ողջ առողջ — ըստ նառապետը — և ապահովի ինչպէս որ ապահով եմ որ Ժէք ոլքութը կ'կաչուիմ :

— Ասի ուրեմն — ըստ Միլէտի — եթէ խօսքդ կատարե՞ս ;
չէ թէ երկու հարիւր յիսուն , այլ հինգ հարիւր ասկի պիտի
առմ քեզի :

— Կեցցես ուրեմն , իմ գեղանի տիկինս — դոչեց նաւապետը
և երանի թէ Աստած քեզի պէս ուղևորներ դրկէ միշտ :

— Սակայն առ այժմ — ըստ Ֆէլտօն — մեզ . . . փոքրիկ նա-
ւահանգստին խորշը տար . . . արդէն զիտես որ այն տեղ մեզ
տանելու խօսքը կարած է նք :

Կառապէտը կարևոր հրամանը տալով նառ շարժելու , Ֆէլ-
տօնի պատասխանեց , և առաւօտեան ժամն եօթին փոքրիկ նաւն
երկաթ կ'նետէր պայմաննալ նաւահանգիտը :

Այս ուղևորներան ժամանակ՝ Ֆէլտօն ամէն բան պատմեր էր
Միլէտիին . ի'նչպէս՝ Լոնտօն դնալու տեղ , փոքրիկ նառ վար-
ձու բռներ էր , ի'նչպէս դարձեր էր , ի'նչպէս պատն 'ի վեր
մազլեր էր ձեղքերուն մէջ քարեր դնելով՝ քանի վեր կ'ելնէր ,
և կուտաններ իր սաբը դնելու համար , և վերջապէս՝ ի'նչպէս , երա-
կաթէ ձաղերուն հանելուն՝ ելնարանը կապեր էր : Միլէտի մեա-
ցածը զիտէր :

Միւս կողմէն Միլէտի փորձ փորձեց Ֆէլտօնն իր զիտաւորու-
թեան մէջ քաջալերել . բայց այն ինչ առաջին բառերը բերնէն
հանեց , զիտեց որ առելի պէտք կար նորատի մալեռանդին խանդն
ամորել քան թէ զրդուել :

Որոշեցին որ Միլէտի Ֆէլտօնին սպասէ մինչև ժամը տաս ,
եթէ ժամը տասնին չվերագտանար , այն ատեն նամբայ պիտի
ելնէր :

Այս ատեն՝ ենթագրելով որ ազատ պիտի մնար , Ֆէլտօն
պիտի երթար Ֆրանսա Միլէտին դանելու ու թիւնի Կարմելեանց
շանքը :

ԺԷ

ՕԴՈՒՏՈՒՄ 23 ԻՆ 1628 ԻՆ ԲՈՐԴՈՄԱՆՈՒԹԻ ՄԵԶ
ԱՆՑԱԾ ԴԱՅՐԱՆԴՐ

Ֆէլտօն հրաժարական բարեւ տուաւ Միլէտիին՝ իբր եղբայր մ'որ պարզ շը ջագայութեան մը կ'ելնէ քոյրէն հրաման խնդրեւ լով, և անոր ձեռքը համբուրեց :

Ֆէլտօն անձնովին իբ սովորական հանդարատութիւնը կ'ցուցնէր մինակ անսովոր նշոյլ մ'իբ աչերուն մէջ կ'փայլէր տենդային կայծակի մը նման . իբ ճակատը սովորականէն առելի զունատէր, ակռաները սեղմած, և իբ խոռքը հակիրճ և ընդհատ շեշտ մ'ունէր որմէ կ'երեւէր թէ մթին բան մը կ'յուզուէր իբ սրտին մէջ :

Որչափ ատեն որ զի՞նք ցամաքը տանող նաւակին մէջ կեցաւ երեսը Միլէտիի կողմը դարձած մնաց, որ կամրջին վրայ կանգուն, աչօք անոր կ'հետեւէր : Երկուքնին ալ վախ չունէ ին որ իրենց ետևէն կ'ընկնին . երբէք Միլէտիին սենեակը ժամե իննէն առաջ չէին մաներ, և երեք ժամ պէտք էր դղէկէն Լոնտօն դառնալու :

Ֆէլտօն ոտք կոխեց ցամաքը, ապառաժին բարձոնքը տանող դարէն վեր ելաւ, վերջին անդամ Միլէտին բարեեց և իբ ընթացքը դէալ ՚ի քաղաքն ուղղեց :

Հարիւր քայլ անդին՝ որովհետեւ հողը զառ ՚ի թափ էր, միանակ նաւուն կայմը կարող էր առեւնել :

Խոկոյն Քօրդամութի ճամրան բռնեց՝ իբ առջելը զրեթէ կէս մըսն հեռու կ'նշանարէր քաղքին աշտարակներն ու դռներն որ առաւտեան մշուշին մէջ կ'ծրագրուէին :

Քօրդամութէն անդին ծովը նաւերով ծածկուած էր, որոց կայ-

ևերը՝ կաղամախի տերեւաթափ անտառներու պէս կ'երեւէին և հովին ջնչն կ'տատանէին :

Ֆէլտօն՝ իր արագ ընթացքին ժամանակ՝ կ'յիշէր բնչ որ երկու տարուան հինուրեայ խորհրդածութիւններն և մաքրակրօններու մէջ երկարատև բնակութիւն մ'իրեն սորվեցուցեր էին հիմնաւոր կամ անհիմն ամբաստանութիւններ ժաք Եի և Շարլ Ա ին մտերմին դէմ:

Երբ Ֆէլտօն բաղդատէր այս պաշտօնէին հասարակային յանցանքը, մնաւհուզակ յանցանք, եւրոպական յանցանք, եթէ կարելի է ըսել, այն մասնաւոր և թաշտն յանցանաց հետ որով Միլէտի զինքն ամբաստաներ էր, կ'կարծէր թէ Պլքինկչէմը պարունակող երկու մարդերէն աւելի մղապարտն այն էր որուն կետնիքը դեռ ևս ժողովուրդը չէր ճանչեր : Աւան զի իր տարօքն, նոր, հրատապ մէրը՝ Միլէտիին հիւսած վաստանուն և մնածին ամբաստանութիւններն՝ իր աչաց կ'ցուցնէին իրեւ խոշորացցովվ մը, իրը ահարկու հրէ չներ, թէ և իրօք աննշմարելի հիւլէններ էին մրջունի մօտ :

Վրագ արագ ընթանալով՝ Ֆէլտօնի արիւնը կ'եռար, այն դաշտափառը թէ իր եաւն ահաելի վրէժխնդրութեան մը կ'թողուր կին մը զոր կ'սիրէր, կամ լաւ ևս իրեւ սրբուհի կ'պաշտէր . անցեալ այլայլութիւնը, ներկայ յուղնութիւնը, ամէն բան վերջապէս մարդկային զգացումներէ վեր կ'հանէին կ'բորբոքէին իր հոյին :

Վուաւուեան ժամն ութին մօտ Բօրդսմութ քաղաքը կ'մտնէր . բոլըր ժողովուրդն ուտքի վրայ էր . թմբուկ կ'զարնէին փողոցներու և նաւահանգստի վրայ . Ճանապարհորդ զօրագունէեր գէպ ՚ի ծովը կ'իջն ին :

Ֆէլտօն Շովլակալին Պալատն հասաւ փոշէլից և քրանաթոր . իր գէմին որ սովորաբար դունաւը էր, ջերմութեաւն և բարկուաթենէ կարմըեր էր : Պահակին ուղեց զանի արդիլել, բայց Ֆէլտօն պահակապետը կոչեց, և իր քովն ունեցած նամակը դրաբանէն հանելով :

— Ստիպողական դիր մ՞է այս լորտ Վինդըի կողմէ — ըստ նաև
Նորտ Վինդըի անունը լսելուն՝ որուն՝ Պլքինկչէմի մաերիմեն-
քէն մին լինելն ամէն մարդ դիմուկը, պահակապետը հրամայեց
որ Ֆէլտօնի թոյլ տաճ ներս մոնն լու, որ, ինքն իսկ ծովային
սպասի համազգեստ հաղեր էր :

Ֆէլտօն սրալատը մոտաւ որընթաց :

Այն միջոցին որ նրբագաւիթը կ'մանէր, ուրիշ մարդ մ'ալ
կ'մտնէր, փռչելի, շնչառպառ, դրան առ չե սուրհանդակի ձին
թողլով որ՝ երբ հասաւ՝ երկու ծնդաց վրայ ընկառ յոցնութենէն:

Ֆէլտօն և միւս մարդը մի և նոյն սրահուն Բաղրիկի դիմե-
ցին, Բաղրիկ՝ որ դքսին հուասարիմ սենեկապետն էր, Ֆէլ-
տօն լորտ Վինդըի անուանեց, անձանօմը չողեց որու կողմէ
գալը յայտնել, և պիզեց թէ մինակ դքսին կարող էր խրցինքը
Ճանչցնել։ Երկուքնին ալ կ'պիզէին որ իրարմէ առաջ անցնին։

Բաղրիկ՝ որ դիմուկ թէ լորտ Վինդը դքսին հետ սրաշտօնա-
կան և բարեկամական յարաբերութիւն ունէր, անոր անուանը
ներկայացողին մուտ տուառ։ Միւսն սովորուեցաւ սպասելու, և
դիւրին էր տեսնել թէ այս յասպարումն որչափ կ'անիծէր։

« Խմ՝ սիրելի աղջիկս, պատրաստ զտնուէ, Ար բարեհումը քիչ և ատենէն քեզ պիտի տեսնէ, և քեզ պիտի տեսնէ միայն որպէս զի հանէ քեզ այն բանտէն ուր ապահովութեանդ համար և պատրաստոր էիր մնալ։ Թագուն, ուստի կազմ ու պատրաստ և զտնուէ մնկնելու և մեզնէ մի յուսահատիր։

« Մեր շքնար կասթօնը՝ ինչպէս միշտ՝ դարձեալ արիասիրտ և հաւատարիմ երեցաւ։ ըսէ անոր որ շատ շնորհապարտ են և իրեն տեղ մը տուած աղջարաբութեան համար։»

— Այու, այու — ըստ Միլէտի — այու, նամակը բացորոշ է։ Միթէ դիտե՞ս թէ ի՞նչ է այն աղջարաբութիւնը։

— Աչ։ Միայն կ'ենթադրեմ որ թաղոհւոյն կանխաւ իմացոց ալիտի լինի կարտինալին մէկ նոր մեքենայութիւնը։

— Այու, անտարակոյս այդ պիտի լինի — ըստ Միլէտի, գիրը տիկին Պօնասիէօի տալով և իր մտախոհ գլուխն իր կրծքին վրայ կորելով։

“Կոյն պահուն ձիու մը վազքը լուսեցաւ։

— Ա՛հ — գոչեց ափկին Պօնասիէօ դէպ ՚ի պատուհան վազելով — միթէ արդէն հասան։ Նա։

Միլէտի անկողինը կ'մնար դարձանքէն քար կտրած։ յանկարծ այնչափ անակնեալ բաներ կ'համանին որ առաջին անգամ զլուխն սկսեր էր շփոթիլ։

— Նան, նան — մըմնաց Միլէտի — արդեօք նան է։ — և իր անկողին մէջ անթարթ աչօք կ'սպասէր։

— Ափսոն, ոչ — ըստ ափկին Պօնասիէօ — եկողը շնանցած մէկ մարդս է, և սակայն կարծես թէ այս կողմը կ'զիմէ։ առու, իր ընթացքը կ'մեղմէ, դրան առջեւ կ'կենայ, հնչակը կ'քաշէ։

Միլէտի իր անկողնէն գուրս ցատկեց։

— Միթէ ստոյգ ես որ նա չէ — հարցուց Միլէտի :

— Ո՛չ, այս, լիովին ստոյգ եմ :

— Կարելի է սխալ տեսար :

— Ո՛չ, եթէ զլիարկին փետուրը, վերարկուին ծայրը միայն տեսնեմ, զանի պիտի ձանշեմ :

Միլէտի հազորելու վրայ էր :

— Ի՞նչ և է, կ'ըսես թէ այն մարդն այս տունը կ'դայ :

— Այս, ներս մտաւ :

— Կամ քեզի իամ ինձի համար է :

— Ո՛չ, Աստուած իմ, որչափ վրդոված կ'երեխս :

— Այս, կ'խոստովանիմ, քու վատահութիւնդ չեմ վայելնը, ամէն ինչ կարտինալէն կ'սպասեմ ահաբեկ :

— Լութիւն — ըսաւ տիկին Պօնասիէօ — ահա կ'դան :

Երդարե գուռը բացուեցաւ և մեծաւորուհին ներս մտաւ :

— Միթէ զո՞ւ ես Պուլօնյէն եկողը — հարցուց Միլէտիին :

— Այս, ես եմ — պատասխանեց Միլէտի . և իր պաղարիւնութիւնը վերաշահելու ջանալով — ով կ'ուզէ դիս :

— Մարդ մ'որ իր անունն ինձի յայտնել շուզէր, բայց կարտինալին կողմէն ասաւ եկեր է :

— Եւ միթէ ինձի խօսիլ կ'ուզէ — հարցուց Միլէտի :

— Պուլօնյէն եկող կնկան մը խօսիլ կ'ուզէ :

— Ուրեմն զինքը ներս հրամցուր, ափկին, կ'աղաշեմ :

— Ո՛չ, Աստուած իմ, Աստուած իմ — ըսաւ տիկին Պօնասիէօ — արդեօք զէշ լո՞ւր մը կ'բերէ :

— Ես ալ ահ ու դողի մէջ եմ:

— Այն օտարականին հետ քեզ մինակ կ'թողում, բայց երբ մեկին, քու թոյլառութեամբդ, պիտի նորէն դամ :

— Ինչո՞ւ չէ, կ'աղաշեմ եկուր :

Մեծաւորուհին և տիկին Պօնասիէօ գուրս ելան :

Միլէտի մինակ մնաց աչերը գրան վրայ ուեռուած, պահ մը ետք՝ խթաններու շինդը լոռեցաւ որ սանլըն վրայ կ'հնչէր, յետոյ ոտքի դոփիմն որ կ'մստենար, յետոյ դաւրը բացուելով մարդ մ'երևցաւ :

Միլէտի ուրախութեան Ֆիկ մը հանեց . այս մարդը Արօշփօր
կոմնն էր , կարսինալին հւաւ զործակատարը :

ԻԱ.

ԵՐԱԾՈՒՅԻ ԳԱԼԻՆԵԱԿ ԱՌՏԱՆԱՆԵՐ

- ԱՇ — զոչեցին միասին Արօշփօր և Միլէտի — դու . ես :
- Այս , ես եմ :
- Եւ ուսկից կ'զատ . . . — հարցոց Միլէտի :
- Թօշէլէ՞ն , հապա զո՞ւ :
- Անկլիայէ՞ն :
- Պրքինկէլչէ՞մ :
- Մեռած կամ՝ կարեվէր վիրաւորուած է . մինչդեռ առանց
իրմէ բան մը ստանալու կ'ակնէի , մայեռանդ մը զանի կ'սպաննէր :
- ԱՇ — ըրաւ Արօշփօր ժախտով մը — յաջող դիստած մ'է
այդ արգարեն , և որով վսեմափայլ կարսինալը շատ զա՞ս պիտի
լինի : Միլէտ արդէ՞ն իմաց տու իր եղելու թիւնը :
- Պալօնյէ՞ն անոր զբեցի : Բայց զու ինչպէս զտար զիս :
- Կարսինալը մատանջութեան մէջ լինելով՝ քեզ փնտե-
լու զրկեց զիս :
- Դեռ երէկ հասայ այս տեղ :
- Եւ երէկտան՝ վեր բնէ ըրիր :
- Ժամանակս պարապ շանցոցի :
- ԱՇ , տարակոյս չունիմ՝ այդ մասին :
- Միլէտ զիսեն թէ այս տեղ որու հանդիպեցայ :
- ԱՇ :
- Գամիր :
- Կ'աշուէս կ'ուղէս որ . . . :
- Այն նորատի կինը զար թագուհին բանելն հանեց :

— Միթէ այն անզիտուն ա' Արդանեանին սիրուհին է :

— Այու, տիկին Պահապիէօ, որուն բնակութիւնը կարտինալին քակ անցայտ էր :

— Լաւ ուրեմն — ըստ Ռոշֆոր — այս ալ նոր գիպոած մ'է որ միւսին կրնայ նմանիլ . իրափ Պ. կարտինալը բաղդաւոր մարդ մ'է :

— Ա' Երեւակայե՞ս արդեօք իմ զարմանքս երբ այն կնկան հետ չէ մ' առ գէմ' դանուեցայ :

— Միթէ քեզ կ' նահնէ :

— Ո՞ւ :

— Ուրեմն քեզ իրքե օտարական կ' նկատէ :

Միլէտի ժամեցան :

— Եր ընտրելազոյն բարեկամուհին եմ :

— Պատոյս վրայ կ'ըսէմ — յարեց Ռոշֆոր — զու միայն, սիրելիդ իմ կամսուհիս, կարող ես այս տեսակ հրաշքներ ընել :

— Եւ Խարպիկ բրթայ, ասպետ — ըստ Միլէտի — վասն զի անցած զարձածը զիտեն արդեօք :

— Ո՞ւ :

— Վազը կամ միւս օր՝ Բագուհւայն կողմէ պիտի գան տիկին Պահապիէօն առնլու :

— Երան, և ով պիտի գայ :

— Տ' Արդանեան և իր բարեկամները :

— Երան որ այնձնափ պիտի ընեն, որ պիտի ստիպուինք զանոնք Պասզիլ զրկելու :

— Ինչո՞ւ համար արդէն Պասզիլ չե՞ն :

— Ի՞նչ ըսեմ, վասն զի Պ. կարտինալն այս մարդոց համար ար կողմ՝ մ'ունի զոր չեմ հասկնար :

— Երան :

— Այու :

— Լաւ ուրեմն, ըսէ անոր, Ռոշֆոր, ըսէ անոր թէ այն չըրս մարդիկ մեր խօսակցութիւնը մտիկ ըրեր են 'ի Գոլօնպիէ-Ռուժ, ըսէ անոր թէ իր մեկնելեն ետե՛ մէկը վեր ելաւ և տուած անցազիը

ձեռքէս խլեց, ըսէ անոր թէ իմ Անկլիա անցնիլս արդէն լորտ Անգլիաի իմաց տուեր էին, թէ այս անգամ զարձեալ իր պաշտօնն 'ի դերև պիտի հանէին, ինչպէս որ ասղիկներու գործին մէջ 'ի գերև հանեցին, ըսէ անոր թէ այն չորս մարդիկներէն երկոքը միայն վախ կ'ազգեն, այս է ա՛Նրդանեան և Աթոս, ըսէ անոր թէ երբորդը՝ Նբամիս, տիկին Ծէվրէօղի սիրահարն է, պէտք է թողուլ անոր որ ազգի, վասն զի գաղտնիքը զիտենք, կընայ օգտակար լինիլ. իսկ չօրբորդին զալով Բորթոս, յիմար մը, պարծուկ մը, ազուշ մ'է և պէտք չէ անոր վրայ մտածել:

— Բայց այս չորս մարդիկ այս պահուս թոշէլի պաշտաման կը գտնուին անշուշտ :

— Ես ալ քեզի պէս կ'կարծէի, բայց տիկին Ծէվրէօղէն ընդունած մէկ նամակը զոր ամիկին Պօնասիէօ անխոչեմաբար ցցոց բնձի, կ'յորդորէ զիս հաւատու թէ այն չորս մարդիկ Ճամբայ ելած պիտի լինին որպէս զի դան զինքն առնուն տանին :

— Սատանայ, ի՞նչ ընելու է :

— Ի՞նչ ըստ քեզի կարտինալն իմ մասիս :

— Ըստ որ դրաւոր կամ բերանացի տեղեկոթիւններով առնում, սուրհանգակով վերադառնամ, և քու ըրածդ իմանալէն ետև՝ պիտի որոշէ թէ ի՞նչ պիտի ընես :

— Ուրեմն անս մնալու պիտի պարտառորիմ :

— Աստ կամ շրջակայքը :

— Միթէ զիս չե՞ս կարող հետդ տանիլ :

— Ա՛չ, հրամանը վճռաւեան է, բանակին շրջակայքը թերեւ քեզ ճանչեն, և կընաս երեւակայել որ քու ներկայութիւնդ կարտինալին վրայ թերեւս կասկածներ զրդուլ :

— Լան, պէտք է ուրեմն աստ սպասել կամ շրջակայքը :

— Մինակ, կանիսաւ յայտնէ ինձ թէ կարտինալէն ուղղուած լուրելն ուր պիտի դան զտնեն քեզ, որպէս զի կարենամ դալ դտնել քեզ :

— Մտիկ ըրէ, հաւանական է որ չկարինամ աստ մնալ :

- Խնչո՞ւ համար :
- Կ'մոռնաս որ թշնամիներս ժամե՛ ժամ՝ կրնան հասնիլ :
- Իբաւ է , բայց այն ատե՞ն այս փոքրիկ կինը նորին վսեմութեան կարտինալին ճանկէն պիտի ազատի :
- Բա՛ — ըստ Միլէտի այնպիսի ժամատով մ'որ իրեն յաստեկէր — կ'մոռնաս որ իրեն լաւագոյն բարեկամուհին եմ :
- Ա՛չ , իբաւ է , ուրեմն՝ այս կնկան մասին , կրնամ ըսել կարտինալին որ . . . :
- Հանդարս լինի :
- Այսչուփի միայն :
- Այն պիտի հասկնայ թէ ինչ ըսել կ'ուղեմ :
- Պիտի զուշակէ : Հիմակ , ըսէ նայիմ , ինչ պիտի ընեմ :
- Անմիջապէս ճամբայ ելնել : Ա'երևի ինձ որ ստացած լուրեր կ'արժեն որ շուր ընդ փոյթ վերադառնաս :
- Լիլիէ մուած ատե՞նս կառիկս կոտրեցաւ :
- Սքանչելի է :
- Խնչպէս , սքանչելի :
- Այս ես քու կառիկէդ պէտք ունիմ :
- Ես այն ատե՞ն ինչպէս պիտի մեկնիմ :
- Սանձարձակ ձիով :
- Գիւրին է խօսիլ այդպէս . մուածէ միանդամ , հարիւր ութառն մղոն կայ առջևս :
- Միթէ մեծ բան մ'է :
- Լաւ , պիտի կոտրեմ այդ ճամբան . ապօտ :
- Ասքա , Լիլիէն անցնելու ատե՞նդ , սպասուորիդ հետ կը դրկես ինձ կառիկդ պատուիրելով որ ինքն ալ քովս մնայ :
- Ծատ լու :
- Անտարակոյս կարտինալին մէկ հրամանազիրը քովդ ունիս :
- Իր լիազօր հրամանազիրն ունիմ :
- Արբայտհին կ'ցուցնես զայն , և անոր կ'ըսես որ զան պիտի զիս առնլու , կամ այսօր , կամ վաղը , և թէ պարտաւոր եմ քու կողմէդ ներկայանալիք անձին հետեւիլ :

- Ըամ լաւ :
- Մի մոռնար զիս լաւ մը կտրել՝ իմ վրայ աբբայուհին խօսելու ատենդ :
- Ի՞նչ հարկ կայ :
- Ես կարախնալին մէկ զոշն եմ։ Աէտք է որ վտաշութիւն ազգեմ այն փոքրիկ տիկին Պօնասիէօի :
- Ճշմարիտ է։ Հիմակ կ'ուղեն բոլոր անցած զացածին վրայ մանր տեղեկացիր մը հաղորդել ինձ։
- Բայց ես քեզի արդէն պատմցի դէպքերը, դու լաւ յիշողութիւն ունիս, ըսածիս պէս ամէն բան կրկնէ ու։ կարտինալին, թուղթ մը կ'կորսուի :
- Կրաւունք ունիս. մինակ պէտք է զիսնամ՝ որ ուր պիտի գտնուիս, որպէս զի պարագ տեղն ատղիս անդին չփնտռեմ քեզ։
- Ճիշտ է, սպաօէ։
- Աշխարհացոյց մը կ'ուղեն :
- Ո՛չ, ես այս երկիրները քաջ զիտեմ։
- Դու, բայց երբ եկած ես այս կողմերը։
- Այն տեղուանքը մեծցած եմ։
- Կրաւ։
- Անայիս որ տեղ մը մեծցած լինելը միշտ օդտակար է մարդու։
- Աւեմն ուր պիտի սպասես . . .
- Թուղ որ պահ մը խորհիմ։ Է՛չ, ահա զտայ, Արմանափէր։
- Ի՞նչ է այդ Արմանափէրը։
- Լիսի վրայ փոքրիկ քաղաք մը, զետէն որ անցնիմ, ինքնափ օտար երկիր պիտի զտնեմ։
- Աքանչելի է. բայց յայտնի բան է որ մինակ վտանգի ժամանակ զետէն պիտի անցնիս։
- Ի հարկէ։
- Եւ այն ատեն, ի՞նչպէս խմանամ զացած տեղգ։
- Միթե սպասաւորէդ պէտք ունիս,
- Ո՛չ։

- Միթէ հաւատարիմ է :
- Փորձուած է :
- Տուր ինձ զանի . ոչ ոք կ'ձանչէ զի՞նքը , ձգած աեղս կը թողում զանի և քեղ երթալիք աեղս կրնայ առաջնորդել :
- Աւրեմն կ'ըսես թէ զիս Արմանափէր ովհափի սպասես :
- Արմանափիէր :
- Եյդ անունը թղթի կտարի մը վրայ զրէ որ շմառնամ . քաղքի անուն մը վասնդ շրերեր մեզ , ի՞նչ կ'ըսես :
- Է՛ս , ով զիսէ , փոյթ չէ — բառ Միթէտի , կէս թերթ թղթի վրայ քաղքին անունը զրելով — անխօհիմ բան մը կ'ընեմ :
- Լաւ . — բառ Ռոշֆօր Միթէտին ձեռքէն թղթի կտարն առնլով , զոր ծալեց և իր թաղեայ զլսարկին դդալին մէջ զ մղեց — ուսկայն , հանդիսա եղիր , ես ալ հիմակ տղոց ոքս ովհափի վարուիմ , եթէ երբէք թուղթը կորուսեմ , համբաս դնալու տանք քաղքին անունը պիտի կը կ'նեմ՝ անդադար : Հիմակ , ամէն բան լմնցան :
- Կարծեմ :
- Լաւ . մը քննենք : Պլքինկչէմ մեռան կամ կարեվէր վերառոր . խօսակցութեանդ կարտինալի հետ չորս հրացանակիրներու ականջը հասած , լորու Վինոգր՝ Բօրգամութ երթալիքը կանխաւ իմացած , ա՛Յորդանեան և Ալես Պասդիլի մէջ , Արամիոն տիկինն Ըէ վրեազի սիրահարը , Բորթոս պարծուի մը . տիւկին Պօնասիկէս երեւան ելած . կտաիկս կարելի եղածին չափ շուտով քեզի զրկել , սպասառորս հրամանիդ ներքեւ զնել , քեղ իբրև կարտինալի զօհ ցոյց տալ որ արբայտհին կառկած մը չառնու . Արմանափիէրը Լիս զետակին ափունքը : Միթէ բոլոր զործու այս չէ :
- Իրաւ որ , սիրելի իմ ասպետ , հրաշալի յիշաղութիւնն մը տնիս . բայց միտքս նոր բան մ'եկաւ , առ ևս աւելցուր :
- Ի՞նչ :
- Ծամ սիրուն պորակներ աեռայ որ անշու շատ վանատան կը վերաբերին , ըսէ արբայտհին որ նոյն սպորակներուն մէջ զ պարտիլն ինձ ներելի է , ո՞ զիսէ , կարելի է եսնի մէկ դռնէն դուրս ելնելու պէտք ունենամ :

— Ամէն բանի ինչպէս կ'մտածես :
 — Եւ դու բան մը կ'մոռնաս . . . :
 — Ի՞նչ բան :
 — Զես հարցներ եթէ ստակի պէտք ունիմ :
 — Իրաւ է , ո՞րչափ կ'ուղես :
 — Ո՞րչափ ոսկի որ ունիս քովդ , կ'ուղեմ :
 — Երկու հարիւր յիսուն ֆրանքի մօտ գումար մ'ունիմ :
 — Ես ալ նոյնչափ զումար մ'ունիմ . հինգ հարիւր ոսկիով ամէն բանի գէմը կրնանք առնուլ . զբարաններդ պարպէ :
 — Ահաւասիկ :
 — Լաւ , հիմակ պիտի մեկնիս :
 — Ժամէ մը . կոտոր մը բան ուտելու չափ պիտի մնամ , և նոյն պիջոցին պիտի մարդ ղըկեմ որ ինձի սուրհանդակի ձի մը քերեն :
 — Քաջ է , երթաս բարե , ասպէտ :
 — Մնաս բարե , կոմսուհի :
 — Զիս կարտինալին յանձնարարէ :
 — Զիս սադանին յանձնարարէ :
 Սիլէտի և Ռոշֆօր փոխադարձ ժպանցան և իրարմէ զատուեցան ժամ մ'ետք՝ Ռոշֆօր՝ սրարշաւ մեկնեցաւ . հինգ ժամ ետք՝ Սրբաւէ կ'անցնէր :
 Մեր ընթերցողներն արդէն զիտեն թէ ինչ կերպով տ'Արդանեան զինքը ձանչեր էր , և ինչպէս այս ծանօթութիւնը չորս հրացանակիրներու երկիրւդ ազդելով՝ նոր շտապ մը տուեր էր իւրենց ուղեւորութեան :

իԲ

Տ. Ի. Կ. Ա. Թ. Ի. Լ.

Այս ինչ Ռոշֆօր զուրս ելաւ՝ որ տիկին Պօնասիէօ ներս մտաւ , և Միլէտին ինդումերես գտաւ :

— Աաւ ուրեմն — ըստ նորատի կինը — արդեօք հասան քեզ
այն բանն որմէ կ'վախնայիր, այս իրկուն կամ վարը կարտինալը
պիտի մարդ դրկէ քեզ առնլու աստի:

— Ո՞վ ըստ քեզի այդ բանը, զաւակս — հարցուց Միլէտի:

— Ես նոյն խել պատգամառորին բերնէն իմացայ:

— Եկաւը քովու նստելու — ըստ Միլէտի:

— Ահաւասիկ եմ:

— Կեցիր նայիմ որ մարդ մը մեզ մափկ չընէ:

— Ինչո՞ւ համար այդ չափ զզութիւններ կ'ընես:

— Հիմակ պիտի յայտնեմ:

Միլէտի ոտք ելաւ և դուռը դնաց, բացաւ, նրբազարիթը նա-
յեցաւ, և զառնալով նստաւ տիկին Պօնասիկօի մօտ:

— Յիրաւի — ըստ — շատ լաւ խաղաց իր գերը:

— Ո՞վ է այն:

— Այս որ կարտինալին կողմէ աբբայուհին ներկայացաւ:

— Ուրեմն իբր գեր մը կ'խաղաք նա:

— Այս, զաւակս:

— Ուրեմն այս մարդը . . . :

— Այս մարդը — ըստ Միլէտի ձայնը մեղմելով — իմ եղ-
բայրու է:

— Եղբայրդ — գուշց տիկին Պօնասիկօ:

— Լաւ միտ գիր, զաւակս, զու միայն զիսես այս զաղանքիը:
եթէ որ և է մէկու յայտնես զայն, պիտի կորստիմ, և կարելի
է զաւ ևս:

— Ո՛հ, Աստուած իմ:

— Մտիկ ըրէ, ահա անցած դարձածը, եղբայրս որ ինձ օգ-
նութեան զալու վրայ էր բռնի առնուլ տանելու համար, եթէ
հարկ լինէր, կարտինալին մէկ սուրհանդակին հանդիպեցաւ որ
զիս ասկէ հանելու կ'զար, ուստի անոր ետևէն զնաց: Երբ ճամ-
բուն մէկ մենաւոր և հեռակաց վայրը հասաւ՝ սուրը հանեց և
հրամայեց սուրհանդակին որ քովու ունեցած թղթերն իրեն յան-
ձնէ, սուրհանդակին ինքզինքը պաշտպանելու ելաւ, եղբայրս զա-
նի սպաննեց:

— Ա՛Հ — ըրաւ աիկին ուօնասիէօ սարսռէլով :

— Ի՞նչ օդուտ, ուրիշ հար չկար : Այն ատեն եղբայրս միտքը դրաւ զօրութեան տեղ խորամանկութիւն գործածել . թղթերն առաւ, ինքն իրրե կարտինալին գործակալն աստ ներկայացաւ, և մէկ երկու ժամու մէջ՝ Նորին Վահմութեան կողմէ կառք մը պիտի դայ դիս առնլու :

— Կ'իմանամ, այդ կառքն իրօք եղբայրդ է զրկողը :

— Ճիշտ է . բայց բոլորն այս չէ, այն ընդունած զիրդ զոր կարծես թէ աիկին Ծէվրէօղը զրած է . . . :

— Լաւ :

— Շինծու է :

— Ինչպէս :

— Այս, շինծու է . ծուղակ մ'է որ դիմադրութիւն չցուցունես երբ զան քեզ առնլու :

— Բայց ա՛Արգանեան պիտի դայ :

— ԱՄՔԵՂ հանէ այդ . ա՛Արգանեան և բարեկամները ԱԽՈՉԵՂի պաշարման կ'դանուին :

— Դու ուստի՞ դիտես այդ բանը :

— Եղբայրս հրացանակի հազուստով կարտինալին գործակալն ներսուն հանդիպեցաւ : Քեզ զուռը պիտի կոչէն, պիտի կարծես թէ Եկողները բարեկամներդ են, սակայն քեզ պիտի յափշտակին և բարեղ պիտի սանին :

— Ո՛Հ, Ասաւ ած իմ, դլու իս կ'շփոթի այս անօրէնութեանց քառունի մէջ : Կ'զամ որ եթէ այս բաներս այսու՛ս շարունակուին — շարունակեց ուօնասիէօ ձեռքը Տակտին սանելով — պիտի խնդանամ :

— Ապասէ . . . :

— Ի՞նչ կայ :

— Զիւ մը դափրը կ'լսեմ, եղբօրս ձին է որ կ'մնկնի . անոր վերջին բարե մը տալ կ'ուղեմ, եկուր :

ԱԽՈՉԵՂի պատուհանը բացու, և նշան ըրտ տիկին ուօնասիէօի որ իրեն մօաը դայ :

Նորատի կինն անօր քովը դնաց :

Ուշֆօր վազ ընդ վազ կ'անցնէր :

— Երթաս բարեն, եղբայր — զոչեց Միլէտի :

Ասպետը գլուխը վեր վերցուց, երկու կիները տեսաւ, և Ճամբան շարունակելով՝ Միլէտիին բարեկամական նշան մ'ըրաւ ձեռքովը :

— Իմ բարի՛ ժօրժս — ըստ Միլէտի պատուհանը զոցելով և իր դէմքը կ'յայտնէր արտամաղին զորով մը :

Յետոյ զարձաւ ու իր տեղը նստաւ, որպէս թէ մի միայն անձնականի վերաբերուղ խորհրդածութեանց մէջ ընկղմած է :

— Սիրական տիկին — ըստ ափիկին Պօնասիէօ — ներէ ինձ եթէ մտմտոքդ կ'վրդովէմ. բայց ի՞նչ խորհրդած կ'ասս ինձ. Վստուած իմ, դու իզնէ առելի փորձառու ես, խօսէ, քեզ մտիկ կ'ընեմ :

— Նախ սա ըսեմ — պատասխանեց Միլէտի — որ կաբելի է կ'սիալիմ և իրօք ա՛Յրդանեան և իր բարեկամները քեզի օգնելու դան :

— Ո՛չ, չափազանց աղւոր բան մը պիտի լինէր — զոչեց տիկին Պօնասիէօ — և այդչափ երջանկութիւն ինձի համար չէ :

— Այն առեն դիւրին է հասկնալ, միայն ժամանակի ինդիր մը պիտի լինի, տեսակ մը ձիարշաւ, այնպէս որ իրարմէ առաջ համնելու պիտի մրցին : Եթէ քու բարեկամներդ առելի արագ համնին, դու կ'աղաւախս, եթէ կարտինալին արբանեակներն առելի ճարապիկ բրթին, կորսուած ես :

— Ո՛չ, այու, այու, կորսուած եմ անխնայ : Աւրեմն ի՞նչ ըսեմ, ի՞նչ ընեմ :

— Խիստ պարզ, խիստ բնական միջոց մը կայ . . . :

— Ըսէ, ի՞նչ է :

— Պէտք է սպասել շրջակաները պահուելով և այս կերպով ստողել թէ քեզ առնու եկող մարդիկ ոյք են :

— Բայց ուր սպասել պէտք է :

— Ո՛չ, այդ ինդիր մը չէ . ես ինքս պիտի սպասեմ և ասկից

քանի մը մղոն հեռի պիտի պահուիմ մինչև որ եղասյրս զայ զիս դժոնէ . լաւ , քեզ հետո կ'տանիմ : միասին կ'պահուինք և կ'ըստ պասենք :

— Բայց զիս չպիտի թողուն որ երթամ , այս տեղ զբեթէ կալանու հի մ'եմ :

— Որովհետեւ կարծեն թէ կարտինալին մէկ հրամանին վրայ կ'մնինիմ , անշուշտ չպիտի կարծեն թէ ինձի հետ դալու փափաք ունիս :

— Լամ , ապա :

— Ապա , կատքը գրան առջե պիտի դժոնուի , ինձ երթաս բարե կ'ըսես , քայլուանին վրայ կ'ելնես որ վերջին անգամ մ'ես զիս դրկես , եղբօրս սպասառորն որ արդէն զործին տեղեակ է , կառագանին նշմայր մը կ'ընէ և վազ ընդ վազ ճամբայ կ'ելնենք :

— Հասպա , տ'Արդանեան , եթէ տ'Արդանեան զայ :

— Միթէ չենք կրնար իմանալ :

— Ի՞նչպէս :

— Շատ դիւրին բան է : Եղբօրս այն սպասառորը՝ որուն կրնանք ամէն բան վստահիլ , ոյէ թիւն կ'զրկնիք . վանատան դիմացը կ'օթեանի ծաղտեալ և կ'զիտէ . եթէ կարտինալին զործակալներն են եկողները , աեղէն չշարժիր , եթէ ոյ . տ'Արդանեան է իր բարեկամներուն հետ զանոնք կ'առնու և մեր զանուած տեղը կ'բերէ :

— Աւք մեն սպասառորը կ'ճանչէ : տ'Արդանեանը :

— Անշուշտ . միթէ ոյ . տ'Արդանեանն իմ տունս տեսած չէ :

— Ա՛չ , այս , այս , իրաւունք ունիս , այսպէս ամէն բան կարդին է , ամէն բան լուազոյն կերպարան մը կ'առնու . բայց ասկից չհեռանանք :

— Շատ շատ՝ եօթ տթ մղոնի շափ . օրինակի համար , սահմանագլխին վրայ կ'կենանք , և եթէ վստանդի թեթև ձայն մը լսենք Ֆրանսային դուքս կ'ելնենք :

— Բայց այն տեղ ի՞նչ պիտի ընենք :

— Ապասենք պիտի :

— Բայց եթէ զան :

- Եղբարս կոտքն անոնցմել առաջ պիտի դայ :
- Հազար քեզ առնլու եկած առեն, եթէ հեռու գտնուիմ, օրինակի համար, ձաշի կամ ընթրիքի վրայ լինիմ:
- Բան մը կայ ըրէ :
- Ի՞նչ բան :
- Քո բարի մեծաւորուհինդ ըսէ թէ իրարմէ բնառ չհեռանալու համար, հրաման պիտի խնդրես ինձի հետ ձաշելու :
- Միթէ պիտի հրաման տայ :
- Ի՞նչ անպատճհութիւն կայ այդ բանին մէջ :
- Ո՛չ, շատ աղեկ, այս կերպով պահ մ'իրարմէ չպիտի բաժնուիր :
- Աւ ուրեմն, վար դնա և խնդիրդ անոր առաջարկէ, ոլուխ ծանր է, երթամ պիտի որարտէզը պտոյտ մ'ընելու :
- Գնա, ուր պիտի դանեմ քեզ :
- Այս տեղ, ժամէ մը :
- Այս տեղ, ժամէ մը, ո՛չ, քանի բարեսիրս ես, և քեզ շնորհակալ եմ :
- Ի՞նչպէս քո հոգդ չսպիտի տանէի, եթէ զեղանի և չքնարիու չլինէիր, դարձեալ իմ լաւաղոյն բարեկամներէս մէկուն բարեկամն հին չե՞ս :
- Աիրելի ո՛Յըդանեան, ո՛չ, որչափ շնորհապարտ պիտի լինի քեզ :
- Ես ալ կ'յուսամ, օն, վար իջնենք, այսպէս ամեն բան կարգադրուած է :
- Միթէ պարտէզը կ'երթաս :
- Այս :
- Սա նրբագաւիթը բոնէ դնա, փոքրիկ սանդղէ մը վար իշիր և պարտէզը կ'ունես :
- Քաջ է, շնորհակալ եմ :
- Եւ երկու կանայք բաժնուեցան սիրաբոյր ժպտելով իրարու :
- Միթէտի ձշմարիս խոռեր էր, զլուխն իրօք ծանր էր, վասն զի իր խառն ՚ի խոռհորդներն իրըն քաօսի մէջ իրարու

կ'զարնուեին։ Պէտք ուներ առանձին մնալ որպէս զի իր զազամ փարներուն մէջ քիչ մը կարդ զնէ։ Անորոշակի կ'տեսներ ապաս զան, բայց իրեն քիչ մը լուսթիւն և հանդարաստթիւն պէտք էր որպէս զի իր զեռ ևս շփոթ խորհուրդներուն որոշ ձև մը, հաստատ յատակաղիք մը տայ։

Ամենէն ստիպողականն էր՝ տիկին Պօնասիէօն յափշտակել և ապահով վայր մը պահել, և անգ՝ ՚ի հարկին, իրեւ պատանդ գործածել։ Միլէտի սկսեր էր ահարեկ դիտել այս սոսկալի մնամարտին ելքը, քանի որ իր թշնամիներն այնքան յարատեռ թիւն կ'ցոցնէին անոր մէջ, որը լուսափ ինքը յանառութիւն կ'յայսնէր։

Ասկէ զատ՝ կ'զդար նա՞ ինչպէս մարդ կ'զգայ փոթորկի մը զա լուսաը, եթէ այս ելքը մօտալուս էր և անվրէ ալ ահուելի սիրտի դառնար։

Ինչպէս որ ըսփնք՝ իրեն համար կարեսըն էր իր ձեռաց տակ սլահել տիկին Պօնասիէօն։ Տիկին Պօնասիէօն՝ ա՛Յրդանեանի կեանքն էր. իր կեանքէն աւելի, իր սիրած կնկան կեանքն էր. ուստի եթէ բազզը ձախող դառնար, միջոց մ՛էր այն բանակցելու և ապահովապէս լու սրայմաններ ստանալու։

Արդ՝ այս կէտն արդէն որոշուած էր. տիկին Պօնասիէօ իրեն պիտի հետեւէր անկասկած, երբ միանգամ իր հետն Արմանտիէր թաղչէր, զիւրին էր հաւտացնել անոր թէ ա՛Յրդանեան Պէտթիւն չէր հասած։ Չատ շատ՝ քառան օրէն Թոշփօր պիտի միքրադառնար, և ասկէ զատ՝ նոյն տասն հինգ օրուան միջոցին մէջ շորս բարեկամներէն վրէժ լուծելու համար պիտի խորհէր։ Փառք Էստուծոյ, ձանձրանալու առիթ չպիտի ունենար, վասն զի իր ընառորութեան աէր կնկան մը՝ զէպքերու շնորհած մէկ անուշաղոյն զրօնանքը պիտի վայելէր, այս է, կատարելազործել աղւոր մը մինդրութիւն մը։

Մինչդեռ կ'խորհէր՝ աչերն ալ չորս կողմը կ'ըլջէր և պարտէ զին տեղադրութիւնն իր զլիսին մէջ կ'զասառորէր։ Միլէտի հմուտ զօրապետի մը կ'նմանէր, որ յաղթութիւն և պարտութիւն միուսին կ'նմախառեւէ, և պատրաստ է՝ ճակատամարտին բազզին համեմատ՝ ընդ առաջ քալել, կամ նահանջել։

Ժամել մը լսեց անուշ ձայն մ'որ զինքը կ'կոչէք: արիկին Պօչ-
նասիկօի ձայնն էք այն: Բարեմիտս արբայուհին ամեն բանի հա-
ւաներ էք բնապէս, և, սկսելու համար, երկուքնին՝ի միասին
պիտի ընթրէին:

Երբ գտիթը հասան՝ կառքի մ'ազմուկը լսեցին որ դրան առ-
ջեւ կ'կենար:

Միլէախ մաիկ ըրաւ:

— Միթէ կ'լսեն ձայն մը — ըստու նաւ:

— Այու, կառքի մը դղբդիննը:

— Եմ եղբօրս դրիած կառքը պիտի լինի:

— Ո՛չ, Աստուած իմ:

— Կայինք, արիացիք:

Անաստան դրան Շնչակը զարկին, Միլէախ չէք սխալած:

— Սենեակդ ելի՞ր — ըստու տիկին Պօնասիկօի — անշուշտ ու-
նեցած զոհարներդ հետոյ պիտի առնուս:

— Ես անոր նամակներն ունիմ:

— Լաւ ուրեմն, զնայ զանոնք առ և անեակս եկուր, շոտ
մը մեր ընթրիքը պիտի ընենք. կարելի է զիշերուան մէկ մասը
ճահաւարչորդինք. պէտք է ոյժ առնուլ:

— Մեծդ Աստուած — ըստու տիկին Պօնասիկօ ձեռքը կրծքին
վրայ դնելով — սիրաս զիս կ'խղզէ, չեմ կարող քալել:

— Օ՞ն, արիտթիւն, արիտթիւն, մասած որ քառորդէ մը
պիտի ազատիս, և մասած որ ինչ որ ընես, անոր համար պի-
տի ընես:

— Ո՛չ, ոյն, ամեն բան անոր համար: Արիտթիւն տուիր ինձ
մէկ խօսքով, զնայ, պիտի զամ՝ քեզ զանելու:

Միլէախ աշխաւճիս վեր ելու. անդ զտաւ Արօշփօրի սպասա-
ւորը, և իր հրահանգներն անոր հաղորդեց:

Դուռը պիտի սպասէք նա, եթէ դիպուածով հրացանակիրներն
երեկին, կառքն ընդ վտզ պիտի մեկնէք, վանաստան շրջանը
պիտի ընէք, և պիտի երթար Միլէախին սպասելու անտառակին
անդին դանուած մէկ փոքրիկ զեղ մը: Այս սպարագայիս մէջ՝ Մի-

լէտի պարտութեն պիտի անցնէր և հետի նոյն վեղը պիտի հառնէր . արդէն ըստնք , Միլէտի քաջ կ'ձանչէր Թրանսպայի ոյս մասը :

Եթէ հրացանակիրները չերեկին՝ դործերն արդէն որոշուած կերպով պիտի կատարէին . տիկին Պօնասիէօ կառք պիտի հեծնէր Միլէտիին հրաժարական բարելը տալու պատրակառ , և այնպէս տիկին Պօնասիէօն պիտի առնոր տանելը :

Տիկին Պօնասիէօ ներս մտաւ , և որ և է կասկած , եթէ ունէր , փարատելու համար , անոր առջելը կրկնեց սպասաւորին իր հրահանգներուն վերջին մասը :

Միլէտի կառքին վրայ քանի մը հարցում ըրաւ . երկու ձիով լծուած կառք մ'էր՝ զոր կառապան մը կ'վարէր , Արօշիօրի սպասաւորը՝ իբրև առքհանգակ՝ առջելն պիտի երթար :

Միլէտի յանիրաւի կ'երկնչէր որ տիկին Պօնասիէօ կասկածներ անենայ . խեղճ նորատի կինն այնքան պարզմիտ էր որ չեր կարող երեւակայել թէ կին մ'այնպիսի խորամանկութիւնն մը տառածէ . ասկէ զատ՝ Ալինդը կումսուհւոյն անտենը՝ զոր արբայուհինն ըերնէն լուեր էր , իբնն բոլորովին անծանօթ էր , և անզէտ էր խոկ որ կին մ'այնչափ մծ և զմազակ մասնակցութիւն մ'ունցած լինի իր կենաց աղետից :

— Կ'առեմնէն — ըստ Միլէտի , երբ սպասաւորը գտրու ելաւ — ամեն ինչ պատրաստ է : Աբրայուհին մեր վրայ կասկած մը չունի և կարծէ թէ զիս կարտինալին կողմէն առնելու կ'զան : Այս մորդը վերջին հրաժանմերը պիտի տայ . քիչ մը բան կ'եր , մաս մը զինի խմէ և մեկնինք :

— Այս — ըստ տիկին Պօնասիէօ մեքենապէս — ոյն , մեկնինք :

Միլէտի նշան ըրաւ անոր որ իր առջելը նուաի , անոր բաժակը քիչ մը Ասրանիոյ զինի դրաւ . և վառեկի մը բռիս միս մեծարեց :

— Դիտէ անդամ մը , ինչպէս ամէն բան նայասաւոր կ'երեկի մեղ — ըստ անոր : — Ահա զիշերը վրայ կ'հասնի . սուառան գէմ մեր առանձին բնակարանը պիտի հասած լինինք , և ոչ ոք մեր գտնուած տեղը պիտի իմանայ : Օն , արիացիր , քիչ մը բան կ'եր :

Ցիկլին Պատմասիէօ մեքենապէս քանի մը պատառ բան կերաւ :
և ուժով մը զի՞նի խնդյ :

— Օ՞ն , շուա ըրէ — ըստ Միլէ աի իր բաժակը բերանը տա-
նելով — դու ալ իմ օրինակիս հետեւ :

Բայց այն միջային որ բաժակը բերնին կ'առնէք՝ ձեռքը կախ-
տած մնաց . հեռաւոր արշափի մը թնդիրնի նման բան մ'օր եր-
թալով կ'մօտնար , ականջնին զարկեր էր . յետոյ՝ գրեթե նոյն
պահուն՝ կարծեց թէ ձիերու վրան լուսմը կ'լսէ :

Եյս աղմուկն իր ուրախութիւնը ցրուեց՝ ինչպէս փոթորկի
ձայնը զեղեցիկ երազ մը կ'ցորէ . դոյնը նետեց և պատուհանը
վազեց , մինչդեռ տիկին Պատմասիէօ՝ դողդոջուն ուաք ելնելով՝ իր
աթուոփն վրայ կ'յենուր որ վար շնորհի :

Տակաւին բան մը չէր տեսնուեր . մինակ ձիերու վարդելը կը
լուսէր որ ևս քան զես կ'մօտնար :

— Ո՞հ , Աստուած իմ — ըստ տիկին Պատմասիէօ — ի՞նչ կ'նշա-
նակէ այս աղմուկը :

— Մեր բարեկամներուն կամ թշնամիներուն հանած աղմուկն
է — ըստ Միլէ ափուկալի պազարիւնութեամբ մը — տեղէդ
մի թնատար . հիմակ պիտի ըսեմ քեզի :

Ցիկլին Պատմասիէօ կանգուն , անձայն , անշարժ և դռնառ կը
մնար իրեւ արձան մը :

Աղմուկն առելի կ'ստուիկանար , և ձիերն անշուշտ հարիւր յի-
սուն քայլ հեռի պիտի լինէին . դեռ ևս աշքի չէին երեւէր , վասն
զի համբան անկիւնաւոր էր : Այլ սակայն՝ աղմուկն այնպահ ո-
րոշ կ'զառնար , որ գիւրին էր ձիերը համբել իրենց պայտերուն
ընդհատ գափրներէն :

Միլէ տի իր մասդրութեան բոլոր զօրութեամբը կ'նայէր , և
կողները տեսնելու համար պէտք եղածին շափ լոյս կար :

Յանկարծ տեսաւ որ համբուն անկիւնէն ելնուլ նարօսապարդ
գլխարկներ կ'չողան և փետուրներ կ'ծածանին . համբէց երկու ,
յետոյ հինգ , յետոյ ութ ձիւուոր . անոնցմէ մին միւսներուն առ-
ջեւն կ'քալէր երկու ձիւու երկանութեան հետաւորութեամբ :

Միլէտի խեղդուկ հեծեծանք մ'արձակեց : Դիմեց որ ամենուն զլուխը քալող ձիւորը մ'Արդանեանն էր :

— Ո՛չ, Աստուած իմ, Աստուած իմ — զուեց ամիկին ուօնասիէօ — ի՞նչ կայ արդեօք :

— Պ. կարտինալին պահակներուն համազգեստը կ'առնենեմ, որէաք չէ որ վայրկեան մը կորուսենք — զուեց Միլէտի : — Փառխինք, փախինք :

— Այս, այս, փախինք — կրկնեց ամիկին Պօնասիէօ, առանց քայլ մ'առնուլ կարենալու, բայ որում սարսափէն իր տեղը դամուած էր :

Պատոհանին առակէն ձիւորներու անցնիլը լսեցին :

— Եկուր, բայց շնուր եկուր — կ'զոչէր Միլէտի նորաստի կնաջընեն քաշելու ջանալով — սկարտէ զին ջնորհիլը դեռ ես ժամանակ կայ խոյս առալու, բանալին քովս է . բայց շատպինք, հինգ վայրկենէն ամէն բան կ'ըռունի :

Տիկին Պօնասիէօ քայլելու փորձ փորձեց, երկու քայլ առան իր ծնկերուն վրայ ընկու :

Միլէտի ջանաց զանի վերցնել տանելու, բայց ոյժը չհասաւ : Կոյն պահուն կառքին թնդիւնը լսուեցաւ, որ հրացանակիրները առնենելով վազ ընդ վազ կ'ձնկնէր : Յետոյ երեք չորս հրացանի հարուածներ հնչեցին :

— Աերջին անգամ մ'ալ կ'ըսեմ, պիտի դաս — զուեց Միլէտի :

— Ո՛չ, Աստուած իմ, Աստուած իմ, կ'առնենես որ ոյժս շբաւեր . կ'առնենես որ չեմ կարող քալել, մինակդ խոյս տուր :

Յանկարծ կանկ առաւ, կապոյս կայծ մ'աչէրէն ցայսեց . սեղմանը վազեց, և ամիկին Պօնասիէօի բաժակին մէջ թափեց մասնիկ մը կապիճի որաբունակը զոր եղական արագութեամբ բացաւ :

Կարմրորակ հասիկ մ'էր որ իսկոյն հալեցաւ :

Յետոյ անվրդով ձեռօք բաժակն առնլով,

— Խմէ — բայ — այս զինին քեղի ոյժ պիտի տայ, լոմէ :

Եւ բաժակը նորաստի կնոջ շրմերուն մօտեցուց, և նա մկրենապէս խոնդ :

— ԱՇ, միտքս այսպէս վրէժ լուծել չէր — ըստ Միլէտի : գմոխային ժամանակը սեղանին վրայ դնելով — բայց, հոգիս վկայ, մարդ ձեռքէն եկածը կրնայ ընել միայն :

Եւ սենեկէն դուրս սրացու զնաց :

Տիկին Պօնասիէօ անոր փախուստը տեսաւ, բայց ետևէն երթալու անկարազ եղաւ. այն մարդոց կ'նշանէր որ կ'երազեն թէ իրենց ետևէն կ'վազեն և որ ընդ վայր քալելու կ'ձգնին :

Դանի մը բռպէ անցաւ, տուկալի աղմուկ մը զբան առջե կը լսուէր. ամէն վայրկեան տիկին Պօնասիէօ կ'յուսար տեսնելու Միլէտիին վերադարձը, թէև չէր վերադառնար. Քանի մ'անգամ՝ անշուշտ սարսափէն՝ իր հրատապ ճակարին վրայ պաղլ քըրտինք մ'երեցաւ :

Ի վերջէ լսեց վանդակներուն կորինչը՝ զոր կ'բանային, կօշիկներու և խթաններու աղմուկը սանդուղներու վրայ հնչեց, ձայններու մրմունջ մը կ'լուսէր որ ևս քան զես կ'մօտենար, և այն ձայններուն մէջ իրեն այնպէս կ'երեւէր թէ անտնը կ'արտասանեն :

Յանկարծ ուրախութէան ձիկ մ'արձակեց և դէպէ դուռը վազեց, ա'ւրդանեանի ձայնը ճանչեր էր :

— Տ'Արդանեան, ա'ւրդանեան — զուցեց նա — միթէ դու ես Ասկից, ասկից եկուր :

— Գօնստաման, Գօնստաման — պատասխանեց երիտասարդը — ուր ես, Տէր Աստուած :

Կոյն պահուն՝ սենեկին դուռն ընդհարումէն տեղի տուառ քան բացուեցաւ. շատ մը մարդիկ սենեակը վաղեցին. տիկին Պօնասիէօ թեալթուի մը վրայ ընկեր էր առանց շարժում մ'ընել կարգենալու :

Տ'Արդանեան՝ որ դեռ ևս միտող հրացանակ մը ձեռքը քռնած էր, զետինը նետեց և իր աիրուհւոյն առջե ծունը զբաւ. Աթոս իրը գօտիէն անցուց, Բորթոս և Արամին. որ իրենց սուրերը մերկ ունէին, պատեանը դրին :

— ՈՇ, ա'ւրդանեան, իմ ամենասիրական ա'ւրդանեան, վերջապէս եկար, դու շխարեր էիր զիս, այս, դու ես :

— Այս, այս, Գօնստանու, միացանք :

— Ո՛չ, պարագ տեղ կ'ըսէք ոչ որ չպիտի զաս, ես զազմնի կ'յուսայի. փախիլ չուղեցի. ո՛չ, որշափ աղէկ ըրի, որշափ երջանիկ եմ :

Այս ո՛չ բարին վրայ, Աթոս որ հանդարտորէն նստեր էր, յանկարծ ուսք ելու :

— Ո՛չ, ով է ո՛չ — հարցոց ա՛Արդանեան :

— Իմ ընկերուհիս, այն որ առ իս անեցած բարեկամութեան համար զիս իմ հալածիչներէ ազատել կ'ուղէք. այն որ, ձեզ կարտինայի պահակներու տեղ բոհնելով հիմակ խոյս տուառ :

— Քու ընկերուհիդ — դոչեց ա՛Արդանեան որ իր տիրուհոյն սպիտակ քողէն առելի դեղնեցաւ — բայց որ ընկերուհիիդ վրայ է խօսք :

— Այն որուն կառքը զրան առջե էր, կին մ'որ կ'ըսէ թէ բարեկամուհիդ է, ա՛Արդանեան, կին մ'որուն ամէն բան սրատմեր ես :

— Իր անձնը, անձնը — դոչեց ա՛Արդանեան — Աստուած իմ, միմէ իր անունը չգիտե՞մ :

— Այս, իմ առջև անոր անունը տուին, սպառէ . . . բայց սարօրինակ բան է . . . ո՛չ, Աստուած իմ, դլուխ կ'շփաթի, այլ ես չեմ յիշեր :

— Հասէք ինձ, բարեկամներս, հասէք ինձ, ձեռներս ստուան են — դոչեց ա՛Արդանեան — նուաղելու վրայ է, Աստուած մեծ, բնագլնեքը կ'կարուաէ :

Մինչդեռ Բարթոս իր ձայնին բոլոր զօրութեամբը օդնութեան կ'կաչէր, Արամիս դէպ ՚ի սեղանը վազեց բաժակ մը ջուր ըերեւու, բայց կը առա Աթոսի գէմքին աշուելի սյլակերպութիւնը դիտելով, վասն զի սեղանին առջեր կանգուն կեցած՝ մաղերը սնկած՝ աշերն սպշտութեամբ ստուած՝ բաժակներէն մին կ'զիտէր, և ամենասուկալի կասկածի մ'ենթակայ կ'երեէր :

— Ո՛չ — կ'ըսէք Աթոս — ո՛չ, անկարելի է : Աստուած այս որիսի ոճարակութիւն մը մայ շտուր :

- Զուր, չուր — կ'զուէր ա՛Արդանեան — չուր :
- Ո՛ հեք կին, հեք կին — կ'մրմւար Աթոս խեղդուկ ձայնով մը :
- Տիկին Պօնասիէօ ա՛Արդանեանի համբոյքներէն աշքը բացառ :
- Կ'ուշաբրի — գոշեց երխասարզը : — Ո՛՛ Աստուած իմ, Աստուած իմ, շնորհակալ եմ քեղի :
- Տիկին — ըստ Աթոս տիկին, յանուն Աստոծոյ, որուեր այս պարագ բաժակը :
- Եմն եր, սրբան . . . — պատասխանեց նորատի կինը հոգեվար ձայնով մը :
- Բայց այս բաժակին մէջ դանուած զինին ովլ Լեցոց :
- Կէ :
- Բայց, ովլ ե նէ :
- Ա՛՛, կ'յիշեմ — ըստ տիկին Պօնասիէօ — Ակնդր կոմսուհին . . . :
- Տորս բարեկամներ մի և նոյն աղաղակը հանցին, բայց Աթոսինն ամենուն վրայ կ'ափառետէր :
- Նոյն պահոն տիկին Պօնասիէօի դէմքը կապոյտ դոյն մ'առաւ, խոր ցաւ մը զինքը տապալեց, հեալով ընկաւ Բորթոսի և Արամիսի գիրկը :
- Տ'Արդանեան Աթոսի ձեռքը բռնեց նկարագրելու անկարելի անձկութեամբ մը :
- Ե՛՛, ի՞նչ — ըստ — դու կարծես թէ . . . : — Եր ձայնը հեծկլաանքն մարեցաւ :
- Ամեն բան կարծեմ — ըստ Աթոս շրթերը խածնելով արին հանելու չափ որպէս զի շնորաչ :
- Տ'Արդանեան, ա՛Արդանեան — գոշեց տիկին Պօնասիէօ — ուր ես, մի թողոք դիս, կ'նայիս որ մեռնելու վրայ եմ :
- Տ'Արդանեան Աթոսի ձեռքը թողոց, զոր տակա ին իր կարկամ ձեռաց մէջ բռներ եր, և դէպ անոր վազեց :
- Եր այնքան գեղանի դէմքը բոլորովին սցլայլեր եր, իր կապոյտ աշերն այլ ես ակնարկ չունէին, ջլաձիդ դող մ'իր մարմինը կ'սարսէր, ճակտէն քրտինք կ'հուէր :

— Յանուն երկնից, վաղեցէք, ձայն տռէք, Բորթոս, Արտմիս, օգնութիւն խնդրեցէք :

— Անօղուտ է — ըստ Աթոս — անօղուտ է, անոր տռած դեղին գէմ՝ զեղթափ չկայ :

— Այս, այս, օգնութիւն, օգնութիւն — մըմնաց տիկին Պօնասիէօ — օգնութիւն :

Յետոյ՝ իր բոլոր ոյժը ժաղվելով՝ երիտասարդին դլուխն իր երկու ձեռաց մէջ առաւ, պահած՝ մ'անոր նայեցաւ որպէս թէ իր բոլոր հոգին անոր ակնարկին մէջ սահեր էր, և հեծեծելի ճիկ մը հանելով՝ իր շրթերն անոր շրթերուն վրայ դրոշմեց :

— Գօնստա՛նս, Գօնստա՛նս — զուեց ա՛Արդանեան :

Տիկին Պօնասիէօի բերնէն հառաջ մը թռաւ՝ ա՛Արդանեանի բերնին բոլով, այս հառաջն իր անարատ և սիրող հոգին էր որ գէպ 'ի երկին կ'սլանար :

Տ'արդանեան իր թեւերուն մէջ դիակ մը միայն կ'զրկէր :

Երիտասարդը ճիկ մը հանեց և իր տիրուհոյն մօտ ընկաւ, անոր պէս տժզոյն և ստու :

Բորթոս լացաւ, Արամիս իր կոռովին երկնի ցցուց, Աթոս խաչ հանեց :

Նոյն պահուն դրան վրայ մարգ մ'երեցաւ, զրեխէ սենեկին մէջ զմնուողներուն չափ զունատ, և չորս կողմը նայեցաւ, տիրին Պօնասիէօն մեռած և ա՛Արդանեան մարած զտու :

Ճիշտ այն վայրկենին կ'երևէր այս մարդն երբ մեծ աղէտից յաջորդող ասլշութիւն մը կ'ամիրէ ամենուն վրայ :

— Զէի սիամէր — ըստ նա — ահա ու. ա՛Արդանեան, և դուք անոր երեք բարեկամներն էք, դուք, պարանայք Աթոս, Բորթոս և Արամիս :

Այս վերջններն օտարականը կ'զիսէին զարմանոք, այնպէս կ'երևէր իրենց որ զանի կ'ձանչէն :

— Պարաններ — վրայ բերաւ նորեկը — զօւք ալ ինձի պէս իին մը կ'փնտուէք որ — յարեց նա՝ սոսկալի ժպիտով մը — անտարակոյս սոկից անցած է, վառն դի այս տեղ դիակ մը կ'աեմնեմ :

Երեք բարեկամներ լուս ու մոռնջ կեցան . մինան անոր ձայշ նէն ու դէմքէն կը իշել ին որ անոր նման մարդ մը տեսած է ին , սակայն չէ ին կարող յիշել թէ ինչ սպարապայի մէջ :

— Պարոններ — շարունակեց օտարաժիանը — որովհետեւ չէք ուզեր հանչել մարդ մ'որ հաւաճօրէն իր կեանքն երկու անգամ ձեզ սպարապառ է , պէտք է ուրեմն ինքզինքս յայտնեմ . ես լորա ոք Ալինդը եմ , ոյն կնկան տայչըր :

Երեք բարեկամներ զարմանաց աղաղակ մ'արձակեցին :

Աթոս ոտք ելառ և իր ձեռքն անոր կարկառեց :

— Բարի եկար , միլորա — ըստ նա — դու ալ մեզնէ ես :

— Բօրդամն թէն անորմէ հինգ ժամ՝ վերջը մեկնեցայ — ըստ լորա Ալինդը — անորմէ երեք ժամ՝ ետքը Թուլօնյը հասայ , Ալնդ-Օմերի մէջ իրմէ քանի վայրիկեան ետքը մնայ , վերջապէս ի Ալիլէ իր հետքը կորուսի : Ըստ զիսպուածոյ կ'քալէի , ամեն մարդէ տեղեկութիւն խնդրելով , երբ սրարշաւ ձեր անցնիլը տեսայ . ա՛նրդանեանը ճանչեցի . ձեզ կոչեցի , ինչ սպատասխան չտուիք . ձեզի հետեւ շամասի , բայց իմ ձիս չափազանց յոդհած լինելուն՝ չէր կարող ձեր վազքին համահետ ընթանալ : Սակայն որչափ որ արագօրէն կ'փոթայիք , զարձեալ ուշ հասած էք :

— Ահա կ'ուեսնես — ըստ Աթոս՝ լորա Ալինդի ցոյց տալով տիկին գլուխուիէօ մեռած և ա՛նրդանեանը՝ որուն կենդանութիւն տալու համար Արամիս և Բորդոս կ'ձգնէին :

— Միթէ երկուքնին ալ մեռած են — հարցուց լորա Ալինդը պաղտոթեամբ :

— Բարեբաղդօրէն , ոչ — սպատասխանեց Աթոս : — Ո , ա՛նրդանեան նուազած է միայն :

— Ահա , ուրախ եմ — ըստ լորա Ալինդը :

Արդարէն նայն սպահուն ա՛նրդանեան աչերը բացաւ :

Բորթոսին և Արամիսին թևերէն պրծելով՝ խելադարի պէս իր միրտհւյն մարմնոյն վրայ ընկաւ :

Աթոս ոտք ելառ , ծանր ու հանդիսաւոր քայլով դէպ իր բաւ :

բեկամին քալեց, և որովհետեւ սաստիկ կ'հասկլաւար, իր խիստ
ազնիւ և համոզակեր ձայնով ըստու .

— Բարեկամ, մարդ եղիր. կիները մեռելները կ'ողբան, մար-
դիկ անոնց վրէժը կ'լուծեն :

— Ա՛հ, այս — ըստու ա'Յրդանեան — այս, եթէ անոր վրէժը
լուծելու կ'հրափիքն, պատրաստ եմ քեզ հետեւու :

Այսու տեսնելով որ վրէժինդրութեան յօյն ոյժ տաւու իր
գերազդ բարեկամին, պատեհ ժամ սեպեց նորթոսին և Արամե-
սին նշանյր մ'ընել որ երժան վանապետու հին կանչեն :

Երկու բարեկամեր նրբաղտութին մէջ անոր հանդիպեցան՝ որ
այնչափ վերահաս դէպքերէ շփոթած և շուրած կ'երեւէր. քա-
նի մը կը ըստու հիներ կանչեց՝ որ վանական սովորութեանց հակա-
ռակ, հինգ մարդու առջե զտնուեցան :

— Տիկին — ըստու Աթոս՝ ա'Յրդանեանի թեն իր թեսէն անցը-
նելով — քու հողեոր խնամոցդ կ'յանձնենք այս տարաբազդ կըն-
կան մարմինը : Երկրիս վրայ հրեշտակ մ'էր, երկին հրեշտակ
չեղած : Իրբեկ քայրերէդ մին նկատէ զանի . օր մը պիտի դանք
անոր գերեզմանին վրայ ազօթելու :

Տ'Յրդանեան Աթոսին ծոցը ստահեց իր դլու ին ու յանկարծ ողբ
ու կոծ հանեց :

— Լաց — ըստու Աթոս — լաց, սիրով, երիտասարդական աշ-
խուժով և կենդանութեամբ լի սիրու մը : Աւաղ, ես ալ կ'փա-
փաքէի որ քեզի պէս լալու կարող լինիմ:

Եւ իր բարեկամը քաշեց տարաւ, զորավագութ իրբեկ հայր մը,
միսիթարիչ՝ իրբեկ քահանայ մը, և մեծ՝ իրբեկ մարդ մ'որ շատ
աստապանք քաշեր էր :

Այս ատեն այս հինգ անձինք՝ իրենց սպասաւորներն ետեւ ձգե-
լով իրենց ձիերը սանձէն բռնած՝ զէպ ՚ի ոլեթիւն քաղաքը զի-
մեցին, որուն աւանը հեռուէն կ'աւեսնուէր և կանկ առին իրենց
հանդիպած առաջին պանդոկին առջե :

— Բայց — ըստու ա'Յրդանեան — միթէ այն կնկան հետքը
չպիտի փնտուինք :

— Աւելի ոչ — ըստ Աթոս — նախ քանի մը անօրէ նութիւնն
ներ ունիմ ընելու :

— Կա մը ձեռքէն պիտի փաթչի — վրայ բերաւ երիտասարա
զը — պիտի փաթչի, Աթոս, և յանցանքը քուկդ պիտի լինի :

— Այս մասին ես պատասխանառու եմ — ըստ Աթոս :

Տ' Արդանեան իր բարեկամին խոռքին վրայ այնքան վատահու-
թին ունէր, որ զլուիր ծռեց և պանդոկը մտաւ առանց պատա-
խան մը տալու :

Բորթոս և Արամիս իրարու երես կ'նայէին, Աթոսին ասղահո-
վոթենէ բան մը չհասկնալով :

Լորտ Վինդը կարծէր թէ տ' Արդանեանի վիշտը մեղմելու հա-
մար Աթոս այսպէս կ'խօսէր :

— Հիմակ, պարոններ — ըստ Աթոս երբ ստուդեց որ պան-
դոկին մէջ չինդ հատ պարագ սենեակ կայ — թող մեղմէ ամէն
մէին իր սենեակը բաշուի. տ' Արդանեան լալու և քնանալու հա-
մար մինակ մնալու պէտք ունի : Ես ամէն բան իմ վրաս կ'առ-
նոմ, դուք հանդիսա եղիք :

— Սակայն ինձ կ'երեի — ըստ լորտ Վինդը — որ եթէ կոմ-
սուհւոյն դէմ անօրէնութիւն մ' ընելու հարկ կայ, այդ զործն ինձ
կ'վերաբերի, նա իո՞ւ հարս է :

— Իմ աղ կինս է — ըստ Աթոս :

Տ' Արդանեան մատեցաւ, վւան զի հասկցաւ որ Աթոս իր վրէժ-
խնդրութիւն վրայ վատահ էր, քանի որ այսպիսի զաղտնիք մը
երեան կ'հանէր. Բորթոս և Արամիս իրարու երես նայեցան զո-
նառելով : Լորտ Վինդը կարծէց թէ Աթոս խենդ է :

— Չեր սենեակները քաշուեցէք ըսի — կրկնեց Աթոս — և
թոյլ տուէք որ զիսցածու ընեմ : Կ'նայիք որ իբրև ամուսին այս
խնդիրն ինձ կ'պատկանի : Մինակ, տ' Արդանեան, եթէ չես կո-
րուսած, ինձի յանձնէ այն թուղթն որ մարդուն դլխարկէն ըն-
կաւ, և որուն վրայ զեղի մ' անուն զրուսած է . . . :

— Ա՛ս — ըստ տ' Արդանեան — կ'իմանամ, այն իր ձեռօքը
դրուսած անունը . . . :

— Անսայիս ուրեմն — ըստ Աթոս — որ երկինք Ամոռած մը
լոց :

իգ.

ԿԵՐՄԻՐ ՎԵՐԲՈՒԹԻՒՆ ՀԱԳԼՈՒ ՄԱՐԴԻ

Աթոսի յուսահատութեան յաջորդեր էր ծանր վիշտ մ'որ այս
մարդուն մտային յատկութիւններն աւելի ևս փայլուն կ'գործէին
Քոլորովին մէկ մտածումով համակուած, այսինքն ըրած խոս-
ուումով և իր վրայ առած սրատախանատութեամբը, ամենէն
եաք ինք սենեակը քաշտեցու, ազաշեց պանդոկապեան որ իրեն
դառանին մէկ աշխարհացոյցը բերէ, անոր վրայ զլուխը ծռեց,
քաշտած դիձերը քննեց, զիտեց որ չորս հատ տարրեր տար-
րեր ճամբաներ Արմանափեր կ'տանին, և սպասաւորները կանչել
առաւ :

Քլանչէ, Կրիմօ, Մուսքոն և Պաղէն ներկայացան և Աթոսի
բացայատ, Հշդրիս և ծանր հրամանները ստացան :

Հետեւեալ օրը՝ կւանի այս չորս սպասաւորները ճամբայ պիտ-
ուի ելնեին և Արմանափեր պիտի դիմէին, իւրաքանչիւրը զատ
ճամբուլ։ Քլանչէ որ ամենէն խելացին էր, պիտի բռնէր այն
ճամբան որմէ չորս բարեկամներու հրացան քաշտած կառքը զացեր
էր, և ինչպէս ընթերցազը կ'յիշէ, նոշվօրի սպասաւորն անոր
մէջն էր :

Աթոս նախ սպասաւորները դործի կ'զրկէր, վասն զի այս մար-
դիին իր և բարեկամները ծառայութեան մանելէն հետէ, զիտեր
էր որ ամեն մէկը տարրեր տարրեր և էական հանդամանաց տէր
էր :

Ասկէ դաւ՝ հարց ու փորձ ընօգ սպասաւորներ անցորդներուն
աւելի քիչ կատկած կ'ազգեն քան թէ իրենց տէրերը, և աւելի
համակրութիւն կ'զանեն անոնց կողմէ :

Աերջապէս Միլէափ անոնց տէրերը կ'հանչէր , մինչդեռ սպառ ստորիներն իրեն անծանօթ էին . ընդ հակառակն՝ սպառաւորները քաջ կ'հանչէ ին Միլէաին :

Միւս օրը ժամը տասն մէկին ամենքը պիտի միանային . եթէ Միլէափին ընակորանը դանէին՝ երեքնին զայն սպահանելու պիտի մային , չորրորդը ունի միւս պիտի դառնար Աթոսին աղդ տառ և չորս բարեկամներն առաջնորդել :

Այս կարդագրութիւններն ընելն ետեւ՝ սպառաւորներն այլ ըստ կարդի իրենց տեղը քաշուեցան :

Այս առեն Աթոս իր աթուէն ելաւ , սորը մէջքէն կապեց : Վերարկուին մէջ փաթթուեցաւ և պանդոկէն գորս ելաւ . զընթէ ժամը տասն էր : Արդէն յայտնի է որ գտառներու մէջ փողոցները ն ժամը տասին շատ մարդ չանցնիր : Սակայն Աթոս յայտնագէս մէկը կ'փնտուէր որպէս զի անոր հարցում մ'ընէ : Ի վերջէ յետամեաց անցորդի մը հանգիպեցաւ , անոր մօտ զնաց և անոր քանի մը խօսք ըստ . այն մարզն որուն կ'խօսէր սարսափելով ետ ետ քաշուեցաւ , բայց հրացանակրին խօսքին նշան մ'ընելով սպառասիսնեց : Աթոս այս մարզուն հինդ Փրանք տուառ որպէս զի իրեն ընկերանայ , բայց մարզը մերժեց :

Աթոս մոտաւ արտորնօք այն փողոցը զոր մարդն իր մասովք ցոյց տուեր էր . բայց քառուղին մը համեմելով նորէն կանկ առ ուստ և յայտնապէս կ'երեւէր որ բանելիք շուխը շղիտէր : Բայց որովհեան՝ ամէն տեղէ տեւլի՛ քառուղին իրեն յոյս կ'տար որ մէկու մը կ'հանդիսի , նոյն վայրը կոյ առաւ : Արդարեւ՝ որահ մ'եաք՝ դիշերապահ մ'անցաւ : Աթոս՝ առջի հանդիպած մարզուն ըրած հարցումն անոր ալ կրկնեց , դիշերապահը նոյն սարսափը յայտնեց : Աթոսին ուղեկից լինելու մերժեց և ձեռօք ցոյց տուառ հետևելիք համբան :

Աթոս ցոյց արտած կողմը դարկաւ և քաղքին ծայրը գանուած տուանը հասաւ , որ իր և բարեկամներուն մտած փողոցին ներհակ կողմն էր : Այս տեղ նորէն մտաւանջ և շփոթած երեցաւ և երրորդ անդամ կեցաւ : Բարեբաղգօրէն մուրացկան մը կ'անցնէր :

Ալեսին մօտենալով ողորմութիւն խնդրեց : Աթու սկսուած մը խռովացու անոր եթէ իրեն զայցած տեղը հետև երթար : Մորացիանը ու պահած մը վարանեցաւ , սակայն երբ ստակը տեսուած՝ որ մոթին կ'փայլէր , միտքն եղաւ . և Աթոսին առջեկն քալեց :

Երբ փողոցին անկիւնը հասան՝ հեռուեն ցցոց անոր առանձին , միայնակ , տիսուր և փոքրիկ տուն մը . Աթոս մօտեցաւ՝ մինչ զեռ մուրացկանը՝ որ իր վարձքն առեր էր , ոտքը վերցնելով արտորնագ կ'հեռանար :

Աթոս նոյն տան շրջանն ըրաւ՝ որպէս զի կարմիր գոյնին մէջ տեղ՝ որով նոյն տունը ներկուած էր , դուռը դանէ . փայտեայ փեղկերուն ծերպերէն լոյս չէր երեկը բնաւ , ամենեին ձայն մը չլուռելուն կ'կարծուէր թէտէ անդնակ էր , և իրօք զերեզմանի պէս սղալի և անձայն էր :

Աթոս երեք անգամ՝ զուռը զարկաւ և պատասխան չընդունեց : Ստելայն չորրորդ անգամ զարնելուն՝ ներսէն սաքի ձայներ լսուեցան . իւ վերջէ զուռը կիսովին բացուեցաւ , և բարձրահասակ , դունաւ , սեամօրուս և սեահեր մարդ մ'երևացաւ :

Աթոս և այն մարդն իրարու քանի մը խօսք ըսին մեղմիկ , յետոյ բարձրահասակ մարդը նշան ըրաւ . հրացանակիրին որ կընար ներս մտնել : Աթոս այս հրաւէրն իսկայն կատարեց և դուռն իր վրաց զոցուեցաւ :

Այն մարդը զոր Աթոս այնքան հեռուէն գալով մէծ զժուարութեամբ զաեր էր՝ հիւրն իր զործարանը մացոց՝ ուր երկաթէ թելերով կիմախրի մը շաշող տոկուները կապելու կ'պարապէր : Երդէն բոլոր մարդինն իրարու կցեր յարգարեր էր . մինակ զլուխը սեղանի մը վրայ կ'երեար :

Կահ կաբասիէն յօյտնի կ'երեւէր որ այն մարդը՝ որուն տունը կ'զտնուէր հրացանակիրը՝ բնական զիսութիւններով կ'զբաղէր . օձերով լեցուն զորակներ կային՝ ըստ տեսակի թուաղրեալ . չորսած մողեղներ՝ սև փայտերու մէջ փարացրուած զմրուխտի պէս կ'շողցին . վերջապէս վայրի խոսերու տրցակներ , որ հուսակա էին և անշուշու ռամկին անյայտ յատկութիւններ ունէին , ձեզու

նէն կախուած էին և սենեկին անկիւններէն կ'իջնէին : Ասկէ զայ ոչ ընտանիք կար և ոչ սպասարկներ . բարձրահասակ մարդը մինակ կ'ընակէր այն առն մէջ :

Սթոս պաղ և անտարրեր աչք մը նետեց մեր այս նկարագրած իրերուն վրայ , և իր վիճակած մարդուն հրաներին վրայ անոր մօտ նստաւ :

Այն ասեն իր այցելութեան պատճառն և խնդրած ծառայութիւնն անոր բացարեց . բայց այն ինչ իր խնդիրն առաջարկեց՝ որ անծանօթը , որ հրացանակրին առջև կանդուն կեցեր էր սարսափելով ընկրթեցաւ և մերմեց : Այն ասեն Սթոս զրադանէն հանեց փոքրիկ թուղթ մ'որուն մէջ երկու տող դրուած էր ստորագրութեամբ և կնիքով մը , և այն դիմադրութեան նշանները փոքր ինչ անխորհուրդս ցոյց տուող մարդուն ներկայացուց : Այն ինչ բարձրահասակ մարդը կարդաց այն երկու տողը , ստորագրութիւնը տեսաւ և կնիքը ճանչեց՝ որ ծուեցաւ ՚ի նշան թէ ընդգիմութիւն մը շոնի ընելու , և թէ հնագանդելու պատրաստ է :

Սթոս ուրիշ բան չփնտեց . ուզ ելու , բարեեց , դուրս եւլու , իր եկած ճամբան բռնեց դառնալու համար , պանդոկը մուտ և իր սենեկակը վակուեցաւ :

Այդուն՝ ո՞Յըդանեան Սթոսին խոցը մուտ և հարցոց թէ ինչ ընել ողէ ուզ :

— ողէ աք և սպասել — սրատասխանեց Սթոս :

Քոնի մը վայրիեան ետք՝ մեծաւորուհին խմաց տուաւ հրացանակիրներուն որ թաղումը կէս օրին պիտի կատարուի : Իսկ թունաւորող կնոջ գալով՝ բնաւ լուր մ'առած չէին . սա յայտնի էր միայն որ պարտիզին մէջէն խոյս տուեր էր , որուն աւազին վրայ իր տակոց հետքը ճանչեր էին , և որուն դուռը զոյ գտեր էին . իսկ բանալին աներեւոյթ եղեր էր :

Որոշեալ ժամուն՝ լորա Վինդը և չորս բարեկամներ վանատունը զացին . զանդակները միաձայն կ'հնչէին , մաստուը բաց էր , դասին վանդակը դոց : Մեռելին մարմինը՝ իր նորընծայուհիի հազորատի զասին մէջ դրուած էր : Դասին ամէն մէկ կողմին ու

վանդակներուն ետեք կեցեր էին բոլոր Կարմէլեան միանձնուհիները, որ անկից պատարագ կ'լսէին, և իրենց երգը քահանայից երգերուն կ'խառնէին, առանց աշխարհականները տեսնելու և առանց անոնցմէ տեսնուելու :

Պատուին դրան առջեւ մ'Արդանեան զդաց որ նորէն արիութիւնը կ'կարուսէ, Աթոսը փնտուելու դարձաւ, բայց Աթոս աներեցի եղեր էր :

Իր վրէժինգրութեան պաշտօնին հառատարիմ՝ Աթոս պարտէզը զացեր էր, և այն տեղ՝ աւազին վրայ՝ ամէն անցած վայրէն արեան հետք մը ձգող կնկան թեթև քայլերը քննելով՝ անտառին վրայ բացւող դուռը հասաւ, զայն բանալ տուառ և անտառը մտաւ :

Են ատեն իր բոլոր կասկածները հաստատուեցան, այն շաւիզն որմէ կառքն աներենյթ եղեր էր՝ կ'ըրջապատէր անտառը : Աթոս աշերը դետին անկած՝ բաւական ատեն ճամբան շարունակեց. արեան թեթև արատներ՝ որ՝ իբրև սուրբհանդակ՝ կառքին ընկերացող մարդուն կամ ձիուն առած վերքէ մը կ'հոսէր անշառ՝ շատիղը կ'բծէր : Գրեթէ մղոնի մ'երեք քառօրդ մասը քաշելէն և Գէսդիպէրդէն յիսուն քայլ հեռու հասնելէն ետեն՝ Աթոս առելի լայնարեան արատ մը տեսաւ. նոյն վայրը հողը ձիերուն գասկրէն շարժեր էր : Անտառին և այս մատնու վայրին մէջ տեղ, և խարիլած հողէն փոքր ինչ ասդին, դարձեալ կը տեսնուեին պարտէլին մի և նոյն թեթև քայլափոխները, կառքը կանկ առեր էր :

Նոյն վայրը՝ Միլէտի անտառէն դուրս ելեր և կառքը հեծեր էր :

Գոհ լինելով այս զիւտէն՝ որ իր բոլոր կասկածները կ'պնդէր, Աթոս պանդոկը դարձաւ և այն տեղ՝ Բանշէն զտաւ որ իրեն կ'սպասէր անհամբեր :

Ամէն բան Աթոսին զտշակած կերպով էր :

Քլանչէ նոյն ճամբան հետեւը, Աթոսին պէս արեան բիծերը դիտեր, Աթոսին ողէս ձիերուն կանկ առած վայրը տեսեր էր,

բայց Աթոսէն աւելի հեռու քշեր էր, այնպէս որ Ֆէտիագէրդ զեղը՝ զինետան մը մէջ զինի խմբու ատենը՝ առանց հարց ու փորձ ընկըու ողէ ափն զզալու, իմացեր էր որ առջե իրկունը՝ երեկոյեան ժամն ութը կէսին՝ վիրաւոր մարդ մը՝ որ կառքով ճամբորդող կնկան մը կ'ընկերանար, սահպուեր էր օթեան առնելու։ վասն զի չէր կրցեր աւելի առաջ քշել։ Այս զիագուածը վերացրեր էին զողերու, որպէս թէ անտառին մէջ կառքը կեցուցած լինին։ Մարդը զեղը մնացեր էր, իսկ կինը նոր ձիեր լծել տուեր և իր ճամբան շարունակեր էր։

Բլանչէ կառքը վարող կառապանը զտնելու ելաւ և զանի զտաւ։ Տիկինը մինչև Ֆրումէլ առաջնորդեր և անկից նա Արմանափէր զնալու ուղի ընկեր էր։ Բլանչէ կարուկ ճամբայ մը բլունելով՝ առաւօտեան ժամը եօթին Արմանտիկը հասաւ։

Պանդոկ մը միայն կար, այն էր Բօստի պանցոկը։ Բլանչէ իրու անգործ ծառայ ներկայացաւ և պաշտօն խնդրեց։ Ճազիւթէ սպանդոկին մարդոց հետ տաս վայրկեան խօսքի բռներ էր, որ իմացեր էր թէ երեկոյեան ժամը տասն մէկին կին մը հասեր էր մինակը, սենեակ մը բռներ էր, և պանդոկապետը կանչել ուալով յայտներ էր թէ փափաք ունի քիչ մ'ատեն շրջակաները բնակիւլու։

Բլանչէ ասկից աւելի բան մ'իմանալու պէտք շուներ։ Խսկոյն ժամանքու թեան տեղը վաղեց, երեք սպասաւորներն իրենց որոշեալ տեղը զտաւ անվիշտ, սպանդոկին բոլոր ելից կողմերն իրեն պահակ կարեց զանոնք և եկաւ Աթոսը զտնելու, որ՝ իր սպասաւորին տեղեկութիւններն ընդունելու կ'աւարտէր, երբ իր բարեկամները ներս մոտան։

Ամենուն գէմքը տիսուր և կարկամ էին, նոյն իսկ Արամիսին անուշ դէմքը։

— Ի՞նչ պէտք է ընել — հարցոց տ'Արդանեան։

— Սպասել — սպասասիսնեց Աթոս։

Ամէն մէկն իր խոցը քաշուեցաւ։

Երեկոյեան ժամը տասին՝ Աթոս հրաման տուաւ ձիերը Բամ-

բարտ, և կանխառ իրացոց լորս Ալինդը և իր բարեկամներուն
որ արշաւանին պատրաստ դանուին :

Մէկ վայրկենի մէջ հինգ հոգին ալ կազմ ու պատրաստ ե-
ղան : Խւրաքանչիւրն իր զէնքը քննեց և կարզի դրաւ : Աթոս ա-
մենէն վերջը վար իջաւ և ա'Արդանեանն արդէն ձիու վրայ դատա-
սրուն համբերութիւնը կ'հատնէր :

— Համբերութիւն — ըստ Աթոս — տակաւին մէկը պակաս է :

Չորս ձիաւորներն իրենց բոլորտիքը նայեցան զարմանօք, վասն
զի ՚ի զար կ'փնտուէին մտովին՝ թէ ով կրնար լինիլ բացակայ
գտնուողը :

Նոյն պահուն Բլանշէ Աթոսին երիվարը բերաւ . Հրացանա-
կիրը թեթեակի թամբին վրայ ցատկեց :

— Սպասեցէք ինձ — ըստ նաև — հիմարկ կ'դառնամ :

Եւ արագօրէն ճամբայ ելաւ :

Քառորդէ մ'ետք՝ իրօք դարձաւ մարդու մը հետ որ դիմակ
դրեր և կարմիր մեծ վերարկու մը հագեր էք :

Առա Ալինդը և երեք հրացանակիներն ակնարկով իրարտ.
Հրացումներ կ'ուղղէին : Ա'չ ոք կարող եղաւ իր ընկերին տեղե-
կութիւն մը տալ այս մասին, վասն զի ամենքն անտեղեակ էին
թէ ով էր այս մարդը : Սակայն մտածեցին որ այս այսպէս պարա
էր լինիլ, վասն զի Աթոսին հրամանաւ կ'կատարուէր ամէն բան:
Ժամն իննին՝ Բլանշէի առաջնորդութեամբ, սակաւաթիւ այրու-
ձին ճամբայ ելաւ, կառքին բռնած ճամբուն հետեւլով :

Տիսուք տեսարան մ'է ու տեսնել այս չորս մարդկան լուս թեամբ
արշաւելը՝ խւրաքանչիւրն իր մտածութեան մէջ ընկղմած, յու-
սահատութեան ողէս սպալի, պատժոյ ողէս թախծազին :

Ի՞Ռ

FESTIVUS:

Մըրոկալի և մութ զիշեր մ'էր, խոշոր ամսվեր երկնից երեսը
կ'վազէին աստղերուն փայլութիւնը սքօղելով. լուսինը կէս զիշե-
րին պիտի ելնէր :

Երբեմն՝ հորիզոնին վրայ շողացող փայլակին նշյլէն՝ կ'տես-
նուէր ձամբան՝ որ սպիտակ և մնաւոր ուղևորներուն առջև կը
պարզուէր. յետոյ՝ փայլակը մարելով ամէն ինչ մթութեամբ կը
պատէր :

Ամէն վայրկեան՝ Աթոս ա՛Արդանեանը կ'կոչէր՝ որ միշտ փոք-
րիկ դնիին դլուխը կ'անցնէր, և կ'ստիակէր զանի իր կարգէն
գուրս չելնելու, թէեւ պահակէ մը նորէն կարդը կ'թողուր, և
մտմոսք մը միայն ունէր, այս է ընդ առաջ քալել, և կ'քալէր:

Լուսինեամբ անցան Ֆէսդիապէրդ զեղէն՝ ուր վերաւոր սպա-
սաւորը մնացեր էր, յետոյ Թիլացուրի անտառէն ուղղակի քշե-
ցին, և երբ Հէրլիէ հասան, Քլանչէ՝ որ միշտ զունդը կ'առաջ-
նորդէր՝ ձախ կողմը դարկաւ :

Քանի քանի անզամ՝ թէ լորտ Վինդը, թէ Բորթօս, թէ
Արամին՝ կարմիր վերարկուով մարդուն հետ խօսելու փորձ փոր-
ձեր էին, բայց ամէն անշամուն որ հարցում մ'ըրեր էին՝ զլո-
խը ծռեր էր առանց պատասխան տալու: Այն ատեն ուղեորները
հասկցեր էին որ անծանօթն անշուշա լուռ մնալու պատճառ մը
պիտի ունենար, և վերստին անոր խօսք մը չէին ուղղեր :

Այլ սակայն, մըրիկը կ'աւելնար, փայլակներն իրարու կ'յա-
ջորդէին, երկին սփաեր էր որոտալ՝ և հովն՝ իրբեկ կարապետ փո-
թորկին, ձիաւորներուն փետուրներուն և մազերուն մէջ կ'սուլէր:
Այրուձին սկսաւ վաղ ընդ վաղ յառաջանալ:

Փրօմէ լէն փոքր ինչ հեռու մրրիկն ակաս . ամենքն իրենց վերարկուները բացին , զեռ ևս երեք մղոն տեղ կար քալելու . անձրեի հեղեղներու ներքե այս ճամբան կարեցին :

Տ'Արդանեան իր թաղեայ գլխարկն հաներ էր և վերարկուն չեր դժեր . ախործ կ'զգար քանի իր հրատապ ճակտին , և ջլամիդ սարսուռներով վրգովեալ մարմեոյն վրայ ջուրը կ'հոսէր :

Այն պահուն որ փաքրիկ դունդը կօպալէն անդին անցեր՝ թղթատունը պիտի հասնէր , մարգ մ'որ ծառի մը տակ սքլեր էր՝ կոճղէն հեռացաւ , որուն հետ մոթին միացած կ'երևէր՝ և մինչև ճամբուն մէջ տեղը յառաջացաւ , իր մատը շրթերուն վըրայ գնելով :

Աթոս ճանչեց իր Արիմօն :

— Ի՞նչ կայ արդեօք — զուեց տ'Արդանեան — արդեօք մեր փնտուածն Արմանտիէրէն մեկներ է :

Արիմօ իր զլիով հաստատական նշան մ'ըրաւ : Տ'Արդանեան ակուաները կրծտեց :

— Լոռութիւն , տ'Մըրանեան — ըստա Աթոս — ևս ամէն բան իմ վրայ տոի , որեմն ինձի կ'ընկնի Արիմօն հարց ու փորձ ընելու :

— Ուր է նա — հարցոց Աթոս :

Արիմօ իր ձեռքը Լիս զետակին կողմը տարածեց :

— Ասկից հեռու է — հարցոց Աթոս :

Արիմօ իր ծալլած ցուցիչ մատը ներկայացուց :

— Մինակ է — հարցուց Աթոս :

Արիմօ հաստատական նշմայր մ'ըրաւ :

— Պարոններ — ըստա Աթոս — մինակ է նա և ասկից կէս մղոն հեռու գետին ուղղութեամբը :

— Լաւ — ըստա տ'Արդանեան — մեղ այն կողմն առաջնորդէ , Արիմօ :

Արիմօ շեղակի ճամբաներ բռնեց և զնիին ուղեցոյցի պէս օգնեց :

Գրեթէ հինգ հարիւր քայլ անիին՝ զետակ մը դտան և անոր հունէն անցան :

Փայլակի մը լուսով Լնկինկէմի գեղը տեսան :

— Միթէ այս է , Կրիմօ — հարցուց Աթոս :
Կրիմօ բացատական կերպով իր զլուխը թոթուեց :

— Ուրեմն լութիւն — ըստ Աթոս :

Եւ զունդն իր ճամբան շարունակեց :

Ուրիշ փայլակ մը շողաց . Կրիմօ թեն երկնցուց՝ և օձապտոյտ
շանթին նշոյլովը մենառը փոքրիկ տուն մը նշմարեցին՝ զետին
եզրը , լաստէ մը հարիւր քայլ ասդին :

Պատուհան մը լուսառորուած էր :

— Հասանք — ըստ Աթոս :

Նոյն պահուն՝ փոսին մէջ պառկած մարդ մ'ուտք ելաւ , այս
էր Մուգդօն . լուսառոր պատուհանը ցցուց իր մատովը :

— Անդ է նա — ըստ :

— Հապա Պաղէն՝ հարցուց Աթոս :

— Մինչդեռ ես պատուհանը կ'պահպանէի , Պաղէն դունը
կ'պահպանէր :

— Լաւ — ըստ Աթոս — դուք ամենքնիդ հաւատարիմ ծառ
ռաներ էք :

Աթոս ձիէն վար ցատկեց և սանձը Կրիմօի ձեռքը տալով դէռ
'ի պատուհանը զնաց՝ դրան կողմը դառնալու համար իր ընկերակիցներուն նշան ընելէն եռք :

Փոքրիկ տունն երկու երեք ռութք բարձր ցանկով մը պատած
էր . Աթոս ցանկէն անցաւ , վազեց պատուհանը՝ որ փեղկեր չունէր , և որուն կէս վարագոյըները Ճշղիւ քաշուած էին :

Քարին եղբին վրայ ելաւ , օրսէս զի վարագոյըրին վերի կողմն
իր աչօքը նայի :

Կանթեղի մը լուսով՝ դիտեց կին մ'որ մթագոյն լօդիկով մը
փաթթուած՝ աթոռակի մը վրայ բազմեր էր մարող կրակի մը
մօտ . իր արմուկներն անշահ սեղանի մը վրայ դրեր և իր զլուխը
փղոսկրի պէս սպիտակ ձեռներուն մէջ առեր էր :

Իր դէմքը չէր տեսնուեր . բայց շարագուշակ ժպիտ մ'անցաւ
Աթոսի շրթերէն . սխալմոնք չկար , Ճիշտ իրենց փնտուած անձն
էր նա :

Նոյն որահուն ձի մը վրնջեց . Միլէտի զլուխը վերուց՝ սպակիին փակած տեսա՛ Աթոսի դոնատ դէ մըն և Ճիկ մ'արձակեց :

Աթոս հասկցաւ որ ճանչցուեր էր , ծնկովը և ձեռքովը սպատուհանը հրեց , պատուհանը բացուեցաւ , ապակիները խորսակեցան :

Եւ Աթոս՝ վրէ ժինկրութեան ուրուականի այէս՝ սենեկին մէ ջցատկեց :

Միլէտի զուը վազեց և բացաւ . Աթոսէն աւելի զոնատ և սպատուհալից կանգուն կ'մնար տ'Արդանեան գրան սեմին վրայ :

Միլէտի եա քաշուեցաւ . Ճիկ մը հանելով : Տ'Արդանեան կարծելով թէ խոյս առալու հնար մ'ունէր Միլէտի և վախնալով որ իրենց ձեռքէն չփախչի , զօտիէն հրացանակ մը հանեց , բայց Աթոս ձեռքը վերցուց :

— Այդ զէնքը տեղը դիր , տ'Արդանեան — ըստ նա — հարկ է որ այս կինը զատուի և չէ թէ սպաննուի : Պահ մ'ես սպասէ , տ'Արդանեան , և զոհ պիտի լինիս : Կերս մուտք , որարտներ :

Տ'Արդանեան հնազանդեցաւ , վասն զի Աթոս հանգիստ որ ձայն մը և նոյն խակ ՚ի վերտուս առաքեալ զատաւորի մը հզօր ներգործութիւնն ունէր : Ուստի տ'Արդանեանի ետեւէն՝ ներս մտան բորբոս , Արամիս , լորա Վինդը և կարմիր վերաբիուով մարզը :

Զօրս սպատաւորներն զուռն ու պատուհանը կ'պահպանէին :

Միլէտի իր աթոսին վրայ ընկեր էր՝ ձեռները տարածած՝ այն սոսկալի երեսյթին առաջն տանլու համար . իր սայզը տեսնելով՝ ահռելի աղաղակ մ'արձակեց :

— Ի՞նչ կ'աղէք — դոչեց Միլէտի :

— Կ'աղէնք — ըստ Աթոս — Շարլոտ ունքոնք , որ նախ լաֆէր կոմնուհի կոչուեցաւ , յիշոյ լէտի Վինդը , Շէֆիլատ պարնուհի :

— Ես եմ , Ես եմ — մըմնաց նա յիտին ծայր սարսափած — Ի՞նչ պիտի ընէք զիս :

— Քո յանցանաց համեմատ՝ պիտի դատենք քեզ — ըստ Աթոս . — աղաս ևս ինքզինքդ պաշտպանելու . ինքզինքդ արդա-

բացնուր, եթէ կարող ես: ո՛. տ' Արդանեան ամենէն տուած դու
ամբաստանութիւնք պիտի յայտնես:

Տ' Արդանեան յառած անցաւ:

— Աստուծոյ և մարդկան առջեւ — ըստ նա և կ' ամբաստա-
նեմ այս կինը Գոհաստանս Պօնասիէօն թունաորելուն, որ եթէ կ
իրկուն մեռաւ:

Ցեաց դէպ ՚ի Բորթոս և Արամիս գարձաւ:

— Կ' վկայենք — ըսին երկու հրացանակիրները միաբերան:

Տ' Արդանեան շարունակեց.

— Աստուծոյ և մարդկան առջեւ՝ այս կինը կ' ամբաստանեմ՝ զիս
ևս թունաորել ուզելուն՝ Վիլուսային սուտ նումակաւ մ' ինձ զըր-
կած զինխովը՝ իրը թէ զինին բարեկամեերուս կողմէն կ' զար ինձ.
Աստուծ սպատեց դիս. բայց իմ տեղս ուրիշ մարդ մը մեռաւ,
որուն անունն էր Պրիզմն:

— Կ' վկայենք — ըսին նոյն ձայնով Բորթոս և Արամիս:

— Աստուծոյ և մարդկան առջեւ՝ այս կինը կ' ամբաստանեմ՝ որ
զիս ո՛. Վարդը սպանելու մզեց, և որովհետեւ ոչ ոք կ' զըր-
նոի ասս սոյն ամբաստանութիւնն հաստատելու, ես ինքս կը
հաստատեմ:

— Լմեցոցի:

Եւ տ' Արդանեան՝ Բորթոսին և Արամիսին հետ սենեկին միւս
կողմն անցաւ:

— Կարդը քուկդ է, միլորտ — ըստ Աթոս:

Մեպուհն ըստ կարդի մօտեցաւ:

— Աստուծոյ և մարդկան առջեւ — ըստ նա և կ' ամբաստա-
նեմ այս կինն որ Պրքինկչէմի դուքսը սպաննել տուաւ:

— Պրքինկչէմի դուքսը սպաննուած — զուեցին միաձայն բո-
լոր հանդիսականները:

— Նյու — ըստ սեպուհը — սպաննուած : Զեր ինձ զըկած
ազդաբար նամակին վրայ՝ այս կինը ձերբակալ ընել տուեր էի,
և հաւատարիմ սպասառորի մը պահպանութեան յանձներ էի,
այս կինը զլիսէ հանեց սպասառորս և դաշյնն անոր ձեռքը տուաւ,

և անոր ձեռօք զտքսը սպաննեց, և կարելի է այս միջոցին ԳԵԼ-
տօն իր զլխովը կ'զնարէ այս կատաղի կնկան ոճիրը :

Դրատաւորները սարստու մ'զգացին երբ իմացան այս տակաւին
անցայա ոճքարդործութիւնները :

— Այս բաւական չէ — վրայ բերաւ լորտ Վինդր. — եղ-
բայրո՞ որ քեզ իր ժառանգուհին ըրեր էր, երեք ժամու մէջ մե-
ռաւ աւարօրինակ հիւանդութիւնէ մ'որ իր բոլոր մարմնոյն վրայ
կապոյա նշաններ ձեց : Քայր իմ, երիկդ ինչպէս մեռաւ :

— Քստմելի՞ բան — զուշեցին Բորթոս և Արամիս :

— Պըքինկէմի սպաննիչը, ԳԵԼտօնի սպաննիչը, եղբօրս ըս-
պաննիչը, քեզի զէմ արդարութիւն կ'պահանջեմ, և ահա կը
յայտնեմ որ եթէ արդար դատ մը չտեսնեն, ես իմ ձեռօքս
դատս պիտի տեմնեմ :

Եւ լորտ Վինդր ա՛Արգանեանի մօտ զնաց կենալու, ուրիշ
ամբաստանի մը տեղի տալով :

Միլէտի իր երկու ձեռաց մէջ դլուին տուաւ և մահացունչ
ցնորքէ մը շփոթած դաղլափարմերը յիշելու ջանք ըրաւ :

— Իմ կարդս է — ըստ Աթոս գողալով և ինք՝ ինչպէս որ
առիւծը կ'դողայ օձին տեսքէն — իմ կարզս է : Այս կնկան հետ
կարդուեցայ երբ տակաւին նորահաս աղջիկ մ'էր, իմ բոլոր ըն-
տանիքիս կամաց հակառակ, կարգուեցայ . իմ ինչքս տուի անոր,
տուի անոր իմ անունս, և օրին մէկը տեսայ որ այս կինն ա-
ղարտած է : Այս կնկան ձախ ուսին վրայ շուշանի խարան մը
կար :

— Ո՛հ — ըստ Միլէտի ուր ելնելով — եթէ կարող ես ե-
լիր գտիր այն ատեանն որ այս վասանուն վճիռն ինձի զէմ ար-
ձկած լինի : Եթէ կարող ես, ելիր գտիր այն մարդն որ նոյն
վճիռն 'ի զործ զբած լինի :

— Կռութիւն — ըստ ձայն մը : — Այդ բանին՝ ինձ կ'ընկնի
պատասխանել : Եւ կարմիր վերարկուով մարդն ըստ կարզի մօ-
տեցաւ :

— Ո՛վ է այս մարդը, ո՞վ է այս մարդը — զուեց Միլէտի

սարսափէն խեղդուելով, և որուն մազելը քակուեցան և իտուառ-
դոյն զլիսին վրայ տնկուեցան իբրև թէ կենդանի լինէին :

Ամենուն աշքն այս մարդուն վրայ դարձան, վասն զի՞ Աթա-
սէն զատ՝ ամենուն անծանօթ էր :

Քայց միւներուն չափ Աթու ևս ասլութեամբ անոր երեսը իւ
նայէր, վասն զի չզիտէր թէ ինչպէս այս մարդը կրնար մատ
ունենալ այն սոսկալի եղերական զործին մէջ՝ որ նոյն միջոցին 'ի
հանդէս կ'ելնէր :

Ծանր ու հանդիսաւոր քայլով մը Միլէ աիին մօտենալէն ե-
տեւ՝ այնպէս որ սեղանով միայն կ'զատուէր Միլէ աիին, անծա-
նօթն իր գիմակը հանեց :

Միլէտի ևս քան զես տարսափելով պահ մը նկատեց այս զու-
նաս և ուե մազերով ու կիսամօրուով շրջապատեալ զժզոյն դէմ-
քը՝ որուն միակ երեսյթն էր ստուազին անվշտութիւն մը . յե-
տոյ յանկարծ,

— Ո՛հ, ո՛չ, ո՛չ — ըստ նա ոտք ելնելով և մինչեւ պատեց այս զու-
նաս կրկելով — ո՛չ, ո՛չ, դժոխային երեսյթ մ'է այս . ինք չէ՛ : Հա-
սէք, հանէք — զուշեց նա խոպոտ ձայնով մը դէպ ՚ի պատը
դառնալով՝ որպէս թէ ձեռքովն ելք մը բանալ կ'ուզէր :

— Քայց ով ես դու — զուշեցին այս տեսարանիս ներկայ զըտ-
նուողները :

— Այս կնկան հարցոցէք — ըստ կարմիր վերարկուով մար-
դը — վասն զի կ'տեսնէք որ նա զիս ճանչեց :

— Լիլ քաղքին, Լիլ քաղքին դահիճը — զուշեց Միլէտի
խօլական տարսափով մը համակուած և ձեռներովը պատը ճան-
կըրդելով՝ որպէս զի վար չընկնի :

Ամենօթը հեռացան, և կարմիր վերարկուով մարդը սրահին մէջ
տեղ տուանձին մնաց :

— Ո՛հ, շնո՞րհ, շնո՞րհ, ներողութիւն — զուշեց թշուառուհին
ծունը ընկնելով :

Ըսծանօթը սպասեց որ լուութիւն հաստատուի :

— Արդէն ըսեր էի ձեզի որ զիս ճանչեց — պատասխանեց

նա : — Այս , եւ Ա.իլ քաղքին դահիճն եմ , և աչոռասէի իմ պատմոթիւնս :

Ամենուն աչքն այս մարդուն վրայ ուենած էին և անչափ անձկո թեամբ անոր խօսքերուն կ'սպասէին :

« Այս նորատի կինն ատեն մը նորատի աղջիկ մ'էր այնչափ դեղանի որչափ որ է այսօր : Դանըլմարի ունէ աֆկտեան - կուսանց վանքը կրօնուի մ'էր : Պարզպիրու և կրօնասէր դեռահասակ քահանայ մը վանքին եկեղեցին կ'սպասառորէր . այս կինը միաքը դրան զանի հրապուրելու և յաջողեցաւ , սուրբ մ'անդամ հրապուրելու կարող է :

« Երենց ո խոր նուիրական , անդառնալի էր . իրենց յարաքերութիւնը չէր կրնար երկար տեսել առանց երկուքն ալ 'ի կորուստ մասնելու : Անոր միտքն ըրաւ նոյն երկրէն խոյս տալու , բայց նոյն տեղէն ելնելու , միտքին խոյս տալու , Ֆրանսայի ուրիշ մէկ կողմն երթալու և անյայտ մնալով հանդարստ ապրելու համար՝ ստակ պէտք էր . ոչ մին ունէր ոչ միւսը : Գահանայն սուրբ անօթներ դողցաւ և ծախոց , բայց մինչդեռ կ'պատրամատէին միասին փախչելու , երկուքնին ալ բռնուեցան :

« Աւթ օր եսոք՝ բանտառահին որդին հրապուրելով՝ բանտէն փախօսէր էր : Նորահասակ քահանան սաստ տարուան թիւրանի և խարանի գատապարտուեցաւ : Աիլ քաղքին դահիճն ես էի , ինչ պէս որ ըստ այս կինը : Ստիորուեցայ յանցաւորը խարանել , և այն յանցաւորը , պարաններ , իմ եղբայրս էր :

« Այս ատեն երդումը ըրի որ անոր կորստեան պատճառ եղող այս կինը որ իր յանցակիցը չէր միայն , քանի որ նոյն յանցանքին դրգուղն ինքն էր , զէթ նոյն պատժին մասնակից լինիլ պէտք էր : Իմացայ անոր պահուած տեղը , ետեւն զայի , զանի բոնեցի , կապեցի և եղբօրս դրոշմած խարանս անոր ևս դրոշմեցի :

« Աիլ գառնալու հետեւալ օրը՝ ելրայրս ալ յաջողեցաւ խոյս տալու , զիս իրը անոր գառակիցն ամբաստանեցին և անոր տեղ բանտ մնալու գատապարտուեցայ՝ մինչև որ անձամբ զալով կալմուռոր չմնայ : Իմ խեղչ եղբայրս այս գատաստանէն անտեղեակ

Էր . այս կնկան միացեր էր , ուրիփ գացեր էին միասին , և այն տեղ փոքրիկ վլխակ մը ձեռք ձգեր էին : Այս կինն իրրե իր եղբայրը կ'նկատուեր :

« Նոյն երկրին իշխանն որուն հողերուն վրայ երեցին եկեղեցին շինուած էր , այն շինովի քոյրը աւանելով սիրահարեցաւ , այնչափ որ առաջարկեց անոր հետ ամուսնանալու : Այն ատեն՝ ի կորուստ մատնած անձը մողոց այն անձին համար զոր պիտի ի կորուստ մատնէր և Լա Ֆէր կոմունի դարձաւ . . . » :

Ամենուն աշքն Աթոսին կողմը դարձան , ըստ որում Լա Ֆէր իր Ճշմարիա անունն էր , և զլիսովու նշան ըրաւ նա որ դահճին բոլոր ըսածները սույց են :

« Այն ատեն — շարայրեց դահճը — եղբայրա իբրև յիմար , յուսահատ , մտաքը դրաւ իր կենաքը զրատել , քանի որ նոյն կրնկան պատճառաւ կորուսեր էր ամէն ինչ , պատիւ և երջանկութիւն . Լիլ քաղաքը դարձաւ , և իմանալով այն վճիռն որով իր աեղդ դատապարտուեր էի , եկաւ ինքնովին շղթան առաւ և նոյն իրկուն իսկ ինքզինքը զնդանին մէջ կախեց օգամուտէ մը :

« Սակայն ովեաք է շնորհապարտ լինիլ անոնց որ զիս դատապարտեր էին , վասն զի իրենց խօսքը պահեցին : Այն ինչ զիակին նոյնութիւնը հաստատուեցաւ որ զիս արձաւիցին :

« Ահա այն յանցանքն որով կ'ամբաստանեմ ես այս կինը , ահաւասիկ այն պատճառն որով ինքը խարկած է : » :

— Պարոն ա'Արդանեան — ըստ Աթոս — ինչ պատժով կ'ուզես որ այս կինը պատժուի :

— Մահուան պատժով — պատասխանեց ա'Արդանեան :

— Միլորա Ա.ինդը — շարայրեց Աթոս — դու այս կնկան գէմ ինչ պատիի կ'պահանջնես :

— Մահուան պատիմ — պատասխանեց լորտ Ա.ինդը :

— Պարոն Բորիմու և Արամիս — վրայ բերաւ Աթոս — դոք որ անոր դատապարներն էք , այս կնկան գէմ ինչ պատիմ պիտի սնարինէք :

— Մահուան պատիմ — պատասխանեցին խոր ձայնով մ'երկու հու հրացանակիրները :

Միլէտի սոսկալի կերպավ ունաց , և ծոնկերուն վրայ ընդ շարչ երթաւով քանի մը քոյլ առաւ զէպ իր դաստուրները : Այսու իր ձեռքը զէպ անոր տարածեց :

— Շարլօդ Պէքսօն , Լա Ֆէր կտսուշի , Միլէտի Ալիսոր — ըստ նա — բու յանցանքդ երկրիս վրայ մարդիկն ու երկինքը կըստուած ձանձրացոցին : Եթէ աղօթք մը գիտես ըսէ , վասն զի դատապարտուած ես և այժմ պիտի մռնիս :

Այս խօսքերուս վրայ՝ որ իրեն յոյս մը չէին թողուր , Միլէտի սաք ելաւ կանդուն և խօսիլ ուղեց , բայց ուժաթափ մնաց . զբաց նա որ հզօր և ոիսերիմ ձեռք մը զնիքն իր մազերէն կը բռնէր և կ'քաշէր այնքան անողոքելի կերպով որ ձակասազիրը կ'քաշէ մարդը . ուստի դիմադրութիւն իսկ ընելու փորձ չփորձեց և խրճիթէն դուրս ելաւ :

Լորտ Ալիսոր , ա՞Արդանեան , Ամսոս , Բորթոս և Արտիփս առնոր ետևէն ելան : Սպասաւորներն իրենց աէրերուն հեակեցան և խուցը մնաց առանձին իր խօրտակեալ պատշաճով , բաց դռնով և ծխոտ կանթեղով որ սեղանին վրայ կ'վառէր տրտմացին :

իԵ

ԴԻ.ԽՈՒ.ՏԱԼԻԹԻՒՆ:

Դիթիթէ կէս զիշէր էր . լուսինը՝ նուազելով աղեղնաձեն . և՝ միրրին յետին նշաններին արիւնալի երեղիթ մ'առած՝ Արմանտիէր փոքրիկ քաղքին ետևէն կ'ելնէր , որ անոր տմոյն նշոյլին վրայ կ'տատանէր իր տուներուն մութ ստուերանկարն և լուսամոյն բարձր զանգակատան կմախըրը : Դիմացի կողմը՝ Լիս զետակն իր ջրերը կ'թաւալէր որ հալած կապարի կ'սմանէին , մինչդեռ միւս եզրը նշանարելի էին ծառերու սե կըստը՝ մըրկալի երկնից վրայ նկարուած՝ և պղնձագոյն խոշոր ալոգերով ծածկուած՝ որ

գիշերային մթութեան մէջ տեսակ մը հիւսիսայդ կ'յօրինէին : Չախ կողմն երեսի վրայ ձգուած ազօրի մը կ'երեւէր՝ անշարժ թերովը, և անոր փլատակներուն մէջ բուի մը սուր, շրջանաւոր և մենակերպ ձայնը կ'լսուէր : Ասդիս անդին կ'երեւէին քանի մը ցած և հաստ ծառեր՝ որ իրըն տձեւ թզուկներ սքլած կ'զիտէին նոյն չարաշոք ժամուն անցնող դարձող ողեւորները :

Աւր տրեմն բայն փայլակ մը հօրիզոնի ընդարձակութիւնը կը ծածկէր, ծառերու ստուար ուեւ կոյախին վրայ օձապտոյտ կ'սահէր և իրեւ ահռելի դաշոյն մը կ'զար ջուրն ու երկինքն երկու մասուի կ'բաժնէր : Ծանր մթնոլորախն վրայ հովի թեթև շունչ մը անզամ չէր բուրեր : Մահամիս լուսիթիւն մը բոլոր բնութիւնը կ'պատէր, զետինը տամուկ էր և սահուկ վաղած անձրեւն, և բացուած բոյսերն աւելի ուժզին կ'բուրէին իրենց անուշահութիւնը :

Երկու սպասաւորներ կ'քաշէին միլէտին՝ որուն մէն մի թեէն բռներ էին, դաշիճն ետեւէն կ'քալէր, և լորտ Վլինդը, ա'նը դանեան, Աթոս, Բորթոս և Արամիս դաշիճն ետեւէն կ'քալէին :

Բլանշէ և Պազէն ամենէն ետքը կ'զային :

Երկու սպասաւորները զետակին կողմը կ'տանէին Միլէտին : Երբ բրանը համր էր, բայց աշերն իրենց անբացատրելի Ճարտասանութեամբ կ'խօսէին՝ հետզետեւէ պաղատելով իրեն նայողները :

Մինչդեռ քանի մը քայլ ընդ առաջ կ'զտնուէր, սպասաւորներուն ըստա .

— Ձեզնէ ամէն մէկուն հինգ հարիւր սակի կ'տամ թէ որ ինձ օգնէք խոյս տալու, բայց թէ որ զիս ձեր զլխաւորներուն յանձնէք, հեռու չեն իմ վրէժինդիրներս՝ որ շատ սուղի պիտի նըստեցնեն ձեզ իմ մահս :

Կրիմօ կ'վարանէր : Մուսպօնի մարմինը լիովին կ'զողար :

Աթոս՝ որ Միլէտին ձայնը լսեր էր՝ շուտ մը մօտեցաւ, նոյնն ըրաւ և լորտ Վլինդը :

— Այս սպասաւորները հեռացուցէք — ըստ նա — անոնց հետ խօսեցաւ այս կինը, ուստի այլ ևս հաւատարիմ չեն :

Քլանչեն ու պաղենը կանչեցին, որ Կրիմսի և Մոռուրդի տեղն տավին :

Երբ զետին ափոնքը հասան՝ դահիճը Միլէտիին մօաեցաւ և անոր ոտներն ու ձեռները կապեց :

Այս առեն Միլէտի լոռթիւնը խղեց և զոշեց .

— Դուք վատ էք, դուք ապիքաստ մարդասպաններ էք. կին մը սպաննելու համար տաս հոգի մէկ տեղ կ'զաք, զզոյշ եղիք, եթէ օշնութեան համոզ մը չտնենամ, իմ վրէմս պիտի լուծեն . . . :

— Դու կին չես — ըստ Ամոս պատթեամբ — դու մարդկային սեռին չես սրատկանիք, դու դժոխքէն վախած սազան մ'ես և քեզ այժմ զմոխք պիտի զրկինք :

— Ա՛չ, դուք առաքինի պարոններ — ըստ Միլէտի — քաջ զիտէք որ իմ զիխիս մէկ մազին դպողն ալ մարդասպան մ'է :

— Դահիճը կրնայ սպաննել, առանց մարդասպան դառնալու, տիկին — ըստ կարտիք վերարկուով մարդն իր լոյն սուրբին վրայ զարնելով — այս վերջին դատաւորն է միայն. ածերէւլաւ, ինչ պէս որ կ'ըսեն մեր դրայի զերմանացիները :

Եւ մինչդեռ այս խօսքերն ըսելու առեն դահիճը զամի կ'կապէք, Միլէտի երկու երեք անդամ՝ վայրադ ազատակեց որ տիտոր և պղանդակ տրոտորութիւն մ'ունեցան խօսարին մթեան մ'ջ թռելով և անտառին խորերը կորսուելով :

— Տայց եթէ յանցառոր եմ, եթէ յանցանքներ դարձեր եմ սրով զիս կ'ամրաօտանեք — կ'առնար Միլէտի — զիս առեանի մ'առ չեւ տարէք. զուք, դուք դատաւորներ չեք որ զիս կ'զատապարէք :

— Ես քեզ Թիուզըն առաջարկեր էի — ըստ Ամոնդր ինչո՞ւ համար մերժեցիր :

— Վասն զի չեմ ուզեր մեռնիլ — զոշեց Միլէտի տարոքեւթելով — վասն զի զեռահասակ եմ և չեմ ուզեր մեռնիլ :

— Պէթիւնի մէջ թռնառորդ կինդ քեզնեւ աւելի դեռահասակ է ը, տիկին, և առկայի մեռու նու — ըստ մ'Արդանեան :

— Վանք մը կ'քաշուիմ՝ կրօնուհի պիտի զառնամ — ըստ Միւլէսի :

— Դու վանք մ'էիր — ըստ դահիճը — և անկից գուրս եւլար իմ եղբօրս կործուստը պատճառելու համար :

Միւլէտի սարսափազին աղաղակ մ'արձակեց և իր ծունկերուն վրայ ընկաւ :

Գահիճը թերուն տակ առնլով վերուց զանի և ուզեց նաւակը տանիլ :

— Ո՛չ, Աստուած իմ — զոչեց նա — Աստուած իմ, արդեօք զիս ծովը պիտի նետէք խղղէք :

Այս աղաղակներն այնպիսի աղիողորմ տպաւորութիւն մ'ունէին որ ա՛Արդանեան՝ որ առաջուց այնքան Միւլէտիին գէմ կատղեր և անոր ետևէն ընկեր էր, կոնցի մը վրայ սահեցաւ մնաց, զլուխը ծուեց՝ և իր ականջները ձեռաց ափերով դոցեց, և սակայն գարձեալ այս զգուշութիւնը չօգնեց, վասն զի կ'լսէր Միւլէտիին ձայնն որ կ'սպանար և կ'զոչէր :

Տ'Արդանեան այն մարդոց մէջ ամենէն նորահասակն էր, ուստի սիրան ելաւ :

— Ո՛չ, չեմ կարող այս ահաելի տեսարանս տեսնել, չեմ կրնար հաւանիլ որ այս կինն այսպէս մեռնի :

Միւլէտի այս քանի մը խօսքերը լսեր և յուսոյ նշայլ մ'իր սրտին մէջ ծաղելու մկներ էր :

— Տ'Արդանեան, ա՛Արդանեան — զոչեց Միւլէտի — յիշէ միւնցամ որ քեզ սիրեցի :

Երիտասարդն ուրք ելաւ և զէպ ՚ի Միւլէտի քայլ մ'առաւ :

Բայց Եթոս յառաջ անցաւ, իր սուրբ քաշեց և անոր Ճամբան կարեց :

— Եթէ քայլ մ'ես առնաւ, ա՛Արդանեան — ըստ նա — մրասին պիտի մենամարտի ելնենք :

Տ'Արդանեան ծունքը ընկաւ և աղօթեց :

— Օ՞ն — շարունակեց Աթոս — դահիճ, քու պարսպդ կատարէ :

— Յօժարակամ, ալոք իմ — ըստ դահիճը — վասն զի՝ որչափ որ ստողիւ բարի կաթուլիկ մ'եմ, հաստատակէս կ'հաւտամ թէ

արգար դործ մը կ'ընեմ սոյն կնկան վրայ իմ պաշտօնս կատարելով :

— Ծամ լու :

Եմոս քայլ մ'առա դէպ ՚ի Միլէտի :

— Կ'ներեմ քեզ — ըստ — ինձ բրած չարիքու, կ'ներեմ քեզ իմ վիճած ապագաս, իմ կարուսեալ պատիւս, իմ պղծուած ուրա և իմ փրկութիւնո՞ որ ընդ միշտ վասնդի մէջ է ինձի բաժին յաւահասութիւն տալովդ : Խաղաղութեամբ մեռիր :

Կորս Ախնդր ևս յառաջ անցաւ :

— Քեզի կ'ներեմ — ըստ — իմ եղրօս մունառուիլը, Կորս Հնորհափայլութեան լորս ոլքինկհէմի սպանեութիւնը, կ'ներեմ քեզի խեղչ Ֆէլտօնի մահը, կ'ներեմ քեզի իմ անձիս դէմ բրած գառաճանութեան փորձերդ : Խաղաղութեամբ մեռիր :

— Խոկ ինձ — ըստ ա՛Արդանեան — ներէ ինձ, տիկին, որ աղատորդիի մ'անարժան խորանանկութեամբ՝ քու բարկութիւնդ զրդուեցի, և ասոր փոխարէն՝ ես կ'ներեմ քեզի իմ հէք բարեկամուհոյս սպանութիւնը և ինձի դէմ քու անաղորդոյն վրէմիսընդրութեան արարքդ, կ'ներեմ քեզ և կ'լամ քու վրայ : Խաղաղութեամբ մեռիր :

— Լ ոռ Խօս՝ — մրմռաց Միլէտի անկիխարէն — Լ ուստ ձև** :

Այս ատեն ինքնիրեն ոռք ելու, իր չորս զին նետեց պայծառ ակնարկ մ'որ կարծես թէ բոցեղէն աչքէ մը կ'ցայտէր :

Բան մը չտեսաւ :

Մտիկ ըրաւ, բան մը չլսեց :

Իր չորս կողմը թշնամիներ ունէր միայն :

— Ա՛ւր պիտի մեռնիմ — ըստ նա :

— Միւս զետեղըր — սպատախանեց զահիճը :

Այս ատեն նաւակը մացուց զանի, և մինչդեռ ինքն ալ ոտքն անոր մէջ կ'զնէր, Ամոս անոր ստակի գումար մը տուաւ :

— Ա՛ռ — ըստ — այս է զլխատման զինը . թող տեսնէ որ իբրև դատառոր կ'վարուինք :

— Քաջ է — ըստ զահիճը — և այժմ այս կինը թող միանդամայն հասկնայ որ իմ արհեստս չիմ կատարեր, այլ իմ պարտքս :

* Կորս. ** Պէտք է որ մեռնիմ:

Եւ ստակը գետը նետեց :

Եւ նաւակը Լիսի դէպ 'ի ձախ դետափը դիմեց, տանելով
յանցաւորն ու դահիճը. միւսներն աջ գետափին վրայ մնալով
ծռնը դրին :

Նաւակը ծանր ծանր կ'սահէր լաստին չուանին երկայնքը,
տմոյն և ամայի նշոյլին ներքեւ որ նոյն պահուն ջրին վրայ կը
ստառներ :

Տեսան նաւակին մօտիլը միւս գետափը. մարդիկ կարմրորակ
հօրիզանին վրայ սեադոյն կ'երեւէին :

Աւղեռութեան ատեն՝ Միլէտի՝ յաջողէր էր իր ոտքի կապան-
քը քակելու. երբ գետեզը հասան, թեթե մը ցամաքը ցատ-
կեց և տիսաւ փախչիլ :

Բայց հողը տամուկ էր, և երբ հողաբլրին զառ 'ի թափն հա-
սաւ, սահեցաւ և ծնկան վրայ ընկաւ :

Աւելորդապաշտական տեսիլ մ'անշուշտ միաքը պաշարեց. զգաց
որ երկին իրեն կ'զլանար օգնութիւնը, և իր զտնուած դիրքին
մէջ զլուխը ծռած և ձեռներն իրարու կցած մնաց :

Այն ատեն միւս գետափին տեսան դահիճն որ կամացուկ մը
իր երկու թեւերը կ'վերցնէր, իր լոյն սրին երկաթին վրայ լուս-
նին մէկ շառաւախղը բեկեկեկեց, երկու թեւերն ընկան. սրին շա-
շինն ու զոհին Ճիկը լսուեցան, յետոյ խեղեալ կոյտ մը հար-
ուածին ներքեւ տապաստ դլորեցաւ :

Այն ատեն դահիճն իր կարմիր վերարկուն հանեց գետինը
փռեց, զիակն անոր վրայ երկնցուց, գլուխն անոր մէջ նետեց,
չորս ծայրէն կապեց, շալակն առաւ և վերստին նաւակը մտաւ:

Երբ Լիս գետին մէջ տեղը հատաւ, նաւակը կեցոց և իր բե-
ռը գետին վրայ կախելով,

— Թոք Աստուծոյ արդարութիւնը կատարուի — դուեց նա
բարձրաձայն :

Եւ դիակը գետին խորը ձգեց, որ անոր վրայ զոյուեցաւ :

Երեք ժամ ետք՝ չորս հրացանակիրները Բարիզ կ'մտնէին.
իրենց արձակուրդին սահմանին շափ տարակայ գտնուեր էին, և
նոյն իրկունն իրենց սովորական այցելութիւնն ըրին Պ. որ Դրէ-
վիլին :

— Նայինք, պարոններ — հարցուց անոնց արի հրամանաւուրը — միթէ ձեր արշաւանքի ատեն լաւ զուարձացաք :

— Անչափս — պատասխանեց Աթոս իր և ընկերակիցներուն կողմէն :

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Հետևեալ ամսուն նին՝ թագաւորը՝ կարտինալին ըրած խռովումը թէ Բարիզէն դառնալով թօշէլ պիտի դայ, որտհեց և մայրաբաղքէն ելաւ բոլորովին շուարած նոր տարածուած լուրին վրայ թէ Պլքինկէմ սպաննուեր է :

Թէ թագուհին կանխաւ իմացեր էր թէ իր այնչափ սիրած մարդը մեծ վասնզի մէջ կ'գտնուի՝ սակայն երբ այս դոյմը լսեց, շողեց հաւատ բնծայել, նա մանաւանդ անխուհեմութեամբ բերնէն սա խօսքը փախաւ .

— Սուտ է, գեռ նոր իրմէ դիր ստացայ :

Բայց միւս օր սափառեցաւ այս դժոնդակ լուրին հաւատալ, Լարօրդ՝ ամենուն պէս՝ Շարլ Ան համած հրամանին վրայ յԱնկլիա բռնուեր էր, այլ ՚ի վերջէ Քրանտա հասաւ հետար բերելով Պլքինկէմի առ թագուհին ըրած յետին սդալի սպարցելը :

Թագաւորին խնդրութիւնը շատ մեծ եղաւ. զայն ծած կելու անհոգ՝ մանաւանդ թագուհուցն առ ջեւ կեղծութեամբ յայտնեց : Լորի մուտ ամէն տկար սիրառերու պէս վեհանձնութենէ զսորկ էր :

Բայց քիչ ատենէն թագաւորը ախուր և անհանդիսաւ եղաւ. իր հակատն երկայն ժամանակ կայտառութիւն պահող հակամաներէն չէր. կ'զդար որ բանակը գաւնալով իր դերութեան լուծը վիզը պիտի անցնէր, և սակայն կ'գտնար :

Կարտինալն իրեն համար թովիչ օճն էր, և ինք նման էր թոշտնին օր ճիւղէ ճիւղ կ'թուի առանց անորմէ պրծելու :

Հետևապէր գէայ ՚ի թօշէլ վերապարձր շատ տիսուր էր. մեր չորս բարեկամները մանաւանդ իրենց ընկերներուն զարմանք կը պատճառէին, իրարմէ անբաժան կ'ու դեռքէին, արտում տիսուր աշքով և դժիմիոր : Աթոս միայն իր լոյն հակառը կ'վերցնէր

մերթ ընդ մերթ , կայծ մը կ' փայլէր իր աչերուն մէջ , դառն ժպիս մը կ' սահէր իր շրթերէն , յեայ՝ իր ընկերակիցներուն նման՝ դարձեալ իր մտախոհութեանց մէջ կ' ընկղզէր :

Այս ինչ պահապան խումբը քաղաք մը կ' համնէր , թագաւորն իր բնակարանն առաջնորդելէն անմիջապէս ետք՝ չորս բարեկամները կամ իրենց տունը կամ հեռաւոր զինետուն մը կ' քաշտէին . որ ոչ զինի կ' խմելին և ոչ խաղ կ' խաղացին , մինակ , ցած ձայնով կ' խօսակցէին , ուշ դնելով որ ոչ ոք զիրթնք մտիկ ընէ :

Օր մ' երբ թագաւորը գաղաք առեր էր ճամբուն վրայ անձեղ որսալու համար , և չորս բարեկամներն իրենց սովորութեան հակառակ՝ փոխանակ որաին հետեւլու , մեծ արահետին վրայ զինետուն մը մտեր էին , մարդ մ' որ սահնձարձակ Ռոշէլէն կ' զար՝ զրան առ ջև կեցաւ բաժակ մը զինի խմելու , և իր աչքը նետեց այն սենեկին խորը՝ որ չորս հրացանակիրները սեղանի մ' առ ջև նսաեր էին :

— Ե՛յ , ու . տ' Արդանեան — ըստ նս — միթէ քեզ կ' տեսնեմ՝ սյդ տեղ :

Տ' Արդանեան զլուխը վերուց և որախութեան ձիկ մը հանեց : Այս մարդը՝ զոր իր որուականը կ' կոչէր , իր Մէօնի , Փօսուայէօր փողոցի և Արքասի անձանօթն էր :

Տ' Արդանեան իր սուրը քաշեց և զէալ ՚ի դուռը սրացաւ :

Բայց այս անզտո՞ւ խոյս տալու տեղ՝ անձանօթը ձիէն վար յատկեց : և տ' Արդանեանի առաջն առաջ :

— Ա՛հ , պարոն — ըստ երիտասարդը — վերջապէս քեզ կը դանեմ . այս անզտո՞ւ ձեռքէս աղատելիք չունիս :

— Իմ զիտաւորութիւնս ալ այդ է , պարոն , վասն զի այս անզամ ես քեզ կ' փնտուէի , յանուն թագաւորին , քեզ ձերբակալ կ' ընեմ : Ահա կ' ըսեմ քեզ որ սուրդ ինձի յանձնես , և առանց ընդդիմութեան , թէ ոչ զլուխդ վտանգի մէջ կ' դնես , ահա կանխալ կ' յայսնեմ քեզի :

— Բայց դու ով ես — հարցուց տ' Արդանեան իր սուրն ի ջեցընելով , բայց զեռ ևս չյանձնելով :

— Ես Ռոշֆօր ասպետն եմ — պատասխանեց անձանօթը — կարտինալ Ռիշլիէօի թիկնարարչը , և հրաման տուած է ինձ քեզ իր Նաեմափայլութեան առ ջև առնելու :

— Կորին Վաեմութեան մօտ պիտի դառնանք , պարոն ասպետ ըստ Աթոս յառաջ անցնելով — և 'ի հարկէ ա' Արդանեանի խօսքին հաւատ կ'ընծայեն , քանի որ շիտակ Ռօշէլ պիտի դառնայ :

— Պարտաւոր եւ՛ զանի պահակներու ձեռքը յանձնել որսրէ ո զի բանակը տանին :

— Մենք անոր պահանութիւն պիտի ընենք , սպարոն , և քեզի մեր ազատորդիի խօսքը կ'տանք . բայց նաև մեր ազատորդիի խօսքերնիս վկայ — յարեց Աթոս ունքը պրատելով — ու . ա' Արդանեան մեզնէ չպիտի հեռանայ :

Թօշֆօր ասպետն եւտեն աչք մը նետեց և տեսառ որ Բորթոս ու Արամիս իր և գրան մէջ եկեր կեցեր էին , քաջ հասկցաւ որ այն չորս մարդոց իշխանութեան ներքե կ'գտնուի :

— Պարոններ — ըստ . — եթէ ու . ա' Արդանեան իր սուրբն ինձի տայ և ձեզի պէս խոստանայ , ձեր խոստումը թէ ա' Արդանեանն անձամբ Վաեմափայլ կարտինալին բնակարանը պիտի տառնիք՝ բաւական պիտի համարիս :

— Արդէն խօսք տուի քեզի , պարոն — ըստ ա' Արդանեան — առ նաև ուուրս :

— Այդ ձեր ընթացքն այնքան յարմար կ'զայ բանիս — յարեց Թօշֆօր — որչափ որ ես ալ իմ ուղևորութիւնս շարտնակելու պարտաւոր եմ :

— Եթէ միաբդ երթալ Միլէտին զանել է — ըստ Աթոս սպազութեամբ — անօդուտ բան է , զանի չպիտի զտնես :

— Ուրեմն ինչ եղաւ Միլէտին — հարցուց Թօշֆօր աշխամիւ :

— Բանակատեղին դարձիր և պիտի իմանաս :

Թօշֆօր պահ մը մտածեց , վերջը՝ ըստ որում Սիւրմէր հասնելու համար օր մը կար , ուր կարտինալը թագառորը զիմառութելու պիտի զար , Աթոսին խորհրդին հետեիլ և անոնց հետ ետ դառնալ պատշաճ դատեց :

Ասիէ զատ՝ այս վերադարձն ուրիշ օգուտ մ'ունէր , այսինքն ինք անձամբ կալանաւորին վրայ պիտի հսկէր :

Հետևապէս համբայ ելան :

Հետեւալ օրը՝ կէս օրէն երեք ժամը ետք՝ Սիւրմէր հասան + կարտինալն անդ կ'սպատէր Լուի Փարին : Պաշտօնեայն և թաղա-

ւորն իրարու երկայն բարակ զգուանքներ ըրին, իրարու շնորհաւորեցին այն բարեբաղդ զիպուածն որ կ'ազատէր Ֆրանսան կատաղի թշնամիէ մ'որ բոլոր Խւրուան անոր դէմ կ'զրգուէր։ Այնուհետեւ կարտինալը՝ որ Ռոշֆորէն լուր առեր էր թէ տ'Արդանեան ձերբակալ եղած է և զանի տեսնելու մեծ փոյթ ուներ, թաղաւորէն հրամեշաւ առաւ՝ հրամիրելով զանի որ հետեւեալ օրը դայ տեսնէ թմրին չենքն որ արդէն աւարտեր էր։

Կարտինալն իրկունը՝ Լարիէր կամրջէն իր բնակարանը դառնալու առեն՝ իր տան զրան առ ջեւ կանգուն տեսաւ տ'Արդանեան առանց սրի և երեք հրացանակիրները զինեալ։

Այս անզամը ըստ որում զինեալ էին զանոնք խօսիւ դիտեց և աչքովն ու ձեռքովը նշան ըրաւ տ'Արդանեանի որ իր ետևէն երթայ։

Տ'Արդանեան հնազանդեցաւ։

— Քեզի պիտի սպասենք, տ'Արդանեան — ըստ Աթոս բաւական բարձր ձայնով որպէս զի կարտինալը լսէ։

Նորին Ասեմափայլութիւնն ունիքը պուտեց, պահ մը կանկ առաւ, յետոյ իր ճամբան շարունակեց առանց բառ մ'արտասանելու։

Տ'Արդանեան կարտինալին ետևէն ներս մտաւ, և տ'Արդանեանի ետևէն զրան վրայ պահակներ երեցան։

Կարտինալն իրեն զրաստն տեղ ծառայող սենեակը զնաց, և Ռոշֆորի նշան ըրաւ որ նորատի հրացանակիրը ներս քերէ։

Ռոշֆոր հնազանդեցաւ և զուրս ելաւ։

Տ'Արդանեան մինակը մեաց կարտինալին առ ջեւ։ Արիշլիէօի հետայն երկրորդ տեսութիւնն էր, և վերջէն խոստովանեցաւ թէ իրավէս համոզուած էր որ այս տեսութիւնը վերջինը պիտի լինէր։

Արիշլիէօ ոտքի վրայ կեցաւ վառարանին կոթնած, սեղան մը կար իր և տ'Արդանեանի մէջ տեղ։

— Պարոն — ըստ կարտինալը — իմ հրամանաւս քեզ ձերբակալ ըրին։

— Ինձի ալ այդպէս ըսին, աէր իմ։

— Գիտե՞ս արդեօք պատճառը։

— Աչ, տէր իմ. վասն զի բան մը կայ միայն որու համար

ձերքակալ պիտի լինեմ, և այս բանին անտեղեակ է Զեր Ալե-
մափայլութիւնը :

ՈՒՀԱԼԻԿ օ երիտասարդին երեսը նայեցաւ անժամրիդ :

— ՀԵՇ — ըստ — ի՞նչ ըսել կ'ուզես այդ խօսքով :

— Եթէ դոք, տէր իմ, նախ ըսէք ինձ թէ ի՞նչ յանցան-
քով կ'ամբաստանեն զիս, յետոյ ես ալ պիտի յայտնեմ ըբած
դործերա :

— Այնպիսի յանցանքներով կ'ամբաստանեն քեզ որոց համար
գլուխէդ առելի բարձր զլուխներ վար ընկան, պարոն — ըստ
կարտինալը :

— Ի՞նչ են այդ յանցանքը, տէր իմ — հարցոյ ա'Արդանեան
հանգարտութեամբ մ'որ նոյն խել կարտինալին զարմանք պատ-
ճառեց :

— Կ'ամբաստանեն քեզ որպէս թէ տէր ըստ թեան թշնամիներաւ
հետ թղթակցեր ես, կ'ամբաստանեն քեզ որպէս թէ պետութեան
դաշտանիքը վարօնետութեամբ իմացեր ես, կ'ամբաստանեն քեզ
որպէս թէ քու զօրապետիդ յատակադիմները վիժել առաջ փորձ
փորձեր ես :

— Եւ ով կ'ամբաստանէ զիս այս բաներով, տէր իմ — ըստ
ա'Արդանեան՝ որ արդէն զիտէր թէ այս ամբաստանութիւնը Մի-
լէտիին կողմէն կ'լինէր — ոչ առաքէն կին մ'որ երկրին օրի-
նաց համեմատ աղարտած է, կին մ'որ Գրանսայի մէջ էրիկ մը
առաւ և ուրիշ մը յԱնկլիա, կին մ'որ իր երկրորդ էրիկը թու-
նառորեց և զիս ես թունառորելու փորձ փորձեց :

— Ի՞նչ կ'ըսես, պարոն — զոչեց կարտինալը զարմացած —
և ո՞ր կինկան վրայ կ'խօսիս :

— Ախնդը Միլէտիին վրայ — պատասխանեց ա'Արդանեան —
այս, Ախնդը Միլէտիի վրայ, որու բոլոր յանցանաց անտեղեակ
պիտի լինէր Զեր Վաեմափայլութիւնը քանի որ անդէտա ձեր վրա-
տահամաթիւ զանի պատմեցիք :

— Պարոն — ըստ կարտինալը — եթէ Միլէտի Ախնդը քու-
բած յանցանքդ դործած է, պիտի պատմոի :

— Արդէն պատմուած է, տէր իմ:

— Եւ ով պատմեց զանի :

— ՄԵՒՔ :

— ՄԻԹէ բանան է :

— ՄԵռած է :

— ՄԵռած է — կրկնեց կարտինալն որ լսածին հաւառալ չէր կարող — մռած, միթէ մռած է, չըսիր :

— Երեք անդամ դիս սպաննելու փորձ փորձեր էր, և անոր ներեր էի, բայց իմ սիրած կինս սպաննեց : Այն ատեն իմ բարեկամներս և ես զանի բռնեցինք, դատեցինք և դատապարտեցինք :

Այն ատեն ա' Արդանեան պատմեց ՊԵՐԻՆԻ Կարմէ լեանց վանքին մէջ տիկին Պօնասիէ օի թունաւորուիլը, առանձին տան մէջ եղած դատապատանը, և Լիս գետեղըին վրայ եղած դլխառութինը :

Կարտինալին բոլոր մարմնը սարսուռ մ' զդաց, կարտինալն որ սակայն դիրառ չէր սարսուէր :

Բայց յանկարծ իրեն թէ գաղտնի մտածութեան մը ներգործութիւնը կրելով՝ կարտինալին կերպարանն՝ որ ցայն կէտ աըբառում տիտուր էր, պարզուեցաւ փոքր առ փոքր և կատարեալ պայժառութիւն մը տապացաւ :

— Այսպէս — ըստ կարտինալը ձայնով մ' որուն անուշտիւնն իր խօսքերուն խատութեան հետ չէր յարմարեր — ինքնինքնիդ դատառուոր կարգեր էք, առանց մտածելու որ պատճելու պաշտօն չունեցող և պատճող մարդիկ մարդասպաններ են :

— Տէր իմ, կ'երգնում որ պահ մը մոքէտ շանցաւ զլուխս պաշտպանել մեր առջեւ : Չեր Վաեմափայլութեան ինձի սնօրինած պատռհաօր պիտի կրեմ : Կեանքս մնձ բանի տեղ չեմ դրած որ մահէն վախնամ :

— Այն, պիտեմ, քաջասիրու մարդ մ' ես, պարոն — ըստ կարտինալը դրեթէ սիրառէտ ձայնով մը . — ուստի կանխսաւ կըրնամը ըսել որ պիտի դատուիս, և մինչեւ անդամ դատապարտուիս :

— Ուրիշ մը կրնար ըսել Չեր Վաեմափայլութեան որ իր շնորհազիքն իր դրանին մէջն է . ես բաւական պիտի համարիմ ըսելու . հրաման տուէք, տէր իմ, ես պատրաստ եմ :

— Քու շնորհազիքիրդ — ըստ Ռիշլիէ օ զարմանօք :

— Այն, տէր իմ — ըստ ա' Արդանեան :

— Եւ որո՞ւ կողմէ ստորագրուած է , թագաւորին կողմէ :

Եւ կարտինալն այս բառերը հնչեց արհամարհանաց զարմանաւ շեշտով մը :

— Ո՞ւ , Զեր Ասեմափայլութեան կողմէ :

— Ի՞մ կողմէս , յիմար ես դու պարո՞ն :

— Ասեմափայլ տէր , ձեր ստորագրութիւնը կ'ձանչէք անշուշտ :

Եւ ա՛Արդանեան կարտինալն ներկայացուց Աթոսին խլած թանկագին թուղթը Միլէտիին ձեռքէն , և զոր ա՛Արդանեանի տուեր էր իբրև սպահազիր դործածելու ՚ի հարկին :

Կորին Ասեմափայլութիւնը թուղթն առաւ և ծանր ձայնով մը կարդաց մէն մի վանկը շեշտելով .

« Իմ հրամանաւս որ այս թուղթը կրողն ըրաւ ինչ որ ըրաւ :

« Թոշէլի բանակատեղին , Ծ օգոստոս 1628 ՇՈՒՇԼԻՇՕ » :

Կարտինալն այս երկու տաղը կարդալէն ետե՛ խորին մտածութեան մէջ ընկառ , բայց թուղթը ա՛Արդանեանի չյանձնեց :

— Կ'մտածէ թէ ի՞նչ տեսակ պատժով հարկ է սպաննել տալ զիս — ըստ ա՛Արդանեան իւրովի լաւ , Ճշմարիտը , պիտի տեսնէ թէ ազատորդի մ'ինչպէս կ'մտնի :

Կորատի հրացանակիրը պատուական արամադրութեան մէջ կը դանուէր դիցաղնաբար մեռնելու համար :

Ռիշլիէօ շարտնակ կ'խորհէր , և թուղթն իր ձեռաց մէջ կ'ուլորէր ու կ'արորէր : Ի վերջէ գլուխը վերուց , իր արծուի ակնարկը սկեռեց ա՛Արդանեանի անկեղծ , բաց , մտացի կերպարանին վրայ , ամսէ մ'ի վեր անոր կրած տառապանքը կարդաց արտաստամոր դէմքին վրայ , և երեք կամ չորրորդ անդամ՝ մտածեց թէ այս քան տարեկան տղան որչափ մեծ ապագայ ունէր , և իր դործունէտթիւնը , արիութիւնն ու խելքն որչափ մեծ օգնութիւններ կրնային հայթայթել լաւ տիրոջ մը :

Միւս կողմէ՝ Միլէտիին ոճիրները , զօրութիւնը , զժոխային սպին քանիցս իրեն ահ ու զող ազգեր էին : Կարծես թէ զաղտնի ու բախութիւն մը կ'զդար այն վտանգաւոր դռակացէն ՚ի սպառազատելուն :

Ծանր ծանր պատռեց ա՛Արդանեանի վեհանձնօրէն իրեն ձեռքը տուած թուղթը :

— Կորայ — ըստ ա՛Արդանեան ինքնիրեն :

Եւ կորակոր ծռեցաւ կարախնալին առջև իրրեւ մարդ մ'որ կ'ըւէ . «Տէր իմ , թաղ կամբդ լինի » :

Կարտինալը սեղանին մօտեցաւ , և առանց նատելու , մաղաղաթի մը վրայ՝ որուն երկու երրորդ մասն արգէն լեցուած էր , քանի մը տող բան զրեց և իր կոփը կոխեց :

— Ասի իմ մահավճիռս է — ըստ ա՛Արդանեան — Պատիյի տաղառ կէն և երկարաձիր դատաստանէ մը զիս կ'ազատէ : Դարձեալ մեծ շնորհ մ'է ըրածը :

— Ահաւասիկ , պարոն — ըստ կարտինալն երիտասարդին — Քեզնէ բաց հրամանաղիր մ'առի և ուրիշ մը կ'տամ : Այս արտօնադրին մէջ անունը միայն պակաս է և դու ինքնին պիսի դրես :

Տ'Արդանեան թուղթն առաւ վարանելով և աչքն անոր վրայ նետեց :

Հրացանակիրներու զնդին մէջ տեղակալութեան պաշտօն մը ի՛շորհէ էր :

Տ'Արդանեան կարտինալին սուքն ընկառ :

— Տէր իմ — ըստ — իմ կեանքս ձերն է , ըստ հաճոյս զործածեցէք զայն , բայց այս շնորհին՝ զոր ինձ կ'ընծայէք , ես արժանի չեմ . ես ուրիշ երեք բարեկամներ ունիմ որ աւելի արժանընատիր և արժանի են . . . :

— Դու լու պատանի մ'ես , ա՛Արդանեան — ընդմիջեց անոր խօսքը Արիշիէօ՝ ընտանեբար անոր ուսին զարնելով վասն զի շափաղանց ուրախ էր անոր ըմբռուտ բնաւորութիւնն ընկճելուն :

— Ինչպէս որ կ'ուզես զօրծածէ այդ արտօնաղիրը : Մինակ յիշէ որ՝ թէե անուն չկայ անոր մէջ , զայն քեզի կ'շնորհէմ :

— Երբէք չպիսի մոռնամ զայն — պատասխանեց ա՛Արդանեան

— Չեր Վահմափայլութիւնը կրնայ այս մասին հաւաստի լինիլ :

Կարտինալը զլուխը դարձուց և բարձր ձայնով ըստ :

— Ռոշֆօր :

Ըստեան որ անշուշա գրան ետին էր , շուտ մը ներս մտաւ :

— Ռոշֆօր — ըստ կարտինալը — կ'տեսնես ահա ոլ . ա՛Արդանեանը . իմ բարեկամներուս կարդը կ'գասեմ զանի . այսպէս ուրեմն զիրար պաղէք և իելօք եղիք եթէ կ'ուզէք ձեր զլուխը ողահել :

Առօշխօր և ա՛Արդանեան զիրար համբուքեցին շրթերու ծայրավ՝ բայց կարտինալն այն տեղ էր՝ որ իր ժիր աչքով զանանք կ'զիտէր։ Երկուքնին ալ միասին սենեկէն դուրս ելան։

— Կորէն պիտի տեսնուինք, այնպէս չէ՞, սպարոն։

— Երբ որ հաճիս — ըստ ա՛Արդանեան։

— Առ իթը պիտի պատահի անշուշտ — պատասխանեց Առօշխօր։

— Եյ — ըստ Արշալիկ գուռը բանալով։

Երկու մարդիկ իրարու ժպտեցան, ձեռք սեղմեցին և Կորին Վեմափայլութեան բարեւ տուին։

— Մեր համբերութիւնը հատնելու սկսեր էր — ըստ Ամաս։

— Ահաւասիկ եմ, բարեկամներս — պատասխանեց ա՛Արդանեան — ոչ միայն աղջատ, այլ և ՚ի շնորհս։

— Մեղ պիտի պատմն իրողութիւնը։

— Այս իրկուն իսկ։

Արդարեւ նոյն իրկունն իսկ ա՛Արդանեան Ամոսի բնակարանը զնաց՝ զոր իր Սպանիոյ զինիին շիշը պարզելու վրայ զտաւ, և այս զբաղմունքն ամէն իրկուն խղճահարութեամբ կ'կատարէր։

Պատմեց անոր կարտինալին և իր մէջ անցած գարձածն և արտօնագիրը դրապանէն հանելով։

— Ահաւասիկ, սիրելիդ իմ Ամոս, ահաւասիկ — ըստ նա այս շնորհը բնականապէս քեղի կ'վայլէ։

Ամոս իր անուշ և սիրաւէտ ժպտովը ժպտեցաւ։

— Բարեկամ — ըստ — Ամոսի համար այդ շնորհը շատ է, Ֆէր կոմին համար քիչ։ Պահէ քեղի այդ արտօնագիրը, քուկդէ, աւալ, Աստուած իմ, բաւական սուզ զնեցիր զայն։

Տ'Արդանեան Ամոսի սենեկէն դուրս ելաւ և Բորթօսին սենեկը մտաւ։

Տ'Արդանեան տեսաւ որ Բորթօս նկարակերս փառաւոր զգեստ մը հադեր էր և հայլիին առջև ինքնինքը կ'նայէր։

— Հա, հա — ըստ Բորթօս — դու ես, սիրելի բարեկամ, այս հազուսան ինչպէս կ'զանես, միթէ ինձի կ'վայլէ։

— Սքանչելի կերպով — ըստ ա՛Արդանեան — բայց եկայ քեզ ուրիշ հազուսան մասաջարկել որ աւելի պիտի վայլէ քեզի։

— Ի՞նչ հազուսան — հարցոց Բորթօս։

— Այս է հրացանակի բներու տեղակալութիւնը :

Տ' Արդանեան պատմեց Բորթոսին՝ կարտինալի հետ ունեցած տեսութիւնը, և զրագանէն արտօնադիրը հանելով,

— Ահաւասիկ, սիրելիդ իմ — ըստ — ասոր վրայ անունդ դրէ, և ինձի համար բարի հրամանատար մ'եղիք :

Բորթոս արտօնադիրն վրայ աչք մը նետեց և տ' Արդանեանի յանձնեց՝ ի մեծ զարդացումն երփառարդին :

— Այս — ըստ նա — այդ պաշտօնն իմ փառասիրութիւնս շատ պիտի զդուէր, բայց այդ շնորհն երկար ատեն չպիտի վայելէի : Մեր ունեցած արշաւանին ժամանակ իմ դքսուհիիս ամուսինը մեռաւ, այնպէս որ, սիրելիդ իմ, հանգոցեալին արկօն ինձ իր թեսերը բանալուն՝ որբեարին ինձ կին կ'առնեմ : Ահա իմ հարսանեաց հաղուստը կ'փորձէի . քեզի պահէ տեղակալութիւնը, սիրելիդ իմ, քեզի պահէ :

Եւ արտօնագիրը տ' Արդանեանի յանձնեց :

Տ' Արդանեան Արամիսի սենեակը զնաց :

Ծնդարանի մը վրայ ծունը դրած զտա՞ իր բաց աղօթագրքի վրայ հակատը յենած :

Ընոր ևս պատմեց իր արկածը կարտինալին հետ, և երրորդ ամ՝ ամ՝ բարձրէն արտօնադիրը հանելով,

— Դու, մեր բարեկամը, մեր լոյսը, մեր անտեսանելի պաշտպանը — ըստ — ընդունէ այս արտօնագիրը . ամենէ աւելի դու արժակ ես անոր՝ քո իմաստութեան և խորհրդոց համար՝ որ միշտ յաջող հետեւութիւններուն վանքը պիտի մտնեմ : Արտօնագիրը քեզի պահէ, ա՛ր անեան, զինուց արհեստը քեզ կ'վայլէ, դու արի և բազմարկած հրամանատար մը պիտի լինիս :

Տ' Ար անեան երախտագիտութենէ աշերը լցուած և ուրախութենէ փալքած Ամոսին զարձաւ, զըր զարձեալ սեղանին առջեւ զտաւ, որ իր Մալակաի զինիին յետին բաժակը կանթեղին ցոյց տալով կ'զնե՞ր :

— Ասու որեմն — ըստ նա — անոնք ալ մերժեցին :
— Ասան զի ոչ ոք , սիրելի բարեկամ , քեզնէ աւելի արժա-
նի է անոր :

Եւ զրիչ մ'առնլով՝ արտօնադրին վրայ ա՛ւրդանեանի անունը
զրեց և անոր յահձնեց :

— Աւրեմն այլ ես բարեկամներ չպիտի ունենամ — ըստ ե-
րիտասարդը — աւած , այլ ես ոչ ինչ , այլ միայն դառն յիշա-
տակներ . . . :

Եւ իր զլուխն երկու ձեռաց մէջ ստառ , մինչդեռ երկու արա-
սուք կ'զլորէին իր աչերէն վար :

— Դու նորահասակ ես , գու — պատասխանեց Աթոս — և
քու դառն յիշատակներդ ժամանակ ունին անուշ յիշատակներու
փոխուելու :

ՎԵՐՋԱԲԱՆ

Հա Ռոշէլ՝ անկլիական նաւատորմին և Պլքինկչէմի խոստա-
ցած զօրաբաժնին օդնութենէ զրկուելով՝ տարի մը պաշարեալ
մնալէն ետեւ անձնատուր եղաւ հոկտեմբերի 28ին 1628 : Ան-
հատութեան պայմանագիրը ստորագրուեցաւ :

Կոյն տարուան դեկտեմբերի 23ին թագաւորը բարիզ մտաւ :
Անոր այնպիսի յաղթական կամարներ կանգնեցին որպէս թէ թէշ-
նամիներ նուաճեր էր և չէ թէ զաղղիսցիներ : Սէն-ժազի ար-
տարձանէն անցան դալարաշէն կամարներու ներքեւ :

Տ'Արդանեան իր նոր պաշտօնը ստանձնեց : Բորթոս զինուորա-
կան ասպարէզը թողոց և հետեւեալ տարւոյն մէջ տիկին Գօբ-
նարի հետ ամուսնացաւ . այնքան ցանկացեալ արկզը 800,000
ֆրանք կ'պարունակէր :

Մուրդոն փառաւոր պճնազդեստ մ'ունեցաւ , և մեծ դոհունա-

իր թիւն զգաց , զոհունակութիւն մը զոր իր բռլոր կենաց մէջ
կ'փառասիրէր , անկեղօծ կառքի մ'ետե հեծնելով :

Արամիս՝ Լորէնի մէջ ուղեորութիւն մ'ընելէն ետե՝ յանկարծ
աներեցոյթ եղաւ . և իր բարեկամներու հետ դրակցութիւնը դադ-
րեցոց : Աւերջէն իմացուեցաւ՝ տիկին Շէ վրէօղի միջոցաւ , որ իր
երկու երեք սիրահարներուն յայտներ էր թէ անսորի մէկ վան-
քին մէջ կրօնական կարդն առեր էր Արամիս :

Պատէն վանական եղբայր եղաւ :

Աթոս՝ ա'Արդանեւանի հրամանին ներքեւ հրացանակիր մնաց
մինչև 1631 , այն ժամանակ որ Դուրէնի կողմն ուղեորելով՝ զին-
որութիւնը թողաց , պատճառելով որ Ռուսիյօնի մէջ փոքրիկ
կալուած մը ժառանգեր էր :

Կրիմ Աթոսին հետեւեցաւ :

Տ'Արդանեան՝ Երեք անդամ Ռոշֆօրի հետ մնամարտեցաւ . և
Երեք անդամ զանի վիրաւորեց :

— Հաւանական է որ չորրորդ անդամ քեզ պիտի սպաննեմ —
ըստ զանի վերցնելու համար ձեռքը կարկառելով :

— Ուրիշն թէ քեզի և թէ ինձի համար լաւագոյն է որ մեր
կոխն այս անգամով վերջացնենք — պատասխանեց վիրաւորը :
— Թշուառական , ես , կարծածէդ աւելի բարեկամդ եմ , վասն
զի առաջին անդամ քեզ հանդիպելուս , եթէ կարտինալին բառ
մ'անդամ ըսէի , բաւական էր վիզդ կտրել տալու :

Այս անդամ զիրար համբութեցին , բայց անկեղծ սրտով և ա-
ռանց ներքին խորհրդի :

Բլանշէ պահակ զօրաց մէջ Ռոշֆօրի ձեռօք յիսնապետի աս-
տիճանը ստացաւ :

Պ. Պօնասիէօ շատ հանգարտ կ'ապրէր՝ բոլորովին անտեղեակ
իր կնոջ և անհոգ իր կնկան վիճակին վրայ : Օր մ'անխոհե-
մութեամբ կարտինալին յիշեցուց ինքվինքը . կարտինալն անոր
պատասխան զրկեց թէ պէտք եղածը պիտի հոգայ որ այսուհետեւ
բանէ մը չըրկուի :

Եւ արդարէ՝ հետեւալ օրը՝ Պ. Պօնասիէօ՝ Լուվր երթալու
համար Երեկոյեան ժամն եօթին տղանէն դուրս ելնելէն ետե՝ վե-




ըլլամին քօսուայէօր փառոցը չերեցաւ . այս մասին ամենէն աղէ կ
տեղեկութիւն ունեցազներուն կարծիքը սա էր որ ու . Պօնասիէօ
նորին վեհանձն Վաեմափայլութիւնն ծախիւքն արբայական դղեկի
մը մէջ կ'կերակրէր և կ'ընակէր :

ՎԵՐՋ

ՅԱՆԻ ՆԻՒԹՈՒՑ

	Երես
Ա. Բնօւի զինին	3
Բ. Գոլօնապիէ - Ռուժի օթևանը	42
Գ. Կրակարանի ծխաններու օգտակարութիւնը	23
Դ. Ամուռնական տեսարան	33
Ե. Աէն - Ժէրմէ մարտկոցը	40
Զ. Հրացանակի իրներու խորհուրդը	48
Լ. Ընտանիքի զործ	70
Ը. Ճակատազիբ	88
Թ. Եղոր և քրոջ մը խօսակցութիւնը	97
Ժ. Արայ	106
ԺԱ. Գերութեան առաջին օր	119
ԺԲ. > Երկրորդ օր	128
ԺԳ. > Երրորդ օր	137
ԺԴ. > Չորրորդ օր	147
ԺԵ. > Հինգերորդ օր	158
ԺԶ. Դասական ողբերդութեան հնար մը	175
ԺԷ. Փախտստ	183
ԺԸ. 1628 Օգոստոս 23ին Քօրդամութիւն մէջ անցած դարձած ձածը	194
ԺԹ. Ի Ֆրանսա	207
Խ. Ռէթիւնի կարմէլեանց վանաստանը	243
ԽԱ. Երկու զանակ սատանաներ	230
ԽԲ. Զրի կաթիլը	236
ԽԳ. Արամիր վերարկու հաղած մարդը	254
ԽԴ. Դաստատան	261
ԽԵ. Գլխատութիւն	270
ԽՊ. Եղբակացութիւն	276
Ա. Կրշարան	286



1834

1835

1836

2013

